

ԷԶՄԻԱԾԻՆ



Ը
2008



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ

Օգոստոս

2008

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՐԱԲԱՑՎԵՑ ՂՐԻՄԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՎԱՆՔԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած պատվիրակությունը հուլիսի 28-ին մեկնեց Ղրիմ՝ մասնակցելու Ս. Խաչ հայկական վանքի հիմնման 650-ամյակի հանդիսություններին և վանքի Ս. Նշան եկեղեցու վերածման արարողությանը:

Պատվիրակության կազմում էին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Նավասարդ արքեպս. Կճոյանը, Ս. Հովնան արեղա Հակոբյանը՝ որպես գավազանակիր, ՀՀ Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը, Մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը և Արտգործնախարարության Սփյուռքի կոմիտեի նախագահ Հրանուշ Հակոբյանը:

Պատվիրակության անդամները Ղրիմում նախ այցելեցին Յալթայի Ս. Հռիփսիմե հայկական եկեղեցին: Այստեղ դիմելով հավաքված հայորդիներին՝ ՀՀ նախագահն ասաց. *«Եկել ենք միասին կիսելու մեր ուրախությունը, եկել ենք ասելու, որ դուք հայրենիք ունեք, եկել ենք ասելու, որ յուրաքանչյուր հարցում Ձեզ օգնելու և սատարելու ենք»:*

Հայաստանի Հանրապետությունը որոշակի պատասխանատվություն է կրում հայ համայնքի առջև: Հայաստանն իր հերթին ձեր կարիքն ունի, ցանկանում ենք, որ ձեր հայացքն ուղղված լինի դեպի Հայաստան: Վստահեցնում ենք, որ ձեզնից յուրաքանչյուրը տեղ և անելիք ունի: Հայաստանում դուք տուն ունեք»:

Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Ս. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանի գլխավորությամբ տեղի հոգևորականները ներկայացրեցին եկեղեցու վերանորոգության աշխատանքները, ապա Նորին սրբությունը հոգեհանգստյան կարգ կատարեց նշանավոր հայ նկարիչ Վարդգես Սուրենյանցի շիրմի առջև:

Հաջորդ օրը պատվիրակության անդամները մեկնեցին Ս. Խաչ վանական համալիր, որը դրիմահայ գաղութի հոգևոր նշանավոր կենտրոն էր և 14-18-րդ դարերում եղել է տեղի աթոռակալ եպիսկոպոսների նստավայրը: Վանական համալիրի գլխավոր և ամենահին՝ Սուրբ Նշան եկեղեցին կառուցվել է 1358 թ.:

1990-ական թթ. սկզբին Ղրիմի Բնքնավար Հանրապետության կառավարությունն ու պատմական հուշարձաններով զբաղվող կազմակերպությունները, դրիմահայ համայնքի դիմումներին ընդառաջելով, ինչպես նաև հաշվի առնելով այս համալիրի ունեցած պատմամշակութային կարևոր նշանակությունը՝ որոշում են վերականգնել այն և հետազոտական աշխատանքների համար մասնագետներ հրավիրում Հայաստանից:

Ղրիմի Բնքնավար Հանրապետության նախարարների խորհրդի 2002 թ. որոշմամբ Սուրբ Խաչը տրվել է Ուկրաինայի հայոց թեմի Ղրիմի հոգևոր հովվությանը:

Վանքի հիմնման 650-ամյակի հանդիսությանը դիմելով ոչ միայն Ղրիմից, այլև Ուկրաինայից, Ռուսաստանի Դաշնությունից և մի շարք այլ պետություններից այստեղ հավաքված բազմահազար հայորդիներին՝ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանն ա-

սաց. «Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին միշտ էլ առանձնահատուկ դեր է խաղացել մեր ժողովրդի կյանքում: Դարեր շարունակ պետականության բացակայության պայմաններում հենց եկեղեցուն էր վիճակված ստանձնելու առաջնորդության առաքելությունը հայ ժողովրդի պատմական ճանապարհին: Եվ պատահական չէ, որ աշխարհի որ մասում էլ գտնվելու լինեն հայերը, նրանք միշտ կառուցել են եկեղեցիներ ու դպրոցներ: Կառուցել են ու ստեղծագործել, պայքարել են ու գոյատևել»:

ՀՀ նախագահը ներկաներին տեղեկացրեց, որ նույն օրն առավոտյան Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յուշչենկոյին առաջարկել է երկու երկրների Արտաքին գործերի նախարարություններին հանձնարարել համատեղ քայլեր ձեռնարկել Սուրբ Խաչն ընդգրկելու ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության մեջ:

Այնուհետև Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվեցին Սուրբ Խաչ վանքը տանող ճանապարհին կանգնեցված յոթ խաչքարերը, որոնց ամբողջությունը կազմում է «Սուրբ Խաչ» կապակցությունը: Այս խաչքարերը պատրաստվել ու փոխադրվել են Հայաստանից: Այս գեղեցիկ մտահղացման մեջ իրենց ավանդն ունեն Ղրիմ-Հայաստան ընկերակցության պատվավոր նախագահ Անուշավան Դանիելյանը և «Նիզ-Ապարան» հայրենակցական միության նախագահ, «Տիգրան Մեծ» հրատարակչատան տնօրեն Վրեժ Մարկոսյանը: Եվս մեկ խաչքար տեղադրվեց Ս. Նշան եկեղեցու մուտքի մոտ: Այն Ս. Խաչ վանքին նվիրեց և օծումը կատարեց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը: Խաչքարի մոտ ամփոփվեց նաև մի պարկուճ, որում եղած գրության մեջ հիշվում են վանքին աջակցած բարերարների և հաստատությունների անունները:

Այնուհետև տեղի ունեցավ վերանորոգված Ս. Նշան եկեղեցու վերածնունդը ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Հրնթացս օծման Նորին Սրբությունը գնահատանքի իր խոսքն ուղղեց հավաքվածներին և բոլոր նրանց, ովքեր նպաստել են վանական համալիրի նորոգությանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈՁԸ ՂՐԻՄԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՀԱՅՈՑ ՎԱՆՔԻ ՎԵՐԱԲԱՅՑՄԱՆ ԱՌԻՅՈՎ

Հոգեկան անհուն ուրախությամբ ենք եկել համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ մեր հավատավոր զավակների հետ մասնակցելու Ղրիմի հայոց Սուրբ Խաչ վանքի և Սուրբ Նշան եկեղեցու 650-ամյա հոբելյանին նվիրված տոնական միջոցառմանը:

Այս նվիրական և հոգենորոգ առիթով ողջունում ենք այսօր Սուրբ Խաչ վանքի նորոգության վերաբացման արարողությանը ներկա Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Սերժ Սարգսյանին: Մեծարգո Նախագահի ներկայությունը հայոց պետական այրերի հետ վկայությունն է նրա հավատավոր հոգու և մեր Եկեղեցու հանդեպ նախանձախնդրության, ինչպես նաև՝ նորանկախ հայրենի մեր պետության խնամատարության ու գորակցության արտահայտությունը Միյուրքի մեր զավակների նկատմամբ:

Հայրապետական Մեր ողջունն ու օրհնությունն ենք բերում Ուկրաինայի Հանրապետության և Ղրիմի Ինքնավար Հանրապետության պետական այրերին՝ ի դեմս տիար Գրիգենկոյի հայ համայնքի հանդեպ ցուցաբերած բարեհաճ վերաբերմունքի և զորակցության համար: Հայրապետական օրհնությամբ ողջունում ենք այստեղ մեր քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին և բոլորիդ, սիրելի բարեպաշտ ժողովուրդ:

Տիրոջ Սուրբ Խաչը խորհրդանշող վանքի՝ Սուրբ Նշան տաճարի ուխտի առիթով հայոց հոգևոր գանձարանից քաղված ներբողի տողերն են այսօր մեր շուրթերին. «Օրհնյալ ես, քրիստոսապսակյալ սուրբ փայտ, որ երկրում բուսնելով՝ երկրի կամարներից վեր բարձրացար, անկրելին քեզ վրա կրելով՝ պտղաբերեցիր, լցրեցիր ամբողջ երկինքը և տարածությունը երկնքի ու երկրի միջև, որ ծաղկեցիր Բսրայելի ազգի մեջ, և քո պտուղներով հագեցավ ողջ տիեզերքը» (Դավիթ Անհաղթ):

Այսօր մենք աղոթքով հիշում ենք այս օրհնյալ հողում վեց և կես դար առաջ աղոթասաց Սուրբ Խաչ վանքը և Սուրբ Նշան եկեղեցին կառուցողներին: Հայրենի եզրերից բռնագաղթված հայ ժողովրդի զավակներն էին նրանք, հայոց Բագրատունյաց թագավորության վերջին մայրաքաղաք Անիից տարագիր եղած 300 000 հայորդիներ, որ հաստատվել էին Ղրիմում: Առաջին անգամ չէր, որ խաղաղասեր հայ մարդը պանդուխտի ցուպն էր վերցնում իր ձեռքին: Հաճախ են հալածել և տեղահան արել հայրենի երկրից մեր ժողովրդին: «Բայց Աստծու զորությամբ կենդանի» (Բ Կոր. ԺԳ 4) ազգիս ազատատենչ ոգին և ստեղծագործ կյանքով ապրելու ձգտումը կրկին հույս են տվել նրան՝ հաղթահարելու իրեն բաժին ընկած փորձությունները: Մեր հայրերը դիմագրավեցին արհավիրքներին, որովհետև հավատացին Տիրոջ խոստումին, որ բարի աչքով էր նայելու իրենց, ազատագրելու էր հայրենի երկիրը և աճեցնելու ու բազմացնելու էր իրենց սերունդները (հմմտ. Ղևտ. ԻԶ 9):

Հակառակ բազում դժվարությունների, ավերների, կոտորածների՝ մեր հայրերը ստեղծեցին այն ամենը, ինչ հայտնի է որպես հայ մշակույթ և հայի ինքնություն: Փառք և գոհություն Ամենակալին, որ Ղրիմի համայնքում ականատեսն ենք նույն այդ ոգուն մեր ժողովրդի զավակների, ովքեր լինելով օրինահարգ քաղաքացիները Ուկրաինայի հյուրընկալ երկրի, ապրում են Մայր Հայրենիքի և Մայր Եկեղեցու հանդեպ ունեցած սիրով՝ արտահայտված հայրենաշեն ծրագրերով և ստեղծագործ կյանքի բազում ձեռնարկներով: Արդարև, «Երանելալ է այր, որ համբերիցէ փորձանաց, զի եթէ ընտիր ևս գտանիցի, առցէ զպսակն կենաց՝ զոր խոստացաւ սիրելեաց Բւրոց» (Հակ. Ա 12):

Այսօր մենք, որպես ուխտավորներ, եկել ենք հաղորդվելու մեր հայրերի այս սուրբ ժառանգությանը, գովաբանելու նրանց ստեղծագործ, աննկուն ոգին և Սուրբ Խաչ վանքի, Սուրբ Նշան Եկեղեցու պարզևի համար Տիրոջ փառաբանելու. «Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր պազէք պատուանդանի ոտից Նորա» (Սղմ. ՂԸ 5):

Խորհրդանշական է նաև, որ Ղրիմի Սուրբ Խաչ վանքի հիմնադրման տոնակատարությունը զուգադիպում է Կիևյան Ռուսիայի մկրտության 1020-ամյա հոբելյանական տոնակատարությունների օրերին: Քրիստոնեական դարձի այս մեծ իրադարձությունը մեկ ամիս առաջ տոնական հանդիսությամբ նշվեց Մոսկվայում և օ-

րեր առաջ տոնախմբվեց Կիևում՝ հոգևոր նորոգության առիթ դառնալով ողջ քրիստոնյա աշխարհի, մեզ բոլորիս համար: Աստծո շնորհների հայցով Մեր շնորհավորանքներն ենք բերում ի Քրիստոս հոգևոր մեր եղբայրներին, Ուկրաինայի Հանրապետության Նախագահ Տիար Վիկտոր Յուշչենկոյին և համայն Ուկրաինայի ուղղափառ հավատացյալներին:

Միրելի ներկաներ, Մեր քրիստոսասեր ժողովուրդների բարեկամությունը անձնուրաց սխրանքների և գոհաբերության նվիրական ակունքներ ունի: Այսօր աղոթք ենք վերառաքում առ Բարձրյալն Աստված և հիշում ենք Երկրորդ Աշխարհամարտի տարիներին ռուս, ուկրաինացի և խորհրդային Միության այլ ժողովուրդների զավակներին և նրանց հետ հայրենիքը պաշտպանող հազարավոր նահատակ հայտնիներին, ովքեր գոհվեցին Ղրիմի և Ուկրաինայի ազատագրության համար Կերչի մատույցներում: Նրանք՝ մեր նահատակ զավակները, խիզախումի և եղբայրական նվիրումի անօրինակ իրենց գործերով են ամրապնդել մեր ժողովուրդների բարեկամությունը, որը առավել պիտի զորանա և ամրապնդվի Ուկրաինայում հայ համայնքի և Հայ Եկեղեցու, իսկ Հայաստանում՝ ուկրաինական համայնքի գործունեությամբ և իր նպաստը պիտի բերի մեր երկրների միջև զարգացող արդյունաշատ համագործակցությանը և բարեկամությանը:

Աղոթում ենք առ Աստված, որ Տերն Ամենակալ Իր հովանի Աջի օրհնության ներքո պահի և պահպանի մեր երկու երկրներն ու ժողովուրդներին՝ իր Սուրբ Հոգու առաջնորդությամբ լուսավորելով նրանց ղեկավարների ընթացքը դեպի նորանոր ձեռքբերումներ՝ ի սեր մեր ժողովուրդների եղբայրության և աշխարհի խաղաղության:

Գնահատանքի և երախտագիտության Մեր խոսքն ենք ուղղում Ուկրաինայի պետական այրերին և բոլոր այն պատասխանատուներին, որոնց նախանձախնդրության ու ջանքերի շնորհիվ այսօր նորոգազարդ իր դռներն են բացում հայոց Սուրբ Խաչ վանքն ու Սուրբ Նշան եկեղեցին: Հայրապետական օրհնությամբ Մեր գնահատանքն ենք բերում Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիայանին և հանձին նրա՝ թեմական խորհրդին, Ղրիմի հովվությանը և ծխական խորհրդին, համայնքի ղեկավարներին, ովքեր քրիստոսասեր ոգով գովելի առաքելություն են իրականացնում ազգային-եկեղեցական մեր կյանքում և առ Աստված հույսով ու սիրով նախանձախնդրությամբ ջանքեր ներդրեցին, որ հավատացյալ Մեր զավակները վերստին շարունակեն աղոթք ու հայց բարձրացնել առ Երկնավորը հինավուրց և աստվածօրհնյալ Սուրբ Խաչ վանքից:

Մեր աղոթքն է, որ Աստված խաղաղության մեջ նոր առաջընթաց ու շինություն պարգևի Ուկրաինայի Հանրապետությանը և Ղրիմի ինքնավար մարզին՝ առաջնորդելով դեպի նոր բարգավաճում Իր Ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո: Թող Տերն Ամենագոր օրհնի Ղրիմի հայոց համայնքն ու եկեղեցին, Ղրիմում ապրող ժողովուրդներին, քույր Եկեղեցիները, նրանց առաջնորդներին և սպասավորներին՝ խաղաղ և անվտանգ ընթացք հաղորդելով նրանց առաքինի գործերին ու նախաձեռնություններին՝ ի վայելումն և ի բարօրություն այստեղ ապրող բոլոր ժողովուրդների:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն Աստուծոյ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեան. Ամէն:

Այս նշանակալի իրադարձության առիթով, որպէս օրհնություն ու նվիրական հիշատակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ համայն հայության Սրբավայրից, Մեզ հետ բերել ենք գեղեցկագարդ սկիհ՝ ընծայելու Սուրբ Նշան վանքին, որպէսզի Պատարագի սրբազան արարողությանը մասնակից հավատավոր մեր զավակները այս սկիհից բաշխվող Սուրբ Հաղորդության ճաշակմամբ միավորվեն Փրկիչ մեր Տիրոջ հետ՝ արժանանալով երկնահեղ, առատաբուխ շնորհների:

Օծման արարողությանը ներկա էին նաև Ղրիմի Բնքնավար Հանրապետության նախագահ Անատոլի Գրիցենկոն և Նախարարների խորհրդի նախագահ Վիկտոր Պլակիդոն:

Վեհափառ Հայրապետը որպէս գնահատանքի և շնորհակալության արտահայտություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բարձր պարգևով՝ «Ս. Ներսէս Շնորհալի» շքանշանով պարգևատրեց ՂԻՀ խորհրդարանի խոսնակ Անատոլի Գրիցենկոյին, վարչապետ Վիկտոր Պլակիդոյին, հայոց գրերի 1600-ամյակի կապակցությամբ պատրաստված եպիսկոպոսական պանակեով՝ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանին, շնորհակալագրեր շնորհեց համալիրի վերանորոգման աշխատանքներում գործուն մասնակցություն ունեցած պաշտոնյաների ու անհատների: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Ս. Նշան եկեղեցուն նվիրեց Երևանի ոսկերչական գործարանում հատուկ պատվիրած խաչը, որը կրկնօրինակն է Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Սուրբ Սեղանի խաչի: Ուկրաինայի հայերի միության նախագահ Հայկ Փամբուխչյանը ՀՀ նախագահին պարգևատրեց միության «Սուրբ Խաչ» շքանշանով:

«Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ՀՀ նախագահին և Վեհափառ Հայրապետին, որ հնարավորություն են գտել ժամանել Ղրիմ՝ մեզ հետ միասին կիսելու այս մեծ ուրախությունը: Շնորհակալություն պարգևի համար. գտնում եմ, որ դրանում դրիմցիների ներդրումն է՝ թերակողգում կայունություն, ազգամիջյան համաձայնության հաստատման գործում,- իր խոսքում նշեց Անատոլի Գրիցենկոն:- Դեռևս երեք տարի առաջ, երբ քննարկվում էր Ս. Նշանի և Սուրբ Խաչի վերակառուցման հարցը, շատերի մոտ մեծ կասկածներ կային՝ հնարավո՞ր է արդյոք այդ իրականացնել: Այսօր այն կայացած իրողություն է»:

Ղրիմի հայկական համայնքի նախագահ Օլեգ Գաբրիելյանն էլ ասաց, որ համալիրն օրերս ապահովվել է հոսանքով, վերանորոգվել է ճանապարհը, և նորոգության աշխատանքները շարունակվելու են. «Մենք պարտավոր ենք սերունդներին փոխանցել այն, ինչ մեզ են ժառանգել մեր նախնիները»:

Ս. Խաչ վանքի հիմնադրման 650 ամյակի և Ս. Նշան եկեղեցու օծման հանդիսություններն այնուհետև մինչև ուշ երեկո շարունակվեցին գեղարվեստական տարբեր միջոցառումներով և ժողովրդական տոնախմբությամբ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԱՅՅԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

Օգոստոսի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին պաշտոնական այցով Ժամանեց Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի գլխավոր քարտուղար Քոլին Վիլյամսի գլխավորած պատվիրակությունը:

Օգոստոսի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պատվիրակությունը ներկա գտնվեց Ս. Պատարագին և եպիսկոպոսական ձեռնադրության և օծման սրբազան արարողությանը: Այնուհետև ԵԵԿ-ի գլխավոր քարտուղարն ու պատվիրակության անդամները ծանոթացան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատմությանը և պատմական կառույցներին, այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ, եղան Սուրբ Գայանե, Սուրբ Հռիփսիմե վանքերում:

Օգոստոսի 25-ին Քոլին Վիլյամսի գլխավորած պատվիրակությանն ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Պատվիրակությանն ուղեկցում էին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Ս. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը, Միջեկեղեցական գրասենյակի վարիչ Ս. Հովակիմ վարդապետ Մանուկյանը, նույն գրասենյակի աշխատակից Ս. Առեն արքեպեպոս Լեւոնյանը: Հանդիպմանը ներկա էր նաև Վիրահայոց թեմի առաջնորդ Ս. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Ողջունելով ԵԵԿ-ի գլխավոր քարտուղարի անդրանիկ այցը հայոց հոգևոր կենտրոն՝ Նորին Սրբությունն իր գոհունակությունը և ուրախությունը հայտնեց Հայոց Եկեղեցու և ԵԵԿ-ի միջև առկա համագործակցության համար: Նորին Սրբությունն ընդգծեց միջեկեղեցական հարաբերությունների սերտացման անհրաժեշտությունը՝ դրանում կարևոր նկատելով Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի առաքելությունը:

Հայոց Հովվապետը նաև անդրադարձավ Հայ Եկեղեցու առջև ծառացած մարտահրավերներին, ԵԵԿ-ի գլխավոր քարտուղարին ներկայացրեց Եկեղեցու ներկայիս գործունեությունը և կատարված աշխատանքները քրիստոնեական դաստիարակության, եկեղեցականների պատրաստության, եկեղեցի-պետություն հարաբերությունների, սոցիալական սպասավորության ոլորտներում: Անդրադարձ կատարվեց նաև Հայ Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերին և նրանց խնդիրներին:

Հանդիպման ընթացքին Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց՝ հայ ժողովրդին և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն ԵԵԿ-ի բերած աջակցության համար:

Հայ Եկեղեցին Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի անդամ է 1977 թ., ունի մեկ ներկայացուցիչ ԵԵԿ-ի Կենտրոնական կոմիտեում և երեք մշտական ներկայացուցիչներ հանձնախմբերում:

* * *

Նույն օրը պատվիրակությունն այցելեց Գևորգյան Հոգևոր Ճեմարան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հանդիպում ունեցավ Հայաստանում գործող Էկումենիկ մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որի ընթացքում ներկայացվեցին այդ կազմակերպությունների գործունեության ոլորտները, իրագործվող ծրագրերը:

Օգոստոս 25-ին Ք. Վիլյամսի գլխավորած պատվիրակությունն եղավ նաև Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ուր հանդիպում ունեցավ Արագածոտնի թեմի Առաջնորդական տեղապահ Տ. Գրիգոր աբեղա Խաչատրյանի հետ: Այնուհետև հյուրերն այցելեցին Բյուրական և Ամբերդ:

*ՄԱՅԸ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՄԱՍՆԱՎՈՐ ԱՂՈԹՔ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ԿԱԹՍԱՅԻ ԱՌՋԵՎ

Օգոստոսի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Մայր Տաճարում, սկսվեց Սրբալույս Մյուռոնի պատրաստության քառասնօրյա շրջանը: Երեկոյան ժամերգությունից հետո կատարվեց մասնավոր արարողություն՝ հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Հոգևորականների ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը թափոռով առաջնորդվեց Մայր Տաճար, ուր մաքուր ձիթայուղով լի Մյուռոնի կաթսայի առաջ Նորին Սրբության շուրթերից հնչեց առաջին աղոթքը և կարդացվեց Սուրբ Ավետարանը:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնության խոսքն ուղղեց ներկա հավատացյալներին:

Նորին Սրբությունը կոչ արեց բարեպաշտ ժողովրդին առ Աստված հարատև աղոթքներով, հոգևորականների հետ միասնաբար, Սրբալույս Մյուռոնի պատրաստության այս 40 օրերի ընթացքում, առավել ջանասիրությամբ ու նախանձախնդրությամբ մասնակից դառնալ մեր եկեղեցական կյանքում նշանակալից այս իրադարձությանը, քանզի այդ Մյուռոնով պիտի օծվեն և սրբազործվեն մեր վանքերն ու տաճարները, մեր սրբություններն ու մեր անձերը: Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ Սուրբ Հոգու շնորհներն առատորեն երկնքից հեղվեն մեր ժողովրդի վրա, որպեսզի շենանան մեր Հայրենիքն ու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Այսուհետ, Հայ Եկեղեցու կանոնների համաձայն, 39 օրեր շարունակ երեկոյան ժամերգությունից հետո (ժամը 18.00-ին) Մայր Տաճարում կատարվելու է հատուկ այս աղոթքը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԵՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ

Օգոստոսի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով: Ողջունելով ժողովականներին՝ Նորին Սրբությունն իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց ներկաներին՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն բերած իրենց նախանձախնդիր ծառայության համար: Մինչ օրակարգին անցնելը ԳՀԽ անդամներին ներկայացվեց տեղեկատվություն նախորդիվ կայացված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ:

Ժողովի օրակարգում ընդգրկված էին Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 100-ամյակին նվիրված միջոցառումներին և սեպտեմբերի 28-ին կատարվելիք Մյուռնոսօրհնության արարողությանը, ինչպես նաև ներեկեղեցական, միջեկեղեցական կյանքին առնչվող հարցեր:

Վազգեն Ա Հայրապետի ծննդյան 100-ամյակին նվիրված միջոցառումների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ զեկույցով հանդես եկավ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Տեղեկացվեց, որ սեպտեմբերի 20-ին Մայր Աթոռում կմատուցվի Սուրբ Պատարագ և կկատարվի հոգեհանգստյան արարողություն: Հոբելյանի առիթով կազմակերպվելու են գիտաժողովներ, հոբելյանական երեկո Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, լուսանկարչական և արխիվային նյութերի ցուցահանդեսներ, հանրակրթական դպրոցներում անցկացվելու են բաց դասեր, թեմերում՝ միջոցառումներ՝ նվիրված երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետին: Այս առիթով թողարկվելու է հոբելյանական հուշադրամ, լույս է ընծայվելու Հայրապետի երկերի լիակատար ժողովածուն: Մեկ հանրակրթական դպրոց Երևանում կանվանակոչվի Վազգեն Ա Հայրապետի անվամբ: Հոկտեմբեր ամսին կանցկացվի նաև հոգևոր երաժշտության փառատոն:

Այնուհետև ժողովականներին ներկայացվեցին սեպտեմբերի 28-ի Մյուռնոսօրհնության նախապատրաստական աշխատանքները և հարակից միջոցառումների ժամանակացույցը: Տեղեկացվեց նաև, որ արարողություններին կմասնակցեն մի շարք քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ:

Մյուռնոսօրհնության նախընթաց օրերին՝ սեպտեմբերի 26-ին տեղի կունենան Մայր Աթոռի մկրտարանի՝ Ս. Վարդան եկեղեցու և Ս. Հովհաննես Մկրտիչ մատուռի օծման և «Շողակաթ» հեռուստաընկերության նոր շենքի բացման արարողությունները, ինչպես նաև տոնական համերգ՝ Ա. Խաչատրյանի անվան ֆիլհարմոնիկ համերգասրահում: Սեպտեմբերի 27-ին Ամենայն Հայոց Հայրապետը քույր Եկեղեցիների ներկայացուցիչների, թեմակալ առաջնորդների և ուխտավորների հետ կայցելի Հա-

յոց Մեծ Եղեռնի զոհերի հուշահամալիր, նույն օրը, երեկոյան, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում տեղի կունենա Էկումենիկ աղոթք: Մեպտեմբեր 28-ին կմատուցվի Սուրբ Պատարագ և կկատարվի Սրբալույս Մյուռոնի օրհնության արարողությունը: Մեպտեմբեր 29-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում նախատեսվում է «Անուշ» օպերայի բեմադրություն՝ աշխարհահռչակ կանադահայ երգչուհի Ալին Գուրթանի մասնակցությամբ:

Ժողովականները գնահատանքով ընդունեցին կատարված աշխատանքների մասին ծանուցումները՝ մեծապես կարևորելով Վազգեն Վեհափառի ծննդյան 100-ամյակի նշանակալի հոբելյանի նշումը և Մյուռոնօրհնության սրբազան արարողության հանդիսավորությամբ կազմակերպումը:

Ժողովի ընթացքին Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձ ունեցավ նաև Մայր Աթոռի միաբան Ս. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանի՝ հոգևոր ծառայությունը թողնելու դիմումին: Քննարկումների արդյունքում որոշվեց ընթացք տալ նրա դիմումին, որով Հայրապետական տնօրինությամբ Ասողիկ սրբազանը կարգալույծ է հռչակվում և դասվում աշխարհականների շարքը՝ Սմբատ Արիստակեսյան ավագանի անունով:

Ժողովը փակվեց Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով և «Պահպանիչ» աղոթքով:

*ՄԱՅԸ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով օգոստոս ամսին

Օրհնության գիր է տրվել.

Տ. Արշակ ավագ քահանա Խաչատուրյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Տ. Տիրան ավագ քահանա Փափազյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Վարդան արքեպիսկոպոստը նշանակվել է Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն: Մինչ այդ Հայր Սուրբ Ծառայության էր կոչված Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմում՝ Սիդնեյի հոգևոր հովվի և առաջնորդական փոխանորդի հանգամանքով:

Տ. ՎԱՐԴԱՆ ԱՔԵՂԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

(ավագանի անունը՝ Արիստակես)

Ծնվել է 1979 թ. օգոստոսի 4-ին Երևան քաղաքում:

1986-1996 թթ. սովորել է տեղի Նելսոն Մտեփանյանի անվան թիվ 71 ռուսական միջնակարգ դպրոցում:

1996-1997 թթ. ուսանել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում և ստացել ընդհանուր միջնակարգ և ճեմարանական կրթություն:

1997-2002 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանում:

2001 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2003 թ. փետրվարի 20-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հովհան Օձնեցու» «Կանոնագիրք Հայոց» «Ժողովածուն և նրա հետագա խմբագրությունը» թեմայով:

Գևորգյան Հոգևոր ճեմարանն ավարտելուց հետո ծառայել է Մայր Տաճարում լուսարարապետի պաշտոնակատարի ծիսական գծով օգնական:

2003 թ. փետրվարի 27-ին՝ Ս. Վարդանանց տոնին, ձեռամբ Տ. Պարզև արքեպս. Մարտիրոսյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2005-2008 թթ. Հայրապետական տնօրինությամբ ծառայության է կոչվել Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմ՝ Սիդնեյի հոգևոր հովվի և առաջնորդական փոխանորդի հանգամանքով:

ՄԱՅՐ ԱԹՐԱՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՔԱՐՈՉԽՈՍԱԿԱՆ

Տ. ԴԱՆԻԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՐՈՁԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(3 օգոստոսի 2008 թ.)

«Անուամբ Անեղին Աստուծոյ, Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»

Որքան մարդ արարածն սկսում է ճանաչել Ամենաբարձրյալ Աստուծո գործերն ու ճանապարհները, գործությունն ու սրբությունը, այնքան ավելի մեծ համոզվածությամբ սկսում է կրկնել. «Սուրբ, սուրբ, սուրբ ես Տէր զօրութեանց, լի են երկինք եւ երկիր փառօք Քո» (Եսայի Զ 3):

Սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր, Աստվածորդու և հայ ժողովրդի հանդիպման սրբազան այս վայրում՝ բովանդակ հայության միության նշանակ Մայր Տաճարի կամարների ներքո, քիչ առաջ հանկարծական սարսուռ ազդող զանգակների դողանջունների ձայնակցությամբ, ծավալվեց ամեն մի հայի հոգուն այնքան հարագատ «Սուրբ, սուրբ» ախորժալուր օրհնաբանությունը:

Ակամայից հարցնում ես ինքդ քեզ. «Որտեղի՞ց են գալիս սրբասացության այս խոսքերը, ո՞վ է հորինողը մինչև երկնքի դարպասները ուղեկցող այս օրհներգության, որն ընդամենը մի քանի բառից է բաղկացած, սակայն հոգիդ լցնում է այնպիսի ուժգին ոգևորությամբ և հոգեկան բերկրանքով, որ թվում է, թե արդեն իսկ բացված են մեզ համար սերովբեափակ դռները դրախտի»։ Եվ այս ամենի պատճառը միայն այն չէ, որ ճշմարտություն է հետևյալ խոսքը. «Չկա այնպիսի մի բան, որ մեր կամքը հեղաշրջի ուրախության կամ այլ տրամադրության այնպես, ինչպես երգեցողության ձայնը»:

Աստվածային տեսիլքով ներշնչված այս օրհնաբանությունն ամենից առաջ յուրահատուկ է նրանով, որ այն երգվում է Քրիստոսին պաշտող բոլոր եկեղեցիների պատարագների ընթացքում: Այս նույն բառերով են աղոթում աշխարհի բոլոր քրիստոնյաները՝ տարբեր լեզուներով, զանազան երաժշտականությամբ, բայց և այնպես միևնույն ոգով և աստվածայինին հաղորդակցվելու նույն տենչանքով: Եվ որովհետև մենք ապրում ենք մեր երգերի մեջ և մանավանդ հոգևոր երգերի մեջ՝ մեր երգած «Սուրբ, սուրբ»-ը նաև մեր կյանքն է ու մեր հոգու երկնային ձգտումների արտահայտիչն ու արտացոլումը:

Սիրելի՛ հավատացյալներ,

Հոդեղեն արարածներից «Սուրբ, սուրբ» օրհներգի առաջին ունկնդիրը եղավ Հին Կտակարանի երեք մեծ մարգարեներից առաջինը՝ աստվածատես Եսային, ով, ի դեպ, Սուրբ Գրքի միակ մարգարեն էր, որ մարգարեուհի կին ուներ:

Մեզանից ճիշտ և ճիշտ 2700 և 50 տարիներ առաջ, երբ նա կանգնած էր Երուսաղեմի տաճարում, Ձորությունների Տերը նրան մարգարեության կոչեց: Եվ ահա թե ինչ է գրում մարգարեն իր գրքի 6-րդ գլխում. «Այն տարին, երբ մեռավ Ոգիա արքան, տեսա Տիրոջը, որ նստած էր բարձր ու վերացած աթոռին, իսկ տաճարը լի էր Նրա փառքով: Նրա շուրջը սերովբեներ կային, որոնցից յուրաքանչյուրը վեց թև ուներ, երկուսով իրենց երեսներն էին ծածկում, երկուսով իրենց ոտքերը և երկուսով էլ թռչում էին: Չայ-

նակցում էին իրար և ասում «Սուրբ, սուրբ, սուրբ է Ձորությունների Տերը և ամբողջ երկիրը լի է Նրա փառքով»:

Վերոհիշյալ սերովբեները հրեշտակների բարձրագույն դասն են ներկայացնում և որպես բոցակեզ հուր՝ շրջապատում են Աստծուն և Նրա գահը և հենց երայեցերեն սերաֆիմ-սերովբե անունը նշանակում է կրակ, հուր, բոցավառ: Նրանց մշտաբարբառ երեքսրբյան օրհներգը երկնքում անդադար տևող երկնային պատարագն է, որի մասին ավելի հանգամանորեն հայտնված է մեզ Հովհաննու Հայտնության մեջ: Այսպիսով, թևաքողյալ սերովբեների այս օրհներգության երգեցողությունը մեր պատարագների ընթացքում երաշխիքն էր երկնային պատարագի հետ անխզելի մեր կապի:

Այս օրհնության մեջ երկնային և երկրային պատարագները միաձուլվում են մեկ երգչախմբի օրհնաբանությամբ: Այս երգի միջոցով Քրիստոսի Եկեղեցին վեր է խոյանում դեպ երկինք, դեպ Աստծո գահը, դեպ Նրա անպատմելի փառքը:

Հովհաննես Ավետարանիչը լավագույն բացահայտում է Երուսաղեմի տաճարը, երկինքն ու երկիրը լցնող Աստծո փառքը՝ ասելով. «Եվ բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ, և տեսանք Նրա փառքը, նման այն փառքի, որ Հայրն է տալիս Միածնին լի շնորհով և ճշմարտությամբ» (Հովհ. Ա 14): Ուրեմն, մենք, որպես հավատացյալները Քրիստոսի Եկեղեցու, նախ և առաջ պիտի փնտրենք Աստծո փառքը, որովհետև Հիսուս ասում է. «Դուք ինչպե՞ս կարող եք հավատալ, քանի որ իրարից ենք փառք առնում և չենք որոնում այն փառքը, որ միակ Աստծուց է գալիս»:

Երեքսրբյան օրհներգի մեջ Աստծուն երեք անգամ սուրբ անվանելը, Աստվածաշնչի լեզվի յուրահատկությունների պատճառով է և նշանակում է, որ Աստծո սրբությունը գերագույն աստիճանի է: Սրբություն նշանակում է այլ, տարբեր և ցուցանշում է Աստծո անհամեմատելի կարողությունը ամեն ինչի նկատմամբ, ինչ գոյություն ունի Նրանից դուրս: Սակայն պետք չէ երբեք մոռանալ, որ սրբությունը անմերձենալի չէ մեզ համար, որովհետև Աստված ինքն է սրբության կոչ անում մեզ Ղևտացվոց գրքում՝ ասելով. «Սուրբ եղեք, քանզի Ես՝ ձեր Տեր Աստվածը, սուրբ եմ»: Ուրեմն Աստծո սրբությունը մեզ համար չի մնում անհնարին մի բան, այլ այս աստվածային հրավերը արդիական է մեզ համար ամեն օր, ամեն պահ:

Միբելի՝ հավատացյալներ, եթե Եսայու ահեղակերպ տեսիլքում բոցանշույլ սերովբեներ էին հայտնվում Երուսաղեմի տաճարի մեջ, ապա բավական է միայն վեր նայեք և մեր Մայր Տաճարի գմբեթարդ հարկի տակ կտեսնեք գեղեցկահարմար հորինվածքով վեցթևյանների զգաստացնող պատկերները և եթե հնում միայն նրանք էին փառաբանում, ապա մեզ արտոնված է բարձրաբարբառ ձայնակից լինել նրանց՝ օրհնել և օրհնաբանել Ձորությունների Տիրոջը:

Թող մեր տաճարներում հնչեցված «Սուրբ, սուրբ»-ը, թաթախված մեր աղոթքներով, վեր համբառնա առ Ամենաբարձրյալն Աստված և դառնա կատարյալ շարունակությունը սերովբեական անդադար փառաբանության:

Թող ամեն անգամ, երբ հնչի այս օրհներգությունը, Միածնի փառքը ծավալվի ոչ միայն տաճարում, երկնքում ու երկրի վրա, այլև, որ ամենակարևորն է, մեր հոգիներից ներս, որպեսզի կարողանանք գոհությամբ բացականչել.

«Հրեշտակային երգակցութեամբ զՔեզ օրհնել, զՔեզ գովել և զՔեզ գոհութիւն և փառք մատուցանել ամենագոր տերութեանդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն»:

**Տ. ԵԶՆԻԿ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**
(17 օգոստոսի 2008)

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ, այսօր Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնն է: Մեր ժողովուրդը առանձնահատուկ վերաբերմունք ունի այս տոնի նկատմամբ, որովհետև այսօր նաև հավարտ Սուրբ Պատարագի կատարվում է խաղողի օրհնությունը: Կատարվում է խաղողի միջոցով մեր աշխատանքի արժևորումը և բոլոր բերքերի օրհնությունը, որպեսզի մեր տները մտնեն մեր աշխատանքի արդյունքները, և մենք կարողանանք վայելել այն մինչև մյուս տարի, մինչև մյուս գարուն, երբ նորից սկսենք խաղող աճեցնել և ցորեն ցանել:

Իմ գրասեղանի վրա մի գիրք կա դրված, որ կոչվում է «Հայսմավուրք»: Դա Հայ Եկեղեցու տոնելի սրբերի վարքը և ամենօրյա տոների նկարագրությունն է: Եվ ամեն օր սենյակից դուրս գալուց առաջ ես կարդում եմ այդ օրվա նյութերը: Քանի որ մինչև այսօր «Հայսմավուրք» գրքի ժողովրդական հրատարակությունը գոյություն չունի և դուք հնարավորություն չունեք ընթերցելու այդ գիրքը, ես ցանկանում եմ ձեզ պատմել այն, ինչ որ կարդացի ես այսօր այդ գրքում:

Սուրբ Աստվածածինը երկրային կյանքում հասել էր իր կյանքի հիսունիններորդ տարուն, և մոտենում էր այս աշխարհում իր ապրելու օրերի ավարտը: Գաբրիել հրեշտակապետը, որ տարիներ առաջ տեսիլքով եկավ և ավետեց Աստվածածնին Քրիստոսի Ծննդյան լուրը, եկավ դարձյալ երկիր, ներկայացավ սուրբ Աստվածածնին և ասաց, որ երեք օր հետո Նա ավանդելու է հոգին: Աստվածամայրը ոտքի կանգնեց, դուրս եկավ Իր տնից, գնաց պարտեզ և սկսեց աղոթել: Երբ Նա քայլում էր ծառերի միջով, բոլոր բույսերը և բոլոր խոտերը խոնարհվում էին Նրա առջև: Գաբրիել հրեշտակապետը Նրան հանձնեց նաև արմավենիների ոստերով պատրաստված մի պսակ: Եվ Աստվածամայրը աղոթեց Իր Որդուն և ասաց. «Տեր Հիսուս Քրիստոս, Դու խոստացար, որ Ինձ մենակ չես թողնի այս երկրի վրա, և խոստացար, որ անձամբ կգաս և կստանաս Իմ հոգին»: Երբ Նա վերադարձավ տուն, տեսավ, որ բոլոր առաքյալները հավաքվել են տան շեմքին, առանց մեկը մյուսին լուր տալու, որովհետև այն ժամանակ հեռախոսներ չկային, հեռագրեր չկային, և նամակագրությունը շա՛տ երկար ամիսներ էր տևում: Ուրեմն, առանց մեկը մյուսին լուր տալու հանկարծ բոլորը հավաքվում են Աստվածամոր առջև: Եվ երբ Աստվածամայրը ներս է մտնում և բազմում է Իր մահձին, նրա շուրջը հավաքվում են բոլոր առաքյալները և սկսում պատմություններ պատմել: Այդ ժամանակ Աստվածամորը սպասարկող կանայք և կույսերը հետաքրքրությամբ հարցեր էին տալիս առաքյալներին: Եվ ահա թե ինչ է պատմում Պետրոս առաքյալը: Նա ասում է, որ երբ մեզանից որևէ մեկը պատրաստվում է այն աշխարհի գնալու և ավանդելու իր հոգին, երկու հրեշտակներ են գալիս՝ մեկը՝ բարության, մյուսը՝ չարության: Եվ եթե մարդը իր կյանքի ընթացքում ավելի մեղքեր

Է գործել, քան բարի գործեր, ցնծում են դները, ցնծում են սատանաները, որովհետև չարության հրեշտակը պիտի ավանդի այդ մարդու հոգին և տանի դեպի դժոխք: Իսկ եթե այդ մարդու արդար գործերն են շատ, նշանակում է՝ բարության հրեշտակը պիտի ավանդի այդ հոգին և այդ մարդու հոգին տանի դեպի դրախտ: Ահա այսպիսի պատմություններով, երգերով և սաղմոսներով անցնում են այդ երեք օրերը, և հանկարծ դորդում է երկինքը, դորդում է երկիրը, և նույն Բնքը՝ Հիսուս Քրիստոս, դարձյալ իջնում է երկիր՝ Իր Մոր հոգին անձամբ ավանդելու և ստանալու: Եվ երբ Նա ստանում է սուրբ Կույսի հոգին, բոլորը տեսնում են, թե ինչպես Նրա հոգին ձերմակ, ձյան նման սպիտակ է և տեսանելի բոլորին: Հարցնում են ներկաները, թե ինչո՞ւ է այդ հոգին այդքան սպիտակ, և Քրիստոս պատասխանում է, որ ծննդյան ժամանակ մեզանից ամեն մեկի հոգին այդքան մաքուր և այդքան սպիտակ է: Մեր կյանքի ընթացքում, երբ մենք մեղք ենք գործում, կամաց-կամաց այդ սպիտակությունը փոխվում է սևության:

Քրիստոս պատվիրում է առաքյալներին, որ Աստվածամոր մարմինը գետեղեն մի գերեզմանի մեջ և երեք օր չբացակայեն և երեք օր սաղմոսներ կարդան: Եվ ահա երեք օր անց առաքյալներից մեկը, որ չէր հասցրել ժամանակին գալ, երբ հասնում է Երուսաղեմ, խնդրում է ցույց տալ իրեն Աստվածամոր դին, որպեսզի կարողանա իր հրաժեշտը տալ Նրան: Երբ առաքյալները գնում և բացում են գերեզմանը, տեսնում են, որ այնտեղ միայն սավանը կա, որով փաթաթել էին Աստվածամորը: Նրա մարմինը փոխադրվել էր, ինչպես գրված է «Հայսմավուրք»-ում, այնտեղ, որտեղ պատվիրել էր Քրիստոս:

Սա է, սիրելի հավատացյալներ, սուրբ կույս Աստվածամոր վերափոխման պատմությունը, որ գրված է մեր Եկեղեցու սուրբ գրքերում: Եթե մենք ուշի ուշով կարդացել ենք Ավետարանը, ապա նկատել ենք, որ շատ հաճախ Քրիստոս առակներով սովորեցնում էր մեզ, թե մենք ինչպես պիտի ապրենք: Շատ հաճախ նաև Քրիստոս Իր կյանքի օրինակներն էր առակ դարձնում և Իր կյանքի օրինակով էր սովորեցնում մեզ, թե ինչպես պետք է ապրել, որպեսզի արժանանանք երկնքի արքայությանը: Աստվածամոր վերափոխման այս պատմությունը մի առակ է մեզ համար, մի դաս ևս, մի օրինակ: Ի՞նչ ենք մենք քաղում նրանից: Մենք տեսնում ենք, թե ինչպես, երբ Քրիստոս ավանդեց սուրբ Կույսի հոգին, այն ձերմակ էր: Եվ մենք գիտենք, սովորեցինք այդ պատմությունից, որ ձերմակ են եղել մեր բոլորի հոգիները: Եվ երբ հրեշտակը գա, մենք այնպես պիտի անենք, որ բարության հրեշտակը ավանդի մեր հոգին, որ մեր հոգին, որքան հնարավոր է, ձերմակ մնա մեր կյանքի ընթացքում: Եվ եթե կյանքի ընթացքում սև բծեր այնտեղ լինեն, կարողանանք մեր պահեցողությամբ, մեր աղոթքներով և մեր եկեղեցական մասնակցությամբ նորից ջնջել այդ բծերը և նորից ձերմակացնել:

Սիրելի՛ հավատացյալներ, այս դասով և այս առակով ես մաղթում եմ, որ մեր բոլորի հոգիները միշտ ձերմակ մնան: Հրավիրում եմ ձեզ նաև Սուրբ Պատարագի արարողության ավարտին մասնակցելու Խաղողօրհնեքի արարողությանը, որպեսզի այդ Խաղողօրհնեքի միջոցով բարությունը լցվի մեր բոլորի տները այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

**Տ. ՄՈՍԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈՁԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(10 օգոստոս 2008)

*«Այս աշխարհի հարուստներին պատվիրի՛ր,
որ չհպարտանան և չապավինեն սնտոի
հարստությանը, այլ՝ Աստծուն, որ մեզ առատա-
պես ամեն ինչ տալիս է վայելելու համար,
պատվիրի՛ր բարիք գործել, բարի գործերով
հարստանալ»:*

Ա Տիմ. Զ 17-18

Սիրելի՛ հավատացյալ և բարեպաշտ ժողովուրդ, Պողոս առաքյալի այս խոսքերը ինչքան համահունչ են մեր օրերին: Այսօր աշխարհը որքան կարիք ունի բարի գործերի, բարի մտածումների, քանզի ամեն ինչ, որ բարի է, աստվածահաճո է: Եթե ուշադիր հետևենք Վարք Սրբոցին, կտեսնենք, որ նրանցից յուրաքանչյուրն իր կերպով, իր նկարագրով, և առավելապես իր գործողություններով աշխատել է աշխարհը ողորդել բարությամբ, բարին սերմանել: Աստված, երբ ստեղծեց աշխարհը, սահմանեց բարին ու չարը, սակայն Աստված որպես որդեսեր ծնող, Իր զավակներին նախ բացատրեց, թե որքան գեղեցիկ է բարին և անհրաժեշտ: Աստված Իր ամբողջ արարչագործությամբ վկայեց, որ Նա մեզ՝ Իր զավակների համար միայն բարին է ցանկանում: Աստծո կամքն այստեղ շատ հստակ է. պատվիրեց սիրել միմյանց, քանզի Աստված Ինքը սեր է: Մարդ, անշուշտ, ինքն իրեն է պատժում, երբ հեռանում է Աստծուց, չի կատարում խոսքը, կամա-ակամա դառնում է չարի ծառա: Գերադասում է ինչքը, հարստությունը, ժամանակավոր աշխարհիկ հաճույքները, անցողիկ և ունայն հաջողությունների կամ մարդկանց հետ է կապում իր հույսը: Ինչ խոսք, կյանքն ապացուցել է, որ աշխարհում ոչինչ մնայուն ու հարատև չէ, այլ միայն Աստված, Ում պատվիրաններով ապրելիս միայն մարդ կարող է իրոք իր համար ստեղծել քրիստոնեական լի կյանք, որը հիմնված է բարոյական բարձր չափանիշների վրա, որտեղ բացառվում են ամբարշտությունը, սնափառությունը, նյութական հարստությունն ու բարեկեցությունը: Մարդկային բանական կյանքը հեռու է նման միտումներից, նա խարսխվում է մաքրության, բարեպաշտության, ուղղամտության և աստվածային մեծ սիրո վրա: Մարդու հոգևոր աշխարհը միշտ կարիք ունի զարգացման, կատարելագործման և վերանորոգության: Հիսուս է մարդկային բանական կյանքի վերանորոգիչը: Հեռու վանեցեք ձեզանից հին մարդուն իր նախկին կենցաղով, այն որ ապականված է խաբեբայության ցանկություններով, նորոգվեցեք ձեր մտքով և հոգով, հագեք նոր

մարդը, որ ստեղծված է Աստծո արդարությամբ և ճշմարիտ սրբությամբ: Ահա ինչ է մեզ պատգամում Աստվածաշունչը:

Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ, մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոս բարեգութ է, Նա սիրում է մեզ և հաստատապես մտահոգ է մեր հոգևոր վերանորոգությամբ, ասել է, թե Նա է ուղղում է մեր ճանապարհները դեպի լույս, դեպի մաքրություն, դեպի կատարելություն: Նա մեզ ցույց է տալիս ճշմարիտ ուղին և միաժամանակ օգնում ու աջակցում է մեզ ոտք դնել այդ ուղին: Նա միշտ պատրաստ է ներելու ամենքին, սպասում է մեր դարձին և ապաշխարությանը:

Այո՛, ժամանակակից աշխարհը իր խեղացնոր և գլխապտույտ արագությամբ այսօր մեզ հիշեցնում է հեռավոր այն ժամանակները, երբ երկրի վրա իշխում էր փողատիրությունը, ընչաքաղցությունը, երբ թագավորում էր կեղծիքը, անարդարությունը, երբ ոտնահարվում էր հասարակ մարդու բնական ու բնականոն իրավունքը: Մարդիկ այսօր էլ փողի մոլուցքով տարված՝ ընկած են անձնական շահի հետևից, մինչդեռ անմեղ մարդկանց արյուն է հովում աշխարհի չորս ծագերում և մարդը չի կարողանում գտնել իր տեղն ու դերը:

Այո՛, ցավալիորեն պիտի խոստովանենք, որ այս աշխարհի «հզորները» երևի ամենապարզ ճշմարտությունը չգիտեն. այն, ինչ աշխարհում նյութական է, անցողիկ է՝ չիմանալով, որ մեր Տերը և Փրկիչը՝ Հիսուս Քրիստոս, մեզանից 2000 տարի առաջ հայտարարեց, որ դրանք ամբարիշտներ են և չեն կարող Իր ճանապարհով ընթանալ: Հիսուսի ճանապարհով կարող են գնալ Աստծո զավակները, մարդիկ, որոնք խոնարհաբար կատարում են մեր Տիրոջ պատվիրանները, ովքեր հեռու են աղտեղություններից, անմաքրություններից, ովքեր հանապազ աղոթքներով մնում են մեր Տիրոջ հետ, ովքեր ապրում են աստվածային մեծ սիրով և ինչպես Հովհաննես Ավետարանիչն է ասում. «Չկա ավելի մեծ սեր այն սիրուց, երբ մարդն իր կյանքն է դնում իր բարեկամների համար», «Այս է պատուել Իմ, զի սիրեսցիք զմիմեանս, որպես ես ես սիրեցի զձեզ: Մեծ եւս քան զայս սեր ոչ ոք ունի եթե զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց»:

Քրիստոսով, սիրելի՛ ներկաներ, նորոգվեց մարդ արարածը: Հին մարդը մեղքի ծառա է, սակայն այսօր էլ անցել են հազարամյակներ, բայց մարդիկ հազարավոր թելերով դեռ կապված են հին մարդուն, նրա կուռքին, նյութականին, շահին և բազում մոլորություններին:

Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ, այսօր մենք բոլորս բարենորոգության կարիք ունենք, կարիք ունենք մաքրվելու, ապաշխարելու, զոջալու և մեր Երկնային Տիրոջը մոտենալու, քանզի նրանով է հաղթանակը, նրանով է հավիտենական կյանքը, նրանով է երկնքի արքայությունը: Մեր Տերը կամենում է բոլորին փրկել, բոլորին հավիտենական երանություն պարգևել: Սակայն այդ շնորհը կարող են ստանալ միայն ճշմարիտ հավատացյալները, որոնք խոսքի մեջ գորանում են, ովքեր հեռու են չարությունից ու բանասարկություններից: Եսայի մարգարեն ասում է. «Լվացվե՛ք, մաքրվե՛ք, թոթափեցե՛ք ձեզանից չար արարքները, սովորե՛ք բարիք գործել»:

Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ, այսօր չար ուժերը զանազան այլակերպումներով պայքարի են դուրս եկել քրիստոսադավան ուժերի դեմ, ասել է թե բարու դեմ: Այսօր եթե մարդը չի գործում Քրիստոսով, ուրեմն նա մենակ է՝ ենթակա ամեն տեսակ բանասարկությունների: Տերը հավատացյալ մարդու հետ է և բնակվում է նրա մեջ և գործացնում է նրան: Տերը սիրում է բոլորին և բոլոր մեղավորներից ակնկալում է ապաշխարություն: Ապաշխարության միջոցով մենք դարձ ենք կատարում դեպ Քրիստոս՝ նրան ընդունելով մեր Տեր և Փրկիչ:

Սիրելի՛ հավատացյալներ, մեր այս դժվարին ժամանակներում ամուր կերպով փարվենք մեր նախնյաց սուրբ հավատքին, հանապազ կատարենք Աստվածաշունչ մատյանի հոգենորոգ պատվիրանները, լինենք հույսի ճանապարհով ընթացողներ, հետևենք աղոթքին ու խոսքի պաշտամունքին: Պողոս առաքյալը մեզ ճշմարիտ խոստովանում է, որ ամբարիշտ և չար մարդը իր չար գործերի համար կպատժվի, իսկ նա, ով անընդհատ փնտրում է արդարություն, անապականություն, պետք է բարձրանա և պիտի քայլի հավիտենական կյանքի ճանապարհով՝ գորացած Աստծո խոսքով և բարենորոգված Սուրբ Հոգու շնորհներով: Պողոս առաքյալը մեզ նաև խրատում է. «Ուրանանք ամբարիշտ և աշխարհական ցանկությունները և խոհեմությամբ ու արդարությամբ և աստվածաշտությամբ ապրենք այս աշխարհում՝ սպասելով երանելի հույսին և մեր Աստծո և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի փառքի հայտնությանը»:

Վերջացնելով իմ խոսքը, սիրելի ներկաներ, աղոթում եմ ջերմորեն երկնավոր Հորը, որ լսելի դարձնի ձեր բոլորի խնդրանքները և օգնի մեզ մշտապես՝ ընթանալու խաղաղության, արդարության և ճշմարտության ճանապարհներով:

Աստծո շնորհը, սերը թող միշտ լինի ձեզ հետ, այժմ և հավետ. Ամեն:

ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՅԱԿԱՆ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԱՂՈՒՄՅԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան

ՊԵՏՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՐԴՈՒՄՅԱՆԻ «Ի ՆԿԱՏՄԱՆԷՆ ԱՐԻՍՏՈՏԷԼԻ» ԵՐԿՐ

ԺԸ դարի նշանավոր ազգային-եկեղեցական գործիչներից է Պետրոս արքեպիսկոպոս Բերդումյանը (Աղամալյան – Նախիջևանցի)՝ աստվածաբան, փիլիսոփա, Սուրբ Գրքի մեկնիչ, աղբյուրագետ, մանկավարժ, տաղասաց և հասարակական մի գործիչ, որի հարուստ մատենագրական ժառանգությունն իսկ խոսուն վկայությունն է այս մտավորական հոգևորականի լայն մտահորիզոնի և աշխարհայացքի մասին¹:

Վստահ ենք, որ Բերդումյանի երկերի բազմակողմանի և խորագնին ուսումնասիրությունները հարուստ նյութ պիտի մատակարարեն և հնարավորություն ընձեռեն մեզ՝ հատկապես առավել խորությամբ հասկանալու դարաշրջանի աստվածաբանական-փիլիսոփայական մտքի զարգացվածության և միտումների մասին: Պետրոս Սրբազանն այն հանրագետ հեղինակներից է, որի ստեղծագործություններն արժանի են ուշադրության և լույս ընծայման՝ հնարավորություն ընձեռելով ընթերցողների ավելի լայն շրջանակի ծանոթանալու նրա երկերին և մտածումներին: Դժբախտաբար նրա ոչ բոլոր աշխատանքներն են արժանացել տպագրության:

Սրբազան Հոր անտիպ փիլիսոփայական երկերից է նաև *«Ի նկատմանէն Արիստոտէլի»* աշխատությունը: Առաջին անգամ փիլիսոփայական այս գործի մասին նշում է բանասեր Շուշանիկ Նազարյանը՝ առանց մատնանշելու իր օգտագործած աղբյուրը²: Մյուս բոլոր հետազոտողները, ովքեր զբաղվել են Բերդումյանի մատենագրական վաստակի ուսումնասիրմամբ, կա՛մ այս անունով գործ չեն գտել ձեռագրացուցակներում, կա՛մ ընդհանրապես չեն ներառել այն նրա ժառանգության մեջ, կա՛մ էլ լավագույն դեպքում հղել են Շուշանիկ Նազարյանին: Երբ պատրաստում էինք Բերդումյանի Օննոց գրքի մեկնության բնագիրը, առիթն ունեցանք կրկին աչքի անցկացնելու առկա բոլոր ձեռագրացուցակները: Եվ ուսումնասիրության ընթացքում նկատեցինք, որ Մաշտոցյան Մատենադարանի № 2220 (Էջ 78ա – 83բ) ձեռագիրը պարունակում է Պետրոս Սրբազանի այս աշխատանքը, որի լուսանցքում կարմիրով գրված է. *«Ի Բերդումեան հանգուցեալ Պետրոս վարդապետէն»* (թ. 78ա): Ձեռագրում այն հաջորդում է Բերդումյանի հեղինակած մեկ այլ փիլիսոփայական աշխա-

¹ Բերդումյանի կյանքի, գործունեության և մատենագրական վաստակի մասին տե՛ս **Պետրոս արքեպիսկոպոս Բերդումյան**, Բացված աղբյուր, թարգմանությունը գրաբարից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Տիգրան սարկավազ Բաղումյանի, խմբագիր՝ Ս. Ստամբուլյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008, էջ 5-36:

² **Շուշանիկ Նազարյան**, Պետրոս Նախիջևանցին և XVIII դարի վերանորոգվող հայ երգը, ՊԲՀ, № 3, 1981, էջ 130:

տությամբ՝ «Մեկնություն վերլուծությանն Արիստոտելի»։ Ըստ ՄՄ ձեռ. № 1826-ի՝ վերոգրյալ աշխատությունն ընդօրինակել է Վարդան աբեղան Սուրբ Էջմիածնում 1772 – 1773 թթ.³։ Իսկ Բերդումյանի «Ի նկատմանն Արիստոտելի» աշխատությունը պարունակող միակ ձեռագիրն ընդօրինակվել է Սրբազան Հոր մահից երկու – երեք տարի անց՝ 1789 – 1790 թթ. Ջաքարիա սարկավագի կողմից։ Եթե նկատի ունենանք, որ 1773 թ. հետո 1776 թ. Բերդումյանն արդեն ավարտել էր Հոբի, 1777 թ.՝ Օսնոց գրքի մեկնությունները⁴, իսկ 1780 թ. էլ՝ «Տրամաբանության» իր ձեռնարկը⁵, ինչպես նաև Պետրոս Բերդումյան և Սիմեոն կաթողիկոս հակամարտությունն ու դեպքերի ոչ խաղաղ ընթացքը, ապա կարծում ենք, որ Սրբազան Հայրը «Ի նկատմանն Արիստոտելի» փիլիսոփայական աշխատությունը գրել է 1780 – 1787 թթ. ընթացքում։

Մեր մատենագրության մեջ վերոգրյալ վերտառությամբ երկ առաջին անգամ հեղինակել է Դավիթ Հարքացին, որի բնագիրը ժամանակին տպագրել է Գալուստ Տեր-Մկրտչյանը⁶։ Նշանավոր հայագետը բնագրի պատրաստության ժամանակ օգտագործել է այսօրվա համարակալմամբ Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. № 2101-ը, որը նաև Փիլոն Ալեքսադրացու երկերի հնագույն գրչագիրն է⁷։

Հայկական ձեռագրերում հանդիպող «Նկատման Արիստոտելի» գործին անդրադարձել է Մանյա Էռնա Շիրինյանն իր ուսումնասիրության մեջ⁸։ Ըստ հետազոտողի՝ վերոգրյալ խորագրով գրվածքը հայկական ձեռագրերում հաճախ հանդիպում է Արիստոտելի «Յադագս առաքինությանը» գործից կամ նրա մեկնությունից հետո։ «Ամենայն հավանականությամբ այն թարգմանված է հունարենից, սակայն դրա համարժեքը մեզ հասած հունարեն բնագրերի թվում անհայտ է», – գրում է նա⁹։ Հետաքրքրական է, որ Մանյա Շիրինյանը զուգահեռ է անցկացնում Փիլոնի «Յադագս նախախնամության» և «Նկատման» միջև¹⁰։ Բայց այստեղ խոսքն առավելապես գաղափարաբանական նմանության մասին կարող է լինել, այլ ոչ թե բառացի։

Բացառված չէ, որ «Նկատման» ինչ-որ խմբագրության, թերևս, ծանոթ լիներ Ս. Հովհան Որոտնեցին կամ նրա աշակերտներից մեկը։ Օրինակ՝ կրկին գաղափարային նմանության մասին է խոսում «Նկատման» (ԳՏՄ, էջ 246, տ. 15-16) և «Հաւաքումն

³ Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (=ՄՄ) ձեռ. № 1826, էջ 298ա։

⁴ Պետրոս Նախիջևանցի, Աստուածանմանություն (=«Աստուածանմանություն»), վերստին աշխատությամբ Մետրովպայ Դաթեան Թաղիադեանց Կարբեցոյ, Կալկաթա, 1827, Հանգամանք վարուց հեղինակին (առանց էջակալման)։

⁵ ՄՄ ձեռ. № 6610, թ. 66ա-121ա։

⁶ Գալուստ Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Գիրք Բ (=ԳՏՄ), աշխատասիրությամբ պրոֆ. Պ. Հ. Հակոբյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան, 1998, էջ 244-248, «Բանբեր Մատենադարանի», 1956, № 3, Երևան, էջ 421։

⁷ Փիլոնի մասին տե՛ս Կ. Խ. ԹՈՐՈՂՈՐՆՅՈՒՆՅԱՆ, Филон Александрийский в восприятии армянского средневековья к вопросу об истоках традиции, Ереван, 2006, стр. 3-152։

⁸ Տե՛ս Մանյա Էռնա Շիրինյան, Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը (հայկական և հունական դասական ու բյուզանդական աղբյուրների բաղադրությամբ), Երևան, 2005, էջ 4-5, 155-157։

⁹ Նույն տեղում, էջ 4-5։

¹⁰ Նույն տեղում, էջ 155։

յայտնաբանութեան ի Փիլոնէ իմաստնոյ, որ «Յաղագս նախախնամութեան» աշխատության համապատասխան հատվածների համեմատությունը¹¹:

Պետրոս արքեպս. Բերդումյանը «*Ի նկատմանէն Արիստոտէլի*» աշխատությունը գրելիս մեծապէս օգտվել է Դավիթ Հարքացու համանուն երկից, որին հանվանէ հիշատակում է մեկ անգամ իր աշխատության մեջ: Պետրոս Նախիջևանցու մյուս գործերի նման, սա էլ հավանաբար գրվել է Ս. Էջմիածնի ժառանգավորների համար:

Երկու երկերի բնագրային համեմատությունը ցույց է տալիս, որ Բերդումյանը, լայնորեն օգտագործելով Դավիթ Հարքացու երկը, փորձել է իր ձեռքի տակ եղած աղբյուրն ընդարձակել և ընթերցողի համար ավելի հասկանալի դարձնել այն «*առ ի դիրութիւն համբակագունից*»: Այսպէս՝ եթէ Դավիթ Հարքացու մոտ նյութի մասին դատողությունները սահմանափակվում են մի քանի տողով, ապա Բերդումյանն այս ամենին անդրադառնում է ավելի հանգամանալի՝ հավելելով նյութի մասին իր փիլիսոփայական-աստվածաբանական մտածումները: «*Նիւթն ո՛չ է յաւէտակից Աստուծոյ. ցուցանի նիւթական պատճառաւ, որ եղեալ է յոչնչէ, ուրեմն ո՛չ է յաւէտակից Աստուծոյ, այլ նիւթն եղեալ է յոչնչէ, ուրեմն ո՛չ է յաւէտակից Աստուծոյ: Յուցանի ևս արարչական պատճառաւ, որ ըստեղծանի յԱստուծոյ, ո՛չ է յաւէտակից ընդ Նմա, այլ նիւթն եղեալ է յԱստուծոյ, ուրեմն ո՛չ է յաւէտակից ընդ Նմա: Յուցանի փոքրագոյնս ի բոլորէ, յորմէ է բոլորն, ի Նմանէ է և մասն: Այլ նիւթն է մասն արարածոց, ուրեմն յայնմանէ է, յորմէ և բոլորն, այսինքն՝ յԱստուծոյ*»,- գրում է Սրբազան Հայրը: Կամ երբ խոսում է «տեսակ» փիլիսոփայական-աստվածաբանական եզրի մասին, հավելում է. «*Անստեղծ տեսակն է Բնքն Աստուած, որ է պարզ ներգործութիւն մաքուր յամենայն կարողականութեան, վասն որոյ մի միայն և անհուն: Եւ թէպէտ Աստուած ունի զպարզ տեսակ, զոր և ընծայէ ի տեսութիւն սրբոց, բայց զի պարունակէ զամենայն էութիւն և զամենայն գոյ, վասն որոյ էակոյ անուն առաւել յատկանայ նմա, ըստ որում է տարածական և պարունական, քան տեսակոյ: Նմին իրի հարցանողին զանունէ Իւրմէ՝ ասաց. «Ես եմ Որ Էն. ասացես Որ Էնն առաքեաց զիս» (Ելք. Գ 14)*»:

Բերդումյանի գրվածքը բաղկացած է երկու գլխից. եթէ առաջին գլխում հեղինակը, օգտագործելով Դավիթ Հարքացու աշխատությունը, այն ավելի է ընդարձակել և ընթերցողին մատուցել, ապա երկրորդ գլխում Սրբազան Հայրն առավելապէս բացատրում է, թե ինչո՞ւ է Աստված մեկ, ամենակարող, անմարմին, անեղ, անապական և արարիչ:

Միով բանիվ՝ Պետրոս Սրբազանի այս աշխատության մեջ կրկին երևում է Բերդումյան փիլիսոփան և աստվածաբանը, ով փորձում է իրեն հատուկ ոճով բացատրել խրթին մտքերն ու դատողությունները: Պետրոս Բերդումյանի «*Ի նկատմանէն Արիստոտէլի*» աշխատության բնագրի հրատարակման նպատակն է ամբողջացնել Սրբազան Հոր մատենագրական ժառանգությունը և փիլիսոփայական այս երկը

¹¹ Տե՛ս Օլգա Վարդապարյան, Հովհան Ռոտունցու «Հաւաքումն յայտնաբանութեան ի Փիլոնէ իմաստնոյ, որ «Յաղագս նախախնամութեան», «Բանբեր Մատենադարանի», № 17, խմբագրությամբ Ս. Արևշատյանի, Երևան, 2006, էջ 258: Այս փաստի վրա մեր ուշադրությունը հրավիրեց տիկ. Օլգա Վարդապարյանը, որին և հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

հանձնել ուսումնասիրողների ուշադրությանը:

Ձեռ. № 2220

Ժամանակ՝ 1789 – 1790 թթ.: **Վայր՝** Էջմիածին: **Գրիչ՝** Զաքարիա սրկ.: **Թերթ՝** 329: **Թուղթ՝** 20, 5 x 15: **Գրություն՝** միասյուն: **Գիր՝** նոտրգիր: **Տող՝** 28, **բնագիրը՝** էջ 78ա – 83բ¹²:

¹² Նկարագրությունն ըստ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Կ. Ա, կազմեցին Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան: Ներածությունը՝ Օ. Եզանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Կ. Ա. Մնացականյանի, Երևան, 1965, էջ 748:

ՊԵՏՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՐԴՈՒՄՅԱՆ

**Ի ՆԿԱՏՄԱՆԷՆ ԱՐԻՍՏՈՏԷԼԻ ԱՐՏԱՀԱՆՄՈՒՆՔ ԻՆՉ ԲԱ-
ԺԱՆԵԱԼ ՅԵՐԿՈՒՍ ԳԼՈՒԽՍ: ԱՊԱՑՈՒՑԱԿԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹԵԱՄԲ ՀԱԻԱՔԱԲԱՆԱԿԱՆ ՈՃԻԻ
ՇԱՐԱԿԱՐԳԵԱԼ ԱՌ Ի ԴԻԻՐՈՒԹԻՒՆ ՀԱՄԲԱԿԱԳՈՒՆԻՑ**

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Յաղագս եօթանց ձայնից, որք ամենայն էից պատկանին:

Արիստոտել ի բնալսողութիւնս, այսինքն՝ ի բնաբանութեան, զեօթն ձայնս յառաջ բերէ, որք ամենայն էից մարմնաւորաց գոյանան, այսինքն՝ պատկանին, բայց զանազանապէս և են այսոքիկ՝ նիւթ, տեսակ, շարժումն, տեղի, ժամանակ, ունայն, անբաւ, յորոց նիւթ և տեսակ գոյացուցիչք են բնականաց: Իսկ շարժումն, տեղի և ժամանակ ո՛չ են գոյացուցիչք, այլ զհե՛տ երթան գոյացուցչացն նիւթոց և տեսակի: Իսկ ունայնն և անբաւն ըստ իրին ոչինչ են, այլ ըստ կարծեաց, այսինքն՝ ի մտածութեան ունին զգոյ, ուստի Արիստոտել զԴիմոկրատէս և Անագազորաս յանդիմանեաց վասն ունայնին ասելով՝ թէ ամեննին իսկ ո՛չ է: Նմանապէս և անբաւն:

Յաղագս նիւթոյ համառօտ

Նիւթն է առաջին ենթակայ անանջատելի յայնց, որք լինին յինքենէ, որպէս փայտն է անբաժանելի յայնց, որք կազմին յինքենէ, և հողն յայնց, որք կերպաւորին յինքենէ, յայսմանէ ձեռնարկի այսպէս. նիւթն է յամենեսեան. ցուցանի. որ ո՛չ անջատի յայնց, որք լինին յինքենէ, է ի նոսա, այլ նիւթն ոչ անջատի յայնց, որք լինին յինքենէ. ուրեմն է յամենեսեան:

Նիւթն ո՛չ է յաւետակից Աստուծոյ. ցուցանի նիւթական պատճառաւ, որ եղեալ է յոչնչէ, ուրեմն ո՛չ է յաւետակից Աստուծոյ, այլ նիւթն եղեալ է յոչնչէ, ուրեմն ո՛չ է յաւետակից Աստուծոյ: Ցուցանի ևս արարչական պատճառաւ, որ ըս(//78ա)տեղծանի յԱստուծոյ, ո՛չ է յաւետակից ընդ Նմա, այլ նիւթն եղեալ է յԱստուծոյ, ուրեմն ո՛չ է յաւետակից ընդ Նմա: Ցուցանի փոքրագոյնս ի բոլորէ, յորմէ է բոլորն, ի Նմանէ է և մասն: Այլ նիւթն է մասն արարածոց, ուրեմն յայնմանէ է, յորմէ և բոլորն, այսինքն՝ յԱստուծոյ: Ցուցանի ևս ի տեսական պատճառէ, եթէ նիւթն իցէր ի յաւիտենից, ո՛չ ի ժամանակի ընկալնոյր զտեսակ, այլ ի ժամանակի ընկալնու, որպէս յայտ է ենթալուսնեայս, ուրեմն ո՛չ է ի յաւիտենից:

Նիւթ ենթալուսնեայցս է զանազան ի նիւթոյն մակալուսնեայց: Ցուցանի. նիւթն որ փոխակերպի ի զանազան տեսակս, այլ է ի նիւթոյն, որ մնայ միշտ ընդ միով տեսակաւ: Այլ նիւթ ենթալուսնեայցս փոխակերպի ի զանազան տեսակս՝ մերկանալով զառաջինն և զգենով զերկրորդն: Իսկ նիւթ մակալուսնեայց միշտ մնայ ընդ միով տեսակաւ, ու-

րեմն յայլոյ բնութեան է նիւթ վերնոց ի նիւթոյ աստեաց:

Դարձեալ՝ որոց այլն այլ է շարժումն, նոցին և նիւթն է այլն այլ, ըստ Արիստոտէլի: Այլ շարժումն այլ աստեացս է ի շարժմանէ վերնոց, զի աստիք շարժին կամաւ կեդրոն, որպէս քար և ջուր, կամ ի կեդրոնէ ի շրջանակ, որպէս օդ և հուր, այլ վերինք շարժին զկեդրոնիւ, այսինքն՝ զմիջակիտիւ, որպէս յայտ է յարեգակն և ի լուսին, որք պարաբերին զերկրաւ, ուրեմն այլ է նիւթ նոցա ի սոցանէ:

Նիւթ աստեացս զօրեղ է և յոլով, իսկ նիւթ վերնոցն՝ տկար և նուազ: Ցուցանի. որ յաղթէ զտեսակն և ապականէ, է զօրեղ և յոլովանիւթ, քան զայն, որ յաղթի ի տեսակէ: Իսկ նիւթ երկրայնոցս յաղթէ զտեսակն և (/78բ) ապականէ, այլ նիւթ վերնոց յաղթի ի տեսակէ և ո՛չ կարէ ապականել, ուրեմն նուազ է և տկար, քան զստորէիցս: Ուստի ասէ Արիստոտէլ ի գիրս նկատման. նիւթ այնոցիկ առաւել գոյանայ, որք ի լինելութեան և յապականութեան են, իսկ երկնաւորաց ո՛չ է նիւթ, այլ համեմատի նիւթոյ, այսինքն՝ նուազ է և յաղթեալ ի տեսակէ, զի նիւթ հակակայից է ընդունակ և պէս պէս տեսակաց: Իսկ երկնային նիւթն է ենթակայ միոյ տեսակի. ենթակայացեալ հանապազ միով թուով յայնս, յորս է:

Դարձեալ՝ որ մերձ է նախկին պատճառին, է առաւել զտեալ ի նիւթոյ, քան զայն, որ է հեռագոյն, այլ ըստ Պրոկղի՝ անապական էակք, որպիսի են երկնայինքն, մերձ են նախկին պատճառին, քան զերկրաւորքս. ուրեմն նոքա են առաւել զտեալք ի նիւթոյ, իսկ սոքա առաւել նիւթականք:

Դարձեալ՝ որ է ի կարողութեան ընկալնուլ զայլ տեսակ, է առաւել նիւթական, քան զայն, որ ո՛չ է ի կարողութեան առ այլ տեսակ, այլ նիւթ երկրաւորաց է ի կարողութեան ընկալնուլ զայլ տեսակ, իսկ երկնաւորացն՝ ո՛չ, ուրեմն առաւել է նիւթական:

Յաղագս տեսակի համառօտ

Տեսակն բաժանի ի բնական և ի ստորոգական. ստորոգական տեսակն է, որ ստորոգի ի զինչէումն զանհատից իւրոց և որ դասի ընդ սեռիւ: Բնական տեսակն բաժանի ի գոյացական և ի պատահական: Պատահական տեսակն է, որ տայ զերկրորդական գոլ նիւթոյն ըստ քանակի և ընդ որակի, այսինքն՝ որ զնիւթն քանակաւորէ և որակացուցանէ: Գոյացական բնական տեսակն բաժանի ի յանստեղծ և ի ստեղծեալ: Անստեղծ տեսակն է Ինքն Աստուած, որ է պարզ ներգործութիւն մաքուր յամենայն կարողականութեան, վասն որոյ մի միայն և անհուն: Եւ թէպէտ Աստուած ունի զպարզ (/79ա) տեսակ, զոր և ընծայէ ի տեսութիւն սրբոց, բայց զի պարունակէ զամենայն էութիւն և զամենայն գոլ, վասն որոյ էակդ անուն առաւել յատկանայ նմա, ըստ որում է տարածական և պարունական, քան տեսակդ: Նմին իրի հարցանողին զանուանէ Իւրմէ՝ ասաց. «Ես եմ Որ Էն. ասասցես Որ Էնն առաքեաց զիս» (Ելք. Գ 14): Ստեղծեալ տեսակն բաժանի ի բաղադրական և յինքնաստորակայ: Ինքնաստորակայն է, որ առանց նիւթոյ ըստ ինքեան ենթակայանայ, որպիսիք են հրեշտակք և հոգիք մարդկանց, որք թէպէտ են բաղադրականք ընդ մարդկային մարմնոց, բայց ըստ ինքեանց ևս կարեն կայանալ յանջատիւն՝ գոլով անմարմին և անապական: Բաղադրականն է, որ ունի զգոլ ի նիւթում: Եւ սահմանի այսպէս. բաղադրական գոյացական տեսակն է առաջին ներգործութիւն նիւթոյ, որով նիւթն ներգործաւորի, դնի արտաքոյ ոչընչի և ստանայ զկատարեալ

գոյութիւն:

Այսպիսի տեսակա կատարելագոյն է ի յերկնային մարմինս, քան ի յերկրաւորս: Յուցանի. անապական տեսակն է կատարելագոյն, քան զապականացուն, այլ տեսակ երկնայնոց են անապականք, ուրեմն են կատարելագոյնք, քան զապականացուն: Ուստի ասէ Արիստոտել ի գիրս նկատման, թէ տեսակ երկնայնոց առաւել է, քան աստիցս, զի աստիս տեսակ լծակցեալ է ընդ անապականութեամբ և ընդ պակասութեամբ, զի ի զալ երկրորդին, յառաջընթաց տեսակն ապականի: Առաւելութիւն տեսակին պատճառի ի նուագութենէ նիւթոյն, զի ուր առաւել է տեսակն, նուագ է նիւթն, և հակադարձեալ՝ զի ուր առաւել է նիւթն, նուագ է տեսակն. այլ նիւթ երկնայնոցն է նուագ, ուրեմն առաւել է տեսակն: (//79բ)

Ամենայն տեսակք մարմնաւորաց ելանէ ի կարողութենէ նիւթոյ գորութեամբն Աստուծոյ: Յուցանի. ամենայն ծնունդ է յԱստուծոյ, ըստ այսմ Երեմիա՝ *«Ո՛չ ապաքէն զծննդականն Ես արարի, ասէ Տէր»* (Ես. ԿԶ 9): Այլ տեսակին ելանելն ի կարողութենէ նիւթոյ՝ է ծնունդ գոյացական, ուրեմն է յԱստուծոյ: Զոր օրինակ՝ ցորեանն, որ ունի յինքեան գորութիւն ծննդական, այսինքն՝ զբնական ջերմութիւն և խոնաւութիւն, կայ յինքեան թմբեալ և անգործ. եթէ ոչ գորութեամբ արեգական և նպաստութեամբ հողոյ զարթոսցի, այսպէս ոչինչ ծննդական կարողութիւն ըստ ինքեան զայ ի ներգործութիւն, եթէ ոչ նախկին պատճառն ընդ երկրորդաց պատճառաց առ զարթուցումն ֆիզիկապէս համընթացի: Եւ որպէս ձուն հաւուց ունելով յինքեան բնականաբար զգորութիւն ծննդական ոչ կարէ ինքեամբ ծնունդ շարժիլ, եթէ ոչ տաճողութեամբ մարեաց: Այսպէս ոչինչ գորութիւն էից շարժի ի ներգործութիւն, եթէ ոչ նախախնամական տաճողութեամբ մօրն ամենից, ըստ այսմ. *«Զգի ի ծագաց մինչև ի ծագս և դարմանէ զամենայն քաղցրութեամբ»* (Իմաստ. Ը 1), քանզի Աստուած է տաճողական մայր ամենեցուն, ըստ այսմ. *«Որդիք մօր իմոյ մարտեան ընդ իս»* (Երգ Ա 5): Աստէն մայր Աստուծոյ ասէ:

Հոգին բանական ո՛չ ելանէ ի կարողութենէ նիւթոյ. ապացուցանի. որ ոչ ունի յինքեան, ոչ կարէ տալ այլոց, զի ըստ Պրոկղի՝ ամենայն որ տայ զէութիւն այլոց, նախ ինքն է էակ. և է, զի յէութենէ իւրմէ տայ¹, իսկ նիւթն ո՛չ ունի յինքեան գորութեամբ զբանական հոգի. ուրեմն ո՛չ ելանէ ի կարողութենէ նիւթոյ բանական հոգին, այլ յԱստուծոյ ստեղծանի: Յուցանի փոքրագոյնս. որ տայ այլոց, նուագագոյն տայ քան զինքն և ինքն (//80ա) զերագանցեալ է քան զորս յինքենէ ներերևեսցին, այլ բանական հոգին զերագանցեալ է, քան զնիւթն, ուրեմն ո՛չ ի նմանէ ներերևի, այլ յԱստուծոյ ներհեղանի:

Յուցանի երկրորդ՝ ամենայն, որ ելանէ ի կարողութենէ նիւթոյ, ապականի յենթալուսնեացս. այլ հոգին բանական է անապական, ուրեմն ո՛չ ելանէ ի կարողութենէ նիւթոյ: Յուցանի փոքրագոյնս. իմացական և անձնիշխան էակն է անապական, այլ հոգին բանական է իմացական և անձնիշխան, ուրեմն է անապական: Յուցանի և՛ս փոքրագոյնս. անմարմին էակն է անապական, զի ո՛չ ունի զպատճառ ապականութեան, այլ հոգին բանական է անմարմին. ուրեմն է անապական:

Յաղագս տեղոյ համառօտ

Տեղին է մակերևոյթ ծոցաւոր շրջապատող մարմնոյ. մակերևոյթ դնի ի տեղի սեռի,

¹ Նույն այս մեջբերումը տե՛ս «Աստուածանմանութիւն», էջ 42, 48:

իսկ այլքն փոխանակ բաղկացուցաց: Աստուստ տեղին կարգաւ ժամանէ մինչև ցառաջին շարժունն և ոչ անդր անցանէ այլևս: Զի հողն շրջապատի ի ջրոյ, ջուրն՝ ի յօդոյ, օդն՝ ի հրոյ. այսպէս կարգաւ մինչև ցառաջին շարժունն: Իսկ առաջին շարժունն շարժի ի տեղոջ իւրում, և ոչ ունի քան զինքն ի վեր այլ պարունակօղ մարմին, այլ ինքն է պարունակօղ ամենեցուն: Սա կոչեցաւ ի փիլիսոփայից անմոլար. այնու՝ զի շարժի յիւրում տեղոջ, յերկրայս եղեն զամանէ, թէ արդեօք անմոլարն է ի տեղոջ, թէ՞ ոչ, որք ստորասեն: Առարկէն այսպէս. որ շարժի է ի տեղոջ, այլ անմոլարն շարժի. ուրեմն է ի տեղոջ: Իսկ որք բացասեն, այսպէս ձեռնարկեն. որոց արտաքոյ ոչ է այլ մարմին, ոչ է ի տեղոջ, այլ արտաքոյ անմոլարին ոչ գոյ այլ մարմին. ուրեմն ոչ է ի տեղոջ անմոլարն: Ասելի է, թէ անմոլարն է յիւրում (//80բ) տեղոջ և ոչ յայլում: Աստուստ ասէ Արիստոտէլ, թէ տեղի աստէիցս առաւել գոյանայ, քան թէ երկնաւորաց, զի անմոլարն ոչ է ի տեղոջ: Եւ աստ զիտելի է, զի փիլիսոփայք ոչ գոլով ծանօթ լուսեղէն երկնի, միայն զառաջին շարժունն ասէին անմոլար և արտաքոյ տեղոյ, բայց ըստ սրբազան հաւատոյ՝ լուսեղէն երկինն է միայն արտաքոյ տեղոյ, որ ոչ ունի զայլ երկին պարունակօղ ինքեան:

Յաղագս ժամանակի յամառօտ

Ժամանակն է չափ շարժման բոլորից շարժելեաց ըստ Արիստոտէլի ի գիրս նկատման: Եւ պատճառի յառաջնոյ շարժունէն. զի նա շարժելով զերկնային պարունակս, նոքօք շարժէ և զենթալուսնեայս:

Վեց են տեսակ շարժմանց ենթալուսնեայս՝ 1. լինելութիւն, 2. ապականութիւն, 3. աճումն, 4. նուազութիւն, 5. այլայլութիւն, 6. ըստ տեղոյ փոփոխումն. լինելութիւն և ապականութիւն են ընդ գոյացութեամբ, աճելութիւն և նուազութիւն ընդ քանակաւ: Այլայլութիւն ընդ որակաւ, իսկ ըստ տեղոյ փոփոխումն ընդ ուրիւն: Տեղական շարժման երեք են տեսակ. ի կեդրոնէ ի շրջանակ, որպէս օղ և հուր, ի շրջանակէ ի կեդրոն, որպէս ջուր և հող (*ի սոցա համարի է և խոտորնակն*): Եւ շուրջ զկեդրոնիւ, որպէս երկնային պարունակքն, որ և կոչի պարբերական: Շարժումն առաւել գոյանայ երկնայնոցն, քան աստէից: Յուցանի. մշտաշարժն առաւել է, քան երբեմնաշարժն. այլ երկնայինքն են մշտաշարժ, իսկ երկրայինքս՝ երբեմնաշարժ. ուրեմն նոքա առաւել են, քան զտոսա. ընդ որում և ժամանակն առաւել գոյանայ երկնայնոց, քան աստէից, որք պատճառն քան զպատճառելին (//81ա), զի երկնայինք շարժմամբ իւրեանց պատճառեն ժամանակ ի ստորինս:

Յաղագս անբաւի կամ անհնոյ

Անբաւն, որ է անհունն, առեալ լինի երեք կերպիւ. նախ՝ ըստ էութեան, և ըստ այսմ՝ Աստուած միայն է անբաւ: Յուցանի. Էութիւնն անկախ է անհուն, զի ոչ ունի զպատճառ իւրոյ եզերման, այլ աստուածային էութիւնն է անկախ. ուրեմն է անբաւ:

Յուցանի երկրորդ՝ ամեննին պարզ ներգործութիւնն է անբաւ, զի ոչ եզերի կարողականութեամբ, քանզի ներգործութիւնն եղեալ լինի միայն կարողականութեամբ: Այլ Աստուած է ամեննին պարզ ներգործութիւն. ուրեմն է անբաւ:

Ցուցանի երրորդ՝ ոչինչ էակ կարե պարունակել զամենայն կատարելություն, եթե ոչ իցե անբաւ, այլ Աստուծոյ վայելէ պարունակել զամենայն կատարելություն. ուրեմն Աստուած է անբաւ, զի պարագրէ զամենայն կատարելություն:

Երկրորդ ըստ յաւելման և ըստ այսմ թիւն ասէ անբաւ, զի անսահման է ի յաւելման: Ըստ այսմ և անհատք ասին անբաւ և անհունք, զի անսահման են ի յաւելումն:

Երրորդ՝ ընդ շարժման: Եւ ըստ այսմ՝ երկնային պարունակքն ասին անբաւք և անհուն ըստ շարժման, զի ո՛չ հունաւորին կամ դադարին, այլ անսահմանօրէն են ի շարժման և արագագոյն քան զամենայն:

Յաղագս ունայնին և դատարկին

Ունայնն ոչ է էակ իրական, այլ սոսկ մտածական, որպէս մահն և խաւարն, ուստի ունայնն և դատարկն ո՛չ է ի յէսս, այլ մտածի արտաքոյ լուսեղէն երկնի յանհունս: Ահա յայտ եղև, թէ որ ինչ մտածին ի յէսս, քակին ընդ է (7) սկզմամբս: Որոյ պատճառն է, զի ըստ Դաւթի՝ ի զիրս նկատման Արիստոտելի. բնականքն մարմին ունին, իսկ մարմին զնիւթ և տեսակ. նիւթն տեսակա(//81բ)ւորի շարժմամբ և ստանայ զտեղի, ի շարժմանէ պատճառի ժամանակ²: Ունայնն արտաքոյ նիւթաւորաց մտածի, իսկ անբաւն ի շարժման, ի թիւս և ի ծնունդս անհատից երկի: Վասն որոյ սոքա են և ո՛չ աւելի:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Յաղագս, թէ Աստուած է մի, է ամենակարօղ, է անմարմին, է անեղ, է անապական և արարիչ:

Զայստսիկ ստորոգութիւնս Արիստոտել այսպէս ցուցանէ ի զիրս նկատման: Նախ՝ թէ է Աստուած:

Ամենայն մարմին շարժուն յայլմէ բնաւորեցաւ շարժիլ: Եւ այս կամ յառաջեսցի յանհունս, կամ հասանիցի առ անշարժ ոմն, յորմէ սկիզբն առնուն ամենայն շարժելիք, այլ յառաջանալ յանհունս անհնարին է. նախ՝ զի բնութիւն փախչի յանհնոյ, զի ամենայն ինչ թուով չափով և կշռով արարեալ են: Երկրորդ՝ զի ի յառաջացման յանհունս ո՛չ գոյ գիտութիւն պատճառաց էից: Ուստի և ո՛չ իմաստասիրութիւն ըստ Պրոկղի, այլ գոյ իմաստասիրութիւն և գիտութիւն պատճառի էից. ուրեմն ո՛չ է պարտ յառաջանալ յանհունս ի պատճառս: Ապա ուրեմն պարտ է հասանիլ առ անշարժ ոմն, յորմէ ամենեքեան շարժին, և այն է Աստուած:

Թէ Աստուած է մի

Զմիութիւնն Աստուծոյ ցուցանէ Արիստոտել ի զիրս նկատման ի միակարգ շարժմանէ երկնայնոց, զոր ձևով ցուցցուք այսպէս: Մի և նոյն շարժումն պատճառի ի միոջէ հեղինակէ, վասն զի ի բազմաց այլ և այլ շարժումն բնաւորեցաւ լինիլ, այլ երկնայինքն

² Տե՛ս ԳՏՄ, էջ 246:

մի և նոյն կարգաւ շարժին, ապա ուրեմն շարժող հեղինակն նոցա մի միայն է:

Դարձեալ՝ անհուն էակն է մի միայն, զի ք (2) (/82ա) կամ բազում էակ ո՛չ կարեն համանգամայն լինիլ անհուն, այլ Աստուած է անհուն, ուրեմն է միմիայն:

Դարձեալ՝ եթէ իցէին բազում աստուածք ո՛չ որ ի նոցանէ լինէր բացարձակ իշխող, նաև հունաւորէին զմիմեանց իշխանութիւնս, և ո՛չ որն լինէր աստուած. նաև՝ նկրտէին յաղթահարել զմիմեանս և հօրեղագոյնն ի նոցանէ լինէր աստուած, և այսպէս ամենայն իրօք մակաբերի, թէ մի է Աստուած:

Թէ ամենագոր է Աստուած

Զայս ստորոգութիւն ցուցանէ Արիստոտել ի մշտաշարժութենէ երկնային մարմնոց, զոր ձևով ցուցցուք: Զայնքան մեծամեծ մարմինսն առ ի շարժել մշտնջենապէս պահանջի անհուն զօրութիւն, այլ Աստուած շարժէ գնոսա մշտնջենապէս, ուրեմն ունի անհուն զօրութիւն. ցուցանի մեծագոյնս յԱրիստոտելէ ի զիրս նկատման, բովանդակեալ զօրութիւնն և չափաւոր. ո՛չ հանդուրժէ անդադարապէս և կարգաւորապէս շարժել զայնքան մեծագոյն մարմինսն: Աստուստ կարէ դերևանալ այն կարծիքն վարդապետաց, որք ասեն, թէ հրեշտակք շարժեն զերկրային պարունակս, թէպէտ համընթացմամբն Աստուծոյ կարելի է:

Թէ Աստուած է անմարմին

Զայս ստորոգութիւն մակաբերէ Արիստոտել անդանօր յամենագորութենէն Աստուծոյ ըստ այսմ ձևոյ. ամենագոր էակն է անմարմին, այլ Աստուած է ամենագոր, ուրեմն է անմարմին:

Ցուցանի մեծագոյնս յԱրիստոտելէ, զի բովանդակելոյն բովանդակեալ է զօրութիւն, այլ ամենայն մարմին բովանդակեալ է. ուրեմն բովանդակեալ ունի զօրութիւն, յորմէ մակաբերի, թէ ամենագոր էակն է անմարմին: Ծանի՛ր, զի այս բան Արիստոտել, որ ասէ, թէ ամենայն բովանդակեալ է մարմնաւոր, ի մեզ ո՛չ ունի զտեղի, զի հը(/82բ)րեշտակք են բովանդակեալ, բայց ո՛չ են մարմնաւոր:

Ցուցանի փոքրագոյնն Արիստոտելի. եթէ մարմնաւոր էակն չիցէր բովանդակեալ ինքն միայն լինէր յաշխարհի անհուն գոլով, այլ են զանազան էակք յաշխարհի, և ո՛չ մի միայն. ուրեմն մարմնական էակքն է բովանդակեալ և չափաւոր:

Թէ Աստուած է անեղ և անվախճան

Զայս հետևեցուցանէ Արիստոտել ի յերկուց վերնոց ստորոգութեանցն, զոր ձևով այսպէս իմա՛: Ամենայն եղեալ ունի զկախումն և է պատճառեցեալ. և որ է պատճառեցեալ, է և չափաւորեալ, և որ է չափաւորեալ, է մարմնաւոր, և որ է մարմնաւոր, է բաղկացեալ ի նիւթոյ և ի տեսակէ, և որ է բաղկացեալ ի նիւթոյ և ի տեսակէ, է ապականելի, այլ ի վերն ցուցաւ, թէ Աստուած ո՛չ է չափաւորեալ զօրութեամբ, ուստի և ո՛չ մարմնաւոր, ուրեմն ո՛չ է եղեալ և ո՛չ ապականելի. այլ՝ անեղ և անապական:

Դարձեալ՝ անփոփոխ էակն է անեղ և անվախճան, զի եղանիլ և վախճանիլ է՝ փոփոխիլ, այլ Աստուած է անփոփոխ, ուրեմն է անեղ և անվախճան:

Դարձեալ՝ ամենայն անեղ է անսկիզբն, անապական, յաւիտենական և անվախճան, վասն որոյ ասէ Արիստոտել և սմա հետևին անսկիզբն, մշտնջենաւորն և անվախճան:

Թէ Աստուած է արարիչ էից յոչնչէ

Յատկութիւն բարւոյն է հաղորդել զինքն այլոց, որպէս ասէ սուրբն Դիոնիսիոս: Այլ Աստուած է ամենաբարի. ուրեմն հաղորդէ զբարութիւն իւր այլոց ըստ կելոյ, ըստ գոլոյ և ըստ իմանալոյ³:

Յուցանի փոքրագոյնս. ունիլն զամենայն կատարելութիւն ո՛չ այլ ինչ է (//83ա), եթէ ո՛չ զոլ ամենաբարի, այլ Աստուած ունի զամենայն կատարելութիւն. ուրեմն է ամենաբարի:

Յուցանի դարձեալ՝ իմաստնոյն է ստեղծանել զբան, այլ Աստուած է ամենիմաստ. ուրեմն ստեղծանել զբան, այսինքն՝ զէակ: Բայց ա՛յս է տարբերութիւն ի մէջ ստեղծեալ իմաստնոց և անստեղծի իմաստութեան, զի ստեղծեալ իմաստունք չեն ամենագոր, զի կարասցեն ստեղծանել զբան իրական, ուստի յանճարս լեալ միայն ստեղծեն զէակ մտածական: Բայց զի Աստուած է ամենագոր իմաստուն, վասն որոյ կարէ ստեղծանել զէակ իրական և զբան գոյացական: Այլ զայսցանէ տե՛ս ի զիրս Աստուածանմանութեան, զի անդ ասացաք⁴:

Արդ, զսոսա ապացուցեալ Արիստոտել, յայտ յանդիման ցուցանէ աստի, թէ ուրեմն է ոմն, որ շարժէ զերկնային մարմինս, և մի է, և անբաւ զօրութիւն ունի. և անմարմին է, և անեղ է, և անապական է, և անսկիզբ է, և անվախճան է, և արարիչ ամենայնի:

Եւ այս ամենայն ո՛չ ումեք արարածոց պատճառին, բայց միայն միայնոյ Աստուծոյ և Նմա տալի է պաշտօն:

Որք միանգամ զսկիզբն իրաց կամիցին զիտել, հարկ է նոցա զերիս զայստսիկ հետազօտել. նախ՝ ջանալ զիտել զսկիզբն իրաց և պատճառն: Երկրորդ՝ ճշմարտապէս դնել ի մտի, թէ Նա է, այսինքն՝ Աստուած է սկիզբն և պատճառ ամենայնի: Երրորդ՝ թէ անհնարին է այլ ազգ զսկիզբն կալնուլ էից: Նախաենթադրելով զերիս զայստսիկ կամ յառաջադրելով մտաց, պայծառանայ միտքն մակացու լինել էակաց, որոց ստեղծողին փառք յաւիտեանս. ամէն:

Գծող բանիս այսոցիկ զՁաքարիա սարկաւազս յիշե՛լ աղաչեմ: (//83բ)

³ Տե՛ս The Armenian Version of the works attributed to Dionysius The Areopagite, edited by Robert W. Thomson, Lovanii, 1987, Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 448, Scriptores Armeniaci Tomus 17, p. 153-155: Ս. Դիոնիսիոս Արիստոտելի աստվածաբանական այս մտածմանը հանդիպում ենք նաև Բերդուկյանի մյուս գործերում, տե՛ս «Աստուածանմանութիւն», էջ 62, «Մեկնութիւն Ծննդոց», ՄՄ ձեռ. № 2718, թ. 2բ, Աղբիւր բացեալ՝ արարեալ Պետրոսի եպիսկոպոսի Բերթումեան Աղամալեանց, Ս. Էջմիածին, 1857, էջ 65:

⁴ Տե՛ս «Աստուածանմանութիւն», էջ 41-44:

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՎԱԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱՅՈՒՈՉ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ՂՈՒԿԱՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԳՐԱԲԱՐ ԵՎ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ղուկասի Ավետարանը Նոր Կտակարանի գրքերից երրորդն է, երրորդն է նաև ըստ բաժանված գլուխների քանակի, որին հաջորդում է վերջին Հովհաննու Ավետարանը:

Ղուկասի Ավետարանի հարցական նախադասությունները մենք ուսումնասիրել ենք ըստ արևելահայերեն Աստվածաշնչի օրինակների, սակայն զուգահեռաբար տալիս ենք նաև գրաբար տարբերակները, որպեսզի գաղափար կազմենք, թե ինչ տեսք ունեն դրանք հին հայերենում: Ժամանակակից գրական արևելահայերենի հարցումները քաղված են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ 1994 թվի Աստվածաշնչից, իսկ գրաբարյանը՝ Հայաստանի Աստվածաշնչային ընկերության՝ 1997 թվի հրատարակածից: Քանի որ մեր ուսումնասիրության նյութը հարցական նախադասություններն են, ասենք, որ դրանք ոչ միայն մենաբնեռ են (մեկ հարցում պարունակող)՝ կառուցվածքային բազմատեսակ դրսևորումներով, այլև՝ բազմաբնեռ (մեկ, երկու, երեք, անգամ չորս և հինգ հարցում պարունակողներ)՝ իրենց տարատեսակներով հանդերձ: Դեռ ավելին, Ավետարաններում կան այնպիսի հարցական նախադասություններ, որոնք իրենց հաղորդակցային նպատակադրմամբ, կառուցվածքով և որոշակի պատասխաններ պահանջելով՝ հանդես են գալիս որպես ինքնուրույն հարցատեսակներ, որպիսիք մենք չենք հանդիպել ո՛չ լեզվաբանական և ո՛չ էլ, մանավանդ, գեղարվեստական գրականության մեջ (գուցե և կան): Այսպիսի երկու հարցատեսակներ կան Մատթեոսի Ավետարանում, որոնցից առաջինը **ինչու-որ** և **այդ-ոչ** հարցումների մի ուրույն միացություն է, որին մենք անվանում ենք երկկերպ հարցում, օրինակ՝ «Ապա ի՞նչ տեսնելու ելաք. մի մարգարե՞...» (Մատթ. ԺԵ 9), իսկ երկրորդը՝ **ինչու-որ** և ընտրանքային հարցումների մի ուրույն միացություն է, որին մենք անվանում ենք երկկերպ ընտրանքային հարցում, օրինակ՝ «.... Հովհաննեսի մկրտությունը որտեղի՞ց էր՝ երկնքից, թե՞ մարդկանցից» (Մատթ. ԻԱ 25):

Մարկոսի Ավետարանում երկկերպ և երկկերպ ընտրանքային հարցումներ չկան, սակայն սովորական ընտրանքային հարցումների կողքին (Սուրենի՞ն տեսար, թե՞ Աշոտին) կան ընտրանքային հարցման երկու այնպիսի տեսակներ ևս, որոնք իրենց գործառնությամբ նույնպես հանդես են գալիս որպես ինքնուրույն հարցատեսակներ: Առաջիններին մենք անվանում ենք զույգ ընտրանքայիններով հարցումներ, օրինակ՝ «.... Արդ, արթո՞ւն կացեք, որովհետև չգիտեք, թե տանտերը երբ կգա՝ երեկոյա՞ն, թե՞ կեսգիշերին, աքլորականչի՞ն, թե առավոտյան դե՞մ» (Մարկ. Ե 35), իսկ երկրորդներին՝ երկկերպ զույգ ընտրանքայիններով հարցումներ, օրինակ՝ «Շաբաթ օրով ի՞նչ բան է օրինավոր անել. բարի գո՞րծ գործել, թե՞ չարիք անել. մի հո՞գի ազատել, թե՞ կորստյան մատնել (Մարկ. Գ 4): Իսկ Ղուկասի Ավետարանում կան և՛ երկկերպ հարցումներ, և՛

երկկերպ ընտրանքային հարցումներ, և՛ երկկերպ գույգ ընտրանքայիններով հարցումներ: Այստեղ նույնպես կան սովորական ընտրանքային հարցումներ: Ղուկասի Ավետարանի երկկերպ հարցումները բովանդակությամբ նույնն են, ինչ Մատթեոսի Ավետարանինը, միայն բառային կազմով քիչ փոխված, օրինակ՝ «Ի՞նչ տեսնելու համար դուրս եկաք անապատ. քամուց շարժվող մի եղե՞ց (Ղուկ. Է 24) և «Հապա ի՞նչ տեսնելու համար դուրս եկաք. փափուկ զգեստներով զարդարված մի մա՞րդ. ...» (Ղուկ. Է 25):

Բերենք նաև Ղուկասի Ավետարանի մյուս երկու հարցումները՝ երկկերպ ընտրանքային հարցում, օրինակ՝ «... Ո՞վ է մեծ. սեղան նստո՞ղը, թե՞ սպասավորը» (Ղուկ. ԻԲ 27) և երկկերպ գույգ ընտրանքայիններով հարցում, օրինակ՝ «Ես ձեզ մի բան հարցնեմ. շաբաթ օրը ի՞նչ բան է օրինավոր անել՝ բարի գործ անել, թե՞՞ չար գործ, մի հոգի՞ փրկել, թե՞ կորստյան մատնել» (Ղուկ. Զ 9):

Եթե համեմատելու լինենք առաջին երեք՝ Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի Ավետարանների հարցական նախադասությունները, ապա կարող ենք ասել, որ դրանցում շատ չնչին բացառությամբ օգտագործված են միևնույն հարցատեսակները. բոլորից շատ գործածված են ինչու-որ հարցումները, հետո՝ շատ ավելի քիչ **այո-ոչ** հարցումները, ավելի հետո՝ շատ ավելի քիչ եղանականիշ հարցումների, իսկ ավելի հետո՝ զգալի քիչ մյուս հարցումները:

Ղուկասի Ավետարանում կա 31 **այո-ոչ** հարցում, որից 18-ը մենաբևեռ են, իսկ 11-ը՝ բազմաբևեռ: Բազմաբևեռ հարցումներից 2-ը կազմված են երկու այո-ոչ հարցական նախադասություններից, 9-ը՝ **ինչու-որ** և **այո-ոչ**, որոնցից երեքը թերի **այո-ոչ** հարցումներ են ու հանդես են գալիս երկկերպ հարցումների կազմում (Զ 24, 25, 26):

Մենաբևեռ հարցումներ

Ինչպես ասացինք, մենաբևեռ **այո-ոչ** հարցումները Ղուկասի Ավետարանում 18-ն են, որոնք ունեն պարզ և բարդ կառուցվածքներ՝ համադասական և ստորադասական հարաբերություններով արտահայտված:

ա) Պարզ կառուցվածքի և առանց կոչականի հարցումներ.

1. Եվ բոլորը վկայում էին ու զարմանում նրա բերանից ելած շնորհալի խոսքերի վրա ու ասում. «Մա Հովսեփի որդին չէ՞» - Եւ ամենեքին վկայէին նմա, եւ զարմանային ընդ բանս շնորհացն որ ելանէին ի բերանոյ նորա, եւ ասէին. Ո՞չ սա է որդին Յովսեփայ (Դ 22):

2. Եվ ամենքը միասին ասացին. «Ուրեմն Դու Աստծո Որդի՞ն ես» - Եւ ասեն ամենեքեան, Ուրեմն դու ես Որդի՞ն Աստուծոյ (ԻԲ 70):

3. Իսկ Պիղատոսը հարցրեց նրան և ասաց. «Հրեաների թագավորը դո՞ւ ես» - Իսկ Պիղատոս եհարց գնա եւ ասէ, դո՞ւ ես թագաւորն Հրէից (ԻԳ 3):

4. Եվ մինչդեռ ուրախությունից չէին հավատում և զարմացած էին, ասաց նրանց. «Այստեղ ուտելու բան ունե՞ք» - Եւ մինչդեռ տակալին չհաւատային ի խնդութենէն եւ զարմացեալ էին, ասէ ցնոսա, ունի՞ք ինչ կերակուր աստ (ԻԴ 41):

բ) Պարզ կառուցվածքի՝ կոչականով հարցումներ.

1. Երբ նրա շուրջը գտնվողները տեսան եղածը, նրան ասացին. «Տեր, սրով նրանց

հարվածե՞նք» - Իբրեւ տեսին որ գնովան էին որ ինչ եղեն, ասեն ցնա, Տէր, հարցո՞ւք ցնոսա սրով (ԻԲ 49):

2. Հիսուս նրան ասաց. «Հուդա՛, համբուրելո՞ւ ես մատնում մարդու Որդուն» - Ասէ ցնա Յիսուս, Յուդա, համբուրելո՞ւ մատնես զՈրդի մարդոյ (ԻԲ 48):

բ) Համադասական հարաբերությամբ հարցումներ.

1. Եվ դառնալով կնոջ կողմը՝ Միմոնին ասաց. «Տեսնո՞ւմ ես այս կնոջը. մտա քո տունը, ոտքերիս համար ջուր չտվիր, իսկ սա իր արտասուքներով թրջեց Իմ ոտքերը և իր մագերով սրբեց ...» - Եւ դարձեալ ի կինն կողմն, ասէ ցՄիմովն, Տեսանե՞ս զայս կին, մտի ի տուն քո, ջուր ոտից իմոց ոչ ետուր. իսկ սա արտասուք իւրովք եթաց զոտս իմ, եւ հերով իւրով ջնջեաց (Է 44):

2. Իսկ կախված չարագործներից մեկը հայիոյում էր Նրան և ասում. «Դու չե՞ս Քրիստոսը. փրկի՛ր ինքդ քեզ և մեզ» - Իսկ մի ոմն ի կախելոց յարագործացն հայիոյեր զՆա եւ ասէր, Ո՞չ դու ես Քրիստոսն, փրկեա զանձն քո եւ զմեզ (ԻԳ 39):

3. Եվ իր վրայ եկած քահանայապետներին, տաճարի իշխանավորներին եւ ծերերին ասաց. «Ինչպէս ավագակի՞՞ վրա եք գալիս սրերով ու մահակներով. միշտ ձեզ հետ էի տաճարում, եւ դուք ինձ վրա ձեռք չերկարեցիք. սակայն այս է ձեր ժամը և խավարի իշխանության գործությունը» - Եւ ասէ ցեկեալսն ի վերայ նորա, ցքահանայապետսն, եւ ցիշխանս տաճարին եւ ցծերսն, Իբրեւ ի վերայ աւագակի՞՞ ելէք սուսերօք եւ բրօք: Հանապազ ընդ ձեզ էի ի տաճարին, եւ ոչ ձգեցէք ձեռս յիս, այլ այս է ձեր ժամ եւ իշխանութիւն խաւարի (ԻԲ 52-53):

գ) Մեկ և երկու ստորադասական հարաբերությամբ հարցումներ.

1. Երբ ճանապարհ էր ընկել դեպի Երուսաղէմ, մեկը նրան ասաց. «Տե՛ր, սակավաթի՞ւլ են նրանք, որ փրկվելու են» - Եւ ճանապարհ արարեալ յԵրուսաղէմ, Ասէ ոմն ցնա, Տէր, եթէ սակա՞ւք իցեն որ ապրելոց իցեն (ԺԳ 22- 23):

2. Նրա ընկերը նրան սաստելով՝ պատասխան տվեց և ասաց. «Աստծուց չե՞ս վախենում, դու, որ նույն պատիժն ես կրում ...» - Պատասխանի ետ ընկերն սաստելով նմա եւ ասէ, Չերկնչի՞ս դու յԱստուծոյ, զի ի նմին պատժի կաս (ԺԳ 40):

3. Իսկ Պիղատոսը, երբ լսեց Գալիլիայի մասին, հարցրեց, թե այդ մարդը գալիլիացի՞ է - Իսկ Պիղատոս իբրեւ լուաւ զգալիլէէ, եհարց եթէ Գալիլիացի՞ իցէ այրն (ԻԳ6):

4. Նա պատասխանեց նրանց և ասաց. «Կարծո՞ւմ եք, թե այն գալիլիացիները, որոնք այդպիսի պատահարների ենթարկվեցին, ավելի մեղավոր էին, քան բոլոր գալիլիացիները...» - Պատասխանի ետ եւ ասէ ցնոսա, Համարի՞ք եթէ այն Գալիլեացիք եղեն մեղաւորք քան զամենայն Գալիլեացիս, զի զայնպիսի անցս կրեցին (ԺԳ 2):

5. Նա պատասխանեց նրանց և ասաց. «... Կամ նրանք՝ այն տասնութ մարդիկ, որոնց վրա Միլովամում աշտարակը փուլ եկա և սպանեց նրանց, կարծո՞ւմ եք, թե ավելի մեղապարտ էին, քան Երուսաղէմում բնակվող բոլոր մարդիկ ...» - Պատասխանի ետ եւ ասէ ցնոսա, Կամ նոքա ութուտասանքն յորոց վերայ աշտարակն անկաւ ի Մելովամ եւ սպան զնոսա, համարի՞ք եթէ նոքա պարտապանք եղեն քան զամենայն մարդիկ որ բնակեալ են յԵրուսաղէմ (ԺԳ 2- 4):

6. Եվ Տէրն ասաց. «... Կարծում եք, թե երկրին խաղաղոյթո՞ւն տալու եկա. ո՛չ, ասում եմ ձեզ, այլ բաժանում. որովհետև մեկ տան մեջ այսուհետև հինգ հոգի իրարից բաժանված պիտի լինեն. երեքը երկուսի դեմ, և երկուսը՝ երեքի...» - Եւ ասէ Տէր. «... Հա-

տարիք եթե խաղաղությանն էլի տալ չեն կարող. ոչ, ասեմ ձեզ, այլ բաժինս: Զի եղիցին յայսմ հետե հինգ ի տան միում բաժանեալք, երեքն՝ յերկուց, եւ երկուքն՝ յերից (ԺԲ 42, 51-52):

Վերջին օրինակում «Կարծում եք, թե երկրին խաղություն տալու եկա» հարցումը նախադասության մյուս մասից անջատված է կետով, այնինչ մենք կարծում ենք, որ այն շատ ինքնուրույն միավոր է և պետք էր նրանից հետո վերջակետ դրվեր, մանավանդ որ նախադասության մյուս հատվածը փաստորեն նրան տրվելիք պատասխանն է: Այս է պատճառը, որ այս հարցումը այստեղ դիտարկեցինք:

դ) Ստորադասական և համադասական հարաբերությամբ հարցումներ.

1. Երբ նրա աշակերտները՝ Հակոբոսը և Հովհաննեսը, այդ տեսան, ասացին. «Տե՛ր, կամենո՞ւմ ես, որ ասենք, և երկնքից կրակ իջնի ու բնաջինջ անի նրանց» - Բրբեւ տեսին աշակերտքն, Յակովբոս եւ Յովհաննէս, ասեն, Տէր, կամի՞ս զի ասացուք, եւ իջցէ հուր յերկնից եւ սատակեցցէ զնոսա (Թ 54):

2. Իսկ Մարթան, որ զբաղված էր տնային շատ գործերով, եկավ կանգնեց Նրա մոտ և ասաց. «Տե՛ր, քեզ փույթ չէ՞, որ քույրս ինձ մենակ է թողել ծառայության մեջ. արդ, ասա՛ դրան, որ օգնի ինձ» (Ժ 40) (զրաբարում այս համարը չկա):

ե) Տարակառուցվածք հարցում.

1. Հիսուս նրանց պատասխանեց եւ ասաց. «Դուք չէ՞ք կարդացել, թե ինչ արեց Դավիթը, երբ քաղց զգաց ինքը և նրանք, որ նրա հետ էին. թե ինչպես նա մտավ Աստծու տունը, կերավ առաջավորության հացը և տվեց նրանց, որ Իր հետ էին. մինչդեռ, բացի քահանայապետներից, ոչ ոքի չէր թողատրված ուտել այն» - Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. «Զիցէ՞ ընթերցեալ ձեր գոր արարն Դաւիթ, յորժամ քաղցեաւն ինքն եւ որ ընդ նմայն էին: Զիա՞րդ եմուտ նա ի տունն Աստուծոյ, եւ զհացն զառաջաւորութեան եկեր եւ ետ այնոցիկ որ ընդ նմայն էին. գոր ոչ էր օրէն ումեք ուտել, բայց միայն քահանայապետիցն» (Ձ 3-4):

Բազմաբևեռ հարցումներ

Ներկա բաժնում քննարկվելիք հարցումները երկբևեռ են, որովհետև սրանք բաղկացած են երկու հարցական նախադասություններից, երկուսը՝ երկու այո-ոչ հարցումներից, վեցը՝ **ինչու-որ** և **այո-ոչ** հարցումներից: Այս նախադասությունների կազմում կան 10 **այո-ոչ** հարցումներ:

ա) Երկու այո-ոչ հարցումներից բաղկացած նախադասություններ.

1. Եվ Տերն ասաց. «... Իսկ Աստված արդարություն չի՞ անի Իր այն ծառաներին, որոնք գիշեր և ցերեկ աղաղակում են. և նրանց հանդեպ միայն համբերատա՞ր կլինի ...» - Եւ ասէ Տէր. «... Իսկ Աստուած ո՞չ առնիցէ վրէժխնդրութիւն ծառայից իւրոց որ աղաղակեն առ նա ի տուէ եւ ի գիշերի, եւ երկոյնամիտ միայն լինիցի առ նոսա (ԺԸ 7):

2. Տերը նրան պատասխանեց և ասաց. «Կեղծավորնե՛ր, ձեզնից յուրաքանչյուր ոք շաբաթ օրով իր եզը կամ էշը մսուրից չի՞ արձակում և չի՞ տանում ջուր տալու ...» - Պատասխանի ետ նմա Տէր եւ ասէ, Կեղծաւորք, իւրաքանչիւր ոք ի ձենջ ի շաբաթու ո՞չ արձակէ զեզն իւր կամ զէշ ի մսրոյ եւ տանի տայ ջուր (ԺԳ 15):

Այս օրինակի գրաբար տարբերակում միայն մեկ **այո-ոչ** հարցում կա:

բ) *Բնչու-որ* և *այո-ոչ* հարցումներից կազմված երկբևեռ հարցական նախադասություններ.

1. Եվ նա պատասխանեց նրանց. «Ինչո՞ւ էիք ինձ փնտրում, չգիտե՞իք, թե Ես Հօրս տանը պետք է լինեմ» - Եւ ասէ ցնոսա, Զի՞ խնդրէիք զիս, ո՞չ գիտէիք եթէ ի տան Հօր իմոյ պարտ է ինձ լինել (Բ 49):

2. Հիսուս պատասխանեց և ասաց. «Սրանք տասն էլ չմաքրվեցի՞ն. իսկ արդ, իննը ո՞ւր են, որ չվերադարձան՝ փառք տալու համար Աստծուն, բացի միայն այս օտարագլի մարդուց» - Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ, Ո՞չ տասն սոքա սրբեցան, իսկ արդ ինունքն ո՞ւր են, Զի ոչ գտան դառնալ տալ փառս Աստուծոյ, բայց միայն այլազգիս այս (ԺԵ 17-18):

Այս օրինակի աշխարհագրար և գրաբար տարբերակների հարցականությունը տարբեր կերպ է արտահայտված:

3. Եվ նրա հետ շատ ժողովուրդ էր գնում. Նա դարձավ և ասաց նրանց. «Կամ ո՞ր թագավորը, եթե գնա պատերազմելու մի այլ թագավորի դեմ, նախ չի նստի և խորհի, թե տասը հազարով կկարողանա՞ դիմադրել նրան, որ իր վրա քսան հազարով է գալիս...» - Եւ երթային ընդ նմա ժողովուրդք բազումք. դարձաւ եւ ասէ ցնոսա, ... Կամ ո՞ր թագաւոր երթեալ տայցէ պատերազմ ընդ այլում թագաւորի, եւ ոչ նստեալ նախ խորհիցի, եթէ կարո՞ղ իցէ տասն հազարաւ դէմ ունել զայնորիկ որ գայցէ ի վերայ նորա քսան հազարաւ (ԺԴ 25-31):

4. Եվ ժողովարանում մի մարդ կար, որին բռնել էր մի պիղծ դևի չար ոգին. սա բարձր ձայնով աղաղակեց և ասաց. «Թո՞ղ տուր մեզ, Հիսո՞ւս Նազովրեցի, ի՞նչ ես ուզում մեզնից. մեզ կորսության մատնելո՞ւ եկար. գիտենք, թե ով ես, Աստծու սուրբն ես Դու» - Եւ էր ի ժողովրդեանն այր մի գոր ոյնէր այս դիւի պղծոյ, եւ աղաղակեաց ի ձայն մեծ Ասէ, թուլացո, զի՞ կայ մեր եւ քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանէ՞լ զմեզ. գիտեմք զքեզ ով ես, Սուրբոյ Աստուծոյ (Դ 33-34):

5. Եվ Նրա հետ շատ ժողովուրդ էր գնում. Նա դարձավ և ասաց նրանց. «... Ձեզնից ո՞վ, եթե կամենա աշտարակ շինել, նախ նստելով չի հաշվի իր ծախսերը, թե ավարտելու համար բավական դրամ ունի՞, որպեսզի, գուցե, երբ հիմնը դնի և չկարողանա ավարտել, բոլոր նրանք, որ տեսնեն, չսկսեն նրան ծաղրել և ասել, թե՝ այս մարդը սկսեց կառուցել և չկարողացավ ավարտել ...» - Եւ երթային ընդ նմա ժողովուրդք բազումք. դարձաւ եւ ասէ ցնոսա, Ո՞վ ոք ի ձենչ կամիցի շինել աշտարակ, եւ ոչ նախ նստեալ համարիցի զծախսն, եթէ ունիցի՞ բաւական ի կատարումն. Զի գուցէ իբրեւ արկանիցէ հիմն եւ ոչ կարիցէ կատարել, ամենեքին, որ տեսանիցեն, սկսանիցին ծաղր առնել զնա, Եւ ասել թէ Այս այր սկսաւ շինել, եւ ոչ կարաց կատարել (ԺԴ 25, 28-30):

6. Եվ Տերն ասաց. «.... Իսկ ձեզնից ո՞վ, որ հողագործ կամ հովիվ ծառա ունի, երբ սա ագարակից տուն մտնի, նրան կասի իսկույն՝ անցիր սեղան նստիր. այլ նրան չի՞ ասի՝ պատրաստի՞ր, ինչ ընթերելու եմ, և գոտի կապած՝ ծառայի՞ր ինձ, մինչև որ ուտեմ և խմեմ, և ապա կուտես և կխմես դու ...» - Եւ ասէ Տէր, Իսկ ո՞վ ոք ի ձենչ, որ ունիցի ծառայ հողագործ կամ հովիւ, որ իբրեւ մտանիցէ յագարակէ, ասիցէ ցնա վաղվադակի, թէ Անց բազմեաց. Այլ ո՞չ ասիցէ ցնա թէ Պատրաստեա զինչ ընթերելոց իցեմ, եւ գոտի ածեալ պաշտեա զիս, մինչեւ կերայց եւ արբից. եւ ապա կերիցեա եւ արբցես դու (ԺԵ 6-7):

Եզրակացություններ

1. Ղուկասի Ավետարանում գործածված են վեց հարցատեսակներ՝ **ինչու-որ** հարցումներ, **այո-ոչ** հարցումներ, եղանականիչ հարցումներ, երկկերպ հարցումներ, ընտրանքային հարցումներ, երկկերպ ընտրանքային հարցումներ:

2. Հարցական նախադասություններից Ղուկասի Ավետարանում գործածված չեն կցորդային հարցումները (Ինչ լավ օր է, չէ՞), համեմատական հարցումները (Գերադասելի չէ՞ կարդալ, քան գրել) և լրացուցիչ հարցումները (Այսօր աշխատե՞լ ես: - Այո: Իսկ գիշերը քնե՞լ ես: - Մի քիչ):

3. Ղուկասի Ավետարանում նույնպես բոլորից շատ գործածված են **ինչու-որ** հարցումները, հետո՝ **այո-ոչ** հարցումները, հետո՝ եղանականիչները, ավելի հետո՝ ընտրանքայինները, ապա՝ երկկերպ հարցումները, իսկ վերջում՝ երկկերպ ընտրանքային հարցումները:

4. Ինչպես Մարկոսի Ավետարանում, այնպես էլ Ղուկասինում՝ կա 31 **այո-ոչ** հարցում, որից 18-ը մենաբնեռ են, իսկ 13-ը բազմաբնեռների կազմում են:

5. Մենաբնեռ հարցական նախադասությունները կազմված են պարզ կառուցվածքի և բարդ հարցումներից՝ համադասական, ստորադասական ու համադասական և միաժամանակ ստորադասական հարաբերություններով արտահայտված:

6. Ղուկասի Ավետարանում կա ութ երկբնեռ կամ բազմաբնեռ հարցական նախադասություն՝ երկուսը բաղկացած երկու **այո-ոչ** հարցումներից, իսկ վեցը՝ **ինչու-որ** և **այո-ոչ** հարցումներից:

ԱՆԱՀԻՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ

«ԱՐՈՐ» ԳՈՐԾԻՔԱՆԻՇ ԲԱՌԱՆՈՒՆԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայերենում *արոր* բառանունը վկայված է դեռևս V դարից: Նոր հայկազյան բառարանը և Հ. Աճառյանի Հայերեն արմատական բառարանը¹ հղում են Ս. Գիրքը, Մեքերիանոսին, Ոսկեբերանին, Բարսեղ Կեսարացուն²: Բառը գտել ենք նաև Ոսկեբերանի այլ երկերի ոսկեդարյան թարգմանություններում, որ չեն հղել ՆՀԲ-ն ու ՀԱԲ-ը. «...դու քեզնի սերմանեա յակօսս. չիք անդ *արոր*, չիք մաճ ունել, և ոչ եզինս հարկաց լծել...»³, «...բայց անդ առանց *արորոյ* և եզանց և մշակաց և ամենայն տարժանման սերմանողացն բուսանին պտուղք...»⁴ և այլն: Նշված հղումները, բերված օրինակները և մեր ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ V դարում բառանունը գործածվել է միայն հայ թարգմանական գրականության մեջ:

Բառանվան գործածությունը հայ հեղինակների գրվածքներում ի հայտ է գալիս հետիինգերորդարյան շրջանում: ՆՀԲ-ն հղում է Գրիգոր Նարեկացուն, Սարգիս վարդապետին, Գրիգոր Սկևռացուն, Վարդան Բարձրբերդցուն, Հովհաննես Երզնկացուն⁵: Ի դեպ, ՆՀԲ-ն հետիինգերորդարյան շրջանի համար չի հղում որևէ թարգմա-

¹ Տե՛ս Հ. Գաբրիել Աւետիքեան, Հ. Խաչատուր Միրմելեան, Հ. Մկրտիչ Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետ՝ ՆՀԲ), հ. Ա, Երևան, 1979, էջ 386-387, Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետ՝ ՀԱԲ), հ. Ա, Երևան, 1971, էջ 350:

² Տե՛ս Դատ. Գ 31 («և եհա՛ր յայլազգեացն վեց հարիւր այր մաճով *արորոյ*» /ըստ՝ Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց, յաշիս. Հ. Յովհաննու Զօհրապեան վարդապետի, Վենետիկ-Ս. Ղազար, 1805), Մեքերիանոսի Եմեսացոյ Գաբաղացոց եպիսկոպոսի ճառք, Վենետիկ, 1830, ճառ Թ, էջ 181 («Ունիս զմաճս *արորոյն*, սերմանեա՛ յանդս տնանկաց»), Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի Յաւետարանագիրն Մատթեոս, հ. Բ, Վենետիկ-Ս. Ղազար, 1826, Գիրք երկրորդ, ճառ ԻԷ, էջ 745 («...և ի հիւսնութենէ՛ *արոր* կազմել, և լուծս յօրինել, և սայլս, և կամոնս, զօրանն կրել և կասուլ...»), Բարսեղ Կեսարացի, Յաղագս Վեցարեայ արարչութեան, աշիս. Կ. Մուրադյանի, Երևան, 1984, ճառ Թ, էջ 316 («աւրացոյց դանակ կամ արկցոյք *արար*»):

³ Ոսկեբերան, Մեկնութիւն Առաջին թղթոյն Տիմոթեայ /Ճառ ԺԴ/. - Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի Մեկնութիւն Թղթոցն Պաւղոսի, հ. 1, Վենետիկ-Ս. Ղազար, 1862, էջ 122:

⁴ Նույնի, Յարարածսն, Ա. - Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի ճառք, Վենետիկ-Ս. Ղազար, 1853, էջ 64:

⁵ Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, ԾԴ Բ. - Ս. Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան եւ այլ երկասիրութիւնք, Անթիլիաս, 2003 /այսուհետ՝ Նարեկացի, Երկասիրութիւնք/, էջ 236 («Եւ ոչ *արոր* կշիռ ինչ գործէ առանց մաճակալի»), Գիրք մեկնութեան եօթն թղթոցն Կաթողիկէից, արարեալ սրբոյ վարդապետին Սարգսի Հայոց իմաստասիրի, Կոստանդնուպոլիս, 1743 («...Եթէ որ յերկրագործաց զանդաստան լի՝ փշաբերութեամբ՝ կամիցի սրբել և ըզբարտք սերմանսն սերմանել, կարօտանայ նա *արոր* կառուցանել» /Մեկնութիւն Յակոբայ թղթոյն, ճառ Է, էջ 117/, «Եթէ դուք ասէ՛ ո՛վ արք՝ բուռն հարեալ զմաճոյ *արորոյն* հերկել ձեզ հերկս առաքինութեան» /Մեկնութիւն Առաջին թղթոյն Պետրոսի Առաքելոյն, ճառ Է, էջ

նական գործ: Գտել ենք ՆՀԲ-ում չհղված բազմաթիվ այլ վկայություններ, որոնք առկա են ինչպես հայ հեղինակների գրվածքներում, այնպես էլ թարգմանական գրականության մեջ: Ահա մի օրինակ Ոսկերեքանի «Ի Մեծն Գրիգորիոս Լուսաուրիչն Հայաստանեաց» գործի միջնադարյան թարգմանությունից. «...և նա ինքն մի մշակ՝ միով բազկաւ կալեալ զմաճոյ *արորոյ*...»⁶: Այստեղ, անշուշտ, կա փոխաբերություն: Պետք է ասել, որ ինչպես բառարաններում հղված, այնպես էլ մեր գտած օրինակների մեծ մասում *արոր* բառանունը գործածված է փոխաբերական իմաստով: Նշենք մեր գտած նման օրինակներից մի քանիսը, որ չեն հղել ՆՀԲ-ն ու ՀԱԲ-ը:

Վ դար՝ «Եւ որպէս ի մաճս *արորոյ* վաստակաւորն արկանէ ի խոր և ի ներքուստ պատառէ գերկիրն և զգուշութեամբ պատրաստէ տեղի պահստեան սերմանն...», այսպէս հարկ է և մեզ առնել. ըստ օրինակի *արորոյ* վարել և խզել զսիրտս խորին...» (Ոսկերեքան)⁷ և այլն⁸:

Վ դարից հետո՝ «Դիցէ զլուծ իւր վերայ ուսոց ապրստամբաց. և *զարոր* խաչի քոյ սիրով ընկալցին ի պարանոցս իւրեանց» (Հակոբ Մծբնեցի)⁹, «...և ձգեցին *արորով* բանին զսերմն հաւատոյ ի սիրտս դաշտաց բանական ազգաց մարդկային» (Հովհաննէս Երզնկացի)¹⁰ և այլն:

* * *

Պետք է նշել, որ բարբառային *հարոր* ձևը նույնպես վկայված է հայ մատենագրության մեջ և թարգմանություններում. օրինակ՝ Եփրեմ Ասորու գործերից մեկում («Սա է Հայրն, որ ի ձեռն Որդոյն զնեաց զմարդկային զպիտանացուս. զամենայն ինչ վաճառեաց գերկրային ստացուածս իւր, զի զնեսցէ *զհարորն* երկրիս զոր ինքն ստեղծ») ¹¹,

379/), **Գրիգորի Սկեռացոյ** Ներբողեան ի Սուրբն Ներսէս Լամբրոնացի. - Սոփերք հայկականք, հ. ԺԵ, Վենետիկ-Ս. Ղազար, 1854, էջ 75 («Ներսէս, մշակ աշխատեալ յանդաստանի տանուտեառն զկորդացեալ երկիր բանականի բնութեան *արորով* բանի պատառեալ, և զանտառամով վնասակար որոմն խլեալ, զբարոքն սերմանեալ...»), Մեծին **Վարդանայ Բարձրբերդեցոյ** Մեկնութիւն Սաղմոսաց Դավթի, յԱժդարխան, 1797, ԿԴ, էջ 214 («Որ է սիրտ մարդկան՝ *արորաւ* խաչին Քրիստոսի քրքրեալ, և լծով առաքելոցն, որոյ արմտիքն բազում...»), Մեկնութիւն Սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն **Ներսիսէ Շնորհալոյ** մինչ ի համարն 17. հինգերորդ գլխոյն. և անտի աւարտեալ յերանելոյն **Յօհաննու Երզնկացոյ**՝ որ և կոչի **Մործորեցի**, Կոստանդնուպոլիս, 1825, ԺԳ, էջ 309 («Ուսուցանէ թէ՛ և նա՛ կերպարանի ըստ ճշմարիտ մշակացն ձևոյ, և պատառէ զսիրտ մարդկան *արորիւ* չարութեանն՝ սերմանլով զխորհուրդսն չարեաց...»):

⁶ Նորին **Յովհաննու Ոսկերեքանի** ի Մեծն Գրիգորիոս Լուսաուրիչն Հայաստանեաց. - Սոփերք հայկականք, հ. Դ, Վենետիկ-Ս. Ղազար, 1853, էջ 97:

⁷ **Նույնի**, Անդրիական ճառք, Դ. - **Յովհաննու Ոսկերեքանի** Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի ճառք, էջ 709:

⁸ «Սոքա իւրաքանչիւր զայս իմացեալ՝ այժմ լծեալ եզինս *յարորի* ուսանին զմաճս վարել ի խոր ակօսս հատանելով. այժմ ի սուրբ բեմս ելանելով և զանձինս աշխատելոց ի մեղս իբր մանգաղաւ՝ որ զփուշս հատանէ գերկրի՝ այնպէս բանիւ զմեղս մաքրեն ի ձեռն» (նույն տեղում, ԺԹ, էջ 891):

⁹ Ճառ երանելոյն **Յակօբայ Մծբնայ** եպիսկոպոսի ասացեալ յաղագս աստեղն և մոգուցն և մանկացն Բեթղէհէմի. - Գիրք և ճառ հոգեշահ արարեալ յուղղափառ և յաստուածաբան վարդապետաց, Կոստանդնուպոլիս, 1722, էջ 124:

¹⁰ **Հովհաննէս Երզնկացի**, նշվ. աշխ., Ժ, էջ 224:

¹¹ Տեառն **Եփրեմի** Ի մարգարիտն յայտնութիւն. - Սրբոյն **Եփրեմի** Մատենագրութիւնք, Վենետիկ-Ս. Ղազար, 1836, էջ 359:

Վաստակոց գրքում («Եւ զմէկ *հարօրն* չորս եզոք պարտ է բանեցընել, որ փոփոխեն զիրեար, և հերկեն զգետինն ծանր խոփովքն. և առնեն զհերկն երեք *հարօր*, և զ*հարօրն* խոփովն խորու տանին, որ ի գետնին պարարտութիւնն հասանի»)՝¹² Ներսէս Շնորհալու հանելուկներից մեկում (թանաք). «Սերմն սև ու ջրաց հոլով, Դաշտըն ներկած սպիտակ բամբկով. Ի հինգ լուծն *հարօրով*, Ի իւրեանց վաստակն ընթանալով»¹³ և այլն:

Ի դեպ, հայերենի բարբառներում «արոր» հասկացությունն ունեցել է նաև այլ բառանվանումներ՝ *ալաթ, գործեն, չորոց, վեցկի, չութ, կեռ, գութան, բարանա, լուսկ, ծան, փաճղաճ, խիշ, կօրատ, վար, սաբան, արոնա, հառել, կռաչութ, ճղլի*, որոնց մի մասը նույնպես վկայված է հայ միջնադարյան մատենագրության մեջ: Բերենք մի քանի օրինակ:

ա. *Չորոց*

Բառը վկայված է XV դարի սկզբի (1412 թ.) մի վիմական արձանագրությունում («Եւ Գրիգոր տվի զԾագունանց հողերն զմեր բաժինն իւր *չորեցովն...*»¹⁴):

բ. *Վեցկի*

Բառը վկայված է XI դարի մի վիմական արձանագրությունում («...ազատեցին *զվեցկէ* կոռ...»¹⁵), Մատթէոս Ուռհայեցու Ժամանակագրության մեջ (XII դար) («...բայց զայս բազում անգամ լուեալ է մեր ի բազմաց յաղագս քորեպիսկոպոսին՝ որ ասէին Դաւթով, եթէ զգանձատունն նորա Աբրիհիմն էառ և քառասուն ուղտ բարձան զգանձարանն նորա, ութ հարիւր *վեցկի* եզանց ելանէին ի տանէ նորա»¹⁶), Սմբատ Սպարապետի Տարեգրքում (XIII դար, կրկնում է Մատթէոս Ուռհայեցուն) («Էր անդ քոր եպիսկոպոս մի Դաւիթ անուն. առին զգանձս նորա. բարձին քառասուն ըղտու. եւ հարիւր *վեցկի* եզանց ելանէր ի տանէն»¹⁷), XV դարի (1415 թ.) մի Ավետարանի հիշատակարանում («...և նոյն իսկ Թումայ վանից հօր ձեռօք Նաջբադնի *վեցքու* հողն արտ՝ ամիրաց մքաթղթովն և նշանովն, Սուրբ Վարդանայ մուլք (սեպիականութիւն) գնուաւ»)՝¹⁸ հետագա շրջանի մի վիմական արձանագրության մեջ («Կամաւն Աստուծոյ եւ Թաճ Սրլաքս դուստր Մխիթարայ թոռն Խալայ շահին տվի մէկ *վեցկի* իմ գերեզմանատունս, միաբանք սահմանեցին Գ Ժամ Սանդխտոյ տօնին՝ Բ ինձ, Բ իմ մօրն: Կատարիչք օրհնին յԱստուծոյ»)՝¹⁹:

¹² Գիրք Վաստակոց. թարգմանութիւն նախնեաց յարաբացի լեզուէ, Վենետիկ-Ս. Ղազար, 1877, Դուռն ԺԸ, էջ 17:

¹³ Ներսէս Շնորհալի, Յաղագս երկնի և զարդուց նորա, Հանելուկներ, Ողբ Եղեսիո) կազմեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց՝ Գ. Ա. Հակոբյան), Երևան, 1968, էջ 41:

¹⁴ Արցախ, երկասիրեց Մակար եպս. Բաբխուտարեանց, Բագու, 1895, էջ 205:

¹⁵ Հղվում է ըստ՝ Վ. Չ. Բդոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 248:

¹⁶ Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 103:

¹⁷ Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի Հայոց, որդւոյ Կոստանդեայ կոմսին Կոռիկոսոյ, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ վարդապետ Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 66:

¹⁸ Նօտարք Հայոց, հաւաքեալ եւ լոյս ածեալ ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Փիղղալեմեան Տօսթեցոյ, Կ. Պօլիս, 1888, էջ 46:

¹⁹ Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, աշխատասիրութեամբ Տեառն Սարգսի Սանահնեցոյ Զալալեանց, մասն Բ, Տիֆլիս, 1858, էջ 212:

գ. *Գութան*

Որոշ վայրերում արորը անվանվել է *գութան*, թեև որպես գործիք՝ գութանի կառուցվածք չի ունեցել: Բառը նույնպես վկայված է հայ միջնադարյան մատենագրության մեջ: Նորայր Բյուզանդացին, ՆՀԲ-ն և ՀԱԲ-ը հղում են «Ոսկիփորիկ» ժողովածուն («*Գութան*»/ մի բոլոր ետ յիշատակ (ի վանս Արծուաբեր Աստուածածնի) եւ միաբանք ուխտին պաշտամամբ եւ պատարագօք աղաչեցին զսուրբ Աստուածածինն»²⁰): Բառը գտել ենք նաև XV դ. մի ձեռագրի հիշատակարանում («Քրիստոս Աստուած քո սուրբ ծնաւորի բարեխաւսութեամբդ ողորմեա ամենայն հաւատացելոց. եւս առաւել ուսթա խալիֆին, որ յամեն տարի Բ (2) *գութան* է տուէր սուրբ Վարդանայ...»²¹): Բառաձևը վկայված է նաև հետագա դարերի հայ մատենագրության մեջ²²: Նորայր Բյուզանդացին գտնում է, որ *գութայ* բառին նախորդել է *գուդան* ձևը, և հղում է Ճառնտիր ժողովածուն («Ոչ ուստեք գտանի ողորմութիւն, բայց ի տեղիս տեղիս շարժին ի սերն Քրիստոսի, ոմն պատարագ եւ ընծայ նուիրելով, ...եւ ոմն ռիսվ առնելով, եթէ ազարակ եւ կամ ջրաղաց, եւ այլ ոք՝ *գուդան*»²³):

* * *

Հայ մատենագրության մեջ և թարգմանություններում ավանդված են նաև *արոր* բառով կազմված բարդ և ածանցավոր հետևյալ բառերը:

Արոր ձգել. Այս հարադիր բարդությունը հղված չէ ՆՀԲ-ում, թեև ավանդված է դեռևս V դարից. այն գտել ենք Ոսկեբերանի գործերի թարգմանություններում. «Եթող զարջառաց զնախիրս, զի *արոր ձգեսցեն*, և զերկիր հերկեսցուք և սերմանեսցուք...»²⁴, «...եզն ո՞չ էր արդեօք օգնական *արոր ձգելով* և աշխատակից մեզ լինելով ի սերմանցն սփռումն...»²⁵, «Նոյնպես և մշակ լծէ եզինս և *արոր ձգէ* և ակօս պատառէ...»²⁶:

Արորածիգ «որ ձգէ զարոր, արորադիր» (ՆՀԲ)²⁷. ՆՀԲ-ն հղել է Պիտոյից գիրքը²⁸, Փիլոն Ալեքսանդրացուն²⁹, Սարգիս վարդապետին³⁰ (ի դեպ, վերջինիս գործի երկ-

²⁰ Տե՛ս **Նորայր Ն. Բիւզանդացի**, Բաղկիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց (այսուհետև՝ ԲԱՀ), Ժնև, 2000, էջ 148, ՆՀԲ, Մնացորդք և յաւելումաձ, հ. Բ, Երևան, 1980, էջ 1049, ՀԱԲ, հ. Ա, էջ 548):

²¹ Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 1524, էջ 921բ., հղվում է ըստ **Լ. Խաչիկեան**, Աշխատություններ, հ. Բ, Երևան, 1999, էջ 322):

²² Տե՛ս, օրինակ, Զամբո, համաժողովեցեալ և տարադրեցեալ ի **Միմեոնէ կաթողիկոսէ Երևանցոյ**, Վաղարշապատ, 1765, էջ 28, 107, 114, 131, 132-133, 215:

²³ Ճառնտիր, ԻԹ, 715 (տե՛ս ԲԱՀ, էջ 147):

²⁴ **Ոսկեբերան**, Յարարածն, Գ. - **Յովհաննու Ոսկեբերանի** Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի Ճառք, էջ 73:

²⁵ **Նույնի**, Յարարածն, Դ, նույն տեղում, էջ 76:

²⁶ **Նույնի**, Յաղագս յարութեան մեռելոց, նույն տեղում, էջ 224:

²⁷ Մխիթար վրդ. Մեքաստացու բառարանում՝ «զարոր ձգող, քարշող» (Բաղկիրք հայկազեան լեզուի..., արարեալ ի **Մխիթարայ վարդապետէ Մեքաստացոյ** (այսուհետև՝ ԲՀԼ), Վենետիկ-Ս. Ղազար, 1749, էջ 115), նույնը նաև Մ. Մալխասյանցի մոտ՝ «Արորը ձգող՝ քաշող. վար անող /եզներ/» (**Մ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ. Ա, Երևան, 1944, էջ 289):

²⁸ Տե՛ս Գիրք Պիտոյից, աշխ. Գ. Մուրադյանի, Երևան, 1993, էջ 175 (Մահման բաղդատութեան, 5) («Մնանի եւ երկասէր *արորածիգս* անպաճոյճ եւ դիրագիւտ կերակրանօք...»):

²⁹ **Փիլոնի** Այնոցիկ որ ի լինելութեանն, III Գ. - **Փիլոնի Եբրայեցոյ** Մնացորդք ի Հայս, աշխատասիրութեամբ Հ. Մկրտիչ աթոռակալ վարդապետի Մխիթարեան Աւգերեանց, Վենետիկ-Ս. Ղազար, 1826, էջ 170-171

րորդ հրատարակության մեջ *արորածիզ* բառը փոխարինված է *ակօսածիզ* բառով³¹: Գտել ենք ՆՀԲ-ում չհղված մի այլ վկայություն Ոսկեբերանի մոտ. «...քանզի յաղագս... երիվարաց և ջորուց և *արորածիզ եզանց* և հօտից և խաչանց բազմանալոյ...»³²:

Արորավար «արօրով վարած, հերկած» (ՀԲԲ). «...և իբրու ի ծառոց քաղելով պտուղ, և յերկիր ոմն *արորավար* յարգանդին, անտեսս մանրկութեամբ, և անստեղծ կենդանիս սերմանելով»³³: Հ. Աճառյանը Վանի բարբառում գրանցել է *հարօրվար* ձևը, որ նշանակում է «արօրով վարող»³⁴:

Արօրայեղ «արօրադրութիւն յեղյեղալ, արօրավար երկիր, անդաստան» (ՆՀԲ), «արօրով շուռ տուած...» (ՀԲԲ). «Եւ զայն իսկ որ հանդերձեալ էր զաստուածային սերմն ունել յինքեան, իբրու *արօրայեղ* բակառաբար պարունակեաց, ըստ ամենայնի ստեղծեալ անուանեաց ուղիղին զսա մասն՝ սկաւառակ»³⁵:

Կրկնարօր առնել «կրկին արօրադրել, վերստին հերկել. քաջ քննել, մանր խուզարկել» (ՆՀԲ) և *Երեքկնարօր առնել* «երեք անգամ արօրով վարել, կրկին և կրկին քրքրել, խուզարկել» (ՀԲԲ), «պրպտել, մի լաւ քննել» (ՀԱԲ). «Պարտ է *կրկնարօր* և *երեքկնարօր* առնել զբանն»³⁶:

Արօրադրել «որ արօրադրել (որպէս) արջառն. արօրածիզ» (ՆՀԲ). «...զի եղիցի *արօրադրել* ակօսաբեկ առ ի վաստակել...»³⁷:

Արօրադրութիւն «հերկ, հերկագործութիւն» (ՆՀԲ), «արօրադրելը, վարելը, վար» (ՀԲԲ). «Մերժեսցի՛ն սովաւ ի յանդոց պտղատոհմական / *Արօրադրութեանց* մերոց սահմանաց / Եւ ի քո մշակեալ կենդանի երկրէ՛ / Վերք վատնիչք եւ հոյլք մորմոքեցուցիչք»³⁸:

Արօրադրել «արօր դնելով գործել զերկիր. հերկել զարտորայս կամ զանդաստանս արօրաւ» (ԲՀԼ), «արոր ձգել, արօրով վարել արտը. *փոխ*. մշակել» (ՀԲԲ). ՆՀԲ-ն հղել է Պիտոյից գիրքը³⁹, Գրիգոր Նարեկացուն⁴⁰ և այլն: Գտել ենք ՆՀԲ-ում չհղված այլ վկա-

(«Երկրի, արջա՛ռ, քանզի *արօրածիզ* է և երկրագործ»):

³⁰ Սարգիս Վարդապետ, նշվ. աշխ., էջ 117 («...և զեզն *արօրածիզ* ընդ լծով ածել...»):

³¹ Տե՛ս Մեկնութիւն եօթանց թղթոց Կաթողիկեայց, արարեալ երանելոյն Սարգսի շնորհալից վարդապետին Հայոց իմաստասիրի և քաջ հռետորի, աշխատասիրութեամբ Տ. Անդրեաս վարդապետի Նարինեան Ակնեցոյ, Կոստանդինուպօլիս, 1826, էջ 93:

³² Երանելոյն **Յովհաննու Ոսկեբերանի** Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի Ներբողեան ասացեալ յաղագս վարուց և նահատակութեան Սրբոյն Գրիգորի Հայոց մեծաց հայրապետի ի Կոկիսոն հայոց մինչ յաքսորանս էր. - Սովերք հայկականք, հ. Դ, էջ 57:

³³ Պղատունի առ Տիմէոս. - Պղատունի իմաստասիրի Տրամախօսութիւնք, Վենետիկ-Ս. Ղազար, 1877, էջ 173:

³⁴ Տե՛ս Հ. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 647:

³⁵ Պղատունի առ Տիմէոս, էջ 150:

³⁶ Մեքերիանոսի Եմեսացոյ Գաբաղացոց եպիսկոպոսի ճառք, Ճառ Թ, էջ 171:

³⁷ Ոսկեբերան, Անդրիական ճառք, ԺԷ. - **Յովհաննու Ոսկեբերանի** Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի ճառք, էջ 870:

³⁸ Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, ՂԲ Թ. - Նարեկացի, Երկասիրութիւնք, էջ 416:

³⁹ Գիրք Պիտոյից, էջ 161 (Մահման բաղդատութեան, 2) («...որպէս զի ոչ միայն զանօսն եւ զկակուղն, այլև զխտացեալ թանձրահողն եւ զխոշոր ապառաժուտն դիւրեցէ հզօր բազկաւ *արօրադրելով* կակղել...»):

⁴⁰ Գրիգոր Նարեկացի, Ներբող ի Սուրբ առաքեալսն, Գ. Նարեկացի, Երկասիրութիւնք, էջ 591 («...եւ զՓիւնիկեցի գօրուն գումարտակ՝ ի կենդանի ջուրն հեղձուցին, եւ զկարծրացեալ մտաց անդաստան՝ *արօրադրեալ* զերահերկեցին...»), Նույնի, Մատեան ողբերգութեան, ԺԸ Բ. - Նույն տեղում, էջ 82 («Որ

յություններ Ոսկեբերանի մոտ. «Ջայս և յերկրագործսն է տեսանել. ծերն ոչ *արորադրել* կարէ և ոչ ակօս հատանել և ոչ հրահանգող լինել զուարակացն և ոչ զօրաւոր եզանց բերել զբնութիւն...»⁴¹, «...եթէ զիա՞րդ Սառա ծնաւ. մանաւանդ եթէ զայն բան յիշեսցեն՝ զիա՞րդ երկիր կոյս էր և ծնաւ. *արորադրեալ* ոչ էր, որ երկրագործէր զնա՝ ոչ ոք էր, ...ակօսք ի նմա ոչ պատառեցան...»⁴²:

Արորադիր լինել /_առնել «արօրով վարել զերկիր, հերկել, կամ պատառել. ակօսաբեկ առնել... արօրել, արօրադրել» (ՆՀԲ). «...և ամենայն լեառն *արօրադիր ակօսաբեկ լիցի*»⁴³, «...սիո՞վն իբրև զագարակ *արօրադիր ը լիցի*...»⁴⁴, «Ձորօրինակ տեսի զայնոսիկ որ զանպատեհսն *արօրադիր առնեն*»⁴⁵:

Արօրել «արօրադիր առնել, արօրադրել, հերկել» (ՆՀԲ). «...որ ի դէպ ժամանակի էջ յերկիր *յարօրեալսն* օրինօք եւ մարգարէիք...»⁴⁶, «...քաղաքից և գիւղից՝ ագարակաց և տանց զանազան շինուածոց, և բարձրաբերձ աշտարակաց, *արօրելով* զնա բուրաստանս և այգիս»⁴⁷: Այս բառը Խոյ-Մարադայի բարբառում (*յարօրել* հնչյունական տարբերակով) նշանակում է «Գարնան վարած արտը աշնանը կրկին վարել ու ցանել»: Արարատյան բարբառում դրան հոմանիշ է *երեսել* բառը՝ «Արտը երեսեցինք ու ցանեցինք»⁴⁸: Կան նաև *արորել* բայով կազմված դարձվածքներ, որ հանդիպում են արդի գրական հայերենում, ինչպես, օրինակ, Սիամանթոյի բանաստեղծություններում՝ «Լույսի ճամփա արորել», այսինքն՝ «կրթել, դաստիարակել», «Արշալույսներ արորել», այսինքն՝ «ապագան կերտել»⁴⁹:

Արօրաբար «ըստ օրինակի արօրոյ արօրադրութեան» (ՆՀԲ). «Թողում ասել զօրինադրին ձերոյ զաղտեղի հրամանն յաղագս մերձենալոյ արանց ի կանայս. զորմէ ամաչեմ ասել և օրինակ բերել զվարելն անդաստանաց, որովք *արօրաբար* պղծութեամբք ումանք ի ձենջ ուսան մերձենալ ի կանայս»⁵⁰:

Արօրաբեկ «արօրով բեկված՝ ճեղքված /հող/, վարած» (ՀԲԲ). Բառը վկայված է Փիլոն Երրայեցու գործերից մեկի թարգմանության մեջ, որտեղ մի քանի տողում բազմաթիվ անգամ գործածված են *արօր* բառով կազմված նաև այլ բառեր. «Առակդ՝ ասէ, ո՛վ արք, առեղծեալ է, և յաղթութիւնդ կնոջ է, և ոչ արանց. քանզի եթէ ոչ *արօրադիր* արարեալ էր ձեր իմով էրնջաւն, ոչ էր գտեալ ձեր զառարկածն իմ: ...Ձի՞նչ ասես ո՛վ սամփսոն. զի եթէ ոչ *արօրաբեկ* արարեալ էր ձեր իմով էրնջաւն, ոչ էր գիտացեալ զա-

արօրադրեալ միշտ եւ մշակեն զսահմանս հոգւոց՝ / Սո բանիդ կենաց արդիւնատրութիւն»):

⁴¹ **Ոսկեբերան**, յԱբրահամ և պատարագն. - **Յովհաննու Ոսկեբերանի** Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի ճառք, էջ 270:

⁴² Անդ, էջ 275-276:

⁴³ **Ես**. էջ 25:

⁴⁴ **Երբեմ**. ԻԶ 18: Տե՛ս նաև **Միք**. Գ 12 («Վասն այդորիկ ի ձեր սակս, սիոն *արօրադիր ը լիցի*...»):

⁴⁵ **Յոր**. Դ 8:

⁴⁶ **Գրիգորի Նարեկայ** վանի վանականի Մեկնություն Երգոց երգոյն Սողոմոնի: **Նարեկացի**, Երկասիրութիւնք, էջ 475:

⁴⁷ Լուծմունք Սահմանացն Դաւթի Անյաղթ փիլիսոփայի. - Գիրք սահմանաց **Դաւթի Անյաղթ** փիլիսոփայի և աստուածաբան վարդապետի, Կոստանդնուպոլիս, 1731, էջ 217:

⁴⁸ Տե՛ս **Սահակ վրդ. Ամատունի**, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, էջ 271:

⁴⁹ Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. Ա, Երևան, 1969, էջ 239:

⁵⁰ Պատմություն **Ղեւոնդեայ** մեծի վարդապետի Հայոց, Բ հրատ., Ս. Պետերբուրգ, 1887, ԺԴ, էջ 92:

ռակն իմ: ...Ի մի՛ տ արկ խնդրողացս, զի՞նչ կամի քո երնջոյն յիշատակ, և զի՞նչ *արօրադրեալ* զերինջ. քանզի ոչ *արօրադրեցեալ*, այլ՝ *արօրադրեալ* տեսանեմք զերինջ. արդ ի՞բր զայն՝ որ *արօրադրեացն*, *արօրադրի՛ր* ասես: Գեղեցի՛կ, ո՛վ իմաստուն, զեղեալն ծածկապէս յայտնեցեր, քանզի ի մէջ կանացի երինջն եղեալ յայլազգեացն *արօրադրի*ր եղև, նեղեալ և շտապ ի վերայ հասուցեալ, եթէ ողորբեալ պատրեա՛ զայրն քո. և զքեզ *արօրադրեաց*: Այսպէս զեղեցիկ քեզ և արուեստապէս ունի, ուստի ելին ի զօրութենէ շտապելով՝ *արօրադրի*ր լինել երնջան իմով»⁵¹:

Անարօրադիր «ոչ արօրեադրեալ, ոչ հերկեալ, անգործ... կամ ոչ մշակեալ, և անսերմն և ինքնաբոյս» (ՆՀԲ), «անարօր» (ՀԲԲ). «Ունի մշտածին ինքնաւոր *անարօրադիր* բոյսս բիրաստեղունս, եւ ծառս զանազանս»⁵²:

Անարօր «ոչ արօրեադրեալ, ոչ հերկեալ, անգործ... կամ ոչ մշակեալ, և անսերմն» (ՆՀԲ), «1. արօր չունեցող, առանց արօրի... 2. չարօրված, չվարած...» (ՀԲԲ). «...և արդարև յետին անմտութիւն է սերմանել սերմանիս յանգործ և *յանարօր*՝ ի փշաբեր ի տատասկաբեր յերկիր...»⁵³:

Ինչպէս երևում է բերված օրինակներից, նշված բարդ և ածանցավոր բառերի մի մասը նույնպէս գործածված է փոխաբերական իմաստով: Այդ տեսակետից շատ հետաքրքիր է վերջին օրինակի *անարօր* բառը: Ահա բառի մի յուրօրինակ մեկնաբանություն Գրիգոր Մագիստրոսի մոտ՝ «...քանզի սովորութիւն է մեղուաց զփոշեւտեսական ծաղիկ ժողովել և քաղցր և *անարօր կերակուր* մատուցանել...»⁵⁴, որտեղ *անարօր կերակուր* արտահայտությամբ բնորոշված է «մեղր» հասկացությունը:

Բառի փոխաբերական իմաստով գործածության մի գեղեցիկ օրինակ էլ բերում է Գրիգոր Նարեկացին. «Խրախացիր համայն տարփանօք. բերկրեալդ ի կանայս, որ ի կոյս եւ *յանարօր արգանդէ* Բան բեղնաւորեցեր...»⁵⁵: Հայ միջնադարյան համապատասխան գրականության հետ համեմատությունը *անարօր* բառի հետաքրքիր հոմանիշներ է երևան բերում, որոնց մեծ մասը նշված չեն բառարաններում այդ բառը մեկնող հոդվածներում: Անդրադառնանք այդ հոմանիշներից մի քանիսին.

Կուսական արգանդ

Այս հոմանիշը վկայված է ինչպէս միջնադարյան հայերեն թարգմանություններում [Աթանաս Ալեքսանդրացի («...քանզի մարմին եղև Բանն բնութեամբ, և միացաւ ի նմա անորոշաբար. անապական է մարմինն և անեղծական, և զկուսական արգանդն անխախտութեամբ պահեաց...»⁵⁶), Կյուրեղ Երուսաղեմացի (որին թարգմանաբար հղում է Ստեփանոս Իմաստասերը) («... այսպէս իմացիս և ի վերայ Քրիստոսի, իբր բնութիւն

⁵¹ Փիլոնի Առանց պատրաստութեան ի Սամփսովն, Փիլոնի Եբրայեցոյ Մնացորդք ի Հայս, էջ 574:

⁵² Գրիգոր Նարեկացի, Ներբող ի Սուրբն Յակոբ Մծբնայ, Բան նուիրական գովեստի, ԺԶ, Նարեկացի, Երկասիրութիւնք, էջ 600:

⁵³ Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին՝ որ ըստ Յօհաննու, Կ. Պօլիս, 1717, Նախերգանք, էջ 9:

⁵⁴ Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, բնագիրն յառաջաբանով և ծանօթութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապօլ, 1910, ԽԸ, էջ 116:

⁵⁵ Գրիգոր Նարեկացի, Ներբող ի Սուրբ կոյսն, Ժ, Նարեկացի, Երկասիրութիւնք, էջ 573:

⁵⁶ Սրբոյն Աթանասի Ալեքսանդրոյ հայրապետին Ի ծնունդն Քրիստոսի, Ս. Աթանասի Ալեքսանդրիոյ հայրապետի Ճառք (թուղթք և ընդդիմացութիւն), Վենետիկ-Ս. Ղազար, 1899, էջ 260-261:

մարդկային ի ձեռն կուսական արգանդի ծնիցեալն զկուսութիւն մաւրն պահեաց անապական...»⁵⁷) և այլն⁵⁸], այնպէս էլ հայ մատենագիրների գործերում [Պետրոս Սյունեցի («Ուրախ լեր, Մարիամ, Դուռն աղիւեալ, ընդ որ հրեշտակաց Տէրն մո'ւտ և ե՛լ, և զկուսական արգանդդ ոչ ելոյծ...»⁵⁹), Գրիգոր Տաթևացի («...և զկուսական արգանդն անաղարտ պահեաց»⁶⁰) և այլն⁶¹]:

Կոյս արգանդ

Այս հոմանիշը գործածել են Եփրեմ Ասորին («...սոյնպէս և ի կոյս արգանդէ անտի, զի կոյսն առանց երկանց արդարն ճշմարիտ ծնաւ»⁶²), Գրիգոր Տաթևացին («...և անսերմ յղութեամբ գոյանայ. և ի կոյս յարգանդէ ծնանի»⁶³) :

Անապական արգանդ

Այս հոմանիշը նույնպէս վկայված է ինչպէս միջնադարյան հայ թարգմանություններում [Աթանաս Ալեքսանդրացի («Խնդա՛ բերկրեալդ ի կանայս, զի ի սրբեալ և յանապական արգանդէ ծնաւ և ստեղծ ինքն իւր մարմին շնչական...»⁶⁴), Դիոնիսիոս Արիսպագացի (որին թարգմանաբար հղում է Ստեփանոս Իմաստասերը) («... և որպէս Աստուած և Տէր բնութեամբ պահեաց անապական զարգանդ կուսին որպէս և էրն իսկ...»⁶⁵)], այնպէս էլ հայ մատենագրության մեջ [Ագաթանգեղոս («Եւ յղացեալ այնուհետև ի Հոգւոյն սրբոյ շնորհագիւտ կուսին յանարանց յանապական արգանդին գորդին Աստուծո՛ւ՝ անհասական պայմանաւ»⁶⁶)]: Ինչպէս տեսնում ենք, բերված օրինակներում առկա են նաև սրբեալ և յանարանց հոմանիշները: Ինչ վերաբերում է յանա-

⁵⁷ **Ստեփանոս Իմաստասերի** Վասն անապականութեան մարմնոյ...- **Գ. Տէր-Մկրտչյան**, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, աշխատասիրությամբ Պ. Հ. Հակոբյանի, Մայր աթոռ Ս. Էջմիածին, 1998, էջ 216:

⁵⁸ «...զի ի կուսական արգանդ սաղմնառեցաւ լոյսն ճշմարտութեան...» (**Սրբոյն Աթանասի Ալեքսանդրի հայրապետի** Ներբողեան ի Սուրբ Աստուածածինն ասացեալ և ի միշտ կոյսն Մարիամ. - Նույն տեղում, էջ 303), «...վասն զի առաջի ամենեցունց ի կուսական արգանդէն ծնաւ Բանն մարմնացեալ» (Թուղթ Եր. **Սրբոյն Աթանասի եպիսկոպոսի Ալեքսանդրացոյ** առ Էպիկտետոն եպիսկոպոս Կորնթացոց. - Նույն տեղում, էջ 341), «...իսկ կուսականն զիա՛րդ տարցի արգանդ» (**Ոսկեբերան**, Երկբայական ճառք. Յաւետիս Աստուածածնին. - **Յովհաննու Ոսկեբերանի** Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի Մեկնութիւն Թղթոցն Պաղոսի, հ. 2, Վենետիկ-Ս. Ղազար, 1862, էջ 638):

⁵⁹ **Երանելոյն Պետրոսի Միւնեաց եպիսկոպոսի** Գովեստ ի սուրբ Աստուածածինն և ի միշտ կոյսն Մարիամ ըստ յորջորջման նորին. և ի սուրբ գրոց լուծմունք նոցին, հոգևոր իմաստիւք. - Նույն տեղում, էջ 179:

⁶⁰ Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, արարեալ **Սրբոյ Հորն մերոյ Գրիգորի Տաթևացոյն**, 1746, էջ 357-358:

⁶¹ «Զի ծնունդ կուսական յարգանդի աւագանին զարինակ բերէ մեզ մաքրափայլ ծննդեան սկզբնալոյս կենացն՝ նոր ջրոյն և ի հոգւոյն կատարի» (**Հովհաննէս Իմաստասեր**, Մեկնութիւն տումարիս հայկազնեայ. - **Ա. Գ. Աբրահամյան**, Հովհաննէս Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 335)

⁶² Տեառն Եփրեմի Ասորւոյ Մեկնութիւն Աւետարանի համաբարբառ. - **Սրբոյն Եփրեմի** Մատենագրությունը, էջ 24:

⁶³ Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, արարեալ **Սրբոյ Հորն մերոյ Գրիգորի Տաթևացոյն**, էջ 375:

⁶⁴ **Սրբոյն Աթանասի Ալեքսանդրի հայրապետի** Ներբողեան ի Սուրբ Աստուածածինն ասացեալ և ի միշտ կոյսն Մարիամ. - **Ս. Աթանասի Ալեքսանդրի հայրապետի** ճառք, էջ 308:

⁶⁵ **Ստեփանոս Իմաստասերի** Վասն անապականութեան մարմնոյ...- **Գ. Տէր-Մկրտչյան**, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, էջ 214:

⁶⁶ **Ագաթանգեղեայ** Պատմութիւն Հայոց, աշխատությամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Էջմիածին-Տիպիս, 1909, « 392:

րանց ... արգանդ արտահայտությանը, ապա Ագաթանգեղոսի աշխարհաբար թարգմանության մեջ այն նշված է *անհայր ... արգանդ*⁶⁷ ձևով, որն այնքան էլ ճիշտ չի արտացոլում բառիմաստը: Կարծում ենք, որ կարելի էր աշխարհաբար թարգմանության մեջ *անհայր* բառի փոխարեն գործածել *անայր* բառը (ՆՀԲ-ն *անարանց* բառը մեկնում է *անայր* բառահոդվածում. «Եւ իբր Անհարսնացեալ, անփորձ յառնէ. միշտ կոյս, որ աւսի անարանց, այսինքն անմերձ յամենայն արանց»⁶⁸):

Անսերմնական (անսերմն) արգանդ

Գործածել է Աթանաս Ալեքսանդրացին («Ուրախ լեր Մարիամ, մայր սրբասնեալ և կոյս շնորհաւէտեալ, զի յանսերմնական արգանդէ՝ և յանփորձ ամուսնութենէ ծնար զԵմանուէլն...») (մի այլ ձեռագրում՝ *անսերմն*)⁶⁹:

Անապատացեալ արգանդ

Գործածել է Աթանաս Ալեքսանդրացին («Ո՛վ Մարիամ, երկիր ծարաւուտ և պտղաբեր, անապատ անկոխ և անջրդի, վասն զի յանապատացեալ յարգանդէդ բոխեաց տունկ բազմապտուղ, որպէս արմատ ի ծարաւուտ երկրի...»⁷⁰):

Արգանդ... *առանց կցորդութեան առն*⁷¹

Գործածել է Աթանաս Ալեքսանդրացին («Աստուած... վասն մերոյ փրկութեան շինեաց զմարմինն յարգանդին Մարիամու աստուածածնի, առանց կցորդութեան առն, և եղեւ... մարդ...»⁷²):

Գտել ենք հոմանիշներ, որոնք վկայված են միայն հայ հեղինակների կողմից՝

Ամուլ արգանդ

Գործածել է Գրիգոր Տաթևացին («...զնա ի կոյս մօրէ. և զնա յամուկ արգանդէ»⁷³):

Անարատ արգանդ

Գործածել է Հովհաննէս Օձնեցին («...զի Բանն աստուա՝ գոյութիւն հանդերձ մարդկային բնութեամբ ընկալեալ յանարատ արգանդէ կուսին...»⁷⁴):

Ամենամաքուր արգանդ

Գործածել է Սիմեոն Երևանցին («...ի ժամանակի իջեալ յերկիր յաստուածածին կոյսն Մարիամ, յամենամաքուր յարգանտի նորին յղացաւ ի հոգւոյն սրբոյ...»⁷⁵):

⁶⁷ Տե՛ս **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, « 392:

⁶⁸ ՆՀԲ, հ. Ա, էջ 106:

⁶⁹ **Սրբոյն Աթանասի Ալեքսանդրի հայրապետի** Ներբողեան ի Սուրբ Աստուածածինն ասացեալ և ի միշտ կոյսն Մարիամ. - **Ս. Աթանասի Ալեքսանդրիոյ հայրապետի** ճառք, էջ 296:

⁷⁰ Նույն տեղում, էջ 306:

⁷¹ Բառարաններում այս հոմանիշը «Անարօր» բառահոդվածում նշել են Մխիթար վրդ. Մեքաստացին՝ («Իսկ մերթ անդաբերաբար ասի զարգանդէ կուսանաց, որով նշանակի անխախտն, և ոչ գիտացեալն յառնէ» /ԲՀԼ, էջ 38/), Հ. Մանուէլ վրդ. Զախջախեանը («Անարօր արգանդ, ոչ մերձեցեալ յառնէ» /Բաղդիքք ի բարբառ հայ եւ իտալական, յօրինեալ ի **Հ. Մանուէլ վարդապետէ Զախջախեան** (այսուհետ՝ ԲԲՀԻ), Վենետիկ-Ս. Ղազար, 1837, էջ 72/):

⁷² **Սրբոյն Աթանասի Էպիսկոպոսի** Յաղագս աստուածութեան Որդւոյ. - Նույն տեղում, էջ 152:

⁷³ Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, արարեալ **Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյն**, էջ 373:

⁷⁴ **Յովհաննու Բմատասիի Աձնեցոյ** Մատենագրութիւնք, Վենետիկ-Ս. Ղազար, 1862, էջ 55:

⁷⁵ Գիրք որ կոչի Պարտավճար, արարեալ Տեառն **Սիմեոնի** վշտակօծ և ցաւակիր Կաթողիկոսի, մեծագործ և յոգներախտ Հայրապետի ամենայն Հայոց Երևանեցոյ, Մայր աթոռ Ս. Էջմիածին, 17..., I, գլ. Զ,

Գտել ենք նաև շատ հետաքրքիր այլ հոմանիշներ, ինչպես, օրինակ՝

Լուսազգեստ արգանդ

Գործածել է Պետրոս Սյունեցին («...այսինքն՝ գտիրական մարմինն առանց սերման առն ստեղծ ինքեան, զոր ի լուսազգեստ արգանդին հարեալ սաղմէր...»⁷⁶):

Հոգենկար արգանդ

Գործածել է Թեոդորոս Քոթենավորը («Դարձեալ ուրախացիր... որ ինքնակամ յօժարութեամբ սրտիւ բարեհաճեցաւ իննամնեայ ժամանակաւ գեղազարդեալ ի քում հոգենկար արգանդիդ, մինչև ծնար զանդրանիկն արարածոց և զարարիչն...»⁷⁷):

Անշուշտ, կան նաև այլ հոմանիշներ, որ մեզ չեն հանդիպել:

Ավելացնենք միայն, որ հանդիպել են Աստվածածնին վերաբերող բնորոշումներ, որոնք լիովին կարող էին հոմանիշ ծառայել «անարօր արգանդ» արտահայտությանը, ինչպես, օրինակ, «Ուրա՛խ լեր, Մարիամ, *Հովիտ անվար...*», «Ուրա՛խ լեր, Մարիամ, *Անապատ անկոխ*»⁷⁸ և այլն:

* * *

Մի քանի խոսք հայ մատենագրության մեջ ավանդված *հարօրանալ* / *արօրանալ* բառի մասին, որի նշանակությունը որոշակի չէ: Բառը *հարօրանալ* ձևով վկայված է Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» հետևյալ արտահայտությունում. «Նա և դասադաս խորդոցն հաւուց եկեալ ի զարնանոյն ժամանակս՝ երամացեալք *հարօրանան*»⁷⁹: Այս հատվածի աշխարհաբար թարգմանության մեջ՝ «Նույնպես և դասադաս կռունկ թռչունները, գալով զարնանային ժամանակներում, երամներով *տարածվում են*»⁸⁰, *հարօրանալ* բային համապատասխանեցվել է *տարածվել* բայը: Նույն հատվածի ռուսերեն թարգմանության մեջ՝ «И журавли, выстроившись шеренгами, прилетают в весеннюю пору, *собираясь в большие стаи*»⁸¹, *հարօրանալ* բային համապատասխանեցվել է *համախմբված* դերբայը: Ինչպես տեսնում ենք, միևնույն հասկացությունը աշխարհաբար և ռուսերեն թարգմանություններում ունի միանգամայն տարբեր, նույնիսկ հակադիր իմաստներ. մեկում՝ *տարածվել*, մյուսում՝ *համախմբվել*: Անգլերեն թարգմանության մեջ՝ «Similarly groups of cranes come in the spring time, they gather

էջ 80:

⁷⁶ **Երանելոյն Պետրոսի Միւնեաց եպիսկոպոսի** Գովեստ ի սուրբ Աստուածածինն և ի միշտ կոյսն Մարիամ ըստ յորջորջման նորին. և ի սուրբ գրոց լուծմունք նոցին, հոգևոր իմաստիւք. - **Գ. Տեր-Մկրտչյան**, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, էջ 179:

⁷⁷ **Երանելոյն Թեոդորոսի** միայնակեցի Գովեստ ի Սուրբ Աստուածածինն եւ ի միշտ կոյսն Մարիամ. - **Յովհաննու Իմաստասիրի Աւանեսայ** Մատենագրութիւնք, էջ 181:

⁷⁸ **Երանելոյն Պետրոսի Միւնեաց եպիսկոպոսի** Գովեստ ի սուրբ Աստուածածինն և ի միշտ կոյսն Մարիամ ըստ յորջորջման նորին. և ի սուրբ գրոց լուծմունք նոցին, հոգևոր իմաստիւք. - **Գ. Տեր-Մկրտչյան**, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, էջ 178, 179:

⁷⁹ **Ագաթանգեղեայ** Պատմութիւն Հայոց, աշխատությամբ Գ. Տեր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տիփլիս, 1907, « 657:

⁸⁰ **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, « 657 /էջ 367/:

⁸¹ **Агатаңгелос**, История Армении, пер. с древнеармянского, вступительная статья и комментарии К. С. Тер-Давтян и С. С. Аревшатыан, Ереван, 2004, « 657.

together and settle»⁸² («Նմանապես արագիլների խմբերը գալիս են գարնանը, նրանք հավաքվում են *և բնավորվում*») *հարթանալ* բային համապատասխանեցվել է *բնավորվել* բայը: Ցավոք, տվյալ մեջբերման այլ լեզուներով թարգմանություններ մեզ չեն հանդիպել, որպեսզի կարողանայինք համապատասխան համեմատություններ կատարել: Ինչ վերաբերում է Ագաթանգեղոսի վրացական, հունական, լատինական, արաբական, հաբեշական և այլ խմբագրություններին, ապա դրանցում քննարկվող հատվածը բացակայում է, քանի որ երկի երկրորդ՝ Վարդապետություն բաժինը, որում ընդգրկված է մեջբերվող հատվածը, հիմնականում մեզ է հասել միայն հայերեն բնագրով:

Բառը *արթանալ* ձևով վկայված է X դարում և առկա է Գրիգոր Նարեկացու՝ «Սողոմոնի Երգ երգոցի մեկնության» մեջ. «Որպես հաւք ի ժամ գարնայնոյն *արթանան* եւ տարածանին ընդ երկիր. նոյնպէս եւ ի գալ հոգեւոր գարնայնոյս ցնծան սուրբքն...»⁸³: Այս հատվածի արևմտահայերեն թարգմանության մեջ՝ «Ինչպէս որ թռչունները գարնան ատեն *արթոններու մէջ կը շրջին* եւ ամբողջ երկրին մէջ կը տարածուին...»⁸⁴, *արթանալ* բային համապատասխանեցվել է *արթոններու մէջ շրջել* արտահայտությունը, իսկ նույն հատվածի արևելահայերեն թարգմանության մեջ՝ «Ինչպէս որ թռչունները գարնանը *երամով թռչում են* և տարածվում են երկրով մեկ...»⁸⁵, *արթանալ* բային համապատասխանեցվել է *երամով թռչել* արտահայտությունը: «Երգ երգոց՝ հանդերձ մեկնութեամբ նախնեաց» գրքում այլ մեկնությունների հետ միասին տեղ է գտել նաև Նարեկացու այդ երկից առանձին հատվածների, այդ թվում և վերոնշյալ հատվածի աշխարհաբար թարգմանությունը կամ վերաշարադրանքը՝ «Ինչպէս թռչունները գարնանը տարածում եւ *բոյն են դնում* երկրի վրայ...»⁸⁶, որում *արթանալ* բային համապատասխանեցվել է *բոյն դնել* հարադրությունը, ինչպես Ագաթանգեղոսի անգլերեն թարգմանության մեջ: Նարեկացու «Երգ երգոցի մեկնության» իտալերեն թարգմանության համապատասխան հատվածի մեջ՝ «Come all'arrivo della primavera gli uccelli si diffondono e si sparpagliano sulla terra...»⁸⁷ («Ինչպէս գարնան գալով թռչունները տարածվում են և սփռվում երկրի վրա...»), *արթանալ* բային համապատասխանեցվել է *սփռվել* /ցրվել, ցիրուցան լինել/ բայը, ընդ որում, փոխվել են նաև «արթանան եւ տարածանին» բառերի տեղերը՝ «տարածվում են և սփռվում» (si diffondono e si sparpagliano): Նույն երկի անգլերեն վերաշարադրանքի համապատասխան հատվածի մեջ՝ «...as in springtime birds spread across the land...» («...ինչպէս գար-

⁸² The Teaching of Saint Gregory An Early Armenian Catechism, translation and commentary by Robert W. Thomson, Cambridge, Massachusetts, 1970, « 657 /էջ 163/:

⁸³ Գրիգորի Նարեկայ վանի վանականի Մեկնութիւն Երգոց երգոյն Սողոմոնի. - Նարեկացի, Երկասիրութիւնք, էջ 475:

⁸⁴ Սրբոյն հօրն մերոյ Գրիգոր Նարեկացոյն Մեկնութիւն Երգ երգոց Սողոմոնի, Պէրոյթ, 1963, էջ 39:

⁸⁵ Գրիգոր Նարեկացի, Մեկնություն Երգ երգոցի (թարգմ. գրաբարից՝ Վ. Ֆերեշեյան), Ս. Էջմիածին, 2007, էջ 64:

⁸⁶ Երգ երգոց՝ հանդերձ մեկնութեամբ նախնեաց, աշխատասիրութեամբ Տ. Մեսրոպ քահանայ Արամեանի, Երևան, 1993, էջ 46:

⁸⁷ Commentario sul Cantico del Cantici di Gregorio di Narek, Introduzione, traduzione italiana e annotazioni di P. Vincenzo Mistrih. - Studia Orientalia Christiana Collectanea (Cairo), 12, 1967, էջ 512 [46]:

նան գալով թոշունները տարածվում են երկրի վրա...»), շրջանցված և չի թարգմանված *արօրանալ* բառը⁸⁸:

Այսպիսով, *հարօրանալ* / *արօրանալ* բառի դիմաց ունենք հինգ տարբեր նշանակություններ՝ «տարածվել», «համախմբվել», «երամով թռչել», «արտոնների մեջ շրջել» «բույն դնել»: Բառը, անշուշտ, «տարածվել» նշանակությունը չունի, քանի որ Նարեկացու երկում նշվում է՝ «արօրանան եւ տարածանին»: Բառի «տարածվել» նշանակության դեպքում Նարեկացին հազիվ թե *արօրանալ* բային շաղկապով միացներ *տարածանել* բայը: Բառը չունի նաև «բույն դնել» նշանակությունը: Նարեկացու երկի այդ թարգմանության մեջ փոխատեղված են «արօրանան եւ տարածանին» բայերը՝ «տարածում և բոյն են դնում»: Եթե բնագրային տեքստի մեջ *արօրանալ* բայի տեղում դնենք *բոյն դնել* բայը, ապա կստացվի՝ «բոյն դնեն և տարածանին», ինչը, մեղմ ասած, այնքան էլ բնորոշ չէ թոշունների վարքին: Բառը չունի նաև «համախմբվել» նշանակությունը, քանի որ եթե այդ բառը դնենք Նարեկացու տեքստի մեջ, ապա կստացվի «համախմբուել եւ տարածանին», իսկ դա, ինչպես արդեն նշվեց, հակադրություն է: Ինչ վերաբերում է բառի «երամով թռչել» և «արտոնների մեջ շրջել» նշանակություններին, ապա դրանք մոտ են բառարաններում առկա բացատրություններին:

Ի դեպ, հայերենի բառարաններում բառի բացատրությունը նույնպես միանշանակ չէ: Ըստ Հ. Աճառյանի՝ բառը նշանակում է «թոշունների թռչիլը խմբով»⁸⁹, ըստ Մխիթար վրդ. Սեբաստացու՝ «տարածիլ. կամ սփռիլ. զի թռչունքն, որք ի յանդաստանս. կամ ի դաշտս, և ի խոտաւէտ մարգս իջեալք ի բարձանց՝ սփռին, և տարածին առ ի զբոսանս, կամ առ ի կերակրիլ, ասին՝ արօրանալ ի նոսայ»⁹⁰, աշխարհաբար թարգմանությամբ՝ նաև «հերկուիլ»⁹¹ (գրեթե նույնն է նշում նաև Գ.Փէշտըմալճեանը՝ «տարածիլ, սփռիլ, հերկիլ»⁹²), ըստ Հ. Մանուէլ վրդ. Ջախջախեանի՝ «շրջիլ կամ արածիլ թռչնոց ի տեղիս արօրոյ (ի սերմանեալ ակօսս կամ յարտորայս)»⁹³, ըստ Առձեռն բառարանի՝ «հերկուած արտերու մէջ թռչուններուն պտըտիլը կամ ուտելիք փնտռելը»⁹⁴, ըստ Ս. Մալխասյանցի՝ «երամովին թռչել գետնի վրայով (թռչունների մասին)»⁹⁵: ՆՀԲ-ն թեև ունի համապատասխան հոդվածներ, բայց դրանցում հղում է միայն աղբյուրները՝ չտալով բառի որևէ բացատրություն⁹⁶: Բառարաններից բացի, այլ բնույթի աշխատություններում ևս հանդիպում են տվյալ բառի բացատրություններ: Օ-

⁸⁸ Տե՛ս **R. W. Thomson**, Gregory of Narek's Commentary on the Song of Songs. - The Journal of Theological Studies (Oxford), N. S., Vol. XXXIV, Part. II, October 1983, էջ 463:

⁸⁹ ՀԱԲ, հ. Գ, Երևան, 1977, էջ 64:

⁹⁰ ԲՀԼ, էջ 115:

⁹¹ **Մխիթարայ վարդապետ Սեբաստացու** Բառգիրք ի գրաբառէ յաշխարհաբառն, ուր մեկնին բառք հայկազեան լեզուի սոսկ աշխարհաբառ, կամ տաճկական բառիք, Վենետիկ-Ս. Ղազար, 1769, էջ 62:

⁹² Բառգիրք հայկազեան լեզուի, որ է երկասիրութիւն **Փէշտըմալճեան պատուելի Գրիգոր** մեծիմաստ վարժապետի, հ. Ա, Կոստանդնուպոլիս, 1844, էջ 158:

⁹³ ԲԲՀԻ, էջ 258:

⁹⁴ Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Բ հրատ., Վենետիկ-Ս. Ղազար, 1865, էջ 484:

⁹⁵ ՀԲԲ, հ. Գ, Երևան, 1944, էջ 76: Բառի բացատրությունը նույնությամբ նշված է նաև՝ **Ռ. Ղազարյան**, Գրաբարի բառարան, հ. Ա, Երևան, 2000, էջ 128, հ. Բ, Երևան, 2000, էջ 53:

⁹⁶ Տե՛ս ՆՀԲ, հ. Ա, էջ 587, հ. Բ, էջ 70:

րինակ՝ ըստ Վ. Առաքելյանի՝ բառը նշանակում է «արորի նման երամ կազմել»⁹⁷:

Ակնհայտ է, որ նշված բառարանների մեծ մասի հեղինակները, ինչպես նաև Վ. Առաքելյանը բառը ծագեցնում են *արօր արմատից: Հ. Աճառյանը բառը չի կապում *արօր արմատի հետ, այլապես այդ բառի մասին կխոսեր «Արօր» բառահոդվածում:

Իհարկե, արոր գործիքը որոշ նմանություն ունի ինչպես թռչունների երամի ձևի, այնպես էլ թռչնի ուրվագծի հետ: Վերջին տարբերակը վերոնշյալ նշանակություններում առհասարակ բացակայում է: Մինչդեռ *արորանալ* բայը որպես *արոր դառնալ* տարբերակ դիտելը նույնպես արժանի է ուշադրության: Օրինակ՝ Նարեկացու երկի համար կարող ենք նշել, որ գարնան գալուն պես յուրաքանչյուր թռչուն դառնում է արոր, և ինչպես արորն է առաջ շարժվում՝ ձեռքերով հողը, այնպես էլ թռչունն է տարածվում երկրի վրա՝ ձեռքերով օդը: Արորի և թռչնի միջև առնչություն տեսնելու օրինակներ կան հայոց բանահյուսության մեջ: Ահա Ղարադաղի բանահյուսությունից վերցված մի հանելուկ՝ նվիրված արորին. «Ղուշ մ՝ եկավ երկնքուց, Ոսկե լազան էր կտուց. Եկավ զարկեց քո մոր ծոց, Մերն ասեց. «Վայ իմ ծոց...», որում արորը «փոխաբերվել է երկնքից իջած թռչունի հետ»⁹⁸:

Բառի մեկ այլ նշանակություն ևս կարող ենք ենթադրել՝ ելնելով Նարեկացու երկի քննարկվող նախադասության կառուցվածքից: Այդ նախադասությունը համեմատություն է, որ ունի «ինչպես..., նույնպես» կառուցվածքը. «Որպես հաւք ի ժամ գարնայնոյն *արորանան* եւ տարածանին ընդ երկիր. նոյնպես եւ ի գալ հոգեւոր գարնայնոյս ցնծան սուրբքն...»: Եվ եթե համեմատություն է, ուրեմն *արորանալ* բառը պետք է որևէ առնչություն ունենա *ցնծալ* բառի հետ, ասենք՝ «սաստիկ ուրախանալ, բերկրել, ուրախությունից խայտալ»: Այս շարքը կարող ենք շարունակել՝ զարունը գալուն պես նաև «ոգևորվել», «խանդավառվել», «արբունանալ», «հարություն առնել» և այլն:

Բառի մեկ այլ նշանակություն ևս կարող ենք ենթադրել՝ նկատի ունենալով Ագաթանգեղոսի երկի համապատասխան բաժինը: Երկում նախքան մեզ հետաքրքրող արտահայտությունը մեջբերվում են Երեմիա մարգարեի հետևյալ խոսքերը՝ «Արդարև ծիծառն և տատրակն և խորդն, հաւքն վայրի, ծանեան զժամանակ գալստեանն իւրեանց», և ավելացվում, թե «ժամանակավ զարնանոյն և իւրեանց գալստեամբն ցուցանեն զժամանակ վարուց կենաց ուրախութեան մարդկան, ի ձայն առնելն, ի ճչելն, ի ճողգելն՝ ի շինել բունոցն»: Սա համահունչ է վերջերս անգլերեն թարգմանությամբ լույս տեսած Նարեկացու «Երգ երգոցի մեկնության» մեզ հետաքրքրող հատվածին՝ «As birds in springtime *twitter* and are spread out across the land...» /«Ինչպես թռչունները գարնան գալով *ճովողում են* ու տարածվում երկրի վրա...»⁹⁹/, որում *արորանալ* բային համապատասխանեցվել է *ճովողել* բայը:

Մի հանգամանք ևս: Մեզ հետաքրքրող նախադասության առնչությամբ նշվում է, որ թռչունները «փողք եղեալք, զկոչաձայն զաղաղակ բարձեալ՝ զգործս մշակացն արթնութեան վաստակոցն օգտութեան մարդկան զարթուցանեն ի քնոյ, զկանուխս եզանցն փութացուցանեն»: Եվ ավելացնում է, որ «թռչունքն փողք են երկրագործու-

⁹⁷ Վ. Դ. Առաքելյան, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության (V դար), Երևան, 1981, էջ 152:

⁹⁸ Տե՛ս Մ. Բ. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, էջ 123 և համապատասխան ծանոթագրությունը /էջ 283/:

⁹⁹ The Blessing of Blessings: Grigor of Narek's Commentary on the Song of Songs (translation, introduction and notes by Roberta R. Ervine), Michigan, 2008, էջ 110:

թեան հողագործութեան յառաքինութիւնսն յորդորելոյ. որպէս մեղուն և կամ մրջինն վատացն վարդապետ լինիցին և կամ նախատորդ կայցեն»։ Այստեղ կա համեմատություն. «որպէս մեղուն և կամ մրջինն վատացն *վարդապետ* լինիցին»։ Արդոք դա չի՞ նշանակում, թե գարնան գալուն պէս թռչունները վարդապետանում են և տարածվում են, որպէսզի մշակներին ոգևորեն և կոչեն օգտակար գործի։

Հ. Աճառյանը *վարդապետ* «ուսուցիչ, վարժապետ...» բառը ծագեցնում է պահլավերէն *varda «գործ, աշխատանք» և pati «պէտ» բառերից։ Այս *varda արմատի այլ ձևերն են պարսկերէն varz «ցանք», varza «սերմանում», varzi «սերմնացան» և այլն։ Ինչպէս նշում է Հ. Աճառյանը, այդ արմատը կա քրդերէնում որպէս ward «արորելու տեղ»¹⁰⁰։ Դա արդէն հետաքրքիր է մեր ուսումնասիրության տեսանկյունից։ Այդ առումով մեզ գրավեց Ոսկեբերանի ճառերից մեկի հայերէն, ռուսերէն և անգլերէն թարգմանություններում առկա մի նախադասություն։ Ահա դրա ռուսերէն տարբերակը. «Часто случается, что *плуг слова*, действуя непрестанным внушением, входит во глубину души и истребляет овладевшую ею страсть»¹⁰¹։ Այս նախադասության մեջ մեզ հետաքրքրողը *плуг слова* արտահայտությունն է, որ նշանակում է «խոսքի արոր»։ Անգլերէնում այդ արտահայտությունը թարգմանվել է the plow of the word¹⁰², որ նույնպէս նշանակում է «խոսքի արոր»։ Իսկ ահա նույն հատվածի հայերէն թարգմանության մեջ՝ «Տեսչի զինչ լինիցի. քանզի դէպ լինի յորժամ ստեպ ստեպ յաճախիցէ *վարդապետութիւնն*, մտեալ ազդումն բանին՝ կտրէ զախտն որ զոգինսն նեղէր»¹⁰³, *խոսքի արոր* արտահայտության համար հայերէն համարժեք է գտնվել *վարդապետություն* բառը։

Այսպիսով, *արորանալ* բառի համարժեքի հարցը մնում է բաց, և այդ ուղղությամբ ուսումնասիրությունը պետք է շարունակել։

Վերջում անհրաժեշտ է նշել, որ սկսած V դարից՝ հայ մատենագրական և թարգմանական գրականության մեջ արդէն հանդիպում են գործիքանիշ բառանուններ ու դրանցով կազմված բարդ և ածանցավոր բառեր։ Եթե համեմատենք *արոր* բառանվան հետ, ապա գործածման հաճախականությամբ դրանցից ոչ մեկը չի գերազանցում *արոր* բառանվան և դրանով կազմված բարդ և ածանցավոր այլ բառանունների գործածման հաճախականությանը։ Կարծում ենք, որ պատճառը *արոր* բառանունը նաև փոխաբերական իմաստով գործածելու հնարավորությունն է, քանի որ մյուս գործիքանիշ բառանունները, բացի մի քանի դեպքերի, հայ մատենագրական և թարգմանական գրականության մեջ հիմնականում գործածված են ոչ փոխաբերական իմաստներով։

¹⁰⁰ St' u ՀԱԲ, հ. Դ, Երևան, 1979, էջ 318-319։

¹⁰¹ **Златоуст**, Толкование на 2-е Послание к Тимофею, беседа 6 (տե՛ս http://www.ispovednik.ru/zlatoust/Z11_2/Z11_2_41.htm).

¹⁰² **John Chrysostom**, Homily 6 on Second Timothy: "From constant teaching, it often happens that the *plow of the word*, descending to the depth of the soul, roots out the evil passion that troubled it" (Ի՞նչ <http://www.newadvent.org/fathers/230706.htm>).

¹⁰³ **Ոսկեբերան**, Մեկնութիւն Երկրորդ թղթոյն Տիմոթեայ (ճառ 6). - **Յովհաննու Ոսկեբերանի** Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի Մեկնութիւն Թղթոցն Պաւղոսի, հ. 1, էջ 226։

ՀՐԱՉ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ԽԱՂՈՂԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Խաղողի մշակությունը Հայկական լեռնաշխարհում ծագել է անհիշելի ժամանակներից: Հնագիտական մարդն, ամենայն հավանականությամբ, օգտվել է այնտեղ լայնորեն տարածված խաղողի վայրի տեսակներից: Խաղողագործությունն ու գինեգործությունը Արարատ լեռան ստորոտին տարածված են եղել Նոյ նահապետի ժամանակներից: Անհիշելի ժամանակներից խաղողագործության ու գինեգործության կենտրոններ են եղել Աղձնիքը, Մոկքը, Պարսկահայքը, Վասպուրականը, Արարատյան դաշտը և Հայաստանի այլ շրջաններ:

Հայտնի է, որ Վանի Արարատյան թագավորությունում լայնորեն մշակել ու վերամշակել են խաղողը: Ուրարտական քաղաքների պեղումների ժամանակ բացված բազմաթիվ գինու մառաններն ու նրանցում եղած կարասները, գինեգործության, խաղողի մշակման ու վերամշակման մասին հիշատակությունները վկայում են այդ ճյուղում նրանց ունեցած հարուստ գիտելիքների մասին: Այսպես, Արգիշթի 1-ին թագավորը Արգիշթիխինիլի քաղաքի հիմնադրման մասին արձանագրության մեջ (Ք. ա. 776 թ.) ասում է. «Գետից չորս ջրանցք անցկացրի, խաղողուտ և անտառ տնկեցի»¹: Իսկ Ասորեստանի Սարգոն 2-րդ արքան, հաղորդելով դեպի Վանի թագավորություն կատարած իր արշավանքի մասին, հայտնում է. «Նրանց խաղողի վազերը ամբողջությամբ հավաքեցի և կրակով այրեցի»²:

1958 թ. պեղումների ժամանակ Կարմիր բլուրից գտնվել են խաղողի կորիզներ, որոնք պատկանում են խարջի կամ գառան դմակ տեսակին³: Բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ խաղողագործությունը լայն տարածում է ունեցել նաև հելլենիստական Հայաստանում: Ստրաբոնը գրում է. «Ասում են, թե Վրկանայում մի որթատունկը տալիս է մի մետրետ գինի, մի թզենին 60 մեդիմոս թուզ, իսկ հասկից ընկած ցորենը նորից է բուսնում... նույնպես լինում է Մատիանում՝ Մարաստան, Շակաշենում և Արաքսենում՝ Հայաստան»⁴: Նույն հեղինակը մի այլ առիթով հավաստում է. «Հայաստանի ներսում կան շատ լեռներ և շատ լեռնաշղթաներ, որոնց մեջ խաղողի այգին հեշտությամբ չի աճում. նա ունի և շատ հովիտներ, ոմանք չափավոր, ոմանք էլ շատ բերրի, ինչպես Արաքսենի դաշտը»⁵:

Խաղողի և նրա վերամշակության մասին հարուստ տեղեկություններ կան նաև հայ

¹ Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա, հ. 1, Երևան, 1981, էջ 57:

² Նշված աշխատություն, էջ 32, 33:

³ **Н. Арутюнян**, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, с. 134.

⁴ **Ստրաբոն**, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյանը, 1940, էջ 13:

⁵ **Ստրաբոն**, նշվ. աշխ., էջ 55:

միջնադարյան աղբյուրներում: «Վեցօրյայի» հեղինակն, օրինակ, զարմանում է, թե այդ ինչպես է լինում, որ միևնույն խոնավությունը որթի մեջ քաղցրություն է կուտակում, որից գինի են պատրաստում, մյուս դեպքում, ձիթենու մեջ՝ յուղ, և ինչպես է լինում, որ մի դեպքում խոնավությունը վերածվում է քաղցրության, իսկ մի այլ դեպքում՝ պարարտության⁶: Մի այլ առիթով էլ Մեծն Բարսեղը գրում է. «Այլ եւ միտ եղեալ նայեսցուք, թէ զիա յոգ ծակոտեալ դրոշմեալ են իբրեւ զգործ քանդակագործի, զարմանալի տերեւք այգւոյ»⁷: Նշենք, որ միջնադարյան Հայաստանում հաճախ այգի ասելով հասկանում էին հենց խաղողի այգին: Օրինակ, Վարդան Այգեկցու առակներից մեկում ասվում է. «Եւ թագաւորն հումքի արար, թէ զինչ որ ի յիմ իշխանութեանս այգի կայ, փակեցեք եւ զկարասնին կոտորեցեք»⁸: Գոշավանքի 1301 թ. մի արձանագրության մեջ էլ ունի Թաղարտեր հաղորդում է. «Էտու ... յիմ խասս այգուն Ճ կուծ գինի»⁹: Ուշագրավ է այն հանգամանքը, որ միջնադարյան Հայաստանում խաղողի նորատունկ այգին մատնարկ են անվանել:

Դեռևս 5-րդ դարում փորձ է արվել մեկնաբանել որթի, նրա տերևների կառուցվածքը, ինչպես նաև խաղողի հասունացման հետ կապված հարցերը: Եվ խաղողի «քանդակաձև» տերև ունենալու պատճառը համարվել է արևի ճառագայթների ճիշտ բաշխումը կարգավորելը, քաղցրաշունչ օդը չափով ստանալը, ինչպես նաև բերքը խստաշունչ հողմերից պաշտպանելը¹⁰: Մովսես Խորենացուն վերագրվող «Գիրք պիտոյից»-ում հատուկ գլուխ կա, որտեղ իրար հետ բաղդատվում են որթատունկն ու ձիթենին: Ճիշտ է, այստեղ պատմիչը հիմնականում պախարակում է որթատունկը, նրա գինետու լինելու հանգամանքն ի նկատի ունենալով, սակայն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նրա բնույթի, մշակման մի քանի առանձնահատկությունների և տարածման ու աճման շրջանների վերաբերյալ: Այսպես, օրինակ, նա գրում է, թե այս մշակույթը տարածված է ոչ միայն դաշտային ախորժավոր վայրերում, որոնց «հոսմամբ թօնիցն բերմամբ հեղեղեն, այլ նաև ավազախիր տեղերում»: Մի այլ տեղ էլ նշում է, թե որթը շատ նուրբ է և շուտ է տուժում բնական աղետներից. «... ի կանխագունեն՝ ցրտով, և կամ անգիտութեամբ բերրիսն խզելով ուռս, և յանսգանեն, ի դոյզն շարժմանէն պտղաթափ և ծաղկազերծ լինելով, ուստի անհնարին դժնդակ լինի երկրագործացն զգուշանալ ի պահպանութեանցս սորա»¹¹: Եվ բացի սրանից էլ ուշ է հասունանում, որի պատճառով շատ հաճախ ձեռնունայն է թողնում երկրագործին¹²: Նույն գլխի մի այլ հատվածից էլ իմանում ենք խաղողի վազի մշակման վրա կատարվող աշխատանքների հերթականության մասին: Նա նշում է բերելը և բաժակելը, ավելորդ «ուղեշս յապաւել»-ը, «գօտար բոյսս խլել»-ը,

⁶ **Բարսեղ Կեսարացի**, Յաղագս վեցարեայ արարչութեան, աշխատասիրությամբ Կ. Մուրադյանի, Երևան, 1984, էջ 158:

⁷ **Բարսեղ Կեսարացի**, նշվ. աշխ., էջ 155-156:

⁸ **Н. Марр**, Собрания притч Вардана, часть 2, СПб, 1894, с. 301.

⁹ **Գ. Քոչարյան**, Դվինից հայտնաբերած արտադրական նշանակության սալ, «Լրաբեր» հաս. գիտ., Երևան, 1978, թիվ 2:

¹⁰ **Բարսեղ Կեսարացի**, նշվ. աշխ., էջ 155-156:

¹¹ Մյուրյ քերթողահօր մերոյ Մովսեսի Խորենացոյ նախակրթութիւն հռետորական ասացեալ Գիրք պիտոյից, Վենետիկ, 1796, էջ 232-234 (Այսուհետև՝ Մ. Խորենացի, Գիրք պիտոյից):

¹² **Մովսես Խորենացի**, Գիրք պիտոյից, էջ 235-236:

«զգետնանախանձութենէն ի վեր ամբառնալ»-ը, «ջուրք արբուցանել»-ը և այլն¹³: Նշվածի հիման վրա հնարավոր է վերականգնել աշխատանքների հաջորդականությունը հետևյալ կարգով. փորել, բաժակել, էտել, որն այստեղ կոչվում է «ուղէշ յապաւել», քաղհանել, ջրել¹⁴: Վերը թվարկված գործողությունները ցույց են տալիս, որ հնագույն ժամանակներից հայտնի են եղել խաղողի մշակման տարբեր գործընթացները: Ճիշտ է, այս մշակույթը շատ աշխատատար է եղել, բայց այն լայն տարածում է ունեցել Հայաստանում, որն էլ հարուցում է Խորենացու տրտունջը: Այդ առիթով նա գրում է, թե խաղողը փափագելի է թվում իր համով և գույնով, սակայն իր ներսում ունի դժնդակ չարություն¹⁵: Այս մշակաբույսի մասին այսպես արտահայտվելու համար պատմահորն ակնհայտորեն առիթ է տվել նրանից գինի ստանալը, դրանով պայմանավորված՝ հարբեցողությունը:

«Գիրք վաստակոցը» խոսում է խաղողի այգի տնկելու և նրա բերքը շուտ հասունացնելու ձևերի մասին. «Երբ տնկես այգին՝ դու ի տակքն քաղցր խաղողի կուտ լից և սակաւ մի աղի ջուր, նա շուտ հասուցանէ զբերն: Եւ թէ յամեն լնուս՝ նոյն է»¹⁶:

Խաղողի մշակման և վերամշակման մասին են պատմում նաև միջնադարյան պատկերաքանդակները, որոնց մեջ կարելի է հանդիպել երկրագործությանն ու խաղողագործությանը վերաբերող բազմաթիվ քանդակների: Այսպես, խաղողի մեզ հայտնի ամենահին պատկերմանը հանդիպում ենք Աղցի Արշակունիների դամբարանի մի քարի վրա, որտեղ պատկերված է թռչուն և ցլիկ՝ խաղողի վազերի մեջ¹⁷: Խաղողաքաղի տեսարան է պատկերված Դվինից գտնված 5-րդ դարի կառույցի ճակատակալ քարի վրա: Այստեղ պատկերված են խաղողի վազի տերևներն ու հասուն ողկույզները: Այգեկույթի տեսարան ներկայացնող այս քանդակում խաղողի վազերի մեջ պատկերված են երկու մարդ, որոնք բերք են հավաքում: Մեկի կողքին դրված է արդեն լցված զամբյուղը: Լ. Դուրնովոն գտնում է, որ խաղողի վազը խորհրդանշում է քրիստոնեական ուսմունքը, և հետևաբար, վազի հետ պատկերված մարդիկ նրանք են, ովքեր ընդունում են այդ ուսմունքը: Չնայած սրան, նա չի ժխտում, որ անկախ սիմվոլիկայից, պատկերող վարպետը գործը ներկայացրել է իբրև ռեալ ու կենցաղային¹⁸:

1938 թ. Դվինի պեղումների ժամանակ գտնվել է կավե մի փոքր կարասի բեկոր՝ խաղողի ողկույզներով զարդարված: Այն համարվում է իր տեսակի մեջ եզակի և թվագրվում է 5-7-րդ դարերով¹⁹: Խաղողի վազերի պատկերներ կան նաև Զվարթնոցի քանդակներում: Լ. Դուրնովոյի կարծիքով խաղողի վազերի և նոան քանդակի ավանդույթը Զվարթնոցից անցել է Աղթամարի վանքին, որտեղ տերևների ու ողկույզների մեջ պատկերված են մարդիկ, որոնք զբաղված են խաղողի այգին մշակելու հետ կապված տարբեր

¹³ Մովսես Խորենացի, Գիրք պիտոյից, էջ 234:

¹⁴ Որթի էտի մասին է հիշատակում նաև Մխիթար Գոշը իր մի առակում. «Ի լինել որթոյն որդէկոտոր ի գարնանային ժամանակի և յարտասուելն՝ եկին տունկք ամենայն մխիթարել զնա»: Տարբեր տնկիների մխիթարանքին որթը պատասխանում է. «Այլ այս է մխիթար անձին, զի մնացեալն իմ որդիք պտղաբեր լինին և պատճառ ուրախութեան մարդկան» (Մխիթար Գոշ, Առակներ, Երևան, 1951, էջ 48):

¹⁵ Մովսես Խորենացի, Գիրք պիտոյից, էջ 23:

¹⁶ Գիրք վաստակոց, Վենետիկ, 1877, էջ 132:

¹⁷ Լ. Դурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979, с. 25.

¹⁸ Լ. Դурново, նշվ. աշխ., էջ 47:

¹⁹ Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Երևան 1952, էջ 47:

աշխատանքներով (լուս. 1)²⁰:



լուս. 1

Հայտնի են Արծրունյաց Գագիկ թագավորի ջանքերը հողերի մշակման, խաղողի ու պտղատու այգիների տնկման հարցերում: Դա իր լավագույն արտահայտությունն է գտել Աղթամարի վանքի որթագալարի զարդագոտու քանդակներում: Այս գոտին անընդհատ գալարվող մի որթատունկի տեսքով բոլորում է ողջ կառույցը: Այնտեղ, խաղողի հասուն ողկույզների տակ պատկերված են աշխարհիկ կյանքին, հատկապես երկրագործությանը նվիրված Բազմաթիվ տեսարաններ, որոնցից աչքի է ընկնում հատկապես Գագիկ արքային պատկերող քանդակը: Արքան ծալապատիկ նստած է բարձի վրա, աջ ձեռքին՝ գինու գավաթ, իսկ ձախում՝ խաղողի ողկույզ: Հետազոտողներն իրավացիորեն գտնում են, որ այս սյուժեն Գագիկ արքայի պալատի առօրյա կյանքից է անցել այս բարձրաքանդակներին:

Բերքահավաքի տեսարան է պատկերված որթագալարի գոտու արևմտյան ճակատի ձախ հատվածում: Աջ ծնկին իջած, խաղողով լի կողով շալակած մարդը փորձում է բարձրանալ: Ասենք, որ բերքահավաքի այս տեսարանը եզակի չէ այստեղ: Որթագալարի գոտու մի այլ հատվածում էլ պատկերված են բերք հավաքող, խաղողի ողկույզներով լի կողովները մեջքին կամ կողքին դրած մշակներ: Բազմաթիվ սյուժեներ էլ ցույց են տալիս այգու պահապանների պայքարը այգին վնասող ընտանի կենդանիների կամ գա-

²⁰ Л. Дурново, նշվ. աշխ., էջ 17, 75:

զանների դեմ: Օրինակ, որթագալարի հատվածներից մեկում պատկերված է բերքահավաքով զբաղված մարդկանց վրա հարձակման տեսարան: Երկու այգեպաններից մեկը մենամարտի է բռնվել ամեհի գազանի հետ, իսկ մյուսը կողովները վերցրած փախուստի է դիմում: Մի այլ սյուժեում էլ այգեպանը նիզակով խոցում է արջին: Ուշագրավ է նաև որթագալարի գոտու մեջ պատկերված այգու բերքը չարիքներից պաշտպանելու համար մատաղ անելու սյուժեն²¹:

Աղթամարի վանքի քանդակների մեջ պատկերված սյուժեները լավագույն վկայությունն են այն բանի, որ Վասպուրական աշխարհում և ամբողջ Հայաստանում խաղողի մշակումն ու վերամշակումն ունեցել է բարձր մակարդակ: Այս պատկերաքանդակներում գտնում ենք այգեգործությանը և մասնավորապես խաղողագործությանը վերաբերող գրեթե բոլոր աշխատանքների արտացոլումը՝ սկսած հողը փորելուց և փխրեցնելուց մինչև զինու ստացումն ու օգտագործումը:

Գաղտնիք չէ, որ խաղողի ողկույզների պատկերումը խաչքարերի վրա դարձել էր ավանդական:

Հայաստանում խաղողագործության զարգացման բարձր մակարդակի մասին են վկայում օտարերկրյա աղբյուրները: Օրինակ, 13-րդ դարի պարսիկ ճանապարհորդ Նասիր Նոսրովի մի վկայությունից իմանում ենք, որ Արձն քաղաքում եղել է խաղողի էժանություն²²: Իսկ 14-րդ դարի հեղինակ Համրուլլահ Ղազվինին, թվելով Փոքր Ասիայի խաղողագործության լավագույն տեղերը, հիշում է Երզնկան ու Մալաթիան²³: 15-րդ դարի ճանապարհորդ Գոնցալես Դի Վալվիխոն վկայում է, որ Երզնկայից Խոյ գնացող ճանապարհին «շրջապատի բոլոր կողմերից կարելի է տեսնել գյուղեր, որթատունկով և բուսականությամբ. ամբողջ դաշտը մշակվում էր որթատունկ և հացահատիկ»²⁴:

Սկսած խոր հնությունից՝ Հայաստանում խաղողի վերամշակությունն առաջին հերթին կապված է եղել զինու ստացման հետ: Հնձանները Հայկական լեռնաշխարհում գոյություն են ունեցել Ք. ա. 1-ին հազարամյակից սկսած: Հնագույն տարապաններ են հայտնաբերվել Արմավիրից: 1976 թ. Դվինի պեղումներից գտնվել է Ք. ա. 1-ին դարով թվագրվող արտադրական նշանակության մի սալ, որն օգտագործվել է ինչպես ձիագործության, այնպես էլ խաղողի չանչը ձգմելու, մամլելու համար²⁵: Ուշագրավ է, որ այս տիպի մամլիչներ են գտնվել նաև Բոսփորից, որոնք թվագրվում են Ք. ա. 3-րդ դարով: Դրանցից մեկն ունեցել է 0,73 x 0,40 x 0,26 մ չափեր: Խաղող ձմելու տարապաններ են գտնվել նաև Գառնիից, Դվինից, իսկ տաքարներ (չան)՝ Արտաշատից²⁶: Այս մամլիչներն օգտագործվում էին գլխավորապես խաղողի չանչից հյութը քամելու համար: Վերջինս լցնում էին կոպիտ գործվածքից պատրաստած պարկի մեջ և լծակավոր մամլիչով ճզմում: Հետաքրքիր է, որ Բոսփորից գտնվել են նաև կրկնակի առագաստներ ունեցող հնձաններ: Առա-

²¹ Ա. Մնացականյան, Աղթամար, Երևան, 1983, գլուխ 3-րդ:

²² Носир-Хисров, Софарнама, Сталинабад, 1949, с. 44.

²³ Очерки по истории арабской культуры, Москва, 1982, с. 223.

²⁴ Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 95:

²⁵ Գ. Քոչարյան, Դվինից հայտնաբերված արտադրական նշանակության սալ, «Լրաբեր» հաս. գիտ., Երևան, 1978, թիվ 2:

²⁶ Б. Аракелян, Арташат, Ереван, 1982, с. 32.

գաստներից մեկը եղել է հիմնական, որի վրա ոտքերով ճզմել են խաղողը, իսկ երկրորդը ծառայել է մամլիչի միջոցով չանչից հյութ քամելու նպատակին²⁷: Ասենք, որ Ք. ա. 3-րդ դարին վերաբերող մի հնձան է բացվել Գառնիում, որի չափերն են 1,8 x 2,2 մ: Այն ունեցել է ողորկ ու անջրաթափանց կրաշաղախի հատակ և սվաղած պատեր, հարևան սենյակից անջատված է եղել 70 սմ բարձրության պատով, որի վրա եղել է փողրակ: Վերջինիս միջոցով քաղցուն հոսել է և լցվել պատի տակ դրված անոթի մեջ: Սակայն չի պարզվել, ճզմման աշխատանքները ոտքով են կատարվել, թե՞ ճզմիչով²⁸:

Հարկ է ասել, որ վերը բերված ճզմիչները պատկանում են խաղողագործության ու գինեգործության համեմատաբար վաղ շրջանին, իսկ միջին դարերի Հայաստանում խաղողի ճզմման աշխատանքը հիմնականում ոտքով է կատարվել: Որպես դրա լավագույն օրինակ կարող է ծառայել Աղթամարի վանքի որթագալարի գոտում պատկերված հնձանը: Հնձանի կառուցվածքի մասշտաբները խախտված են, քանզի նրա սյուներն այն բարձրությունն ունեն, ինչ որ մարդիկ: Հնձանը կամարակապ է, և հիշեցնում է հայկական ճարտարապետության մեջ հայտնի սյունասարահները: Խաղող ճզմող երկու ֆիգուրներն էլ կանգնած են ձեռքները ազդրերին դրած: Նրանցից մեկը բռնել է սյունը, իսկ մյուսը բարձրացրել է ձախ ձեռքը մինչև ուսի բարձրության²⁹:

Հնձանների մասին տեղեկություններ են պահպանվել նաև հայ մատենագրության մեջ: Ագաթանգեղոսը խոսելով Արևելյան Հռոմեական կայսրության սահմաններից Հայաստան եկած կույսերի մասին, հաղորդում է, թե նրանք եկան հայոց Վաղարշապատ քաղաքը և «մտանէին ի հնձանահարկս այգեստանոյն, որ կան շինեալ ի հիւսիսոյ յարևելից կուսե»³⁰: Նույն պատմիչի մի այլ վկայության համաձայն էլ Տրդատ արքայի հրամանով գնում, կույսերին գտնում են շինվածքների հնձաններում³¹: Բազմաթիվ են վկայությունները, որոնք հավաստում են հնձաններն այգիների մոտ կառուցելու մասին: Բերենք դրանցից մի քանիսը: Ագաթանգեղոսը, խոսելով Լուսավորչի մասին, ասում է, թե թագավորն ու մեծամեծերը չէին հեռանում նրա մոտից «և ցայգ և գցերէկ կային առ նմա, և օթևանք նոցա առ նմին լիցէին ի մեջ այգւոյն, առ դուրս հնձանին»³²: Մի այլ աղբյուր էլ պատմիչը վկայում է, թե Գրիգոր Լուսավորիչը վկայարաններ է կառուցել տալիս հնձանի տեղում. «Եւ զմիւսն ևս մօտ ի հնձանն ի մեջ այգւոյն»³³:

²⁷ В. Гайдукович, Виноделие на Боспоре, Материалы и исследования по археологии СССР N 85, Боспорские города, 2, М.-Л., 1958, с. 376-377.

²⁸ Ք. Առաքելյան, Խաղողի վերամշակումը միջնադարյան Հայաստանում, Նյութեր հայ գյուղատնտեսության և գյուղացիության պատմության, հ. 1, Երևան, 1964, էջ 150-151:

²⁹ Ա. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 125:


³⁰ Ագաթանգեղայ պատմություն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 84 (այսուհետև՝ Ագաթանգեղոս):

³¹ Նշվ. աշխ., էջ 88: Բ. Առաքելյանն այն կարծիքն է հայտնում, որ «հնձանայարկ» և «հնձան շինուածոցն» ասելով պատմիչն ի նկատի է ունեցել շինությունների ներքնահարկերում գետեղված հնձանները, և շարունակում, որ հին ու միջնադարյան ժամանակաշրջանում բնակելի և պալատական շենքերի ներքնահարկերում տնտեսական նշանակության շինվածքների առկայությունը եղել է սովորական (Բ. Առաքելյան, Խաղողի վերամշակումը միջնադարյան Հայաստանում, էջ 149-150):

³² Ագաթանգեղոս, էջ 408:

³³ Ագաթանգեղոս, էջ 409:

Բագնայրի 1034 թ. մի արձանագրություն էլ հաղորդում է, որ ոմն Մարկոս այգի է հիմնել և կառուցել հնձան³⁴: Մ. Սմբատյանցն էլ բերում է Դավիթար գյուղի մոտ եղած եկեղեցու մի արձանագրություն, որը հաղորդում է, որ հնձան է կառուցվել Աշտարակի այգու համար³⁵: Աշտարակ քաղաքից հյուսիս՝ բարձունքի վրա, դեռևս պահպանվում են միջնադարյան հնձանների ավերակներ: Հաղբատի վանքի 1242 թ. մի արձանագրության հաղորդման համաձայն էլ ոմն Սասնայ վանքին է տվել մի այգի իր հնձանով³⁶: Նման փաստեր են պահպանել նաև Բագնայրի 1262 թ.³⁷, Սանահնի վանքի 1289 թ., 15-րդ դարի³⁸ և այլ արձանագրություններ: Կ. Ղաֆադարյանը գտնում է, որ հնձանատունը պետք է տարբերել հնձանից, քանի որ առաջինը եղել է ծածկի տակ, իսկ երկրորդը՝ բացօթյա:



Կարծում ենք՝ վաստակաշատ գիտնականի այդ դիտարկումը հաստատում է այն փաստը, որ մինչև վերջին ժամանակներս Արարատյան դաշտում պահպանվել էին բաց տիպի հնձանները: Դատելով վերը բերված փաստերից՝ կարելի է եզրակացնել, որ միջնադարյան հնձանները եղել են ավելի շատ առանձին շինություններ և գտնվել են խաղողի այգիների հարևանությամբ: Կարելի է ենթադրել, որ խաղողի այգիների մեծ մասը հնձան է ունեցել:

³⁴ Վիմական տարեգիր ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, կազմեաց Կ. Կոստանյանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 18 (այսուհետև՝ Վիմական տարեգիր):

³⁵ Մ. Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի ծովագարոյ գաւառի, որ այժմ Նոր Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 314-315 (այսուհետև՝ Մ. Սմբատյանց, Տեղագիր...):

³⁶ Վիմական տարեգիր, էջ 85:

³⁷ Վիմական տարեգիր, էջ 131:

³⁸ Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 137-138:

Դատելով Զվարթնոցում, Գառնիում, Էջմիածնում, Եղվարդում, Դվինում և այլ վայրերում պեղումների միջոցով հայտնաբերված հնձաններից, կարելի է պնդել, որ միջնադարում այդ տիպի կառույցներն ունեցել են երկու, իսկ երբեմն էլ՝ երեք բաժանմունքներ: Առաջինը եղել է խաղող ճզմելու առագաստը, որն ունենում էր կրաշաղախից պատրաստած ամուր և հարթ հատակ: Վերջինս ցածր պատով բաժանված էր լինում 2-րդ բաժանմունքից: Պատի վրա դրված կավե խողովակով քաղցուն ծորում էր երկրորդ բաժանմունքում նրա տակ դրված ամանի մեջ (գծ. 1):

Այդպիսի կառուցվածք է ունեցել 1952 թ. Գառնիում բացված հնձանը³⁹: Այս տիպի հնձաններ են պահպանվել նաև Քանաքեռում: Բ. Առաքելյանը հնձանների բնորոշ տիպը համարում է հատակի մեջ փորած մեծ հորերով հնձանը: Այդպիսին բացվել է 1950 թ. Գառնիում: Այն ունի 2 բաժանմունք: Առաջինը բուն հնձանն է, որի հատակը կրաշաղախով է և ունի 2 թեք մակարդակ դեպի հատակի ցածրադիր մասում եղած հորը: Երկրորդ բաժանմունքը եղել է մառանը, որտեղ բացվել են մոտ 2200 լիտր տարողության 2 հորեր և գետնի մեջ թաղված մի փոքր կարաս⁴⁰: Հայաստանում տարածված է եղել նաև հնձանի զույգ առագաստներ ունեցող տիպը: Այդպիսիք են եղել Զվարթնոցի համալիրի մեջ մտնող հնձանները: Յուրաքանչյուր հորի երկու կողմերում՝ արևելք և արևմուտք, գտնվել են խաղող ճզմելու առագաստներ: Դրանք չափերով հավասար են եղել իրար և նրանցից յուրաքանչյուրն ունեցել է 18,2 մ քառակուսի արտադրական մակերես: Քաղցուի հորերը բոլորակ են՝ 1,82 մ տրամագծով և նույնքան խորությամբ:

Ինչպես տեսնում ենք, ավելի կազմակերպված արտադրության դեպքում քաղցուն անմիջապես լցվում էր առագաստի ցածրադիր մասում փորված հորի մեջ: Հնձանի մյուս կարևոր բաժանմունքն էլ մառանն էր: Առաջին բաժանմունքի հորերի մեջ հավաքված քաղցուն, որ որոշ ժամանակ մնալուց հետո զուլալվում էր, տեղափոխվում էր մառան, որտեղ էլ տեղի էր ունենում խմորման հիմնական գործընթացը: Գինին մառաններում պահվում էր թե՛ կարասների, թե՛ հատակի մեջ արված հորերի մեջ: 1979 թ. Հայաստանի Հանրապետության ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի կողմից Վաղարշապատ քաղաքի մշակույթի պալատի և կառուցապատվող այգու տարածքում կատարված պեղումների ժամանակ բացվել են մի հնձանի մնացորդները: Այն շինված է եղել փոքր չափերի գլաքարերով և երեսպատված՝ կրաշաղախով: Բացվել է նաև այս հնձանի մառանը՝ 6 ամբողջական կարասներով, որոնք դասավորված են եղել երկշարք: Կարասների շուրթերին եղել են տառեր, որոնք նշել են կարասների տարողությունը⁴¹:

Ինչպես վերը նշեցինք, գինու պահպանությունը կատարվում էր հորերում, որոնք մատենագրության մեջ հայտնի են «գուր գինոյ» անվամբ: Ազաթանգեղոսն, օրինակ, ասում է. «Արկեք մանգաղս, զի հասեալ է ժամանակ կյոց մտէք հնձանս, զի լցեալ են հնձանք և

³⁹ Բ. Առաքելյան, Խաղողի վերամշակումը միջնադարյան Հայաստանում, էջ 154-155:

⁴⁰ Նույն տեղում, էջ 155:

⁴¹ Ն. Մելքոնյան, Գ. Կարախանյան, «Էջմիածնի միջնադարյան հուշարձանների պեղումների նախնական արդյունքները», «Հայկական ԽՍՀ-ում 1983-1984թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան», զեկուցումների թեզիսներ, 1985, էջ 42:

զեղումն գուրք իւրեանց»⁴²: Գատնիից գտնված գուրքերը կամ հորերը շարված են եղել անտաշ քարերով և լավ սվաղված են եղել: Հորի մեջ երկու տեղով պատից դուրս թողնված են քարեր, որոնք ծառայել են իբրև ոտքի հենարան՝ իջնել-բարձրանալու համար: Հորերն ունեցել են բազալտե՝ կենտրոնում լայն անցք ունեցող կափարիչներ: Վերջիններս փակվում էին տուֆե կամ բազալտե խցաններով, որոնք խմորման ժամանակ պարբերաբար բացվում էին՝ գինին մշակելու համար⁴³:

Գրեթե նույնատիպ մի հոր էլ բացվել է Եղվարդում: Այն շարված է եղել դեղնավուն, սրբատաշ քարերով, ունեցել է շրջանաձև կառուցվածք: Պահպանվել է նաև պատի բարձրորակ ծեփը: Նրա հաստությունը 1 սմ է, իսկ հորի չափերն են՝ խորությունը՝ 1,82 մ, իսկ լայնությունը՝ 1,92 մ: Հատակի մի անկյունում պահպանվել է 61 սմ խորությամբ և 20 սմ լայնությամբ փոստրակ, որի մեջ խմորման ժամանակ հավաքվել է քաղցուի նստվածքը (Գծ. 2, 3): Եղվարդի հնձանը կարելի է թվագրել 7-րդ դարով:

Գինեգործության մասին բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել դեռևս վաղ ժամանակներից: Պատմահայր Հերոդոտոսը հաղորդում է, որ դեռևս ասորեստանցիները Հայաստանից իրենց յուրահատուկ ձև ունեցող նավերով կարմիր գույնի ամանների մեջ լցված գինի են փոխադրել⁴⁴: Մովսես Խորենացին էլ հաղորդելով Շամիրամ թագուհու կատարած գործերի մասին, հայտնում է, թե նա Արայի մահից հետո քաղաք է կառուցում, որը զարդարում է «բազմաբեր ու գինեբեր» տուններով⁴⁵: Իսկ ավելի ուշ ժամանակներում նման հաղորդումները սովորական են: Ղազար Փարպեցի պատմիչն իր հերթին Ոստանը համարում է գինու և հացի շտեմարան⁴⁶: Իր մի հանելուկում գինին հիշատակում է Ներսես Շնորհալին.

*Ըզջուրն հըրոյ նման տեսայ,
Նան պայծառ, քան զլուսնկայ,
Քան զծիրանի ծով կու ծըփայ,
Շատոց արին հեղեալ է նա*⁴⁷:

Բավական է ասել, որ «գինի» արմատով բառերի թիվը ՆՀԲ-ում հասնում է 52-ի:

Միջնադարյան հայ մատենագրության մեջ բազմաթիվ են վկայությունները հարբեցողության, նրա հետևանքների և այդ չարիքի դեմ պայքարելու անհրաժեշտության մասին: Ինչպես տեսանք, վերը բերված հատվածում Մովսես Խորենացին այսպես է արբեցողությունը: Գրիգոր Լուսավորչի կանոններում նշվում է. «Եթե ոք արբեցաւ ի քահանայից կամ ի սարկաւագաց կամ ի դպրաց՝ մի իշխեսցէ ի Պատարագ կամ ի պաշտան մերձենալ... զի արբեցողք ի սպանողսն են»⁴⁸: 13-րդ դարի ճանապարհորդ Նոսիր Խոսրովի մի վկայությունից երևում է, որ գինեվաճառությունը և գինի օգտագործելը շատ սովորական

⁴² Ագաթանգեղոս, էջ 269:

⁴³ Բ. Առաքելյան, Խաղողի վերամշակումը միջնադարյան Հայաստանում, էջ 155:

⁴⁴ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությամբ Միմոն Կրկաշարյանի, Երևան, 1986, էջ 79-80:

⁴⁵ Մովսեսի Խորենացու Պատմություն հայոց, Թիֆլիս, 1913, էջ 58:


⁴⁶ Ղազարայ Փարպեցու Պատմություն հայոց, Վենետիկ, 1873, էջ 9:

⁴⁷ Ներսես Շնորհալի, կազմեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց Գր. Հակոբյան, Երևան, 1968, էջ 38:

⁴⁸ Կանոնագիրք հայոց, հ. Ա, աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 248:

Էր միջնադարյան Հայաստանի քաղաքներում: Ի հակադրություն մահմեդական աշխարհի, որտեղ կինը անգամ երեսը բացելու իրավունք չունեի, Հայաստանի քաղաքներում կանայք հավասար էին տղամարդկանց նույնիսկ խնջույքի ժամանակ: Նոսիր Խոսրովը հայտնում է, որ Ոստան քաղաքի շուկայում. «Խոզի միսը վաճառում էին այնպես, ինչպես ոչխարի միսը, և թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ նստել էին կրպակների դիմաց և գինի էին խմում առանց որևէ ամոթի»⁴⁹: Մարկո Պոլոն էլ պատմելով Փոքր Հայքի մասին, հայտնում է, թե տեղի ազնվականները թույլ են և միայն հարբեցողությամբ են զբաղվում⁵⁰: Մխիթար Գոշն օրենք ունի հարբեցողության դեմ, որտեղ նշում է, թե հարբած վիճակում հանցագործություն կատարելն ավելի է ծանրանում, քանի որ հենց հարբեցողությունն է հանցանքը⁵¹:

Այն, որ գինեգործությունը Հայաստանում առանձին արհեստ էր, կասկածի տեղիք չի



տալիս, քանի որ շատ են այդ արհեստը հիշատակող վկայությունները: Օրինակ, Մովսես Խորենացին հաղորդում է, թե Գնունիների տոհմանունը առաջացել է Գինունի ձևից: Նրանց Գին նախահայրը թագավորի համար զանազան ըմպելիքներ է պատրաստել գինու տարբեր տեսակներից⁵²: Գինեվաճառությունը «գինեձախ» ձևով հիշատակվում է միջնադարյան բազմաթիվ ձեռագրերում: Հետաքրքիր է, որ մի ձեռագրի ԺԴ դարի հիշատակարանում ջուլհակության, սանդրագործության, կտավագործության, էգեպանության


⁴⁹ Носир – Хисров, Софарнама, с. 42.

⁵⁰ Марко Поло, Путешествие, Ленинград, 1940, с. 17.

⁵¹ Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի, Երևան, 1975, էջ 45:

⁵² Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 124: Այս վկայությունից երևում է, որ արդեն 5-րդ դարում հայտնի են եղել ոչ միայն զանազան «ընտիր» և «համեղ» գինիներ, այլև դրանցից պատրաստվող այլազան խմիչքները:

յան հետ միասին հիշատակվում է նաև գինեձախը⁵³։ Տարբեր աղբյուրներում ցրված տարաբնույթ տեղեկություններն ի մի բերելով կարելի է պնդել, որ միջնադարյան Հայաստանում առավել հայտնի են եղել անուշ, պինդ կամ թունդ, ինչպես նաև ջրիկ, սպիտակ, կարմիր և այլ տեսակի գինիներ։ Ագաթանգեղոսի մի վկայությունից, օրինակ, իմանում ենք անուշ գինու մասին. «Արբ գայս բաժակ Անանիա և կինն իւր Սափիրա, և ոչ կարա-



ցին զօրել ուժոյ զօրութեան անուշ գինոյ նորայ»⁵⁴։ Անուշ գինի է հիշատակվում մի Ավետարանի հիշատակարանում («Անուշ գինի գեղեցիկ են, համեղագոյն և քաղցրահամ և անուշահոտ»)։⁵⁵ Գյուղատնտեսական գիտելիքների հանրագիտարան «Գիրք վաստակոցը» բացատրում է քաղցր գինի ստանալու ձևը. «Առ, զբարունակն նոյն խաղողովն, և ի ներք հետ տնկին ընդ ներքսէ խողովին ճմխեա և սլորէա գորթն և թող նա այն ոլորն արգելու զգիջութիւնն որ այլ ի խաղողն չերթայ և զտերնն՝ որպէս գրեալ ենք՝ ի վայր տուր և այնպէս թող քսան կամ երեսուն օր, և ապա կթեա, նա գինին գերդ ըռուպ քաղցր լինի»⁵⁶։

Բժշկարաններում էլ վկայություն ենք գտնում սպիտակ գինու մասին։ Օրինակ, Մխիթար բժշկապետն առաջարկում է. «Եվ տուր գինի նօսր և սպիտակ, զոր չափաւոր տաքութիւն ունի»⁵⁷։ Սպիտակ գինու մասին վկայություն ունի նաև «Բժշկարան ձիոյ»

⁵³ Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 428։

⁵⁴ Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 271։

⁵⁵ Զ. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Երևան, 1981, էջ 875։

⁵⁶ Գիրք վաստակոց, էջ 68։

⁵⁷ Մխիթարի բժշկապետի Հերացոյ Ձերմանց մխիթարություն, Վենետիկ, 1832, էջ 68։

ժողովածուն⁵⁸: Աղբյուրները հիշատակում են նաև հին և ջրիկ գինիների մասին⁵⁹: Թերևս «ջրիկ գինի» ասելով հասկացել են առաջին հերթին ջրով նոսրացրած կամ բնականից ավելի թույլ թնդություն ունեցող գինին: Այս առումով հետաքրքիր է «Գիրք վաստակոցի» վկայությունը. «Եւ գիտելի է, որ երաշտ տարւոյն գինին պինտ և ուժով լինի», և որպէսզի վերացվի այդ թնդությունը. «պարտ է, որ առնուս անձրևաջուր և եփես այնչափ, որ մնա կէսն և գինին խառնէս»⁶⁰: Գինին անձրևաջրով էր նոսրացվում, քանի որ վերջինս թորած ջուր էր և չունէր գինու որակին վնասող աղային խառնուրդներ: Մի այլ տեղ էլ «Գիրք վաստակոցը» նշում է, թէ սև խողովի գինին ուժով թանձր է լինում, իսկ սպիտակ խաղողի գինին լինում է միջակ, վատուժ, նոսր և սուր: Կարմիր խաղողի գինին թունդ է, քան սևինը և հարբեցնում է: Նոր տնկիի գինին ավելի թույլ է, քան հին այգունը⁶¹: Ինչպէս երևում է վկայությունից, ամենաթունդը կարմիր, ապա սև խաղողից ստացված գինին էր: Սպիտակ խաղողն ուներ տարբեր տեսակներ և ըստ այդմ էլ գինին էր ստացվում տարբեր տեսակների՝ միջակ, վատուժ, սուր, նոսր և այլն:

Ամիրդովլաթի հաղորդած տեղեկությունները համադրելով՝ կարելի է տարբերել գինու երեք տեսակ. 1. Սպիտակ գինի, 2. Անուշ գինի, 3. «միսթար, որ է պեղծ գինին, որ աւերէ, եւ շուտ հարբեցնէ զմարդն խիստ»⁶²:

Ինչպէս ակներև է դառնում բազմաթիվ վկայություններից, գինիներին խառնել են բազմաթիվ համեմունքներ նրանց համա-հոտային հատկանիշները լավացնելու համար: Մատենագրության մեջ հիշատակվում են «խնկով», «վարդով», «հապալասով» և այլ անուշահոտություններով «կազմեալ» գինիները: Օրինակ, Անանիա Շիրակացին հիշատակում է խնկով և վարդով կազմված գինիները⁶³: Գրիգոր Նարեկացին իր տաղերից մեկում նշում է «խառնել ի գինի զխառնելիս անուշից»⁶⁴: Գինին անուշահոտ դարձնելու եղանակ է հայտնում «Գիրք վաստակոցը». «Առ վայրի հապալասը, չորացրու և մանր լեւսի և յուրաքանչյուր լիտրին մեկ նուկի լցնելով կամաց-կամաց խառնիր, կարասի բերանը ծեփիր և տաս օրից հետո բաց»⁶⁵: Բերված վկայությունները ցույց են տալիս, որ գինիների համա-հոտային որակները բարելավելու համար նրանց տարաբնույթ յուղեր ու համեմունքներ են խառնել:

Վկայություններ կան նաև այն մասին, որ գինիները հետագա մշակման ենթարկելով ստացել են օշարակներ և այլ զովացուցիչ ու թեթև ըմպելիքներ⁶⁶: Գինեգործության բարձր մակարդակի մասին է վկայում այն փաստը, որ ոչ միայն գինուն տարբեր անուշեղեններ ու համային որակները բարելավող նյութեր էին խառնում, այլև այն բազմաթիվ

⁵⁸ Բ. Չուգասզյան, Բժշկարան ձիոյ եւ առհասարակ ամենայն գրաստնոյ, Երևան, 1980, էջ 106, 107, 109, 117:

⁵⁹ Բ. Չուգասզյան, նշվ. աշխ., էջ 105, 108: **Ամիրդովլաթ Ամասիացի**, Անգիտաց անպէտ, աշխատասիրությամբ Կ. Բասմաջյանի, Վիեննա, 1926, էջ 165: Գիրք վաստակոց, էջ 7:

⁶⁰ Գիրք վաստակոց, էջ 93:

⁶¹ Գիրք վաստակոց, էջ 84:

⁶² **Ամիրդովլաթ Ամասիացի**, Օգուտ բժշկութեան, խմբագրությամբ Ստ. Մալխասյանցի, Երևան, 1940, էջ 362:

⁶³ **И. Орбели**, Избранные труды, том 1, Ереван, 1963, с. 517.

⁶⁴ **Գրիգոր Նարեկացի**, Տաղեր, Երևան, 1957, էջ 56:

⁶⁵ Գիրք վաստակոց, էջ 103:

⁶⁶ Գիրք վաստակոց, էջ 77:

հնարները, որոնք նշվում են արդեն քաջախաձ գինին վերականգնելու համար⁶⁷:

Խաղողից, ամենայն հավանականությամբ, նաև օղի են ստացել: Այն աղբյուրներում հանդիպում է նաև ցքի անունով: Խոսելով Մաշտոց Եղիվարդեցու մասին Թովմա Արծրունին հայտնում է, թե նրան չէր կարելի այլ անվամբ կոչել, քան Մկրտչի, քանզի «Մկրտչին հրամայի՝ մի ըմպել գինի և օղի, սա ոչ միայն գինով ոչ զկծեր, այլ և ոչ ջրով ծարաւոյն պէտս կատարէր, սակաւապետութեամբ ընդովք թրջելովք, և խստավայել բանջարովք առ քաղցն վայելելով»⁶⁸: Ցքու քացախը հիշատակվում է ՆՀԲ-ում. «Չքացախ ցքւոյ մի արբցե՛»⁶⁹: Հր. Աճառյանը ցքին բացատրում է որպէս «արմաւից պատրաստած մի տեսակ արբեցուցիչ ըմպելիք, օղի»⁷⁰: Վարդան վարդապետ Հացունին նույնպէս այն կարծիքին է, որ ցքին կամ օղին «կը շինուէր կիտրոնէ ու կամ ուրիշ նիւթերէ»⁷¹: Սակայն չի բացատրվում, որ ցքի կամ օղի ստացված լինի նաև խաղողից: Շատ հավանական է, որ գինի ստանալու նպատակի համար օգտագործելուց հետո խաղողի մնացորդներից նաև օղի են ստացել: Այս ենթադրությունը կարող է հաստատվել Հովհաննէս Մանազկերտցու կանոններում եղած մի վկայությամբ, որտեղ իրար կողքի հիշատակվում են «օղի եւ մեղրօղի եւ ամբրաւօղի»⁷²: Ինչպէս տեսնում ենք, Մանազկերտցին իրարից շատ լավ զանազանում է արմավի օղին, մեղրից ստացված օղին և օղին ընդհանրապէս: Այս վկայությունից կարող ենք ենթադրել, որ Հայաստանի պայմաններում օղին կարող էին ստանալ և՛ խաղողից, և՛ թթից, և՛ մրգերից: Գրիգոր Տաթևացու մի վկայություն գալիս է հաստատելու, որ օղի են ստացել մրգերից («Ապա թէ մեք զայգիս մեր ոչ պտղաբերեմք, երկու ինչ գիտելի է: Մին՝ որ տերնն ի հնձանն ոչ մտանէ, **այլ խաղողն և պտուղն**»⁷³ (Ընդգծումը մերն է. - Հ. Բ.): Ընդգծված արտահայտությունից պարզորոշ երևում է, որ բացի խաղողից հնձան էր մտնում նաև պտուղը: Իսկ սա ապացույց է այն բանի, որ միջնադարում կիրառվել են նաև մրգոցիներն ու մրգերից ստացվող գինիները: Ենթադրելի է, սակայն, որ դրանց քանակությունը քիչ էր, քանի որ Հայաստանը ուներ խաղողի բավարար քանակություն խմիչքների պահանջարկը բավարարելու համար:

Խաղողի վերամշակումից ստացված մթերքներից էին նաև քացախը, ռուպը, չամիչը և այլն⁷⁴:

Գինի պատրաստելուց պակաս կարևոր չէր նաև նրա պահպանությունը: Դեռևս անհիշելի ժամանակներից սկսած գինին պահվել է հատուկ այդ նպատակի համար կառուցված շենքերում՝ մառաններում: Կարմիր բլուրում բացվել են լավ պահպանված մառաններ՝ կարասների շարքերով: Բավական է ասել, որ Կարմիր բլուրի 8 մառաններում հայտնաբերվել է շուրջ 450 կարաս⁷⁵: Վերոհիշյալ մառաններից մեկն էլ տեղավորված է

⁶⁷ Գիրք վաստակոց, էջ 114:

⁶⁸ **Թովմա Արծրունի**, Պատմութիւն տանն Արծրունեաց, Պետերբուրգ, 1877, էջ 247:

⁶⁹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Երևան, 1981, էջ 1000:

⁷⁰ **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1979, էջ 465:

⁷¹ **Վ. Հացունի**, Ճաշեր և խնձոյք հին Հայաստանի մեջ, Վենետիկ, 1912, էջ 23:

⁷² **Վ. Հացունի**, նշվ. աշխ., էջ 23:

⁷³ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 395:

⁷⁴ Խաղողից ստացված մյուս մթերքներին չենք անդրադառնում՝ այն դուրս համարելով սույն հոդվածի սահմաններից:

⁷⁵ **Զ. Ղասաբյան**, Թեյշեֆահինիի (Կարմիր բլուր) գինու կարասները, «Պատմա-բանասիրական հանդես»,

եղել երկրորդ հարկում և տանիք չի ունեցել: Հ. Խալփախյանն իրավացիորեն գտնում է, որ այդ մատանը ծառայել է գինին արևային մշակման ենթարկելու համար⁷⁶: Ասենք, որ գինին բացօթյա արևային մշակման են ենթարկել նաև միջնադարյան Հայաստանում: Ահա թե այդ մասին ինչ է ասում «Գիրք վաստակոցը. «...յորժամ ի յեռէ դադարէ մուստառն (քաղցուն-Հ. Բ.) ծեփեա գրերանն եօթն օր, և ապա բաց և հան զամէն ծաղիկն (խոսքը բորբոսի մասին է.- Հ.Բ.), ձգեա ի բաց օր ի մինչև արևմայրն, և ապա ծեփեա. և այն նշանօքն արա 3-4 հետ և տես, որ բնաւին ծաղիկ չթողուս ի կարասն, զի գինւոյն ամէն աւերիչն և թթուեցնողն ծաղիկն է»⁷⁷: Գինին թթվել-քացախելուց գերծ պահելու համար նախքան կարասի մեջ գինի լցնելը այն ծծումբով ծխահարում էին, քանի որ վերջինս ուներ մանրէասպան հատկություններ: Բացի դրանից կարասի մեջ նաև մանրէասպան խոտեր էին լցնում («Եւ լաւն այն է, որ ի ներքոյ ռոփցն կարասին սամիթ դնեն, կամ անանուխ կամ այլ անուշահոտ խոտ»)»⁷⁸:

Վկայություններ կան մատանապետների մասին: Դեռևս խեթերի թագավոր Մուրսիլիս 2-րդի տարեգրության մեջ հիշատակվում է Նուվանծա մատանապետը⁷⁹: Ենթադրել կարելի է, որ նման պաշտոն կարող էր նաև լինել Վանի Արարատյան թագավորությունում: Պատմահայրը վկայում է, որ Հայաստանում եղել է «տակառապետություն» գործակալությունը⁸⁰: Ազաթանգեղոսն էլ մի առիթով գրում է. «Ահա լի են շտեմարանք այսր թագաւորի, և կազմ են մատռուակք արբուցիչք»⁸¹:

Հետաքրքիր կառուցվածքով գինու մատան է բացվել Դվինում 1973 թ. պեղումների ժամանակ: Այն իրենից ներկայացրել է նկուղային մի շինություն, իրար կողքի շարված մեծ ու փոքր կարասներով: Վրջիններս իրար հետ կապված են եղել կավե հատուկ խողովակներով, որոնց միջոցով գինին մի կարասից հոսել է մյուսի մեջ⁸²: Շատ հաճախ էլ որպես մատան ծառայել են ոչ միայն հնձանները, այլ նաև բնակելի տների նկուղային հարկերը, որի լավագույն ապացույցը Դվինի վերաբերյալ մատանն է: Մատաններում գինին պահվել է ոչ միայն կարասներում, այլև գրերում: Վերջիններս, ինչպես նշեցինք վերևում, հողի մեջ փորված, կրաշաղախով սվաղած հորեր են: Հաճախ էլ խաղողը ճմլելու և գինին պահելու համար օգտագործել են քարե գրեր: Այդպիսի մի գուր պահպանվել էր Երևան քաղաքի պատմության թանգարանի նախկին շենքի բակում (2,5 x 1,2 x 0,8 մ չափերի): Այն պատրաստված է սև տուֆից: Նմանատիպ մի գուրի բեկոր կա Ապարանի շրջանի 5-րդ դարի Թուխմանուկ կոչվող մատուռի արևմյան կողմում: Այն նույնպես պատրաստված է սև տուֆից և ունի 0,51x 0,39 x 0,30 մ չափեր: Նմանատիպ գրեր կան նաև Եղեգնաձորի թանգարանում (Չիվա գյուղից), Մարդարապատի թանգարանում (Արմավիրից) և այլն:

Մատաններում կարասները սովորաբար շարվում էին երկայնական պատերի ուղղությամբ, ինչպես հշմիածնում բացված վերոհիշյալ հնձանում, և իրարից բաժանված

Երևան, 1958, թիվ 4:

⁷⁶ Հ. Խալփախյան, Հայաստանի արտադրական կառուցվածքները, Երևան, 1961, էջ 10:

⁷⁷ Գիրք վաստակոց, էջ 116:

⁷⁸ Գիրք վաստակոց, էջ 91:

⁷⁹ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 9, 10:

⁸⁰ Մովսես Խորենացի, Թ 3 Ն 60 և 3 Ն 60 և 3 Ն 60, 1981, չ 152:

⁸¹ Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, էջ 282:

⁸² Կ. Դաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, ջ 47:

Էին լինում փայտերով: Այդ կարասները թաղվում էին նաև հողի մեջ: Հողի մեջ թաղելու խորությունը կախված էր կլիմայական գոտուց, որտեղ գտնվում էր տվյալ մառանը: Ուրբան ցուրտ էր կլիման, կարասն այնքան խորն էր թաղվում: Իսկ տաք վայրերում նրանք գրեթե հողի մեջ չէին թաղվում: Կարասներն անթափանց դարձնելու համար դրանք ներսի կողմից պատում էին կպրաձյուրով կամ անասունների փորոտիքների վրայի յուղով: Վերջինս ավելի արդյունավետ էր ու առավել քիչ աշխատատար: Ասենք նաև, որ կարասները թանկ արժեին: Այդ է պատճառը, որ Մխիթար Գոշը գրում է. «Իսկ կարաս վաճառեալ և զնեալ հաստատեսցի, յորժամ լցեալ ողջ արկեալն պահիցէ յինքն գինին: Ապա թէ կարծիք բեկման ի թրծմանէ իցէ, զգինին կորուսցէ, միայն զկարասն գործողն առնու, այլ և զկէս վնասուն տուժեսցի: Ապա թէ անկարծիս իցէ ի բեկմանէ, և ի թաղելըն եղև կարծիսն, անտոյժ լիցի վաճառողն: Այլ եթէ յայդմանէ երկբայեսցի, զամանն միայն վաճառողն տուժեսցի: Այլ ըստ այդմ լիցին ի փոքունսն և ի մեծամեծն»⁸³: Ինչպես տեսնում ենք, Մխիթար Գոշը հողվածում պարզորոշ կերպով կարգավորում է կարաս և այլ նմանատիպ անոթներ գնողների ու վաճառողների հարաբերությունները: Ընդ որում, պետք է նշել, որ հողվածում խոսվում է հիմնականում այն դեպքերի մասին, երբ կարասը կոտրվում էր: Մի հանգամանք ևս. ճիշտ է, հողվածում հիմնականում խոսվում է կարասի առք ու վաճառքի մասին, սակայն չպետք է կասկածել, որ հողվածը վերաբերել է նաև այլ ամաններին, որոնցում նույնպես գինի է պահվել: Օրինակ, աղբյուրներում կարասից բացի հիշատակվում է նաև կարասաձագը⁸⁴, որն ակնհայտորեն կարասի փոքր տեսակն էր: Գինի պահելու ամաններից էր նաև «ճառայ» կոչվող ամանը, որն ուներ նեղ վիզ, իսկ բերանը բավականին լայն էր, որպեսզի կարողանար մրգատու բարունակն ընդունել⁸⁵: Գինու ամաններ էին նաև սափորը, կուժը, փարչը, իսկ գինի չափելու աման էր կիվաթոսը⁸⁶: Գինին կարասները կամ այլ ընդունարանները լցնելու համար օգտագործել են ձագարներ: Դրանք հիմնականում պատրաստված են եղել կավից և դեռևս ուրարտական ժամանակներից լայն կիրառություն են ունեցել: Գինին քամելու համար օգտագործել են պարզուտը, որը ամենայն հավանականությամբ, հյուսածո զամբյուղ էր: Եթե գինին շատ էր լինում, այն քամում էին զամբյուղով ու չուխայով⁸⁷, իսկ եթե քիչ էր լինում, այդ նպատակի համար օգտագործում էին պարզուտը՝ նրա մեջ ավազ լցնելով⁸⁸: Հավանաբար պարզուտն ավելի փոքր չափերի զամբյուղ էր: Գինի քամելու համար օգտագործում էին նաև «ջովլի» կոչվող քամիչը, որը պատրաստված էր ձարից կամ երկաթե ցանցից⁸⁹: Գինեգործության հետ կապված գործիք էր նաև «գմբիչը», «թթոցը» կամ «խառնիչը», որն օգտագործվում էր գինին խառնելու, նրա որակը բարելավելու համար: Նրա ծայրից հաճախ կապում էին բույսեր, որոնք բարելավում էին խմիչքի համա-հոտային որակները:

Բացի նշված ամաններից գինին պահվել է նաև տիկերի մեջ: Տիկի մասին վկայություն ենք գտնում Ագաթանգեղոսի մոտ⁹⁰: Ներսես Շնորհալին էլ այժի մասին հանելու-

⁸³ Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 339:

⁸⁴ Գիրք վաստակոց, էջ 114:

⁸⁵ Վ. Հաջունի, Ճաշեր և խնձոքներ..., էջ 29:

⁸⁶ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1978, էջ 327:

⁸⁷ Գիրք վաստակոց, էջ 104:

⁸⁸ Գիրք վաստակոց, էջ 98, 104:

⁸⁹ Գիրք վաստակոց, էջ 93:

⁹⁰ Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, էջ 70:

կում նշում է, որ այժի մորթին կարող է դառնալ «գինու աղուտը տիկեր»⁹¹: Պատահական չէ, որ Աստվածաշունչն ասում է. «Եւ ոչ արկանէն գինի նոր ի տիկս հինս, ապա թէ ոչ տիկքն պատռին և գինին հեղու և տիկքն կորնչին, այլ արկանէն զգինի նոր ի տիկս նոր»⁹²: Հետաքրքիր են նաև խաղողի պահպանման եղանակները: Հայտնի է, որ այն նույնպես առանձին դեպքերում պահպանվել է կարասների մեջ: Ինչպես իմանում ենք «Ճառայ» կոչվող ամանի մասին վերը բերված մի վկայությունից, խաղողը պահվել է նաև կարասներում: Խաղողի պահպանման լավագույն կարասներ էին համարվում նրանք, որոնք դեռևս պատված էին գինու մրուրով: Մրուրի բացակայության դեպքում կարասի տակ ավագ էին լցնում: «Գիրք վաստակոցը» մի այլ տեղում խորհուրդ է տալիս. «...Տես ի յայգուջ գտեղի շուք և շատաբեր ի մէջ տնկոց, և փորեա հոր արձակ գիրկ մի կամ երկու աւագ արկ ի ներք, և բեր զբարունակն նոյն բերուն և խչկերով (որթն իր տերններով ու ողկույզներով միասին.- Ն. Բ.), կախեա ի հորն, և զբերանն տախտակեա և հողով և շաքով (ծառի տերև.- Ն. Բ.) ծածկեա»⁹³:

Այսպիսով Հայաստանում խաղողի մշակումն ու վերամշակումը հասել էր զարգացման բարձր մակարդակի: Օգտագործելով անհիշելի ժամանակներից այստեղ կուտակված գիտելիքները այդ արժեքավոր մշակույթի մասին՝ փորձեր էին արվում նույնիսկ գիտական բացատրություն տալ խաղողի որթի, նրա բնույթի և մշակման ձևերի վերաբերյալ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջնադարյան Հայաստանը խաղողագործության զարգացման մակարդակով կանգնած է եղել ժամանակի ամենաառաջավոր երկրների շարքում: Միջնադարյան գյուղատնտեսության մեջ մշակվել են խաղողի տարբեր տեսակներ:

Խաղողի վարամշակման ամենակարևոր օբյեկտները եղել են հնձանները, որոնք լայն տարածում են ունեցել: Այդ մասին են վկայում ինչպես պեղումների արդյունքները, այնպես էլ վիմական արձանագրությունները և մատենագրական աղբյուրների հաղորդած տեղեկությունները:

Խաղողի վերամշակման հիմնական արգասիքը եղել է գինին: Չի բացառվում նաև օղու ստացումը: Հայտնի են եղել գինու տարբեր տեսակներ, ինչպես նաև դրա ստացման, համա-հոտային որակները բարելավելու տարբեր եղանակներ: Միջնադարյան Հայաստանում անհրաժեշտ գիտելիքներ են ունեցել ինչպես գինու, այնպես էլ խաղողի պահպանման վերաբերյալ:

Բացի գինուց և օղուց, խաղողի վերամշակման կարևոր արդյունքներ են եղել նաև ռուպը, տարբեր տեսակի շարապները, չամիչը, որն իր հերթին ունեցել է տարբեր տատեսակներ:

⁹¹ Ներսես Շնորհալի, էջ 36:

⁹² Մատենադարան, ձեռագիր, հմր 248, էջ 53:

⁹³ Գիրք վաստակոց, էջ 132:

ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

**ԿԻԼԻԿԻԱՅԻ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ
ՄԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ.
ՄԵՎ ԼԵՌԱՆ ԵՎ ԴՐԱԶԱՐԿԻ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ**

Կիլիկիայում Հայոց պետությունում սկզբից նեթ մեծ ուշադրություն էր դարձվում եկեղեցիների ու վանքերի շինարարությանը, դրանցում միաբանությունների ու անապատների հաստատմանն, ինչպես նաև դպրոցների ու վարդապետարանների գործունեությանը: Վանքերից նշանավոր էին Դրազարկը, Լամբրոնը, Սկևռան, Ակները, Բարձրբերդը, Հռոմկլան, Սիսը:

Հայոց իշխանների կառուցած ամենահին եկեղեցին Դրազարկի Ս. Աստվածածին եկեղեցին է: Կառուցվել է Տավրոսյան լեռների ստորոտում անառիկ մի ամրոցի մոտ «...որ յունական լեզուաւ Կապիտառայ անուանի»¹: Հռչակավոր անապատը հնագույնը լինելու պատվի համար երբեմն կոչվել է նաև Ավագ վանք: Վանական համալիրի մեջ մտել են Ս. Աստվածածին և Ս. Թորոս եկեղեցիները²: Դրանցից առաջինը՝ Ս. Աստվածածին եկեղեցին, Թորոս Ա իշխանը կառուցել է իր միջոցներով 1110 թվականին: Նավակատիքից հետո Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը տեղում հաստատել է միաբանություն ու վանահայր կարգել Գևորգ գիտնական ու դասասաց վարդապետին: Նա իր շուրջն էր հավաքել «գամենայն դասս ճգնաւորաց» ու հաստատել ճգնական անապատի համակեցության կանոններ՝ «...կարգ և կանօնք զառաջին սրբոց հարցն»³: Հայտնի չէ, թե երբ և ով է կառուցել Ս. Թորոս եկեղեցին: Ձեռագրերում այն հիշվում է 1239 թ.⁴:

Գևորգ վարդապետը Վասպուրականի Անայուր գյուղից էր, պատանեկան տարիքից կրոնավոր էր դարձել ու ապրել ճգնական անբասիր սրբակրոն վարքով⁵: Մեծ և հռչակավոր այս հոգևոր հայրը իր «սակս քաղցրուսոյց վարդապետութեան» ստացել էր Մեղրիկ անունը⁶: Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի անմիջական հովանավորությամբ իր գործընկերոջ և համախոհի՝ Կիրակոս «տիեզերակալ և գերահռչակ գիտ-

¹ Կոպիտառը նույնացնում են այժմյան Թաթան բնակավայրի հետ: **Հ. Տեր-Ղազարյան**, Հայկական Կիլիկիա, Տեղագրություն, Անթիլիաս, 2006, էջ 53:

² Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե- ԺԲ դար, աշխ. Արտ. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 209: Այսուհետև՝ Ե-ԺԲ դարի հիշատակարաններ:

³ Անդ, էջ 136:

⁴ **Ս. Ուռնայեցի**, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1894, էջ 366: Այսուհետև Ժամանակագրություն:

⁵ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, աշխ. Արտ. Մաթևոսյանի, Երևան, 1984, 213-214: Այսուհետև ԺԳ դարի հիշատակարաններ

⁶ Անդ, էջ 334:

⁷ «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 117:

նական»⁷ վարդապետի հետ բացել էր դպրոց նախ «...ի մեր սեփական պարզական եկեղեցիքն յուխտն սուրբ...»՝ Սև լեռան նախկին ասորական վանքում, «...գոր ըստ ասորի բարբառոյ Պառլախոյ կոչի, որ թարգմանի՝ Դրախտ Աստուծոյ...»⁸:

Սև լեռան կամ Պառլավոյ վանքից միայն մի ձեռագիր է հասել մեզ՝ գրված 1098 թ. այդ վարժարանի աշակերտ Գրիգորի պատվերով⁹: Այստեղ երեք տարի անց՝ 1101 թ., Գրիգոր Վկայասերի պատվերով հույն Թեոփիստեն հունարենից թարգմանում է Հովհան Ոսկեբերանի վարքը, որը նորից ըստ գրչության արվեստի ընդօրինակում և սրբագրում «ըստ քերթողացն իմաստից մի շար տող»-ում է Վկայասերի աշակերտ Մատթեոսը¹⁰: Այս Մատթեոսին Ն. Ակինյանը նույնացնում է Մատթեոս Ուռհայեցի մատենագրի հետ և Ուռհայեցուն համարում է Դրագարկում ուսանած¹¹:

Այստեղ՝ Կիլիկիայում շրջելիս Տավրոսի փեշերին կաթողիկոսը հանդիպում է «հմտագոյն հռետոր» Կիրակոսին, իր տեղապահի՝ Գեորգ Լոռեցու աշակերտին, որ «յունական և հայկական ուսմամբն պերճացեալ» էր ու հանձնարարում է հունարենից թարգմանել Կոստադնուպոլսից իր հետ բերած Հովհան Ոսկեբերանի «Մեկնութիւն Գործոց առաքելոց»-ը: 1077 թ. ավարտված թարգմանությունը նորոգ ստանում է և աշխատասիրաբար նորոգում ու համառոտում է Գրիգոր Վկայասերը¹²:

Դարավերջին «...Արդ, այսպէս գրեցաք և տուաք վերջին աւուրց վերջին դարուս», մոտավորապես 1100 թ./1111 թ. հավանաբար Պառլավոյում Կիրակոս գիտնականը «հորդորիչ ...և թելադիր» ունենալով իր ընկերոջը՝ Գեորգ Մեղրիկին, ավարտում է նաև կաթողիկոսի մյուս պատվերը՝ Հովհան Ոսկեբերանի Հովհաննու Ավետարանի մեկնության թարգմանությունը նախ ասորերենից, ապա բնագրի անավարտ ու խրթին լինելու պատճառով նորից թարգմանում է հունարենից¹³:

Սև լեռան մատենադարանի ձեռագրերում Կիրակոս վարդապետը գտել է Ոսկեբերանի 55 ճառերի հայերեն օրինակները, որոնցից 33 «առաջին մերոց թարգմանչաց գտաք թարգմանեալ»: Ճառերից 13-ը առաջին թարգմանիչները հայերենի են վերածել ասորերենից, 20-ը՝ թարգմանել հունարենից: Հովհան Ոսկեբերանի «Հովհաննու Ավետարանի մեկնության» թարգմանության հիշատակարանում ասում է նաև, որ Ոսկեբերանի Ճառերի թարգմանչագիր օրինակի վիճակը այնքան անմխիթար է եղել, «ի ծուլութիւնէ յանփոյթ առնելոյ այլքն կորուսեալ եղծեալ էին յաւրինակս հին», որ ստիպված նորից արտագրում է, քանի որ «անաւգուտ էին ի կարդալոյ», խաթարված էին բաներն ու տները, ընդօրինակողների կողմից կատարվել էին հավելումներ, ուստի նա խրթին մասերն ուղղում, խմբագրում ու կազմում է Ոսկեբերանի 55 ճառերից բաղկացած նոր Ժողովածու «...գոր իմ Կիրակոսի տիպի և անարժանի ի ձեռն առեալ

⁷ Ե-ԺԲ դարի հիշատակարաններ, էջ 143:

⁸ Անդ, էջ 136:

⁹ Անդ, էջ 117/Նոր Զուղա 542/ :

¹⁰ Անդ, էջ 136:

¹¹ Ն. Ակինյան, Մատենագրական հետազոտություններ, հ. Ե, Վիեննա, 1958, էջ 238: Այսուհետև Մատենագրական հետազոտություններ: Այն պետք է թերևս ենթադրություն համարել, քանի որ ոչ մի համոզիչ վկայություն չկա:

¹² Ե-ԺԲ դարի հիշատակարաններ, էջ 109, 108, ծնթ. 3:

¹³ Անդ, էջ 148:

ուղիղ յարինակեցի ըստ կարի, այլ ըստ մտաց բանիցն և այլ ի կրկին արինակաց, և ըստ այսմ զնորոգ թարգմանեալս բազում ջանիւ և աշխատութեամբ յերկրեցաք յուղիղն բառ և բանս ըստ մերումս գիտակտոր և զխրթին բանսն և ըստ վերագոյն գրելոցն ոչ աւելի և ոչ պակաս»¹⁴:

Կիրակոսը Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի պատվերով հավանաբար կատարել է նաև մի քանի այլ մեկնությունների թարգմանություններ ու խմբագրություններ, քանի որ նա լիարժեք մեկնում է նաև Հին և Նոր Կտակարանները. «...նմանեալ էր առաջին սրբոցն, ուսեալ էր զամենայն կտակագիրսն Աստուծոյ և ամենայն խորին քննութեամբ հասու եղեալ»¹⁵:

Կիրակոս գիտնականը ոչ միայն ինքն է թարգմանել ու գրել, այլև նրա պատվերով ընդօրինակվել են ձեռագրեր թե՛ Սև լեռան և թե՛ Դրազարկի նորաբաց դպրոցներում: Նա է պատվիրատուն Դրազարկից մեզ հասած առաջին ձեռագրի:

Այն պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, Ավետարան է ու նշանավոր է ամենից առաջ նրանով, որ նրա գաղափար օրինակը թարգմանչագիր է: Գևորգ գրիչն ընդօրինակել է Սահակ Պարթևի ընտիր և ստույգ օրինակից. «...ես՝ Կիրակոս ի վերջ հասեալ գիտնականաց մեղաւոր և անարժան ...ցանկացող եղէ այսմ...կենսակիր կտակիս, ետու աւարտել Գեորգայ գրչի ի ստույգ և յ[ը]նտիր գաղափարէ Սրբոյն Սահակայ թարգմանչի, յստակ և ականակիտ...»¹⁶: Ձեռագրի սկզբում 18 թերթերի վրա Եվսեբիոսի թուղթն ու Համաբարբառը պարունակող խորաններն են: Նկարագրողումները ևս, ինչպես իրավացիորեն գտնում է ձեռագրագետ Արտ. Մաթևոսյանը, գրչին են¹⁷: Կիրակոս գիտնական վարդապետը սկզբում զետեղված գլխավոր հիշատակարանի վերջում շարադրել է «Աղերսական բանք և մաղթանք վարդապետիս առ սուրբ Աւետարանս»¹⁸, որը Քրիստոսի լուսավոր վարդապետությանը նվիրված ավետարանական խոսքի առաջին գնահատանքն է մեր ձեռագրերում: Ձեռագիրը գրիչն ավարտին հասցրել է «...ի հրեշտակակոխ մենաստանիս Դրազարկիս, առաջի Սուրբ Աստուածածնիս, ի սուրբ եղբայրութեանս ի միջիս, ի ՇԿԲ (1113)»¹⁹:

Հովհան Ոսկեբերանի «Մեկնութիւն Յոհաննու Աւետարանի» թարգմանության հեղինակային գաղափար օրինակից Ստեփաննոս գրիչը նույն Կիրակոս գիտնականի պատվերով 1117 թ. ընդօրինակում է մի ժողովածու՝ պահպանելով նաև թարգմանության հիշատակարանը: Գրչության վայրը հավանաբար Դրազարկն է: Գրիչը գրում է, որ իր գիրը «...թեպէտ և խոշոր է, անարհես[տ]», սակայն Կիրակոս վարդապետի օրինակը դյուրահաս է ընթերցողների ու լսողների համար, գրված է գրչության արվեստի պատշաճ մակարդակով: Հիշատակարանի վերջում երկու խնդրանքով է դիմում ընթերցողին՝ տարածել այս թարգմանությունը, ոչ մեկին չմերժել օգտվելու իր ընդօրինակությունից ու չեղծել իր հիշատակարանը²⁰:

¹⁴ Ե-ԺԲ դ. հիշատակարաններ, էջ 149:

¹⁵ **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, էջ 366:

¹⁶ Անդ, էջ 142 (Մատենադարան ձեռ. 6763):

¹⁷ Զ Յ 1:

¹⁸ Անդ, էջ 143:

¹⁹ Անդ, էջ 142:

²⁰ Անդ, էջ 150:

Դպրոցի ու միաբանության հոգևոր կարիքները հոգալու համար Գևորգ Մեղրիկը ևս ձեռագրեր է պատվիրում: Նա ստանում է ընդօրինակման ժամանակն անհայտ Գրիգորիս Արշարունու «Մեկնութիւն ընթերցուածոցը»²¹:

Մեզ են հասել Գևորգ Մեղրիկի թվով հինգ աղոթքները, որոնք գրված են աղոթքներին բնորոշ ջերմեռանդությամբ: Դրանցից նշանավոր է կյանքի վերջում գրված «Մատենան պաղատանաց սուրբ վարդապետին Մեղրիկայ զկնի ելից իւրոյ յաշխարհէն»: Այն ծավալուն գրություն է՝ ուղղված Բարսեղ ու Գրիգոր կաթողիկոսներին, իր աշակերտներին ու վանականներին: Իր տեսակով այն միակն է հայ գրականության մեջ: Այս գործը եղել է Նիկողիայի Ս. Աստվածածին եկեղեցու ձեռագրից մեկում (N 40): Արժևորվել ու հրատարակվել է անվանի գիտնական Ն. Ակինյանի ընդօրինակությամբ²²:

1114 թ. 70 տարեկան հասակում մահանում է Գևորգ Մեղրիկը, որի հիսունամյա ճգնական անբասիր կյանքը օրինակ է եղել նորուստ շատ հոգևորականների համար: Նա թաղվել է «...ի գաւառն Անարգաբա, ի մեծ անապատն որ Դրագարկ կոչի...»²³:

Գևորգ Մեղրիկից հետո Դրագարկի անապատը ղեկավարում է Տեր Հովհաննեսը: Նրա առաջնորդության տարիներին «Զի որպէս հռովմայեցոց քաղաքն (իմա՝ Հռոմը) ունելով երկու արեգակն՝ զՊաւղոս և զՊետրոս», նույնպես և այս անապատում երկու լուսավոր վարդապետներ կային՝ Կիրակոսն ու Գրիգոր Արքայեցին «գիտութեամբ գերիվերոյ քան զամենեսեան», որոնց մոտ ի թիվս այլոց սովորել է Թադեոս գրիչը²⁴: Նա իր համար Դրագարկում պահվող ընտիր օրինակից ընդօրինակել է մի ժողովածու՝ «Յամի Շ. որդի Հ երորդի Երկրորդի (1123) թուաբերութեանս Հայոց ես՝ նուաստ քահանայ Թադեոս ...գրեցի զսա մեծաւ ջանիւ և աշխատութեամբ ի լեռնապատ անապատիս, որ անուն Դրագարկ յորջորջի, առ ստորոտով մեծի լերինն Տաւրոսի, որ է մերձ անմատոյց յամուրն, որ յունական լեզուաւն Կոպիտառայ անուանի»²⁵:

1137 թ. մահանում է նաև Կիրակոս գիտնականն ու թաղվում «ի վանքն, որ կոչի Դրագարկ»։ Դրանից հետո Ուռհայեցու վկայությամբ -և կոչեցաւ վանքն այս գերեզմանատունը²⁶:

Տեր Սամուելի առաջնորդության տարիներին Թորոս գրիչը միաբանության անդամների, երկու եղբայրների՝ Գրիգորիս վարդապետի և Խաչիկ քահանայի պատվերով Սեբաստիայի նահանգի եպիսկոպոսի, իրենց եղբորորդու՝ Գրիգորի համար ընդօրինակում է Պողոսի թղթերը, որն ավարտում է 1173 թ. «...ի սրբազան ուխտս Դրագարկիս, որ կոչի Աւագ վանք»²⁷: Ձեռագիրը գրված է երկու ընտիր օրինակների համեմատությամբ՝ «Յերկուց աւրինակաց գրեցաւ, վա[ս]ն որոյ է բան, որ ի դէմն է

²¹ Անդ, էջ 144: Հրատարակիչը հիշատակարանը տեղադրել է 1114 թ. ներքո՝ Գևորգ Մեղրիկի մահվան տարում, որպես գրչության վերջին սահման (ծնթ. 1):

²² Ն. Ակինյան, Մատենագրական հետազոտություններ, էջ 129-136:

²³ Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 334:

²⁴ Ե-ԺԲ դ. հիշատակարաններ, էջ 155:

²⁵ Զ ՎՊ, 155 /Զմմատ 204/:

²⁶ Անդ, էջ 366:

²⁷ Անդ, էջ 209/ 3845/ :

վորում է ձեռագիր ընդօրինակել «...բազում ջանիւ աշխատութեամբ հասեալ ի ծայր տառիս» ապա «տառապանաւք զգրեանս ի կապ ածի»³⁵: Հետո բազում դժվարություններ հաղթահարած երաժշտության ու գրչության արվեստի մեջ հմտացած գրիչը անհրաժեշտ ժողովածուներն ընդօրինակած վերադառնում է ծննդավայր:

Սակայն տեղի «անարգ և հոռի» պայմանները Հովհաննեսին ստիպում են թողնել ծննդավայրը և մեկնել «...իմաստասիրաց և ուսումնասիրաց յերկիր»՝ Կիլիկիա: Ճանապարհին նրանից գողանում են դժվարությամբ գրված իր ձեռագիր մատյանները: Ստիպված էր նորից փնտրել ու գտնել ընտիր օրինակներ: Բավական փնտրելուց հետո իմանում է Դրազարկում պահվող Հովսեփ երաժշտապետի կազմած Տաղարանի մասին: «Աղեկ արիւնական», կատարյալ էր ոչ միայն երաժշտության, այլև բովանդակության իմաստով, որի նմանը «յաւուրս ոչ գտանի հանգոյն»:

Հեղինակը սիրահոժար իր կազմած Տաղարանը տրամադրում է երաժշտության մեջ հմտացած գրչին, որն էլ ավարտում է այն «...ի թուականիս Հայոց ՈՃՂ (1241)»: Ընդօրինակելիս Հովհաննես գրչին օգնել է Գրիգոր գրագիրը, որ գրել է Տաղարանի մի հատվածը, որն այժմ ձեռագրում բացակայում է: Հետագայում Տաղարանին կցվել է Գանձարան, որը համարվել է Տաղարանին ժամանակակից³⁶:

Միսաք ճգնավորի համար Խաչատի որդի Խաչատուր գրիչն ընդօրինակում է Նարեկ երկու օրինակի համադրմամբ «... ի ՈՂԶ(1247) թուականիս Հայոց...»: Գրչին այդ դժվարին աշխատանքում օգնել են Բաներգիս քահանան, որը թուղթ է կոկել, Պետրոս վարդապետը, որ «գմի արիւնական ետ»: Գրիչը մեղաց թողություն է հայցում նաև Գրիգորիս երաժշտապետի, Հովհաննեսի ու միաբանության բոլոր անդամների համար³⁷:

Կոստանդին գրիչը իր համար սկսում է ընդօրինակել «Մասունք Աստուածաշնչին», որն ավարտում է Վանկունք անապատում. «Ի թուաբերութեան Հայոց եւթնհարիւր և քսան (1271)...գրեալ աւարտեցաւ ի հոչակաւոր ուխտս Դրազարկ և յանապատս Վանկունք ընդ հովանեաւ ամենարիւնեալ Տիրամարն...»: Նկարագարդումները՝ կիսախորանները, ճակատագարդերն ու լուսանցագարդերը, արվել են Գրիգոր նորընծա քահանայի ձեռքով: Ձեռագրի բոլոր գլխագարդերը գրիչը վստահել է «ընտիր գրչաւոր Աւետիսին», իսկ կազմելը՝ Կիլիկիայում շատ հայտնի կազմարար Առաքել Հնազանդեցին:

Հոգալով ձեռագրի ընդօրինակման հետ կապված բոլոր ծախսերը՝ այս ձեռագիրը նվիրում է Մլիճի Ավագ վանքին, որի Սուրբ Աստվածածնում սպասավորել է իր քահանա հայրը՝ Մանուել երեցը: Հոր մահվան տարելիցին որդին նվիրում է իր ընդօրինակությունը տեղի միաբանությանն առանց այնտեղից այս ձեռագրի օտարման իրավունքի. «Ոչ ոք իշխեսցէ անցանել և արհամարհել տիպ տառիս մարդկանէ ո՛չ թագաւոր, ո՛չ իշխան, ո՛չ եպիսկոպոս և ո՛չ հայր վանաց, ո՛չ մեծ, ո՛չ փոքր, ո՛չ եկեղեցական և ո՛չ աշխարհական...»³⁸:

Կոստանդին գրչի, ինչպես նաև Դրազարկի գրչակենտրոնի այլ գրիչների և Առաքել

³⁵ Անդ, էջ 221 / Փարիզ 79, մանրածպ. 453/:

³⁶ Անդ, էջ 222, ծթ. 1:

³⁷ Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 275-278:

³⁸ ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 407-408: Մատենադարան, ձեռ. 199:

Հնագանդեց կազմարարի համատեղ աշխատանքները շարունակական են:

Առաքել Հնագանդենցն է կազմել նաև Կոստանդին գրչի 1274 թ. ընդօրինակած Ավետարանը: Գրիչն այն գրել է իր ուսուցչի՝ Հակոբ կաթողիկոսի պատվերով՝ սկսելով այն Մաշկնորում և ավարտելով Դրազարկում «...յանձն առեալ շնորհիւ Տեառն սկսա զսա ի Սուրբ անապատս Մաշկետոր, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Կարապետին և Մկրտչին Յովհաննու և... յանկ հանեալ աւարտեցի զսա ի հոչակաւոր Սուրբ ուխտս Դրազարկ ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին...»: Ոչ շատ անց ձեռագիրը դառնում է Հայոց թագադիր Լամբրոնի իշխան Կոստանդինի որդու՝ հայոց սպարապետ Օշին մարաջախտի սեփականությունը³⁹:

Բարսեղ եպիսկոպոսի առաջնորդության տարիներին Կոստանդինի որդի Թորոս գրիչը իր համար 1275 թ. ընդօրինակում է մի Ավետարան, որը կազմվել է միայն մեկ տարի անց «...զմեղաւք դատապարտեալ կազմողս զԱռաքել Հնագանդենց և զծնաւորսն իմ ...և զուսուցիչն իմ՝ զՍարգիս քահանա, ...աղաչեմ յիշել ի Տէր: Ի թուիս ԶԻԵ (1276) կազմեցաւ»⁴⁰:

Լոնդոնում է պահվում Բարսեղ գրչի՝ Թորոս վարդապետի համար ընդօրինակած Ավետարանը, որն ունի եղծված գլխավոր հիշատակարան, պահպանվել է Հայոց թվականության մի մասը «Չ», բայց նշված են Լևոն Բ-ի թագավորության տասներկու և Հակոբ կաթողիկոսի հայրապետության տասնհինգ տարիները: Ուստի ձեռագիրը Ֆ. Կոնիքերը 1282 թվականին է գրված համարում⁴¹:

Ստեփաննոսի և Ոսկեհատի որդի Վահան գրիչն իր միջոցներով գրում է մի Ավետարան «...մերս թիւ ԶԼԵ (1286): Եւ գրեցաւ սա ի Սուրբ ուխտս Դրազարկ կոչեցեալ ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի...» ու նվիրում Սուրբ Կարապետ, Սուրբ Աստվածածին ու Սուրբ Թորոս եկեղեցիներ ունեցող մի վանքի⁴²:

Տէր Թորոսի վանահայրության տարիներին ծագումով Շատախեցի և Մշեցի Թորոս հանրահայտ գեղեցկագիր գրիչը, որը մինչ այդ չէր եղել հայրենի վայրերում, 1290 թ. ընդօրինակում է մի Ավետարան և իր միջոցներով նկարազարդում է այն «...ինքնին ձեռամբ իմովք գրեցի ...և յարդար ընչից իմոց ետու զսա ոսկի ծաղկովք, ոսկի գլխագրովք, համաբարբառաւք և չորսին խորանաւք և բազմերանգ գունով, կազմաւք և արծաթի կոճակաւք, յարմարեցի ըստ իմ փանաքի և թարմատար կարիս...» ու նվիրում է Մշո Սուրբ Կարապետին՝ խնդրելով Տարոնի առաջնորդ Հոհաննես եպիսկոպոսից և միաբաններ՝ Ստեփաննոս վարդապետից, Հակոբից և Կարապետից, որ ամեն տարի մեկ օր պատարագի ժամանակ հիշման արժանի լինեն իր ծնողներն ու ինքը⁴³:

Ձեռագիրը գրելիս Թորոս գրչին օգնել են միաբանության բոլոր անդամները և, հատկապես Տիմոթ քահանան՝ «զքանոնող քարտիս», որ ձեռագրի թերթերը տողտողեց, և Գևորգ անխոնջ սպասավորը⁴⁴:

Լ. Խաչիկյանը ընդհանրություններ է տեսնում այս գրիչ ու մանրանկարիչ Թորոսի

³⁹ Անդ, էջ 445-446 /Երուսաղեմ 1955/:

⁴⁰ 2 չ¹, 460-461 /Երուսաղեմ 2594/:

⁴¹ Անդ, էջ 530:

⁴² Անդ, էջ 598 /9027/:

⁴³ Անդ, էջ 657 /5736/:

⁴⁴ Անդ, էջ 658:

ու մեծագույն վարպետ Թորոս Ռոսլինի նկարագրողումների միջև և հնարավոր համարում նրանց նույնացումը⁴⁵:

Մոտ 50 տարի Ավետարանը պահվել է Առաքելոց վանքում և իր բնագրային ճշգրտության ու անթերի նկարագրով լինելու համար ծառայել է որպես լավ և ընտիր գաղափար օրինակ:

Շնորհավոր երեցի համար Բզնունյաց գավառի Աղեթ գյուղի Հովաննես գրչի Ավետարանը օրինակված է Թադեոս կրոնավորի «ստույգ և ընտիր արիւնակէ, գոր գրեալ էր Թորոս փիլիսոփայն ի Դրագարկն և յուղարկեալ հոչակաւոր ուխտին Սուրբ Առաքելոց Տարոնոյ, որ կոչի Ղազարու վանք» 1327 թ.⁴⁶:

1347 թ. Սուրբ Կարապետից գողանում են Ավետարանը ու տեղափոխում Լուստրո գյուղ: Կիրակոս քահանան գնում է այն ու վերադարձնում միաբանությանը, որի առաջնորդ Ստեփաննոսը ուխտում է ամեն տարի Սուրբ Կարապետի տոնին պատարագ մատուցել:

Նույն թվականին Թորոսի ընդօրինակած մեկ այլ Ավետարան է պահվում Էրմիտաժում⁴⁷: 1292 թ. Հռոմկլայի գրավումից և Ստեփաննոս հայրապետի գերիվարությունից ու մահից հետո Դրագարկի Թորոս եպիսկոպոսի հետ Թորոս գրիչը տեղափոխվում է երկիրն Արևելից՝ Արտազի Ս. Թադեոս առաքյալի անապատ, Տիրացու եպիսկոպոսի մոտ, ուր ույթ ամիս առաջ հաստատվել էր Լևոն II արքան: Հիշատակարանը, որ գրվել է Արտազի նշանավոր այս վանքում, այժմ թերի է ու պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, պատահիկների ֆոնդում / Պատահիկ 919/⁴⁸:

Թորոս փիլիսոփայի ընդօրինակություններից է եղել նաև մի Ավետարան, որ XIX դարի վերջին պահվել է Գանձակի Ոսկանապատ գյուղում: Ձեռագրում այն ժամանակ եղել է միայն 1331 թ. վերստին ստացողի հիշատակարանը: Սրանից իմանում ենք, որ Գլաձորի համալսարանի սան, Եսայի Նչեցու աշակերտ Ջալալի և Գոնցայի որդի Ստեփաննոս Սյունեցի մետրոպոլիտը գնում է ինչ-որ մեկի կողմից Հայաստան բերված Դրագարկի Թորոս փիլիսոփայի «ոսկեգաւծ որակաւք» Ավետարանը, ի արևշատություն իր Էլիկում և Աղբուղա եղբայրների և ի հիշատակ ծնողների և վաղամեռիկ եղբորն՝ Շահնշահի: Ձեռագրի ճակատագիրն այժմ անհայտ է և մնացել է միայն այս համառոտված հիշատակարանը⁴⁹:

1294 թ. Բարսեղ երաժիշտը դժվարին պայմաններում, երբ «...դառն վշտից և անբերելի աղետից թէ ինչ մեծ նեղութիւն կան քրիստոնէք ի սովոյն», իր համար ընդօրինակում է մի սովար ժողովածու ու դժգոհում իր հանապազորյա աշխատանքից « Ոհ զվատ արիեստս ի գրչաց»⁵⁰: Ժողովածուն 1299 թ. Աբրահամ արքեպիսկոպոսը Կիլիկիայում գնում է տանում է Տարոնի Սուրբ Առաքելոց վանք: Ձեռագիրը նորոգման կա-

⁴⁵ ԺԴ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյանը, Երևան, 1950, էջ 356 և ծթ. 1 /5736, էջ 314բ/: Այսուհետև՝ ԺԴ դարի հիշատակարաններ:

⁴⁶ Անդ, էջ 202 /7519/:

⁴⁷ ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 658:

⁴⁸ Այդ վիճակով հիշատակարանը ընդօրինակվել է 1627 թ. մի ձեռագրում /ձեռ. 482/ և կարևորությունից ելնելով քանիցս հրատարակվել: Անդ, էջ 691-692, ծթ. 1:

⁴⁹ ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 231 /Երնջակ, էջ 151/:

⁵⁰ ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 729-732 /2588/:

րիք ուներ: Առաքելոց վանքում Թորոս գրիչը լրացրել է ժողովածուի վերջին երկու թերթերը և փոխել ու ավելացրել իր հիշատակարանը⁵¹: Վերստին կազմել է Առաքել կազմողը⁵²:

1295 թ. «ընդ հովանեաւ» Ս. Աստվածածին եկեղեցու երաժիշտ Բարսեղը, Սարգիս, Թորոս, Պետրոս, Կոստանդին միաբանների օժանդակությամբ, Թորոս փիլիսոփան ու Հովհան գրիչը Հովսեփ փիլիսոփայի պատվերով ընդօրինակում են մի Ավետարան: Թորոս գրչին են առաջին երեք Ավետարանները, իսկ Հովհաննեսի Ավետարանն ու մանրանկարները «գրեաց Յոհան գրիչն... և զարդարեաց պէս-պէս երանգներով և գունով»⁵³:

XIII դ. պետք է ընդօրինակված լինի Մանուել փիլիսոփայի համար Հովհաննես գրչի Ավետարանը, որը պահվել է Արցախում: Ձեռագրի ընդօրինակման ժամանակն ու հետագա ճակատագիրն անհայտ է⁵⁴:

Այս դարից մեկ հիշատակագրություն է պահպանվել, որը վերաբերում է Գրիգորիս արքեպիսկոպոսի կողմից վանքին Մաշտոց ձեռնադրության նվիրելուն⁵⁵:

Գրչական ու դպրական կյանքը շարունակվում է նաև XIV դարում: Նույն Ս. Աստվածածնի ու Ս. Թորոսի հովաննու տակ ձեռագրեր են գրում Հեթում Քաջկոնց, Անդրեաս, Վահան, Ստեփաննոս Երկայն, Սիմեոն, Հակոբ, Սարգիս, Հովհաննես գրիչները:

Այս դարից մեզ հասած առաջին ձեռագիրը Կոստանդինի առաջնորդության տարիներից է: Հեթում Քաջկոնցը իր համար մի Ավետարան է ընդօրինակում «...ի թուականիս Հայոց ՃԾԹ (1310)»⁵⁶:

Այդ տարիներին Դրազարկի Վարդան կրոնավորը մի ձեռագիր է պատվիրում հմուտ գրիչ Թորոս Հռոմկլայեցի քահանային, ով այդ ժամանակ սպասավորում էր Կիլիկիայի Գերմադրյուր ուխտում: Չնայած ձեռագրի թերի հիշատակարանին, այն հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Ավետարանը պատվիրելու հանգամանքների մասին: Վարդանը մեկնել է Իտալիա՝ տեղի սրբավայրերն այցելելու, ապա գնացել Կիպրոս, ուր հանդիպել է մարաջախտ Պաղտիսին և էլի մի քանի հոգու, ովքեր միջոցներ են տրամադրում Վարդան կրոնավորին իրականացնելու վերջինիս մեծ ցանկությունը՝ ունենալ նկարազարդ գեղեցիկ Ավետարան:

Հենց Կիպրոսում Վարդանը մի քահանայի պատվիրում է գրել Սուրբ Գիրքը: Սակայն տեսնելով գրչի անվարժ գիրը՝ նյութի թանձրությունը, ծաղկի գույնի անպատեհությունը, հրաժարվում է վերջինիս հետագա ընդօրինակությունից: Իր հայրենի երկրի քաղաքական հարաբերական անդորրից օգտվելով՝ նվիրատուների միջոցներով գնում է անհրաժեշտ քանակի մագաղաթ ու վերադառնում Դրազարկ: Միաբան ընկեր-

⁵¹ Անդ, էջ 854:

⁵² Անդ, էջ 854-855:

⁵³ Անդ, էջ 758-759 /6290/:

⁵⁴ ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 704: /**Բարխուդարյան**, Արցախ, էջ 153-184: Ստեփաննոս հայրապետի գերեզմանի մասին հիշատակարանում եղած ակնարկից ելնելով ժողովածուն դրվել է 1292 թ. ներքո:

⁵⁵ Անդ, էջ 884, Ցուցակ Մշո Առաքելոց վանքի, էջ 9-10:

⁵⁶ Պալյան Ցուցակ Կեսարիո, Սուրբ Դանիելի վանք, էջ 72:

ները խորհուրդ են տալիս դիմել Թորոս Հռոմկլայեցուն: Հիշատակարանի հաջորդ թերթն ընկել է ու այն ավարտվում է առանց թվականի հիշատակության: Թվականը հիշատակարան է մտցվել ձեռագրի նորոգման ժամանակ: Ներքին լուսացքում նորագույն նոտրգրով ավելացված է. «Գրեցաւ ի թվականիս Հայոց ԷՃ և Կ (1311)»⁵⁷:

Ստեփաննոսի ու Ոսկեհատի գավակ Վահան գրիչը, չնայած իր առաջացյալ տարիքին, երբ անգամ աչքի լույսն էր պակասել, երկու ձեռագիր է գրում իր համար. մեկը՝ Հայսմավուրք է, որ գրիչն ավարտում է. «Յեթնհարիւրորդի, Կ եւ Ե-րորդի (1316) ամի հայկազեանս տումարի գրեցաւ աստուածազարդ եւ հոգելից տե[տրս]՝ այս, պատմութիւնք նահատակութեանց, ճգանց, եւ վարուց, մարտիրոսաց, առաքելոց, մարգարէից, հայրապետաց, կուսանաց, որ եւ կոչի Այսմաւուրք, ձեռամբ մեղսաթաւալ յոգնամեղ անձին Վահանայ, յԱւաք վանքս, որ կ[ոչ]ի Դրազարկ, ի մեծափառ եւ հռչակաւոր անապատս, ի դուռն տաճարի մաւրս լուսոյ Սուրբ Աստուածածնի, ի թագաւորութեան բարեպաշտ արքայի, որ է տղայ հասակաւ, Լեւոնի, որդի Աւշնի թագաւորի. եւ ի հայրապետութեանն տեառն Կոստանդեա, յանբարեբեր եւ դառն ժամանակի, յորում նեղիմք յանաւրինաց յամենայն կողմանց»⁵⁸: Մյուսը՝ 1321 թ. գրված մի ճառքն է: Գրեթէ յուրաքանչյուր նյութ-միավորի վերջում գրիչը թողել է մանր հիշատակագրություններ Լեւոն թագավորի դստեր՝ Զաբելի և նրա որդիների, իր ծնողների՝ Ստեփաննոսի արևշատության և ուխտի միաբանության անդամների՝ Հայրապետ ու Կոստանդին եղբայր քահանաների, Վասակ Միայնակեցի և Գրիգոր սարկավագի մեղքերի թողության խնդրանքներով: Ավարտելուց հետո ձեռագիրը նվիրում է Երուսաղեմի Սուրբ Հրեշտակապետաց վանքին⁵⁹:

Սիմեոն կրոնավորը մի Ավետարան է ընդօրինակում «...ի թուին ՉԿԷ (1318) ի մեծափառ և ի հռչակաւոր անապատս Դրազարկ...»: Ձեռագրից ընդօրինակվել և հասել է միայն գլխավոր հիշատակարանից մի քանի տող⁶⁰:

Այդ նույն թվականին Հակոբ դպիրը երեց եղբոր՝ Ստեփաննոսի տված «յ[ը]նդիր աւրինակէ Կոստանդեա» նորած Կոստանդին քահանայի համար արտագրում է մի Շարակնոց: Գրիչը հիշում է միաբանության մյուս անդամներին՝ Ստեփաննոս կրոնավորին ու անօրենների ձեռքով առ Քրիստոս փոխված Թորոս և Պետրոս քահանաներին⁶¹:

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարանում է պահվում նաև Երուսաղեմի միաբան գրիչ Ստեփաննոս Երկայնի միայնակյաց Ալեքսի համար Դրազարկում կազմած ու ընդօրինակած ճառքն է: Նյութերի ընտրությանը մեծապես օգնում են Դրազարկի Ստեփաննոս և Վահրամ գրիչները. «...Վահան...եղբարց, որ ազնական եղեւ ի նիւթ գրոցս և մեղսաթաւալ և թարմատար գրչի՝ Ստեփաննոսի»: Թուղթն էլ կոկում է «Գրիգոր պատուական քահանան»⁶²: Բոլորգրով գրված այս աշխատանքը գրիչն ավարտում է «Յամի եւթնհարիւրորդի վաթսներորդի ընդ եւթան թո-

⁵⁷ ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 75-76, ծթ. 2 /154/:

⁵⁸ Ն. Պողադյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Զ, Երուսաղեմ, 1972, էջ 193-194 /Եր.1822/:

⁵⁹ Ն. Պողադյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ա, Երուսաղեմ, 1966, էջ 246 /Եր. 71/:

⁶⁰ Անդ, էջ 152: Պահվել է Ապուլչեյս գյուղի Ս. Նշան եկեղեցում: Հանիկյան, էջ 86:

⁶¹ Ն. Պողադյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ե, Երուսաղեմ, 1971, էջ 576-577 /Եր.1700/:

⁶² Ն. Պողադյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ա, Երուսաղեմ, 1966, էջ 257:

ւոյ Հայկազեան տոմարի», Դրագարկում, դառն ու անբարի ժամանակներում, երբ հարկապահանջության ծանրությունից քրիստոնյաները Կիլիկիայում կամ «հարք գորդիս վաճառեն» և կամ «ի բանտի և ի կախահանս վճարեցին զկեանս իւրեանց»⁶³:

Ստեփաննոս Երկայնը մի Շարակնոց էլ է ընդօրինակում Դրագարկում «ի խնդրոյ աստուածագարդ եւ սրբասէր եպիսկոպոսի տէր Վարդանայ եւ քուէր որդւոյն իւրոյ՝ պատուական սարկաւազ Վասլին»⁶⁴: Թեև գրիչն ասում է անմեղադիր լինել գրի խոշորության համար, սակայն մագաղաթի վրա գրված բոլորգիրը բավական սահուն է, լավ խագագրված: Ընդօրինակումը կատարվել է 1327 թ. «ստոյգ եւ յընտիր արինակաց, որպէս ահա յայտնի է ստոյգ գիտողաց»⁶⁵:

Դրագարկում 1325 թ. Միխայի որդի Գրիգոր գրիչը իր համար ընդօրինակում է մի Ավետարան, որի մագաղաթը մշակում են Գրիգոր և Մխիթար միաբանները, ձեռագիրը գեղեցիկ նկարազարդում է Գրիգոր Պիծակի որդին՝ Սարգիս Պիծակը, Կարապետ գրիչը լրացնում է Մատթեոսի և Լուկասի Ավետարանների նախադրությունները⁶⁶:

Թորոս Հռոմկլայեցին Դրագարկում ընտիր և ստոյգ օրինակից մի ուրիշ Ավետարան է ընդօրինակում Սարգիս քահանայի համար: Ձեռագիրը գրիչն ավարտվում է 1331 թ. «Գրեցաւ ի թու[ին] ԶԶ (1331)ի թագաւորութեան Լևոնի և ի հայրապետութեան տեառն Յակոբայ, յերկնահանգէտ անապատս Դրագարկ, ի լաւ արինակէ...»⁶⁷: Ձեռագրում բացակայել են համաբարբառները, գլխահամարները և նախադրությունները: Մեկ տարի անց թերին լրացրել է Գրիգոր գրիչը «Մեղաւոր հոգս Գրիգոր և զծնաւոյս իմ, որ զհամաբարբառքս և զգլխահամարքս և զնախադրութիւնքս գրեցի...»⁶⁸ ԶԶԱ (1332)»: Ավետարանը նկարազարդել է Սարգիս աբեղան հենց այս նույն թվականին, քանի որ այդ մասին վկայող ծաղկողի 18ա- 19բ էջում եղած չափածո անթվական հիշատակագրությունները գրված են Գրիգոր գրչի համաբարբառների ներքո⁶⁸:

Դրագարկում գրված են համարում նաև Կոստանդնուպոլսի Սուրբ Փրկիչում պահվող 1342 թ. Տիրացու քահանայի համար ընդօրինակած ձեռագիրը: Ավետարանի ծաղկողը Սարգիս քահանան է⁶⁹:

Դրագարկի ուլխտին Գրիգոր եպիսկոպոսը նվիրում է Գրիգորիս քահանայի գրած ու նկարազարդած Գիրք ձեռնադրությանը 1371 թ.⁷⁰:

1651 թ. Մովսես գրիչը ընդօրինակել է մի Շարակնոց, որը Լ. Խաչիկյանը ենթադրում է, որ գրված պետք է լինի Էրզրումում: Վերջինիս համար գաղափար օրինակ է հանդիսացել Դրագարկում 1328 թ. Ստեփաննոս գրչի՝ Պողոս Արզրումցու համար գրված «ոսկենկար» Շարակնոցը: Այդ մասին հիշատակագրություն է պահպանվել ձե-

⁶³ Անդ, էջ 258:

⁶⁴ Մատենադարան, ձեռ. 10524, էջ 236ա:

⁶⁵ Զ Վ 1:

⁶⁶ Մատենադարան, ձեռ. N 10449, էջ 357ա-59-359բ, 8բ:

⁶⁷ Անդ, էջ 240:

⁶⁸ Զ Վ 1, 240-241: /Վենետիկ 97, Յուցակ Ա, էջ 436-438/:

⁶⁹ Զ. Ոսկյան, Կիլիկիայի վանքերը, Վիեննա, 1957, էջ 198-199:

⁷⁰ Անդ, էջ 199:

2008 ԿԻԼԻԿԻԱՅԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԿՁԲՆԱՎՈՐՈՒՄԸ... Ը 79

ռագրի 368բ էջում⁷¹:

Դրագարկում պահվող Ավետարանի ընտիր օրինակից է կատարված 1352 թ. Հովհաննես քահանայի համար Սուրիսաթում ընդօրինակված Ստեփաննոս գրչի Ավետարանը⁷²:

Կիլիկիայի Պառլաիվոյից մեզ է հասել 1100/1101 թ. Հովհան Ոսկեբերանի «Հովհաննու Ավետարանի մեկնության- թարգմանության ինքնագիր օրինակը, ինչպես նաև Հովհան Ոսկեբերանի Ճառերի՝ Կիրակոս գիտնականի վերստին թարգմանության կատարյալ օրինակը: Դրագարկի գրչակենտրոնից մեզ է հասել շուրջ 35 ձեռագիր ու վկայություն՝ գրված քսանից ավելի գրիչների ձեռքով, որոնք չնչին մասն են կազմում Կիլիկիայում գրված այն ձեռագրերի, որոնց գրչության վայրը պարզելու համար պահանջվում է խորը ձեռագրագիտական ուսումնասիրություն ու հնագրական համեմատություն:

⁷¹ Անդ, էջ 212, / ձեռ. 1576/:

⁷² ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 399-400 /ձեռգ. N 7598/:

ԳԵՎՈՐԳ ՄՐԱՊԻՈՆԻ ՄՏԵՓԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆՑԸ ՇԱՄԱԽՈՒ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ (1887-1894)

Հայ Եկեղեցու պատմության մեջ իր ուրույն տեղն ունի բազմարդյուն և երախտաշատ հոգևորական Մեսրոպ արքեպս. Սմբատյանը, որը թողել է եկեղեցասեր ու գիտնական գործչի բարի համբավ: Էջմիածնի Սինոդի անդամ Մեսրոպ արքեպս. Սմբատյանը (Նախիջևանցի)¹ Շամախու հայոց թեմի և միաժամանակ Անդրկասպյան մարզի հոգևոր առաջնորդ է կարգվում Մակար Ա Թեղուտեցի կաթողիկոսի 1887 թ. հունվարի 3-ի թիվ 10 կոնդակով:

Թեմի առաջնորդի պաշտոնը ստանձնելուց ի վեր Մեսրոպ արքեպս. Սմբատյանը ծավալեց բազմաբնույթ գործունեություն: Թեմակալի առաջին ձեռնարկումը Սաղիանի Ս. Ստեփաննոս Նախավկա վանքի շինարարական աշխատանքների ավարտումն էր: Վանական համալիրը բաղկացած էր մեկ եկեղեցուց, միաբանության ու տնտեսական բնույթի շենքերից, պարսպապատերից, դարպասից, աղբյուրներից և գերեզմանոցից: Նյութական միջոցների պակասի պատճառով հետաձգվեցին միայն եկեղեցու կաթողիկեի կառուցման աշխատանքները: 1887 թ. հոկտեմբերի 15-ին Մակար Ա Թեղուտեցի կաթողիկոսը թույլատրեց օծել նորակառույց եկեղեցին: Կոնդակում մասնավորապես ասվում է. «Գերապատիւ առաջնորդի թեմին Հայոց Շամախույ՝ Սրբազան Մեսրոպ Եպիսկոպոսի սիրելոյ մերում ի Տէր, ողջոյն եւ օրհնութիւն: Ի յայտարար գրութենէ Ձերմէ

¹ Մեսրոպ արքեպս. Սմբատյանը (ավագանի անունը՝ Գրիգոր) ծնվել է 1833 թ. մարտի 10-ին Նախիջևան գավառի Փորադաշտ գյուղում, քահանայի ընտանիքում: 1847-1851 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Ժառանգավորաց դպրոցում: 1857 թ. հունիսին կուսակրոն քահանա ձեռնադրվելուց հետո, 1859 թ. նշանակվում է Էջմիածնի գավառի գործակալ, միաժամանակ Մուղնու Ս. Գևորգ վանքի վանահայր և Ս. Էջմիածնի վանական կառավարության անդամ: 1862 թ. նշանակվել է Նոր Բայազետի և շրջակա 73 հայաբնակ գյուղերի գործակալ: 1865 թ. Ատրպատականի թեմակալ առաջնորդ Գևորգ արքեպս. Վեհապետյանի կողմից Մեսրոպ արքեպս. Սմբատյանը նշանակվում է նվիրակ: 1866 թ. նշանակվել է Տաթևի վանքի վանահայր: 1868 թ. նշանակվել է Երևանի փոխթեմակալ, 1870 թ.՝ Սինոդի անդամ: 1877 թ. արժանացել է եպիսկոպոսական աստիճանի: 1882-86 թթ. եղել է Գևորգյան ճեմարանի վերատեսուչ: 1887-1895 թթ. եղել է Շամախու թեմի առաջնորդը: Մեսրոպ արքեպս. Սմբատյանը եկեղեցական գործունեությունից զատ անխոնջ կերպով զբաղվել է նաև հայագիտությամբ: 1910 թ. բանասիրական պրպտումներ կատարելու նպատակով մեկնել է Երուսաղեմ, ուր և 1911 թ. մահացել է: Հեղինակ է տպագրված ազգագրական-բանասիրական արժեքավոր մի շարք աշխատությունների: Հայ պատմա-բանասիրական գրականության մեջ Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի անունը անխզելիորեն կապված է Կովկասում բնեռագիր արձանագրությունների հավաքման և հրատարակության շնորհակալ աշխատանքների հետ: Նա գրել է 20 սեպաձև արձանագրություն (Վ. վրդ. Գալամդարյան, Մեսրոպ արքեպս. Սմբատյան, «Էջմիածին», 1958, հունվար, էջ 36-40, տե՛ս նաև **Լալայան Ե.**, Նախիջևանի ոստիկանական շրջան կամ Նախճաւան, Ազգագրական հանդես, գիրք XV, Թիֆլիս, 1907, էջ 135-136):

ի 5-ն հոկտեմբերի ընդ համարաւ 65, տեղեկացեալ մեր աւարտման շինութեան հոյակապ տաճարի Սրբոյն Ստեփաննոսի՝ որ ի Սաղիան, ուրախացաք յոյժ, ուստի եւ տամք Ձեզ իրաւունս օծանելոյ զայն տուն Աստուծոյ ըստ ծիսի եւ արարողութեան Հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ»²: Նույն թվականի նոյեմբերի 8-ին Մեսրոպ արքեպս. Սմբատյանը հանդիսավոր արարողությամբ օծեց նորակառույց եկեղեցին, և «ի մխիթարութիւն Սաղիանի ժողովրդոց և սուրբ նուիրատուաց» կատարվեց նաև ժամերգություն³: Ս. Ստեփաննոս եկեղեցու հարավային ճակատից բացված մուտքի բարավորին այդ առիթով փորագրվում է. «Առաջնորդ Հայոց թեմին Շամախույ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի Էօծ գտաճարս յետ բանալ տալոյ զհարաւային նոր դռունս ի յիշատակ ծնողացն եւ յաւարտածելոյ զշինութիւն տաճարիս ի հայրապետութեան ամենայն Հայոց Տեառն Մակարայ. յամի Տեառն 1887 եւ Հայկական 4378»⁴: Մեսրոպ արքեպս. Սմբատյանը նպատակադրվել էր անգամ թեմի առաջնորդանիստը տեղափոխել Սաղիան, ինչպես որ դա եղել էր նախկինում. «Այս վանքն շատ յարմարութիւն ունի ամեն տեսակաւ,-գրում է թեմակալը,-ուսումնարանի և առաջնորդանիստի: Այստեղ լինելով միջակէտ գիւղացւոց վիճակին Շամախույ, առաջնորդն տեղւոյն շատ շուտ կարող է այցելութեան ելանել իւր հօտին, և նոցա առանց նեղութեան հովել և հոգևոր պիտոյքը հոգալ: Ունի իրան շրջակայքում բաւական վարելահողեր, այգետեղիք, և պարտիզատեղիք: Այսոքիկ յարմարութիւնք շարժում են իմ սիրտը, որ Շամախու վիճակի առաջնորդարանը փոխադրեմ ի Սաղիան»⁵:

Սաղիանի վանքի վանական դպրոցի 1885 թ. փակումից հետո դպրոցի կենսագործունեության երկրորդ շրջանը կապված է թեմի առաջնորդ Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի հետ: Լինելով ուսումնական գործի ջերմ կողմնակից՝ թեմակալը 1887 թ. նոյեմբերից եռանդուն կերպով մեծ աշխատանք է ծավալում վանքին կից վանական դպրոցի բացման և նյութական վիճակի բարելավման ուղղությամբ: Այդ նպատակով նա կազմում է ուսումնարանի գործունեության ծրագիրը և նյութական աջակցություն ստանալու ակնկալիքով դիմում բաքվաբնակ Մովսես, Եղիա, Ենովք և նրանց հանգուցյալ եղբոր՝ Թադեոս ավ. քին. Բուդաղյանցի որդիներ Սմբատին և Երվանդին: Հարկ է նշել, որ վանական դպրոցի վերաբացման հարցում ժամանակին իր մտահոգությունն էր հայտնել նաև Թադեոս ավ. քին. Բուդաղյանցը⁶: Միքով ընդունելով դպրոցին օժանդակելու առաջարկը, Բուդաղյան եղբայրները տրամադրում են 10.000 ռ.: Վերջիններիս կողմից դեկտեմբերի 31-ին թեմակալին հասցեագրված նամակում այդ մասին ասված է. «Մեր այս նամակով վստահանում ենք միամտացնել Ձեզ, Սրբազան Հայր, եւ յոյս ունինք առ Աստուած, որ Սաղիանու վանքի դպրոցի վերաբերմամբ Ձեր բարի ցանկութիւնը կը կատարուի ժամանակին: Արդէն մենք մեր սեպհականութիւնից ուխտել ենք նիւթապէս

² Սմբատեանց Մեսրոպ արքեպս., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախույ թեմի, Տփլիս, 1896, էջ 22:

³ «Նոր-դար», Թիֆլիս, 1887, նոյեմբերի 24, N 202:

⁴ Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 19-20: Հմմտ. Գարապէտյան Մ., Բուն Աղվանքի հայերէն վիմագրերը, Երևան, 1997, էջ 62:

⁵ Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 39:

⁶ Նույն տեղում, էջ 89-90:

ապահովել նոյն վանքում բացուելի վանական ուսումնարանը, իսկ նորա բարոյական և դէպի յառաջ նկրտելուն հոգացողութիւնը կ'իսնդրենք ամենախոնարհաբար Սրբազան Հօրդ ստանձնել Ձեր վրայ»⁷: Բուդաղյան եղբայրների առաջարկությամբ բացվող դպրոցը պետք է կրեր «Բուդաղեան վանական դպրոց Սաղիանի վանից» անվանումը: Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի հրավերով Շուշիից 1888 թ. օգոստոսի վերջերին Սաղիան է գալիս Մակար եպս. Բարխուտարյանցը, որը նորաբաց վանական դպրոցում պետք է դասավանդեր կրոն և հայոց լեզու, իսկ ռուսաց լեզվի և թվաբանության ուսուցիչ հրավիրվեց Սահակ Տեր-Գրիգորյանցը⁸: Վանքի վանահայրն ու միաժամանակ դպրոցի տեսուչն էր Ստեփաննոս քին. Աստապատցին: 1888 թ. սեպտեմբերից սկսեց գործել վանական երկդասյան արական դպրոցը 41 աշակերտով⁹:

Թեմակալի նախաձեռնությամբ 1888 թ. ապրիլի վերջերից Սաղիանի վանքին կից վանահայրերի համար սկսվեց նոր շինության կառուցումը: Հին շենքը, որը կառուցվել էր դեռևս 1816 թ. Հովհան արքեպս. Գյուլիստանցու օրոք, երկրաշարժի պատճառած ճեղքվածքների պատճառով գտնվում էր խիստ քայքայված վիճակում, և արդեն վտանգավոր էր դարձել այնտեղ բնակվելը:

Բաքու քաղաքի եկեղեցական և դպրոցական գործերի բարեկարգման, ինչպես նաև Սաղիանի վանքի շինարարական ծախսերի համար լրացուցիչ գումարներ հայթաթելու նպատակով թեմակալը 1888 թ. մայիսին մեկնում է Բաքու և Բուդաղյան եղբայրներից, Կարապետ աղա Լալայանից և այլ բարերարներից նյութական անհրաժեշտ օժանդակություն ստանալով՝ հունիսի սկզբներին վերադառնում է Սաղիան և շարունակում շինարարական աշխատանքները, որոնք ավարտվում են հաջորդ տարվա մայիսին¹⁰: Նոր շինության դռան ճակատին թեմակալի կողմից փորագված է եղել. «Յամի տեառն 1888, եւ Հայկական 4380, ի Հայրապետութեան ամենայն Հայոց Ս. Մակարայ, եւ ի կայսրութեան ամենայն ռուսաց Գ. Աղեքսանդրի, տնօրինութեամբ Առաջնորդի Հայոց թեմին Շամախոյ Մեսրոպ Արքեպիսկոպոսի Սմբատեանց Նախիջեւանցոյ եւ վերակացութեամբ վանահօր Սուրբ Ստեփաննոսի վանից Սաղիանի Ստեփաննոս քահանայի Աստապատցոյ՝ շինեցաւ առաջնորդարանս արդեամբք Բագուաբնակ պ. Կարապետ աղայի Լալաեանց, և յարգոյ եղբարց Բուդաղեանց, Ադամեանց, Մելիքեանց, Ասլանեանց, Եղիազարեանց եւ այլով»¹¹:

Սաղիանի վանքի վերաշինումից հետո Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի մտահոգությունն էր ամայի վիճակում գտնվող Մեյսարիի Ս. Աստվածածին վանքի վերանորոգումը և այնտեղ վանական դպրոցի բացումը: Մակար եպս. Բարխուտարյանցը 1890 թ. լինելով Մեյսարի վանքում, դառնացած գրում էր. «Որքան փառաւոր եղած է վանուցս անցեալն, այնքան տխուր և սրտաճմլիկ է այժմեան երևոյթն: Այժմ բոլորովին քայքայման վիճակի մէջ է և վանքս և սենեակներն և պարիսպն: Վանքս ունի հողեր և այգի: Հողերի արդիւնքը Շամախու հոգաբարձութիւնն գործադրում է Շամախու երկսեռ ուսում-

⁷ Նոյն տեղում, էջ 91:

⁸ Նոյն տեղում, էջ 103:

⁹ **Խոլոյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ., Երևան, 1987, էջ 460:

¹⁰ **Սմբատեանց Ս.**, նշվ. աշխ., էջ 126:

¹¹ Նոյն տեղում, էջ 127:

նարանաց համար...»¹²:

Մեյսարիի վանքի շինարարական աշխատանքները ձեռնարկելու համար Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը ակնկալում էր Բաքվի հայ բարերարների աջակցությունը: Թեմակալն այդ առիթով իր բողոքն է հայտնել թեմի հայությանը՝ մեղադրելով նրանց եկեղեցին նման վիճակի մեջ թողնելու համար: «...խե՛ճ Շամախեցիք, ու՛ր էք մոլորվում, զայրույթով գրում է թեմակալը, - է՛ր էք թողնում ձեր բարեպաշտ և քաջ պապերի քաղցր յիշատակը և 1900 տարուայ բարի ճանապարհը, և մուրացկանի նման ուրիշ ազգերից հոգույ ողորմութիւն էք խնդրում, ամօթ ձեզ, ձեր պապերը այնքան դառն ու դժուար միջոցներում, հեթանոս, բարբարոս ազգերի մեջ ապրելով՝ երբեք չմտածեցին անգամ եկեղեցին ուրանալ, այլ իրենց կարմիր արիւնով, նահատակութեամբ պահեցին եկեղեցին և հասցրին իբրեւ սուրբ աւանդ մեզ, իսկ դուք ապերախտ որդիք, այս ազատ միջոցում, քրիստոնէութեան ամենափառաւոր ժամանակամիջոցում, քրիստոնէայ տէրութեան ձեռքի տակ, ուրացաք ու մոռացաք եկեղեցին...ինչպէս Մեյսարու սուրբ Աստուածածնի վանքը ահա բողոքում է ձեզանից...»¹³:

Թեմակալի ջանքերով 1888 թ. ավարտին է հասցվում դեռևս 1876 թ. երկրաշարժի պատճառով խարխալած Վանքաշեն գյուղի Ս. Հովհաննես եկեղեցու վերոնորոգման աշխատանքները¹⁴: Թեմակալը 1888 թ. օգոստոսի 15-ին կարգավորեց նաև առաջնորդարանի շենքի խնդիրը: Այն լուծվեց բաքվաբնակ բարերար Գևորգ Քալանթարյանցի շնորհիվ, որը Շամախում ընդարձակ բակով ու պարտեզով իրեն պատկանող տունը այդ նպատակով տրամադրեց թեմակալին: Թեմակալն այդտեղ ապրեց մինչև իր պաշտոնավարության ավարտը՝ 1894 թ. հունիսը¹⁵:

XIX դարի 80-ական թթ. վերջերը թեմի համար նշանավորվեց երկու կարևոր իրադարձություններով՝ Ալեքսանդր Գ-ի, ապա՝ Մակար Ա Թեղուտեցու 1888 թ. հոկտեմբերին Բաքու կատարած այցելություններով:

Ալեքսանդր Գ-ին արժանավայել դիմավորելու նպատակով Մակար Թեղուտեցի կաթողիկոսի հրահանգով դեռևս սեպտեմբերից Բաքվում էր գտնվում Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը, որը օգոստոսի 20-ի կոնդակով կաթողիկոսից ստանալով անհրաժեշտ ցուցումներ, նախապատրաստվեց ըստ արժանվույնս դիմավորելու բարձրյալ հյուրին: Բաքուն այդ օրերին եռուզեռի մեջ էր. «Արդէն մի քանի օր էր որ Բագուն համարեա պատրաստ էր այս ներկայ հանդիսաւոր աւուրն, բացայայտ երևում էր, որ բոլորը զբաղուած էին միայն մի նպատակով՝ այն է՝ կարելոյն չափ սրտագին դիմաւորելու վաղուց սպասուած արքայական ընտանիքին...ամբողջ քաղաքի շինութիւնները զարդարուած էին թափանցիկ դրօշակներով ու գորգերով...»¹⁶:

Հոկտեմբերի 9-ին Ալեքսանդր Գ իր շքախմբով ժամանեց Բաքու, որին դիմավորող պաշտոնավորների շարքում էր նաև թեմակալ առաջնորդը: Յուրաքանչյուրի հետ ծանոթանալուց հետո կայսրը թեմակալին հարցնում է. «Ուրեմն Բագուի Արքեպիսկո-

¹² Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 172:

¹³ Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 154-155:

¹⁴ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7393, թ. 5:

¹⁵ Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 123:

¹⁶ Նույն տեղում, էջ 410:

պոսն էք» Սմբատյանցի պատասխանը թարգմանաբար ներկայացնում է Գրիգոր քահանան «Այո, բայց Շամախի բնակելով՝ հրամանաւ Վեհափառ Կաթողիկոսի եկել եմ Շամախույ թեմի Հայ ժողովրդեան կողմից շնորհաւորելու Ձեր Կայսերական Մեծութեան շնորհաբեր գալուստը»¹⁷: Ալեքսանդր Գ ուրախ դեմքով շնորհակալական նշան հայտնելով թեմակալին անցնում է առաջ:

Հոկտեմբերի 9-ին ցարի և նրա ընտանիքի պատվին մատուցված ճաշկերույթին բարձրաստիճան հյուրերի թվում հրավիրված էր նաև Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը: Հոկտեմբերի 11-ին Ալեքսանդր Գ-ն իր շքախմբով մեկնեց Բաքվից:

Ալեքսանդր Գ-ին ճանապարհելուց հետո քաղաքը նախապատրաստվեց դիմավորելու հայոց կաթողիկոս Մակար Ա Թեղուտեցուն, որը Թիֆլիսից Բաքու էր ժամանում Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի և բաքվի հայերի հրավերով. «Բագուի հայ հասարակութեան մէջ տիրում էր մի ուրախ և ոգևորած իրարանցում, ամեն ոք սպասում էր, որ ժամը 9-ին Վեհափառ Հիւրին տեսնէ Բագուի մէջ, բազմութիւնը գնալով շատացաւ խոնուելով մեծ հրապարակը, մանաւանդ եկեղեցւոյ շուրջը և մինչեւ երկաթուղին տանող ձիգ ճանապարհը և փողոցները»¹⁸: Քաղաքի հայությունն ապրում էր տոնական տրամադրության մէջ: Փողոցները զարդարվել էին եռագույն դրոշներով, կարպետներով ու ծաղիկներով: «Արձագանք»-ը այդ օրերին գրում էր. «Անցանելի փողոցներում տները զարդարված էին եռագույն դրոշակներով, կարպետներով, և ծաղիկներով, հոգևորական դասը զգեստավորված սպասում էր հրապարակի վերայ, որի ամբողջ երկարութեամբ ձգած էր կարմիր մահուդ. նեղ անցքի երկու կողմով շարուած էին հայ ուսանողուհիները, րեալական դպրոցի հայ աշակերտները և մեր ծխական երկսեռ դպրոցների սաները»¹⁹:

Հոկտեմբերի 22-ին ժամը 12-ին վեհափառ ժամանեց Բաքու: Վեհափառին ուղեկցում էին թեմի նախկին առաջնորդ Թադեոս արքեպիսկոպոսը, Թիֆլիսի և Արցախի թեմերի առաջնորդներ Արիստակես և Կարապետ եպիսկոպոսները, Հաղարծնի վանքի վանահայր Պողոս վարդապետը, գավազանակիր Սահակ վարդապետը և բարձրապատիվ այլ հոգևորականներ: Կայարանում Վեհափառին դիմավորողների առաջին շարքում էին թեմի առաջնորդ Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը, քաղաքագլուխ Դ. Զինովիչը և բարձրաստիճան այլ անձինք: Վեհափառին արժանավայել ընդունելություն ցույց տվեցին նահանգապետը և մահմեդականների մուֆտին:

Առաջին այցը վեհափառը կատարեց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, ուր «կարդացուեցին սահմանեալ աղօթքներն»²⁰: Հոկտեմբերի 24-ին վեհափառն այցելեց նաև Ս. Աստվածածին եկեղեցի, ուր օրհնելով իր շուրջը հավաքված ժողովրդին, քաղաքապետի Դ. Զինովիչի և «Մարդասիրական ընկերության» նախագահ Քր. Անտոնյանցի, Թադեոս և Մեսրոպ արքեպիսկոպոսների և գավազանակիր Սահակ վարդապետի ու-

¹⁷ Նույն տեղում, էջ 407:

¹⁸ Ամենայն Հայոց Վեհափառ Մակար Կաթողիկոսի ճանապարհորդությունը, «Արարատ», 1888, նոյեմբեր, էջ 710:

¹⁹ «Արձագանք», Թիֆլիս, հոկտեմբերի 9, 1888, N 39:

²⁰ Ամենայն Հայոց Վեհափառ Մակար Կաթողիկոսի ճանապարհորդությունը, «Արարատ», 1888, նոյեմբեր, էջ 712:

ղեկցությամբ կառքով մեկնեց քաղաքի Մարիամյան օրիորդաց գիմնազիան: Հաջորդ օրը վեհափառն այցելում է նաև հայոց եկեղեցական ծխական երկսեռ ուսումնարաններ: Նույն օրը երեկոյան վեհափառն այցելեց նաև Բալախանիի նավթահանքերը, ուր նա հանդիպեց գործարանատերերին, որոնց հորդորեց՝ մշակների հետ վարվեն սիրով և չգրկեն նրանց աշխատավարձից²¹: Հոկտեմբերի 24-ին վեհափառը մասնակցեց նաև Բաքվի հայության միջոցներով կառուցվելիք «Եկեղեցական աղքատանոց» շենքի հիմնման արարողությանը և հանդիսավոր կերպով օրհնեց շինությունը, որի արձանագրությունը հետևյալն էր. «Յամի Տեառն 1888. և հայկական 4380. ի Կայսրութեան ամենայն ռուսաց Գ. Աղեքսանդրի Վեհափառ Ս. Ս. Մակար Կաթողիկոսն Ամենայն Հայոց յայցելութեանն ժողովրդոց Բագու քաղաքիս, ի 24 ն հոկտ. անձամբ օրհնեաց զշինութիւն Աղքատանոցիս կառուցելոյ արդեամբք Հայ հասարակութեան քաղաքիս յանուն Աղեքսանդր Բ. Կայսերն ամենայն Ռուսաց, ի 1887 ամէ հետէ»²²: Բաքվից մեկնելուց առաջ տեղի հայությունը վեհափառին նվիրաբերեց 12.000 ռ.²³ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նորոգության նամար: Հոկտեմբերի 26-ին վեհափառը մեկնեց Բաքվից²⁴:

Մտահոգ Շամախու հայոց թեմի վարչատարածքային երբեմնի սահմանների վերականգման խնդրով թեմակալը մտադրվեց թեմի ենթակայության տակ անցկացնել Նուխիի հաջորդությունը, որը 1836 թ. «Պոլոժենիե»-ով հանձնվել էր Արցախի թեմին: Նշենք, որ այդ հարցով ժամանակին Էջմիածնի Սինոդին էին դիմել նաև թեմի նախկին առաջնորդներ Ստեփաննոս եպս. Չախալյանը և Դանիել արքեպս. Շահնազարյանցը, սակայն, նրանց դիմումները ոչ մի արդյունք չէին տվել: 1889 թ. փետրվարի 18-ին Շամախու կոնսիստորիայի անունից Էջմիածնի Սինոդին և Մակար Թեղուտեցուն նմանաբնույթ խնդրանքով դիմեց նաև Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը, որը նամակում հիմնավորելով Նուխիի հաջորդության՝ Շամախու թեմին միավորվելու անհրաժեշտությունը, գրում էր. «Թեմական Ատեանս ստիպեալ գտանի յայտնել ամենախոնարհաբար զվերոգրելոցն Սինոդիտ Ս. Էջմիածնի և Սրբազնագոյն կաթողիկոսի Ամենայն Հայոց տան Մակարայ և խնդրել զբարեհաճաք տնօրենութիւն յաղագս միավորելոյ ընդ վիճակիս Շամախույ զհաջորդութիւն Նուխույ»²⁴: Սակայն այս անգամ ևս խնդրանքը չբավարարվեց:

Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի ուշադրությունից դուրս չեն մնացել նաև Անդրկասպյան մարզի եկեղեցական գործերի կազմակերպման աշխատանքները: Նրա կողմից 1889 թ. Աշգաբադում հոգևոր հովիվ է կարգվում Մեսրոպ քին. Ոսկանյանցը, որին հանձնարարվեց Կրասնավոդսկ, Մերվ, Բուխարա, Դըզլ-Արվադ, Սամարղանդ և Տաշքենդ քաղաքներում կառուցել եկեղեցիներ, իսկ նրանց կից՝ դպրոցներ²⁵: 1890 թ. արդեն Աշգաբադում գործող եկեղեցուն կից գործում էր եկեղեցական ծխական դպրոց: Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը, ընդառաջելով Աշգաբադի հայ հասարակության

²¹ «Մուրճ», Թիֆլիս, 1898, N 2-3, էջ 373:

²² Մմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 381-382:

²³ Մատթ. Ի »Օմմ:

²⁴ ՀԱՄ, Ժ. 56, ց.1, գ. 8468, թ. 3:

²⁵ *Ādēāiḏyō Ā.*, К истории армянской церкви в Туркмении (конец XIX- середина XX вв.), ЛЗ9, Еրևան, 1991, N 6, էջ 9.

խնդրանքներին, տեղի եկեղեցու համար 1891 թ. քահանա է ձեռնադրում Ղուբայի և Շամախու ուսումնարանների նախկին ուսուցիչ, շուշեցի Խաչատուր քին. Փանյան-ցին²⁶: Թեմակալի նախաձեռնությամբ և տեղի հայության միջոցներով Անդրկասպյան մարզում երկրորդ եկեղեցու շինարարական աշխատանքները սկսվում են 1890 թ.՝ Մերվ քաղաքում²⁷, իսկ 1891 թ. Ղըզլ-Արվադում արդեն գործում էր եկեղեցի-մատուռ²⁸: Ընդհանուր առմամբ 1896 թ. դրությամբ Անդրկասպյան մարզում արդեն գործում էին երեք եկեղեցիներ. Աշգաբադում, Ղըզլ-Արվադում և Մերվում²⁹:

Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը պարբերաբար շրջագայում էր թեմի տարածքում, տեղում հոգում և անհրաժեշտ լուծում տալիս կուտակված հարցերին: Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի թեմակալության օրոք ավարտին հասցվեցին նաև Ղուբա գավառի Քիլվար գյուղի եկեղեցու վերականգման աշխատանքները: Եկեղեցին օծվեց 1890 թ. ձմռանը Շամախու Մայր եկեղեցու քարոզիչ Մակար եպս. Բարխուտարյանցի: Արարողությանը ներկա էր նաև գավառապետ Ստապչանսկին³⁰:

Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի օրոք Բաքու քաղաքի հայկական գերեզմանատանը սկսեց կառուցվել երրորդ եկեղեցին, որի նախաձեռնողը և դրամական միջոցներ տրամադրողը Բաքվում հաստատված թիֆլիսեցի վերաբնակ հայազգի Մարիամ Գրիգորյան Միքատձեն էր: Թեմակալին 1891 թ. հուլիսի 23-ին հղված նամակում Մարիամ Գրիգորյանն իր մտադրությունը պայմանավորում էր նրանով, որ ի տարբերություն հայերի, քաղաքի ռուս բնակչությունն ուներ մի փոքրիկ եկեղեցի, ուր կատարում էին ննջեցյալների թաղման կարգը, և քանի որ քաղաքի եկեղեցիներում արգելված էր կատարել ննջեցյալների թաղման կարգ, ուստի ցանկալի կլիներ որպեսզի հայերը ևս իրենց գերեզմանատանը ունենային նմանատիպ եկեղեցի, ուր կարող էին նաև պատարագ մատուցել³¹: Առաջարկը ընդունվեց թեմակալի կողմից, և առանց հապաղման սկսվեցին շինարարական նախապատրաստական աշխատանքները: Ուշագրավ է, որ թեմակալը կառուցվելիք եկեղեցու ճարտարապետին հանձնարարեց այն կառուցել հայոց երբեմնի մայրաքաղաքներից մեկի՝ Անիի եկեղեցիների ճարտարապետական հորինվածքների ոճով³²:

Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը դասվում է թեմի այն առաջնորդների շարքում, որոնց ուշադրությունից երբեք դուրս չեն մնացել թեմի աղքատ խավի սոցիալական վիճակի բարելավման հարցերը: Վերջիններիս խնամելու և տարրական պայմաններն ապահովելու նպատակով թեմակալը ձեռնարկեց Բաքու քաղաքում Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից հիմնել «Եկեղեցական աղքատանոց», որը հիմնականում պետք է զբաղվեր Բաքու քաղաքի հայ աղքատ տարրի խնամության հարցերը լուծելու խնդրով:

²⁶ «Նոր-դար», Թիֆլիս, 1891, դեկտեմբերի 19, 1891, N 179:

²⁷ Նույն տեղում, էջ 10:

²⁸ **Սմբատյանց Մ., նշվ. աշխ., էջ 39:**

1892 թ. հոկտեմբերին ցարական արքունիքի որոշմամբ Միջին Ասիայի հայկական եկեղեցիները Շամախու հայոց թեմի տնօրինումից փոխանցվում են Աստրախանի հայոց թեմական վարչության իրավասությանը (Григорян В., նշվ. աշխ., էջ 10):

³⁰ **Բարխուտարյանց Մ., նշվ. աշխ., էջ 140:**

³¹ ՀԱՍ, ֆ. 56, ց. 1, գ. 8720, թ. 1:

³² Ὁ ἁγιὸς Ἰ » Ὁ ἁγιὸς:

«Եկեղեցական աղքատանոց»-ի շինարարական աշխատանքներն ավարտվեցին 1891 թ.³³:

Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի Շամախու թեմում ծավալած բազմաբնույթ գործունեության կարևորագույն արգասիքներից էր հոգևոր մտավոր-մշակութային կյանքում առաջացած աննախընթաց շարժումը: Նա գործուն և անմիջական մասնակցություն էր ունենում թեմում մի շարք դպրոցների բացման և մշակութային մյուս ոլորտների կյանքի աշխուժացմանը, այդ թվում և թատերական: «Նոր-դար»-ի էջերում գետեղված հաղորդումներում խոսվում են թեմակալի կողմից այդ ուղղությամբ նախաձեռնած միջոցառումների մասին: Նմանօրինակ փաստերից է առաջնորդի գրավոր առաջարկությամբ 1891 թ. նոյեմբերի 30-ին տրված երեք ներկայացումները, որոնց ժամանակ բեմադրվում են «Արշակ Բ» ողբերգությունը և «Երեք քաջեր» կոմեդիան: Ուշագրավ է այն հանգամանքը, որ ներկայացումներից հավաքված գումարները թեմակալի հորդորանքով տրամադրվել են Ռուսաստանի սովյալների օգտին կազմակերպվող հանգանակությանը³⁴:

Հարկ է նշել, որ թեմում հոգևոր վարչական գործերի կառավարության մեջ դեռևս բացակայում էր կանոնավորությունը, որի հետևանքով շատ դեպքերում ծխական քահանաները գործում էին մեկը մյուսի գործերին խառնվելով: Այդ խնդիրը հատկապես ավելի սուր էր Բաքվում, քանի որ բուն քաղաքում և արվարձաններում (Բայել, Սաբունչի, Բալախան, Սև քաղաք) արդեն իսկ ստվարացել էր հայության թիվը, սակայն, քաղաքը դեռևս գտնվում էր ծխական մեկ համայնքում, որի պատճառով մկրտությունների և այլ արարողությունների ժամանակ քահանաներին դիմելը որոշակի ժամանակ էր պահանջում: Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը եկեղեցական-ծխական գործերում սահմանադրական կարգ մտցնելու նպատակով որոշեց քաղաքը բաժանել ծխական համայնքների: «Աղքատ ժողովրդի հոգսն ու ցարը քաջողը պետք է լինի հոգևոր հովիւր, բայց Բագուում դժբախտաբար խեղճերը զրկուած են նոյնիսկ ամենաանհրաժեշտ հոգևոր միջոցարանքից: Վաղուց հայտնի է, որ քաղաքի հայ ժողովուրդը ծխի չէ բաժանված, ամբողջ Բագուն մի մեծ ծուխ է մի քանի քահանաներով, որոնց թիւը բաւական չէ ամբողջ ժողովուրդը հովուելու»³⁵, -գրում է այդ օրերին «Արձագանք»-ը: 1893 թ. ապրիլի 7-ին ծխաբաժանության կամ թաղաբաժանության վերաբերյալ կազմած նախագծի համաձայն Բաքու քաղաքը բաժանվեց ծխական վեց թաղերի միջև, իսկ յուրաքանչյուր թաղում բնակվող հայերը անցան մեկ քահանայի հովվության ներքո³⁶:

Նշված ժամանակահատվածում եկեղեցի և քահանա ունենալու խնդիրն առկա էր նաև Կոկիսոն (Գյոկչա) գետակի աջ ափում 1873-74 թթ. հիմնված առևտրական կենտրոն հանդիսացող Գյոքչա գյուղաքաղաքում, ուր 1893 թ. տվյալներով արդեն ապրում էր 40 տուն հայ բնակչություն³⁷: Այդտեղ եկեղեցի կառուցելու խնդրով տեղի հայությունը 1892 թ. դիմում է Մեսրոպ արքեպս. Սմբատյանցին. «Գյոքչա քաղաքի գոյությունը

³³ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8616, թ. 1:

³⁴ «Նոր-դար», Թիֆլիս, 1891, դեկտեմբերի 7, N 174:

³⁵ «Արձագանք», Թիֆլիս, հունվարի 3, 1893, N 2:

³⁶ Մմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 395:

³⁷ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8865, թ. 4:

արդեն մոտ է 20 տարւոյն: Այդքան ժամանակներում տեղումս սակայն չկա եկեղեցի, ոչ էլ աղոթատուն: Ժողովուրդը տոն և զատկի օրերին գնում է հարևան գյուղերը»³⁸: Ընդառաջելով տեղի հայերի խնդրանքին, թեմակալը 1893 թ. դիմում է էջմիածնի Սինոդին, որպեսզի նա միջնորդի Բաքվի նահանգապետին՝ այդտեղ եկեղեցի կառուցելու թույլտվությունը ստանալու համար. «...խնդրին գտնօրէնութեան սինոդիդ վասն շինելոյ գեկեղեցի կամ զաղօթատուն անտի ի Գեոքչայ գիւղաքաղաքի, որով ընտանեւեր հայ բնակիչք են 40 տուն, ժողովածու ի Շամախի, Նուխայ ու ի շրջակայ գիւղերաց»³⁹: Որքան էլ որ էջմիածնի Սինոդը դիմել էր նահանգապետին, սակայն նրա կողմից ուշանում էր եկեղեցու կառուցման թույլտվությունը: Ելնելով վերոնշյալից, Գյոկչա գյուղաքաղաքի հայությունը իր ուժերով կառուցում է մի աղոթատուն, սակայն, իշխանություններն այս դեպքում ևս թույլ չեն տալիս բացել այն: Խնդրի լուծման գործում անսալով Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսի միջնորդությանը, վերջիններս դիմում են նրա օգնությանը և հայտնում նահանգապետի հանդեպ ունեցած իրենց զայրույթը: «Վերջին տարիներին Կովկասի քաղաքներից հայ առևտրականների թիվը ավելանում է իրենց ընտանիքներով և ներկայումս ունի 250 հոգի ծուխ: Թեև շինել ենք մի աղոթարան, սակայն տեղի ոստիկանությունը գրում է նահանգապետին, իսկ սա էլ հրամայում է թույլ չտալ մեզ բացել աղոթատունը: Ինչ է սա նշանակում, չէ որ մենք գոյություն ունենք գլխավորապես եկեղեցով»⁴⁰, - ասված է նամակում: Նույն թվականի նոյեմբերին նմանաբնույթ խնդրանքով կաթողիկոսին է դիմում նաև Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը՝ ակնկալելով նրա միջնորդությունը խնդիրը կարգավորելու հարցում: Նամակում մասնավորապես ասված է հետևյալը. «Թեև խնդրեցին Սինոդին, որպեսզի միջնորդի սա բարձրագույն քաղաքական իշխանութեան ի թոյլատրել Գյոկչայի հայոց կառուցել գեկեղեցին, բայց մինչ օրս թույլտվություն չի ստացվել: Ուստի խնդրում ենք ի Ձերդ վեհափառն ի միասին ժողովրդոց Գյոքչա գյուղաքաղաքի շնորհ անել հրամայել Սինոդին՝ կրկնել զմիջնորդութիւն այս քաղաքական իշխանութեան, որպեսզի Գյոկչայի հարք կարասցին փութով կառուցանել զխնդրեալ եկեղեցին և մխիթարութիւն հոգևորապես շնորհիւ Ձերդ վեհափառութեան»⁴¹: Խնդրի կարգավորումը ձգձգվեց նաև հետագայում, այդ է վկայում 1894 թ. փետրվարին Գյոքչա գյուղաքաղաքի հայության՝ կաթողիկոսին հղված խնդրագիրը, ուր ասված է, որ իշխանությունները դեռևս թույլ չեն տալիս բացելու աղոթատունը⁴²: Հարկ է նշել, սակայն, որ հարցն այդպես էլ չկարգավորվեց:

Շարունակելով եկեղեցաշեն գործունեությունը, Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը թեմում ձեռնարկեց նաև Սաղիանի վանքի կիսատ մնաց շինարարական աշխատանքները: 1893 թ. բաքվաբնակ Նիկոլայ Թադոսյանցի տրամադրած գումարներով նա կառուցում է Ս. Ստեփաննոս Նախավկա եկեղեցու կաթողիկեն: Եկեղեցու արևելյան ճակատին այդ մասին փորագրված էր. «Յամի Տեառն 1893. և հայկական 4385. ի հայրա-

³⁸ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8865, թ. 1:

³⁹ ՄձՁԿՅ Ի ՄձՁԿՅ, Ա. 4:

⁴⁰ ՄձՁԿՅ Ի ՄձՁԿՅ, Ա. 11:

⁴¹ ՄձՁԿՅ Ի ՄձՁԿՅ, Ա. 10:

⁴² ՄձՁԿՅ Ի ՄձՁԿՅ, Ա. 16:

պետության ամենայն Հայոց Ս. Մկրտչի, տնօրէնութեամբ առաջնորդի թեմիս Մեսրոպ արքեպիսկոպոսի Սմբատեանց շինեցաւ կաթողիկէն վանիցս վեց հարիւր րուբլի տրօք բազումաբնակ պարոն Նիկոլայի Ստեփանեան Թադոսեանց ի յիշատակ հանգուցեալ Մարիամու դստեր հօրեղբօր իւրոյ հանգուցեալ Զաքարիայի Թադոսեանց»⁴³: Կաթողիկէի վեղարին ամրացվում է բաքվաբնակ գերմանացի Զեյց եղբայրների 1885 թ. նվիրած մեծադիր խաչը: Վանական շենքի շինարարական աշխատանքների ընթացքում թեմակալը նույն թվականին սալահատակում է նաև եկեղեցին⁴⁴:

1894 թ. Բաքվում Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի կողմից օրհնվում է հայոց գերեզմանատանը կառուցվելիք եկեղեցի-մատուռի արձանագիր մարմարյա հիմաքարը, որի վրա փորագրված է եղել հետևյալը. «Յամի Տեառն 1894. և հայկական 4386. զհիմն սուրբ Յարութեան տաճարիս՝ շինելոյ ծախութ Տփիսիսեցի հայագգի Մարիամու Գրիգորեան Միքատձէ, էօծ առաջնորդ Բագուայ նահանգի Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանց»⁴⁵: Կառուցվելիք եկեղեցի-մատուռի տեղի ու դիրքի վերաբերյալ ուշագրավ բնութագրում է տվել թեմակալը՝ գրելով. «Մի գեղեցիկ տեսարան կը լինի Բագուին նաեւ մեր հայոցս գերեզմանատան փոքրիկ մատուռն, որ ամբողջ քաղաքից երեւում է իբրեւ զարդ և թագ գլխի վրայ դրած՝ բարձրութեան մի լաւ երեւացող տեղում, որ այժմ շինում է...»⁴⁶:

Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի թեմակալության տարիների կարևորագույն ձեռնարկներից էր Բաքվում «Եկեղեցական աղքատանոց»-ի աշխատանքների կանոնակարգումը: Այդ նպատակով նրա և հոգաբարձուների խորհրդի կողմից մշակվում և 1894 թ. փետրվարի 28-ին Էջմիածնի Սինոդին և Ներքին գործոց նախարարի հաստատման է ներկայացվում 12 հոդվածից բաղկացած կանոնադրությունը: Ըստ որի «Եկեղեցական աղքատանոց»-ը պետք է ղեկավարվեր 8 հոգուց բաղկացած հոգաբարձուների խորհուրդը, որի անդամներից 3-ը նշանակվում էր թեմակալ առաջնորդի կողմից, իսկ մնացյալին ընտրում էին ծխականները, որոնց դարձյալ հաստատում էր թեմակալը: Հոգաբարձուներն իրենց միջից ընտրում էին նախագահ, իսկ ընդհանուր աշխատանքների ղեկավարումը տնօրինում էր թեմի առաջնորդը⁴⁷:

Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի ջերմեռանդ գործունեությունը թեմում չի ընթացել միայն թեմակալ առաջնորդի պարտականության սահմաններում: Նա նաև զբաղվում էր գիտական լայն գործունեությամբ: Թեմակալի պաշտոնում հաստատվելուց հետո նրան քաջալերել և հետևյալ խորհուրդն էր տվել վերջինիս գիտական գործընկեր պրոֆ. Քերովրե Պատկանյանը, որը նամակագրության մեջ գտնվելով Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի հետ՝ գրում էր. «Հուսալով, որ այդ նոր նշանակությունը չի հեռացնիլ Ձեր Սրբազնությունը այն սեպանկար խորագրերից և Ռուսաստանի սահմաններում գտած արձանագրություններից, որոնց հետ ընդմիշտ արդեն կապված է Ձեր ա-

⁴³ Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 79:

⁴⁴ Նույն տեղում, էջ 78:

⁴⁵ Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 380:

⁴⁶ Նույն տեղում, էջ 379-380:

⁴⁷ ՀԱՍ, ֆ. 56, ց. 1, մաս 7, գ. 8616, թ. 2, տե՛ս նաև Աբգար Աւագ քահանայ Տեր-Հարությունեան, Հայ գաղթականները Բագու և նրանց վերադարձը, էջ 12:

նունը»⁴⁸։ Թեմակալի պաշտոնում Մեսրոպ արքեպս. Սմբատյանցին խրախուսում էր նաև մեծավաստակ գիտնական Հ. Ղ. Ալիշանը. «Երբ իմացայ Սրբութեանդ կարգումն ի դիտապետութիւն Շամախոյ, փորձութիւն մի եկաւ ինձ՝ արդեօք շնորհաւորեմ թէ չէ, տարակուսելով, թէ որ հաճոյ է Ձեզ, Էջմիածնի բնակութիւն՝ եթէ այդ նոր վիճակդ, յետոյ ընթերցայ ի լրագիրս Տիփսիսու, այցելութիւնները ընդարձակ թեմիդ, զոր հոգեջան խնամօք պայծառացնիս և պայծառանաս»⁴⁹։ Եվ իսկապէս Ք. Պատկանյանի և Ղ. Ալիշանի հույսերն արդարացան, և Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը, բացի իր առաջնորդական տքնաջան պաշտոնից, մանրագնին գրել է նաև Շամախու հայոց թեմի տնտեսական, տեղագրական, ժողովրդագրական և մշակութային նկարագրությունը և ձեռնարկել «Նկարագիր Շամախոյ թեմի» մեծածավալ աշխատությունը, որը և տպագրվեց 1896 թ. Թիֆլիսում։ Այն ժամանակին բարձր գնահատականի է արժանացել բանասերների և հայագետների կողմից։ Ղ. Ալիշանը թեմակալին հասցեագրված իր նամակներից մեկում. «Սիրալիր շնորհակալութեամբ ընդունեցայ և հաճութեամբ ու զուարճութեամբ ընթերցայ Շամախիդ... Շատ տեսակ իրաց տեղեակ կընէ և ծանուցիչ անձանց... Ես ինձ պիտանի տեղեկությունք գտայ ի գրքիդ...»⁵⁰։ Վերոգրյալ մեջբերումը ակնհայտորեն ապացուցում է, որ Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը մանրագնին է ուսումնասիրել Շամախու թեմի նկարագրությունն իր բոլոր կողմերով և իրավամբ բարձր գնահատականի է արժանացել։

Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը թեմակալության վերջին շրջանը անցկացրեց վատառողջ վիճակում։ Հիվանդության պատճառով 1894 թ. հունիսին իր դիմումի համաձայն հրաժարվում է թեմակալի պաշտոնից և բուժման նպատակով մեկնում Թիֆլիս։ Ապաքինվելուց հետո վերադառնում է Մայր Աթոռ և նշանակվում որպէս կաթողիկոսական տեղապահ⁵¹։

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել, որ իր աստվածահաճո, ազգանվեր ու եկեղեցաշեն գործունեությամբ Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը մեծ ավանդ է թողել Շամախու հայոց թեմում։

⁴⁸ Մատենադարան, Գյուտ եպիսկոպոսի արխիվ, թղթ. 2, վավ. 33։

⁴⁹ ՍճԹՄՅ Ի ՍճԹՄՅ, Ի 3 Ի. 13։

⁵⁰ ՍճԹՄՅ Ի ՍճԹՄՅ, Ի 3 Ի. 21։

⁵¹ «Արարատ», 1895, մարտ, էջ 139։

*ԼՈՒՍ ԴՈՒՈՒԽԱՆՅԱՆ**Ճարտարապետության դոկտոր***ՄԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՔԱՆԴՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ****ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ**

Այսօր մեր խաթարված արժեքների վերագտման անհրաժեշտության հրամայականով մենք հաճախ ենք անդրադառնում մեր քաղաքամայր Երևանի ճարտարապետական հուշարձանների անուրախ ճակատագրի խնդրին: Անդրադառնում ենք մտահոգությամբ ու տագնապով, քանզի տասնամյակների ոչ միայն քաղաքաշինական, այլև սոցիալ-քաղաքական, բարոյական բացթողումները կանգնեցրել են մեզ քաղաքի հուշարձանների անմխիթար վիճակն արձանագրող փաստի առջև: Եվ ի հետևանք՝ անտեսված էկոլոգիական խնդիրները մեր կեցության գրեթե բոլոր ոլորտներում, նաև հոգևոր ոլորտում: Իսկ քաղաքը տասնամյակ առ տասնամյակ, ասես, կորցնում է իր հիշողությունը: Այն արդեն իսկ մեծ մասամբ կորցրել է իր պատմական նկարագիրը՝ անհետացել են հոգևոր մշակույթի բազմաթիվ հուշարձաններ, թաղամասեր, փողոցներ և, ամենակարևորը, պատմական միջավայրը: Քաղաքը կորցնում է իր պատմությունը, իսկ դա ողբերգություն է:

Այսօր մտահոգ տագնապի այդ զգացումը՝ եղած հուշարձան-մասունքները աչքի լույսի պես պահպանելու, նրանց նկատմամբ հոգածու վերաբերմունք ցուցաբերելու, եղածը կորստից փրկելու համար մեր բոլոր ուժերը համախմբելու հետ մեկտեղ մեզ պետք է մղի փորձել վերագտնել մեր կորցրած հիշողությունը, վերհիշել, վերականգնել ոչ վաղ անցյալի բարբարոսության զոհ դարձած մեր մշակութային արժեքների պատմությունը:

Ժամանակն է հիշել մեր կորցրած ազգային արժեքները, քանզի նույնիսկ ոչնչացվելով իսկ նրանք չեն մոռացվում: Նրանք մնում են ժողովրդի հիշողության մեջ: Վերհուշը քո ազգի մշակութային կորուսյալ արժեքների մասին անցնում է սերնդեսերունդ, հասնում նաև նոր սերնդին, նույնիսկ նրանց, ովքեր չեն տեսել այդ արժեքները: Եվ եթե խոսքը հին Երևանի մշակութային, ճարտարապետական արժեքների մասին է (իսկ հենց դրանց մասին է ներկա հրապարակման նյութը), ապա հարկ է, վերադարձնելով մեր քաղաքի հիշողությունը, փորձել մասունք առ մասունք, էջ առ էջ մոռացությունից հանել ու շրջանառության մեջ դնել Երևանի ճարտարապետական հուշարձանների կորստյան պատմության դրվագները, փաստերը, իրողությունները:

«Մենք վրդովվում ենք այն բանի համար, ինչ կատարվեց մեր քաղաքների, մեր պատմական հուշարձանների հետ: Բայց մենք վրդովվում ենք ինչ-որ տնայնագործորեն: Պետք է սկսել կորուստների գիտական ուսումնասիրությունը, փորփրել արխիվները, պարզել, թե ի՞նչ է եղել: Ինչպե՞ս է այդ եղել, ո՞վ ոչնչացրեց ժողովրդի մշակույթը... Վերածնել այն կարելի է միայն արժեքավորելով կորուստը: Կրկնում եմ՝ սա օրվա կենսական խնդիր է՝ ուսումնասիրել և վերականգնել կորուստների (քանդանքներ, վաճառած-

ներ) պատմությունը», - ասում է Դմիտրի Լիխաչովը:

Ոչ միայն անցյալի, այլև այսօրվա համար, այսօր սխալներից զերծ մնալու համար:

«Հին աշխարհի» ոչնչացման գործընթացը 1920-ական թվականներից սկսած բնորոշ էր ոչ միայն Հայաստանի քաղաքներին. այն տարածված էր ամբողջ Խորհրդային Միության մեկ: Այդ տարիներին երկրում տեղի էր ունենում հոգեբանական անհասկանալի ու անհավատալի մի երևույթ՝ ոչնչացվում էին բազմաթիվ տաճարներ ու եկեղեցիներ, որոնք ունեին բարձր գեղարվեստական արժեք: «Խելագարված ամբոխները» հայտարարում էին, որ ցանկանում են կառուցել իրենց սեփական պալատներն ու տաճարները, իսկ «ուրիշի ուսերից վերցրածն» իրենց պետք չէ: Մշակույթի արժեքների հանդեպ այդ նիհիլիստական վերաբերմունքը, «տարերային գրոհի» այս ալիքը տանում էր դեպի արվեստի ու ճարտարապետության բազմաթիվ գլուխգործոցների ոչնչացման: Ահա 30-ական թվականներին այդ ալիքին զոհ դարձավ նաև հայ հնագույն ճարտարապետական մի հուշարձան՝ Երևանի Պողոս-Պետրոս եկեղեցին: Խնդրո առարկա հրապարակման նյութը հին Երևանի այդ հիասքանչ հուշարձանի՝ Պողոս-Պետրոս եկեղեցու ոչնչացման պատմությունն է:

Ուրեմն թող մեր վերջին տասնամյակների արժեքների ավերման պատմության այդ տխուր էջը ներկայացնեն դիվանի փաստաթղթերը, թող այդ փաստերը, փաստաթղթերը, որոնք հաճախ ավելի պերճախոս են ամենախիստ գնահատականից, ընթերցողին հասցնեն ժամանակի պաշտոնական մտայնությունը, ավանդամերժ մթնոլորտը, իսկությունը, ինչպես որ եղել է:

* * *

Պողոս-Պետրոս եկեղեցին գտնվում էր Աստաֆյան փողոցում և կազմում էր Երևանի ու նրա ուրվագծի անբաժանելի մասը: Բազիլիկ տիպի, եռանավ այդ ճարտարապետական հուշարձանը կառուցված էր սրբատաշ տեղական սև տուֆից, ինչպես քաղաքի կառույցների մեծ մասը: Տեղադրված էր փողոցի մակերեսից փոքր-ինչ ցածր: Գլխավոր մուտքը գտնվում էր հյուսիսային կողմում, որի երկփեղկ երկաթե դուռը պատմական էր՝ այն Հին Բայազետի բերդի դուռն էր, որը 1835 թվականին նվիրվել էր եկեղեցուն:

Դարերի ընթացքում եկեղեցին բազմաթիվ վերանորոգումների էր ենթարկվել:

Հնագետ Կարո Ղաֆադարյանի վկայությամբ «Պողոս-Պետրոս եռանավ տաճարը» Երևանի հնագույն ու ամենամեծ եկեղեցին էր, և նրա գոյությունը Երևանում ապացույցն էր այն բանի, որ Երևանը 5-6-րդ դարերում Հայաստանի աչքի ընկնող բնակավայրերից մեկն է եղել, և, ըստ երևույթին, Պողոս-Պետրոսն այն ժամանակ քաղաքի միակ տաճարը չէր, այլ այնտեղ եղել են նաև այլ եկեղեցիներ, որոնց գոյության մասին ունենք անուղղակի, բայց կարևոր տեղեկություններ:

Երևանի 1924 թվականի նոր հատակագծում ակադեմիկոս Թամանյանը եկեղեցու մոտ նախագծեց կիսաշրջանաձև հրապարակ՝ ապահովելով հուշարձանի լավ տեսանելիությունը: Նույն հրապարակին էր նայելու նաև պարսկական ճարտարապետությանը բնորոշ Շահանի մզկիթը: Այսպիսով, ըստ Թամանյանի նախագծի՝ վերակառուցվող մայրաքաղաքում արժանին էր մատուցվում պատմական հուշարձաններին: Իրոք, այ-

սօրվա «Մոսկվա» կինոթատրոնի կիսաշրջանաձև հրապարակը, ըստ Թամանյանի նախնական մտահղացման, պետք է ունենար բոլորովին այլ տեսք և բովանդակություն:

30-ական թվականների սկզբներին քաղաքի իշխանությունները որոշեցին քանդել եկեղեցին կինոթատրոնի շենք կառուցելու համար: Հենց սկզբից հանրության բազմաթիվ ներկայացուցիչներ, մտավորականներ հանդես եկան ի պաշտպանություն հուշարձանի: Ալեքսանդր Թամանյանը, որը հուշարձանների պահպանության կոմիտեի ստեղծման նախաձեռնողներից մեկն էր և նրա առաջին նախագահը, 1930 թ. փետրվարի 6-ին թվակիր նամակով դիմեց լուսժողկոմի նախագահ Ա. Եղիազարյանին:

***Լուսավորության Ժողովրդական Կոմիսար
ընկ. Եղիազարյանին***

Կոմիտես տեղեկացել է, որ Երևանի քաղխորհուրդը որոշել է քանդել Պողոս-Պետրոս եկեղեցին, որ գտնվում է Աբովյան փողոցի վրա, ընդ. 52:

Կոմիտես իր պարտքն է համարում հայտնել Ձեզ, որ վերոհիշյալ եկեղեցին կառուցված է 1679 թ. մեծ երկրաշարժից անմիջապես հետո: Նա Երևանի ամենահին շենքերից մեկն է, որովհետև երկրաշարժը հիմնովին ոչնչացրել էր քաղաքի բոլոր կառուցվածքները: Բացի դրանից, նա ունի իր վրա բազմաթիվ արձանագրություններ, քանդակներ, պատմական դուռը (Հին Բայազետից բերված) և իր ամբողջությամբ ներկայացնում է 17-րդ դարու հայ ճարտարապետության պատկերը: Նրա կործանումը մի զգալի բաց պիտի առաջացնի Երևան քաղաքի շինարարության պատմության համար: Ուստի և Կոմիտեն խնդրում է Ձեզ միջնորդել ժողկոմխորհի առաջ թույլ չտալ այդ հուշարձանի քանդումը, մանավանդ որ նրա կանգուն մնալը չի խանգարում նրա շուրջը քաղաքացիական շենքեր կառուցելուն Աբովյան փողոցի և հրապարակի կողմից:

Նկատի ունենալով այդ հուշարձանի կարևորությունը՝ Կոմիտես վաղուց որոշել էր մանրակրկիտ կերպով ուսումնասիրել, չափազորել և լուսանկարել, և այդ որոշումը նա իրագործելու է անմիջապես:

***Հուշարձանների պահպանության
կոմիտեի նախագահ՝ Ա. Թամանյան
Գիտական քարտուղար՝ Աշխ. Քալանթար
6.02.1930 թ.***

ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 92, թ. 1

Թամանյանին 21.2.1930 թ. գրությամբ պատասխանեց քաղխորհրդի նախագահ Գ. Հանեսօղլյանը: Պատասխանը, մարտնչող տգիտությանը հատուկ իր անվերապահությամբ, միանշանակ էր ու վերջնագրի տեսք ուներ:

«Հայտնում ենք, որ Պողոս-Պետրոս եկեղեցին վերացնելու մասին կան բազմաթիվ բանվորական կազմակերպությունների որոշումներ, որոնք հավանություն են ստացել քաղխորհրդի նախագահության կողմից: Հիշյալ եկեղեցին ճիշտ է, չի ընկնում քաղաքի հատակագծման տակ, սակայն այդ դեռ չի նշանակում, որ քաղխորհուրդը կարող է հան-

դուրժել, որպեսզի այդ եկեղեցին կանգուն թողնվի իր շրջակայքի կառուցվելիք նոր տների մեջ»:

**Նախագահ՝ Հանեսօլյան
Քարտուղար՝ Եղիազարյան**

ՀԱՄ, ֆ. 113, ց. 1, գ. 551, թ. 3-4

Սկսեցին քանդել մի հուշարձան, որը դարեր շարունակ զարդարում էր Երևանը: Իսկ մարդիկ, ժողովուրդը չէր ուզում բաժանվել իր հիշողությունից, հավատից, իր մշակույթից: Եկեղեցին դիմադրում էր: Երևանի հնաբնականներն այսօր էլ, ավելի քան կես դար անց, սրտի կսկիծով հիշում են եկեղեցու քանդման այդ սրտաճմլիկ տեսարանը, հիշում են քանդման այդ պատկերը դիտող թաքուն լացող մարդկանց, որ անկարող դիմադրելու այդ բարբարոսությանը, լոկ լռելայն արցունքներն էին սրբում...

Ինչևէ, դարեր գոյատևած կառույցը քանդվում էր փութաջանորեն. արագ քանդելու համար կազմակերպվում էին նույնիսկ շաբաթօրյակներ և պախարակում նրանց, ովքեր չէին ուզում մասնակցել այդ բարբարոսությանը: Բայց ահա քանդելիս ի հայտ եկան նոր արժեքներ, որոնց մասին մինչ այդ տեղյակ չէին:

Այդ առիթով Թամանյանը 2.2.1930 թ. թվակիր մի նոր նամակով դիմեց լուսծողկոմի նախագահին:

**ԼՈՒՍԺՈՂԿՈՄ քնկ. Եղիազարյանին
Պատճենը՝ քաղխորհրդի նախագահ՝
քնկ. Հանեսօլյանին
2.2.1930 թ.**

Պողոս-Պետրոս եկեղեցու քանդման ընթացքում Հնությունների պահպանության կոմիտեի կողմից կատարվող հետազոտական աշխատանքների միջոցին պարզվեց, որ այդ շենքն ունի իր մեջ մի շարք կարևոր պատմահնագիտական արժեքներ՝ բարելիեֆներ, արձանազրություններ և մանավանդ միանգամայն բացառիկ բնույթ ու եզակի գիտական արժեք ներկայացնող ֆրեսկոներ՝ որմնանկարներ, որոնցով ծածկված են եղել շենքի պատերը: Եկեղեցին վերաշինված է 17-րդ դարու վերջին, Երևանի մեծ երկրաշարժից (1679 թ.) անմիջապես հետո, սակայն այժմ վերին սվաղը պոկելուց հետո պարզվում է, որ ներկա շենքի մի խոշոր մասը մնացած է երկրաշարժից առաջ եղած եկեղեցուց, որը պահպանել է մի շարք բնորոշ տվյալներ (ըստ տիպի, շինելակերպի և այլն) նրա հիմնավորման ժամանակը հասցնելու 5-րդ - 6-րդ դարերին:

Եկեղեցու ներսում արևելյան պատի վրա աբսիդի երկու կողմերում, արտաքին նկարների տակ մեկը մյուսի հետևից բացվեցին 5 տարբեր սվաղի շերտեր զանազան դարերի պատկանող, որոնց վրա գտնվում են յուրաներկ և ջրաներկ ֆրեսկոներ:

Վերևից երկրորդ շերտը պատկանում է նորոգման ժամանակին (17-րդ դարու վերջին), իսկ 3-րդ շերտը թվագրված է և կրում է հայոց 580 թվականը, որ համապատասխանում է 1131 թվականին, դրա տակ գտնվող 4-րդ և 5-րդ շերտերն իրենց գեղարվեստական գերազանց արժեքներով կարող են պատկանել հատկապես 10-րդ և 7-րդ դարերին,

հայ արվեստի ծաղկման շրջաններին:

Բոլոր շերտերի վրայի նկարներն էլ, որքան նրանք այստեղ-այնտեղ արդեն բացված են, պահպանված են բավականաչափ լավ, և հնարավոր է վերականգնել իրենց նախկին դրությունը:

Այս նկարները չափազանց մեծ նորություն են հանդիսանում ոչ թե միայն հայ արվեստի պատմության համար, որի մինչ այժմ մեզ հայտնի ամենահին ֆրեսկոները (Անի, Քոբեք, Հաղբատ, Գեղարդ) 13-րդ դարու կեսից դենը չեն անցնում, այլև համաշխարհային արվեստի տեսակետից ունեն բացառիկ նշանակություն:

Բացի այդ, այս գյուտի շնորհիվ միայն Երևան քաղաքի հեռավոր անցյալն սկսում է առաջին անգամ բացվել մեր առաջ: Հնությունների պահպանության կոմիտեն ի նկատի ունենալով, որ այս հուշարձանն իր բացառիկ մնացորդներով մեծ հեղաշրջում է առաջացնելու արվեստի պատմության մեջ և առիթ ու հնարավորություն է տալու մեր խորհրդային գիտությանն ասելու նոր խոսք և անելու մեծ նվաճում գեղարվեստի պատմության ասպարեզում, գտնում է, որ այս հուշարձանը պետք է ուսումնասիրվի ամենայն մանրամասնությամբ և մանրակրկիտ ձևով:

Այս գործը ներկայումս բոլորովին հնարավոր չէ այն հապճեպ աշխատանքների հետ միաժամանակ, որով կատարվում է նրա քանդումը:

Ուստի, կոմիտեն խնդրում է Ձեզ միջնորդել Ժողկոմխորհի առաջ՝ կարգադրելու այդ հուշարձանի ուսումնասիրությունը՝ օգտագործելով տեխնիկական և գիտական բոլոր հնարավորությունները:

**Հնությունների պահպանության կոմիտեի
նախագահ՝ Ա. Թամանյան
Գիտական քարտուղար՝ Աշխ. Քալանթար**

ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 92, թ. 2

Լուսժողկոմի միջնորդությանը ծանոթացնում ենք հետևյալ գրությամբ.

**ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ նախագահի տեղակալ
ընկ. Սարգսյանին
6.3.1930 թ.**

Ուղարկելով Հնությունների պահպանության կոմիտեի 1930 թ. մարտի 2-ի գրությունը՝ Լուսժողկոմատու միջնորդում է, որպեսզի հնարավորություն տրվի Կոմիտեին Պոդոս-Պետրոս եկեղեցու ներսի ուսումնասիրությունները վերջացնելու: Մինչ այդ կարելի էր քանդել զանգակատունը, իսկ կտուրը հետաձգել առայժմ մինչև ուսումնասիրական աշխատանքների ավարտումը:

Լուսժողկոմ՝ Ա. Եղիազարյան

ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 551, թ. 5

Այս «մեծահոգի» միջնորդությունից հետո քանդման աշխատանքները շարունակվեցին:

Ալեքսանդր Թամանյանը չէր չափազանցնում. Պողոս-Պետրոս եկեղեցու նշանակությունը բազմապատկվում էր նրա պատմահնագիտական արժեքով, ի հայտ եկած մի քանի շերտերով, մասնավորապես՝ արտակարգ որմնանկարներով: Իրոք, այդ որմնանկարները ու նաև մյուս շերտերը համաշխարհային արվեստի բացառիկ արժեքներ էին: Այդ որմնանկարների հայտնաբերումը սենսացիա դարձավ: Ի հետևանք դրա՝ որմնանկարների ուսումնասիրության, նաև նրանց հետագա ճակատագրի հարցը դարձավ բազմաթիվ արվեստաբանների ու արվեստագետների մտահոգության առարկան: Դրանց նկատմամբ մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին հայտնի արվեստագետ ու գեղանկարիչ Գրաբարը, գերմանացի հնագետ ու որմնանկարների մասնագետ Շնայդերը և այլք:

Ժամանակագրական սահմանները որոշելիս բոլոր մասնագետներն էլ հանգեցին գրեթե նույն եզրակացության: Բոլորն էլ հաստատեցին շենքի հնագույն լինելը և որմնանկարների բացառիկ գիտական արժեքը:

Որմնանկարների արժեքավորման և ավելի հանգամանալի ուսումնասիրության նպատակով Մոսկվայից Երևան հրավիրվեց գեղանկարիչ-ռեստավրատոր Չիրիկովը, որը մոտ երկու ամիս մանրամասն ծանոթացավ նյութին, հնարավորին չափով առանձնացրեց շերտերը, նկարագրեց դրանց բովանդակությունը և իր եզրակացությունները շարադրեց հետևյալ զեկուցագրում.

**Հայկական ԽՍՀ Լուսժողովին
նկարիչ-վերականգնող Գրիգորի
Օսիպովիչ Չիրիկովից
18 մայիսի, 1930 թ.**

ՁԵԿՈՒՑԱԳԻՐ

Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեի հրավերի համաձայն ես Գլխիցիտի (թսՈՉվՈցՄՈ) կենտրոնական պետական վերականգման արվեստանոցների կողմից գործուղվեցի ք. Երևանի նախկին Պողոս-Պետրոս տաճարի պատի հին որմնանկարների հետազոտության և բացահայտման համար:

Պարզեցի հետևյալը.

- I. Բոլոր ներքին պատերն ունեն յոթ գունաշերտ, ընդ որում, ներկի յուրաքանչյուր շերտին նախորդել է փչացած տեղում սվաղի մասնակի նորոգում: Ներկի առաջին երկու վերին շերտերը յուղաներկ են, իսկ երրորդ՝ կրով սպիտակեցումն ի հայտ է գալիս երկրաշարժից հետո պատերի ու կամարների մասերի վերականգնման ժամանակ: Մնացյալ չորս շերտերը վերաբերում են մինչ երկրաշարժն ընկած ժամանակաշրջանին: Դրանցից առաջին ներկի շերտը գունավոր է, կատարված «ալ-սեկո» եղանակով, որը հենց վերաբերում է երկրաշարժի ժամանակաշրջանին, մնացած երեք ներքին շերտերն աղտոտ մոխրագույն են, վերաբերում են ավելի վաղ շրջանին:
- II. Շինության արևելյան կողմում, արքայի կողային որմնասյուներին առկա է գեղանկարչություն, կազմված տարաժամանակյա վեց շերտից, մասնավոր-

րապես.

1. Կտավին արված երկու նկար՝ Պողոսի և Պետրոսի պատկերներով, որոնց վրա նշված է կատարման թվականը՝ 1897 թ.:
2. Կրե սվադին արված երկու յուղանկար՝ Խաչելության և Հարության տեսարաններով (երկրաշարժից հետո):
3. Ամբողջ հասակով պատկերված Պոստղի և Պետրոսի պատկերներով երկու մեծադիր յուղանկար: Սա առավել վաղ շրջանի գեղանկար է՝ կազմված ծաղկե զարդանախշից: Այդ երկու ֆիգուրների գլխավերևում հիշյալ առաքյալների պատկերներով արձանագրություններ են: Նրանց ոտքերի մոտ նշմարվում է թիվը՝ 1131:
4. Յուղաներկ թվագրված որմնանկարների տակ հայտնաբերվել է Պետրոսի ու Պողոսի երկու նկար՝ երիզված ծաղկե զարդանախշով, և ավելի վեր տեղադրված են երկու ձիավոր հեծյալների՝ Գևորգի ու Սարգսի նկարները: Այս գեղանկարը շարունակվում է նաև որմնասյուներից անդին՝ անցնելով գոհասեղանի աբսիդին, ուր հարավային ու հյուսիսային պատին (աբսիդներ) գտնվում են Թադեոսի ու Բարդուղիմեոսի երկու ֆիգուր՝ օղակված զարդանախշով: Ամբողջ գեղանկարն արված է էմուլսիոն-լաքի եղանակով:
5. Հյուսիսային որմնասյունին ոչ մեծ հետախուզությամբ հաջողվեց պարզել, որ էմուլսիոն-լաքային գեղանկարի տակ գտնվում է ավելի վաղ՝ ֆիգուրային յուղաներկ, լաքապատ գեղանկար (գույները. թիկնոցը՝ արջամկան գույնի, քիտոնը՝ մուգ կանաչ գույնի, դեղնականաչավուն ստվերներով): Հատակը հարդարված է աղյուսիկներով:
6. Վերջապես, այդ բոլոր շերտերի տակ հայտնաբերվել է ամենավաղ որմնանկարչական գեղանկարը՝ կատարված սպիտակ ֆոնին զարդանախշերով: Բացվել է ոճավորված վարդերից կազմված <...> արաբանախշ, որը երիզված է կարմրավուն երանգի շրջանակով, որից վեր կենտրոնում ծաղիկներով սկահակ է կամ անոթ, դրանց շարքում նկարված են տարբեր ձևի կարմիր բներով, մուգ-մոխրագույն չորս ծառ (ոճավորված արմավենիներ):

Անցնելով վերը հայտնաբերված շերտերի պատմական վերլուծությանը՝ հարկ է նշել, որ արդի հնագիտության տեսանկյունից առաջին երկու շերտերը էական նշանակություն չունեն: Երկրորդ շերտը, չնայած հայտնաբերված թվականին՝ 1131, որը, ըստ իս, տվյալ շերտը որոշելու չափանիշ չի կարող ծառայել, քանի որ գեղանկարչության յուղաներկ եղանակն, ըստ եվրոպական գրականության ու նյութերի տվյալների, երևան է գալիս 16-րդ դարի սկզբին: Հիմնվելով դրա վրա՝ ես կարծում եմ, որ այդ շերտերը պետք է թվագրել և վերագրել հետևյալ դարերին. երրորդ, թվականը նշված յուղաներկ շերտը՝ 17-րդ դարի կեսերին, չորրորդը՝ էմուլսիոն-լաքայինը՝ 17-րդ դարի սկզբին, հինգերորդը՝ յուղաներկ, լաքապատը՝ 16-րդ դարին, և, ի վերջո, վեցերորդ՝ որմնանկարչության շերտը, կատարված խոնավ սվադի վրա՝ 12-13-րդ դարերին:

Ապա, անցնելով գեղանկարչության շերտերի նյութի տեխնոլոգիական և տեղի հայկական գրականության ու նրա նյութական մշակույթի հուշարձանների ուսումնասիրմանը, միայն Երևան քաղ. և նրա շրջակայքում իմ կարճատև այցելության ընթացքում հայտնաբերվեցին նյութեր և գրականության մեջ հիշատակություններ, որ գեղանկարչության յուղաներկ կերպը այստեղ հանդիպում է արդեն 10-րդ դարի սկզբին: Հավանաբար, Արևելքի և մասնավորապես Հայաստանի ձեռագրերի ու գեղանկարչական նյութի խոր ուսումնասիրումը կհարկադրի փոխել եվրոպական գիտական աշխարհում գոյություն ունեցող կարծիքը յուղաներկ կերպի առաջացման ժամանակաշրջանի մասին և կարևոր ճշտում կմտցնի գեղարվեստական գեղանկարչական մշակույթի ուսումնասիրման մեջ: Այդ ժամանակ, անկասկած, անհրաժեշտ կլինի վերանայել Պողոս-Պետրոս նախկին եկեղեցու շերտերի իմ նշած ժամանակաշրջանները և տեղափոխել ավելի վաղ դարեր, և բնական է՝ այդ դեպքում 1131 թ. այդ թվագրումը արդարացի կլինի:

Նաև չեմ կարող չնշել իր տեսակի մեջ բացառիկ, միակ, գրականության մեջ ոչ մի տեղ չհիշատակվող և իմ պրակտիկայում ցայսօր չհանդիպած այստեղ գոյություն ունեցող գեղանկարչության էմուլսիոն-լաքային շերտի առկայությունը՝ արված քարե սվաղված պատին, բարեբախտաբար, շատ լավ պահպանված:

Այս հանգամանքներն ստիպում էին շերտերը հանելիս, գեղանկարչության բացահայտման և փոխադրման աշխատանքների ընթացքում ամենայն զգուշությամբ վարվել բոլոր գոյություն ունեցող շերտերի հետ, ես սահմանափակվեցի միայն այդ շերտերի հետախուզման մասնակի աշխատանքով և ցուցադրական քառակուսիներ բացելով: Հարկ է հաշվի նստել այս, թեպետև, պատահաբար բացված գեղանկարչության առկայության փաստի հետ, որն ունի անչափ մեծ գիտական և բնորոշող նշանակություն ինչպես պատմական շերտերի, այնպես էլ կատարման եղանակների առումով, որոնք այժմ այդքան անհրաժեշտ են երիտասարդ նկարիչների ուսումնառության ընթացքում, ամուր, ամբողջ գեղանկարչության վերածննդի համար:

Վերջում ուզում եմ կանգ առնել հենց իր՝ շենքի քանդման, հետևաբար, գոյություն ունեցող գեղանկարչության փոխադրման հարցի վրա: Ես գտնում եմ, որ դա պահելու պայմանների ցանկացած փոփոխության դեպքում ընդմիջտ կկորսվեն ինչպես ամբողջ գիտական հավաստիությունը, այնպես էլ այն արժեքավոր տվյալները, որոնցից, ասես գիտական բազայից, ամբողջ աշխարհի մարդիկ ուսումնասիրության համար նյութ են քաղում: Պահպանված գեղանկարչությունը վաղնջական ժամանակաշրջանի, դարերի ընթացքում գոյություն ունեցող եղանակների ուսումնասիրման ուղիների փարոս է հանդիսանում, ուստի գտնում եմ, որ շինության քանդելու մտքից պետք է մեկընդմիջտ հրաժարվել:

Նկարիչ-վերականգնող՝
Գ. Օ. Չիրիկով

ՀԱՄ, ֆ. 1063, ց. 1, գ. 92, թ. 4-5

Գերմանական գիտական միություն “Not geh meischafft”

Կարճատև այցելությունս Հայաստան նվիրված էր Էջմիածնի, Զվարթնոցի և Երևանի եկեղեցիների թանգարաններին: Բաշ Գառնիի մտադրված այցելումը ցավոք տեղի չունեցավ վատ եղանակի պատճառով, բայց զձագրերը և ֆոտոները ես հնարավորություն ունեցա տեսնելու: Երևանում գործում է Հնությունների պահպանության կոմիտե, որը հրատարակում է նաև «Օրագիր» շաբաթաթերթը: Կոմիտեն սեփական պեղումներ դեռ չի ձեռնարկել, բայց կատարվում է հողի արտաքին շերտի հետազոտություն, կազմվում է Հայաստանի ճարտարապետական քարտեզը, հավաքում են այն ամենը, ինչ հայտնաբերում են շենքերի կառուցման ընթացքում: Հին շինությունների մի ամբողջ շարք տեղ են գտել հատակագծերում: Այս առումով չափազանց ուսանելի էր հատակագծերի և գտածոների ցուցահանդեսը, որը տեսա կոմիտեի շենքում: Յուցադրված նմուշները մեծամասնությամբ բրոնզի և կերամիկայի նմուշներ են: Ուշագրավ է Լենինականում գտնված մամոնտի կմախքը, Կրոլեիսի հատակագծերը, որոնք գտնված են Սևանա լճի հարավային ափում: Արևելահայկական օմուլետներին (ոտքի և ձեռքի ապարանջանների, վզնոցների և գլխի զարդերի) զուգընթաց Երևանի թանգարանը հիմնականում ունի նախապատմական հավաքածու: Ավելի ուշ շրջանի ցուցադրումներից ուշագրավ է Դվինի պեղումներից հայտնաբերված գլուխը (հոգևորականի կամ որևէ իշխանի), որի դեմքը փակ էր դիմակով: Սա պետք է, որ վերաբերվի I դարին: Փոքր պատկերասրահն ունի մեկ Ռուբենս և մեկ Իորդանս: Էջմիածնի թանգարանը բավականին հայտնի է: Արժե նշել միայն ձեռագրերի թիվը՝ 4000, ավելացել է 700: Հռիփսիմեի տաճարի կողքին, որի ներսը շատ վնասված անհաջող ծեփով նոր թանգարան է կառուցվում: Այստեղ կա բյուզանդական քաղաքի (Զվարթնոցի տաճարի) մի նմուշ:

Հատուկ կարևորություն է ներկայացնում Երևանի Պողոս-Պետրոս եկեղեցում գտնվող ֆրեսկոն: Այս եկեղեցին բազիլիկ է, մույթերով, որի ստորին մասը պատկանում է 5-6-րդ դարերին: Երկու սյուների վրա էլ կան գեղարվեստի 7 շերտ, որոնցից երրորդ շերտը թվագրվում է 1030 թ.: Ամենատալի շերտի ֆրեսկոն ունի հատուկ դեկորատիվ զարդաքանդակ, որն իր կատարմամբ հիշեցնում է Կուգեյր Ամրայի նկարները (Արևելյան Մադաբա, Տրանս Յորդանիա): Չափազանց կարևոր էր ամբողջությամբ բացել այդ ֆրեսկոն, ինչպես այդ արված է արդեն մի փոքր հատվածում: Բաշ Գառնու նյութերը (35 կմ. Երևանից Արևելք) ես, ցավոք, կարող եմ նկարագրել միայն նախագծերով և լուսանկարներով:

Ա. Մ. Շնայդեր

Երևան 4. II. 31թ.

**(Թարգմանված է Թիֆլիսում և WOKS-ի կողմից
ուղարկված ԼժԿ-ին)**

ՀԱՄ Ֆ. 1063, ց. 1, գ. 92, էջ 8-10

Մասնագետների միջամտությամբ հնարավոր եղավ որոշ ժամանակով հետաձգելու հուշարձանի քանդման աշխատանքները: Բայց շատ կարճ ժամանակով... Քաղաքի իշխանություններն, այնուամենայնիվ, շտապում էին ամեն գնով իրականացնել կինոթատրոնի կառուցումը և կրկին հնությունների պահպանության կոմիտեից պահանջեցին

ընդհատել աշխատանքները:

Թամանյանը կրկին նամակով դիմեց Ա. Եղիազարյանին:

**ԼՈՒՍԺՈՂԿՈՄ ընկ. Եղիազարյանին
8 նոյեմբերի, 1930 թ.**

Հայաստանի խորհրդայնացման 10-ամյակի առթիվ կազմակերպելիք ցուցահանդեսի համար օգտագործելու նպատակով՝ Կոմիտեիս կողմից ներկայումս շտապ կերպով կարգի է բերվում Պողոս-Պետրոսի շենքը, որը կառավորության կողմից հանձնվել էր Կոմիտեիս կարգի բերելու և դարձնելու «քարերի թանգարան»:

Այժմ կոմունալ տնտեսության բաժինը հայտնում է, որ «գալիք շին սեզոնը սկսվելուն պես քանդվելու է Պողոս-Պետրոսի շենքը, ուստի և առաջարկում է մեզ դադարեցնել մեր աշխատանքները ու փոխադրել այդ շենքից «Կոմիտեի համար անհրաժեշտություն ներկայացնող» մասերը, որի համար ժամկետ է տալիս մինչև սույն նոյեմբերի 20-ը»:

Պողոս-Պետրոսի շենքը և նրա մեջ պատերի սվաղաշերտերի վրա բացված որմնանկարների ընդհանուր գիտական խոշոր արժեքի ու նշանակության մասին Կոմիտեսն ձեռք գեկուցել է իր ժամանակին (6.2.30 թ. և 3.3.30 թ.), որի հետևանքով կարգադրվել է կանգնեցնել նրա քանդումը, և հնարավորություն է տրվել կատարելու նրա բազմակողմանի ուսումնասիրությունը: Այնուհետև Կոմիտեի ձեռնարկած ուսումնասիրական աշխատանքները, երբ ջանք է թափվել օգտագործել տեխնիկական և գիտական բոլոր հնարավորությունները, և որոնց ընթացքի մասին ձեռք գեկուցվել է բանավոր կերպով՝ տվել են արդյունք, որը միանգամայն հաստատել է Կոմիտեի կարծիքը նրա բացառիկ գիտական արժեքի մասին: Այդ եզրակացության եկավ մեր հրավերով պետական գեղարվեստական ռեստավրացիոն արվեստանոցների կողմից գործուղված Մոսկվայից եկած նկարիչ-ռեստավրատոր Չիրիկովը, որն, աշխատելով Պողոս-Պետրոսի որմնանկարների վրա, բացեց նրանց և ուսումնասիրեց: Նրա աշխատանքները որոշակի պարզեցին, որ տեխնիկական ոչ մի հնարավորություն չկա պատերի վրայից վերցնելու որմնանկարների շերտերը, պահելու համար առանձին:

< >

Ձեկուցելով վերոհիշյալը՝ կոմիտեն խնդրում է ձեռք միջնորդել Ժողկոմխորհի առաջ կարգադրություն անել Պ/Պ-ի շենքը պահպանելու մասին՝ վերացնելով արգելքները նրան կարգի բերելու և ծրագրված քարերի թանգարան (նման Անիի ճարտարապետական բեկորների թանգարանի) դարձնելու համար, ուր ներկայացված է լինելու Հայաստանի շինությունն ամբողջ իր զարգացման էտապներով՝ սկսած նախապատմական ժամանակներից: Ձեկուցում ենք նաև, որ Պողոս-Պետրոսի մինչ այժմ կատարած ուսումնասիրության արդյունքները՝ նրա թե՛ որմնանկարների և թե՛ շենքի գիտական արժեքի վերաբերյալ պատրաստվում է Կոմիտեիս կողմից և մոտ ապագայում կհանձնվի տպագրության:

Առդիր ներկայացվում է նախագիծ Պ/Պ-ի շրջակայքի քաղաքացիական նոր շենքերի համար օգտագործելու ձևի մասին:

Նախագահ՝ Ա. Թամանյան

ՀԱՄ, ֆ. 1063, ց. 1, գ. 92, թ. 6

Լուսժողկոմը 19.4.31 թ. գրավոր առաջարկությամբ դիմեց հնությունների պահպանության կոմիտեին «մշակելու, թե ի՞նչ ձեռնարկումներ են հարկավոր, որպեսզի (ԺԿԽ որոշմամբ քանդման ենթակա Պողոս-Պետրոսի) շենքի ներսը գտնվող ֆրեսկոները մաքսիմալ չափով ապահով հանվին և օգտագործվին հետագա ուսումնասիրության համար»: Կոմիտեի արտակարգ նիստում նորից քննարկվեց հուշարձանի «արժեքավոր մասերի» տեղափոխման հարցը, որի արդյունքների մասին Ալ. Թամանյանը նամակով կրկին դիմեց լուսժողկոմ Ա. Եղիազարյանին:

Լուսավորության Ժողովրդական Կոմիսարին

Համաձայն ձեր № 02-09, 19.4.31թ. առաջարկության՝ «մշակելու, թե ինչ ձեռնարկումներ են հարկավոր, որպեսզի (ԺԿԽ որոշմամբ քանդման ենթակա Պողոս-Պետրոսի) շենքի ներսը գտնվող ֆրեսկոները մաքսիմալ չափով ապահով հանվին և օգտագործվին հետագա ուսումնասիրությունների համար», Հն. Պահպանության կոմիտեն իր արտակարգ նիստում՝ 20.4, հարցը բազմակողմանի քննելով՝ համաձայն եկավ հետևյալ եզրակացության՝

1. Պողոս-Պետրոսի մոտ մի տարվա հետազոտությունը, որ կատարվեց թե՛ մեր կողմից և թե՛ միութենական ակննավոր մասնագետների (Չիրիկով, Գրաբար) ու գերմանացի հայտնի հնագետ և ֆրեսկո արվեստի մասնագետ Շնայդերի կողմից, պարզեց ու հաստատեց թե՛ շենքի հնագույն լինելը (5-6 դդ.) և թե՛ մանավանդ նրա պատերի վրա եղած 6-7 շերտ զանազան դարաշրջանների պատկանող ֆրեսկոների միանգամայն բացառիկ արժեքը, որոնց մեջ կան շերտեր (ներքնից երկրորդ-Ֆլգսթրոմսկի-սոց. ժամանակաշրջան) ունիկալ իրենց տեխնիկայի տեսակետից և միայն առաջին անգամ Պողոս-Պետրոսում հայտնաբերված, և որոնց ուսումնասիրությունը կարող է հեղաշրջում առաջացնել արվեստի պատմության մեջ (Չիրիկով), իսկ հատկապես ամենաներքին շերտը Շնայդերի կողմից համադրվեց հռչակավոր Կուզեիր Ամրայի (Ֆրանս Իորդանիա) ֆրեսկոների հետ, որոնք արվեստի պատմության մեջ շեղելի են համարվում: (Կուզեիր Ամրայի ֆրեսկոները պալատի մեջ I դարու կիսի, իսկ քրիստոնեական բազիլիկայի մեջ IV դարու: Ամենանորն այնտեղ հասնում է III դարուն):

Շնայդերի զեկուցումը Բեռլինում առաջ է բերել մեծ հետաքրքրություն Պողոս-Պետրոսի ֆրեսկոների վերաբերյալ և այժմ 21.3.1 (4) գրությամբ նա մեզանից պահանջել է ֆրեսկոների լուսանկարները հրատարակության համար:

Այս բոլորն ի նկատի ունենալով՝ Կոմիտեն գտնում է, որ մեզ մոտ պատահաբար հայտնագործված այս արժեքների պահպանությունը գիտության համար մաքսիմալ չափով ապահովելը ներկայացնում է անվիճելի անհրաժեշտություն, բայց այժմ անխուսափելիորեն դրված է նրանց տեղահանման հարցը: Չիրիկովն իր մեկ ու կես ամիս տևող ուսումնասիրական աշխատանքներից հետո գտավ այդ միանգամայն անհնար՝ շեշտելով, որ «при всяком изменении условий хранения ее (всей существующей живописи)

исчезнут навсегда как вся научная обоснованность, так и те драгоценные данные, из которых, как из научной базы, человек всего мира черпает материал для изучения»:

Կոմիտես երբեք չի կարող հաշտվել այն մտքի հետ, որ նրանք պետք է կործանվեն կամ անպետքանան դեռևս չուսումնասիրված-չօգտագործված գիտության համար, քանի որ և ոչ մի տեսակ տեղահանում չի կարող փրկել կորստից փաստերը, բռնում են արևելյան պատն ու արսիդն ամբողջովին:

Միանգամայն համաձայն լինելով Չիրիկովի եզրակացության հետ և լսելով մեր ճարտարապետների կարծիքը, որ նման բարդ օպերացիա կատարելը, ի նկատի ունենալով տուֆի ու կրաշաղախի առանձնահատկությունները՝ հղի է բազմաթիվ պատահակա-նություններով, ինչպես փորձը ցույց է տվել հին կառուցվածքների քանդման ժամանակ, երբ ոչ միայն անհնարին է լինում ամբողջական քարերն իրարից զատելով հանել կամ պատամասերը վերցնել, այլ, և ոչ մի հնար ու երաշխիք չի կարող լինել, թեկուզ միայն ֆրագմենտներ ցանկալի մասերով հանել՝ հաջողվի առանց նրանց վնասելու: Եվ որովհետև նման մի փորձ կարող է կատարվել միմիայն տեխնիկական լայն հնարավորությունների և համապատասխան փորձված մասնագետ ուժերի միջոցով, որ տեղումս չկան, Կոմիտեն գտնում է, որ այդ չափազանց պատասխանատու գործը կարելի է միայն հանձնարարել Մոսկվայի Պետական Ռեստավրացիոն Արվեստանոցներին:

2. Միաժամանակ Կոմիտեն գտնում է անհրաժեշտ, որ նախքան այս կամ այն փորձը կատարելը, ծածկված շերտերի բովանդակությունը պարզելու համար պետք է օգտագործել ռենտգենյան ճառագայթները, որն անհնար եղավ կազմակերպել տեղումս մեր ուզած միջոցներով և նույնպես պետք է հանձնարարել Մոսկվայի մասնագետներին:

3. < >

4. Համենայն դեպս անհրաժեշտ է առաջին հերթին կատարել հուշարձանի՝ իր ներկա ամբողջական դրությամբ գիտական չափագրում և մակետի պատրաստումը, որի համար պետք է բացվեն նրա հիմքերը պեղումների միջոցով: Այդ աշխատանքները կիսեն առնվազն մի ամիս, որ կարծում ենք, որ նույնիսկ չի կարող խանգարել ձեռնարկելիք նոր շինարարության գործին, քանի որ դրանից ոչ պակաս ժամանակ հարկավոր կլինի մինչև որ կազատվի Պողոս-Պետրոսի շրջապատի ամբողջ հրապարակը եղած այլ շենքերից և բնակչությունից (100-ից ավելի մարդու):

Նախագահ՝ Ա. Թամանյան
Քաղխորհրդի գլխավոր ճարտարապետ՝
Ն. Բունիայան
Գիտական քարտուղար՝
Աշխ. Քալանթար

ՀԱՍ. ֆ. 1063, ց. 1, գ. 92, թ. 16-17

Մասնագետների ոչ մի միջնորդություն ուշադրության չարժանացավ: Հուշարձանը, փաստորեն, հանցագործ անուշադրության էր մատնված: Եվ որմնակարները, և՛ ճարտարապետական բեկորները փչանում էին, կորչում:

... Անցավ երկու տարի: Շահագրգիռ մասնագետների, եթե ոչ հուշարձանը, գեթ նրա

առանձին, բացառիկ արժեք ներկայացնող բեկորները փրկելու անգոր ճիգերի և պաշտոնական վարչարարության հուշարձանը հիմնովին ոչնչացնելու մտադրությամբ մտավորականների այդ հորդոր-խնդրանքները քամահրելու երկու տարի:

Կինոթատրոնի շենքի հիմքերը փորելու ժամանակ, երբ բացվեցին եկեղեցու հիմքերը, ի հայտ եկան նոր հետաքրքիր նյութեր, որոնք նույնպես ուսումնասիրություն էին պահանջում: Այդ պատճառով կուլտուրայի պատմության ինստիտուտը, տեղեկացնելով Պողոս-Պետրոսի հիմքերի տակ բացված մի այլ շատ խոշոր և հին շենքի պատերի մնացորդների գիտական նշանակության մասին, 1933 թ. սեպտեմբերին դիմեց հնագետ Աշխարհբեկ Քալանթարին:

**Կուլտուրայի պատմության ինստիտուտի
խսկական անդամ
ընկ. Աշխարհբեկ Քալանթար**

Նկատի ունենալով Պողոս-Պետրոսի հիմքերի տակ բացված մի այլ շատ խոշոր և հին շենքի պատերի մնացորդների գիտական նշանակությունը՝ ինստիտուտի ղեկավար ինտրուս է Ջեզ անմիջապես ձեռնարկել կազմակերպելու այդ պատերի ուսումնասիրության գործը, անհրաժեշտության դեպքում բանակցելով Հայկինոյի հետ՝ դադարեցնելու ժամանակավորապես նոր կառուցման աշխատանքը և կատարելու պեղումներ հին շենքի ուսումնասիրության հետ կապված բոլոր հանգամանքները պարզելու համար:

Այդ աշխատանքների համար պահանջվող ծախսերը հոգալու է Հայկինոն:

**Դիրեկտոր՝ Հ. Զարյան
Լուսժողկոմատ. կուլտուրայի ինստիտուտ
19.9.1933 թ.**

ՀԱՍ, ֆ. 112, ց. 2, գ. 440, թ. 16

Ավարտելով ուսումնասիրությունները՝ Աշխարհբեկ Քալանթարը ներկայացրեց հետևյալ զեկուցագիրը.

**ՀԽՍՀ Կենտրոնական պատմական
հուշարձանների պահպանության կոմիտեին
պատճենը՝ Կուլտուրայի պատմության
ինստիտուտին**

Ամսույս 10-ին նայելով նախկին Պողոս-Պետրոս եկեղեցու տեղում կատարվող հողային աշխատանքները, ուր կինոյի շենքի հիմքերն են փորվում՝ տեսա, որ գիտական խոշոր արժեք ներկայացնող նյութական կուլտուրայի մնացորդներն այդ աշխատանքների միջոցին իրար հետևից երևան են գալիս առատորեն և ոչ մի ուշադրության առնվելու արագորեն ոչնչացվում են: Պարզվում է, որ այս ամբողջ տարվա ընթացքում շենքի քանդումը կատարվել է առանց որևէ հնագիտական վերահսկողության, որի համար պետք է

ցավել՝ ի նկատի ունենալով այդ հուշարձանի և ընդհանրապես այդ կետի բացառիկ կարևորությունն՝ իբրև գիտական նյութ: Չի կատարվել ոչ միայն որևէ ուսումնասիրական աշխատանք, այլ անգամ պարզ ֆիկսացիա բացվող այս կամ այն կարևոր նյութի: Չի առանձնացվել և ոչ մի բեկոր, որոնց նոր կտորտանքները (արձանագրությունների, քանդակների, ճարտարապետական մասերի) այժմ էլ դեռ ցրված երևում են շենքի քարակույտերի մեջ: Նույնիսկ անցյալ տարի շենքի վերին մասերից դուրս եկած բեկորները, որ առանձնացված էին թանգարան փոխադրելու համար, մնալուց նույն տեղում, հետևող չունենալով, խառնվել են հասարակ քարերի հետ և անհետացել: Նույն վիճակին են մատնվել նաև այլ տեղերից բերված Պողոս-Պետրոսում դարսված արձանագրված քարերը, որոնք շտապ քանդման պատճառով մնացել էին մուսորի (աղբի) տակ: Միակ մնացորդները ֆրեսկոների երկու խումբը, որ պահպանության համար ծածկված էին թիթեղյա պահպանակներով, ներկայումս մեծ մասամբ թիթեղագերծ են եղած և ենթակա են ամեն մի պատահարի: Նրանք շատ շուտով կարող են ոչնչանալ հենց ուղղակի անձրևներից և արդեն իսկ ոչնչանում են, քանի որ ընթացիկ շինարարության կարիքների համար բերված ջուրն անց է կացված ֆրեսկոների հարավային խմբի ուղղակի վրայով, որից և նա քայքայվում է արագորեն:

Վերջերս բացվել է տաճարի հիմքի տակ մի կոլեկտիվ դամբարան (հատուկ ձևով պատրաստված քառակուսի ջրհորի նմանությամբ, բոլոր կողմերից ցեմենտած 30-40 մարդու կմախքներով, լավ պահպանված գանգերով), որ մեծ գյուտեր համարելով մարդաբանական ուսումնասիրությունների համար նույնպես ոչնչացել է: Քրիստոնեական թաղումների տակ (որ 4-5 շերտեր են իրար վրա), բացվել են հեթանոսական կարասաթաղ գերեզմաններ, որոնց համապատասխանող շերտում էլ ավելի խորը գնացող Պողոս-Պետրոսի հիմքերի տակ բացվել են ավելի հին և շատ խոշոր մի շենքի պատերի մասեր: Այդ շենքը, որ Պողոս-Պետրոսից շատ ավելի մեծ է, իր թե՛ ուղղությամբ (արևելահյուսիս, արևմտահարավ) և թե՛ ըստ շերտի կասկած չի թողնում, որ իր ծագումով նախաքրիստոնեական հեթանոսական ժամանակներին է պատկանում:

Այդ շենքի բացված մասերը այժմ արագորեն ծածկվում են կիևոյի հիմքերում, և մի քանի օրից հետո այդ նա կանհետանա:

Նկատի ունենալով այս բացված շենքի բացառիկ գիտական արժեքն ու կարևորությունը թե՛ պատմահնագիտական և թե՛ կառուցողական տեխնիկայի տեսակետից (պատերի խիստ հաստությունը, քարերի չափը, ձևը, շարվածքը, շաղախը), որ մեծ տարբերություն ունի Պողոս-Պետրոսի և ընդհանրապես մինչև այժմ մեզ հայտնի հին շաղախներից, որ ամենաշտապ կերպով կազմակերպվի և կատարվի նրա բազմակողմանի ուսումնասիրությունը, որի վրա հրավիրում է Գերագույն կոմիտեի ուշադրությունը:

**ՊԱՄՄ ՀՈՒԹ ՊԱՀՊ կոմիտեի անդամ՝
Աշխ. Քալանթար**

ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 535, թ. 31

Զուգահեռաբար, հենց նույն ժամանակ՝ 1933-ի սեպտեմբերին, այս անգամ արդեն Ա. Խանջյանի հավանությամբ կազմվեց հատուկ հանձնաժողով, որը, թող որ այդքան ուշացումով, թող որ այդ հազվագյուտ հուշարձանի արդեն իսկ լոկ մնացորդ մասունք-բեկորները փրկելու նպատակով, սովեց իր միասնական եզրակացությունը:

**Հատուկ հանձնաժողովի որոշման արձանագրություն-
նը՝
Պողոս-Պետրոս եկեղեցու տեղում կինոյի շենքի
կառուցման աշխատանքների մասին**

Հատուկ հանձնաժողովի որոշումները՝ Պողոս-Պետրոսի տեղում կինոյի շենքի կառուցման աշխատանքների հետ կապված կուլտուրական արժեքների պահպանության և նոր բացված հնագույն շենքի պատերի պեղումների ուսումնասիրության վերաբերյալ:

Հանձնաժողովը կազմված է ընկ. Խանջյանի հավանությամբ՝ հետևյալ ընկերներից՝ ակադեմիկ Ա. Թամանյան, Աշխ. Քալանթար, Ն. Բունիայան, Մ. Մազմանյան, Մորուս և կառուցման ղեկավարը:

Հանձնաժողովը 26.09.1933 թ. դիտելով և քննության առնելով նյութական կուլտուրայի արժեքների վիճակը պահպանության տեսակետից, նոր բացված հնագույն շենքի պատերի ուսումնասիրության խնդիրը, միաժամանակ հաստատելով այն փաստը, որ թե՛ Պողոս-Պետրոսի քանդումը, թե՛ կինոյի շենքի կառուցման հողային աշխատանքները տեղի են ունեցել առանց որևէ հնագիտական վերահսկողության, ուստի և ամբողջ աշխատանքի ընթացքում երևան եկած նյութական կուլտուրայի բազմապիսի արժեքներ, մատնված լինելով բացարձակ անփութության, ոչնչացել են կամ կիսով չափ փչացել են, նրանց թվում են նաև ֆրեսկոների երկու խմբերը, որոնց գոյությունը նույնպես վտանգված է:

Որոշեց. – 1. Պարտադրել կառուցման աշխղեկին, իր անձնական պատասխանատվությամբ, անմիջապես հեռացնել ջուրը և ավազանները ֆրեսկոների մոտից, որի խոնավությամբ նրանք քայքայվում են՝ առանձնացնելով նրանց տախտակե ցանկապատով:

2. Բացել ֆրեսկոների խոնավացած մասը և զգուշությամբ չորացնել արևի տակ, ապա ծածկել տախտակով հարմար ձևով:

3. Քար ջարդող մեքենան, որ դրված է ֆրեսկոների երկու խմբերի միջև՝ աբսիդի պատի վերևում, չպետք է հենվի պատի վրա, և միանգամայն պետք է չեզոքացված լինեն նրա ցնցումները, այլապես նրան նույնպես անմիջապես հեռացնել իր դրված տեղից:

4. Գտնել միանգամայն անհրաժեշտ, կատարել պեղումներ այն հնագույն պատերի ուղղությամբ, որոնց մասերը երևացել են նոր փորված հիմքի մեջ և քանդվել: Նրանցից այն պատը, որ գտնվում է կառուցվող շենքի արևելյան մասում՝ ֆրեսկոների հյուսիսային խմբից ոչ հեռու, և որը պահպանել է երեսի տաշված քարերը ցոկոլի հետ միասին, տախտակով ծածկել բացված մասն ամբողջովին՝ պաշտպանելու համար նոր շաղախից, և պեղումներով բանալ պատի շարունակությունը, որ դեռևս հողի տակ է: Բսկ մյուս բոլոր տեղերում, ուր հին պատի մասերը բացվել են և ոչնչացվել՝ դնել հատուկ նշաններ, և հիմքերը լցնելուց հետո, դրված նշանների ուղղությամբ պեղումներ կատարել, բանալու համար պատերի այն մասերը, որոնք նոր հիմքերի երկու կողմերում դեռևս հողի տակ են գտնվում:

5. Կառուցվող շենքի այն մասում, ուր կաթսայարանն է լինելու, Պողոս-Պետրոսից արևմուտք երևացող հին շենքի պատերը, որոնք դեռևս ծածկված են հողով, պնդել հենց

հիմնականից:

6. Պեղումները և ուսումնասիրության բոլոր աշխատանքները կատարվում են Աշխ. Քալանթարի ղեկավարությամբ: Անհրաժեշտ բանվորական ուժ և բոլոր միջոցները տրամադրվում են կառուցող հիմնարկի կողմից:

7. Պարտավորեցնել աշխղեկ՝ ինժեներ Շահնագարյանին Պողոս-Պետրոսից հանված քարերից ջոկել ամենայն ուշադրությամբ բոլոր արձանագրված, քանդակված և ֆրեսկավոր քարերը, ինչպես և ճարտարապետական կարևոր բեկորները և իրենց միջոցներով փոխադրել Կուլտուրայի տան բակը՝ պահպանելու համար:

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Թամանյան

Ա. Քալանթար

Ն. Բունիսթյան

Մ. Մազմանյան

Մորուս

Աշխղեկ՝ Հ. Շահնագարյան

26 սպետեմբերի, 1933թ.

ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 440, թ. 8-9

Այդ մասնակի որոշումն իսկ, ամենայն հավանականությամբ, մնաց թղթի վրա, այդ, այսպես ասած, կոսմետիկական ձեռնարկումներն անգամ չիրագործվեցին:

Անցավ Պողոս-Պետրոս հուշարձանի եղեռնապատումի ևս 5 տարի: Մենք չենք տնօրինում այդ ժամանակվա՝ խնդրո առարկա հարցին վերաբերող վավերագրեր, սակայն հավաստի է, որ հուշարձանի ավերումը շարունակվում էր: 1938-ին հնությունների պահպանության կոմիտեն նորից ձեռնամուխ եղավ հուշարձանի պահպանված մասերի ուսումնասիրությանը: Կոմիտեի նախաձեռնությամբ կազմված հանձնաժողովը եկեղեցու որմնակարների բեկորների զննումից հետո տվեց ներքո ներկայացվող եզրակացությունը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1939 թ. սեպտեմբերի 22-ին մենք՝ պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից հրավիրված ներքոստորագրյալներս, կոմիտեի նախագահի տեղակալի ներկայությամբ կատարեցինք Երևանի Պողոս-Պետրոս նախկին եկեղեցու որմնակարչության պահպանված մասերի ստուգում: Փայտե վահանակը հանելիս պարզվեց, որ մույթերի ներքին հատվածի մոտավորապես 1/2 մետրով գետնից բարձր գրունտը խոնավության շատ ուժեղ ազդեցությամբ միանգամայն քայքայված է: Քայքայված մասից վերև պահպանվել է գեղանկարչության 4 շերտ: Դրանցից գիտագեղ (արվեստական) առումով մեծ նշանակություն ունի ամենաներքին շերտը և 18-րդ դարի՝ ծաղկանախշի պատկերներով շերտի այն մասը, որը գտնվում է աբսիդային կամարի դրսերեսին, ֆրիզի ձևով: Առաջին շերտը շատ բարակ կերպով արված է քարե շարվածքի վրա և բաղկացած է կազմությամբ տարբեր երկու գրունտից: 1931թ. Գ. Օ. Չիրիկովի կատարած փորձնական

մաքրման ժամանակ բացվել է բուսական զարդանախշ. աջից մուգ վարդագույն վարդակներով ոլորագարդի նեղ շերտն է, ներքևում՝ կիպարիսների ֆրիզ, որ ընդմիջվում է շատ մուգ կանաչ գույնի, ավելի բաց եզրերով սրտաձև բույսերով:

Ինչպես իր ոճական տվյալներով, այնպես էլ տեխնիկական հատկանիշներով (շատ բարակ կրկնակի գունտ, որը բացառիկ է) ստուգված գեղանկարչությունը շատ մեծ գիտագեղարվեստական հետաքրքրություն է ներկայացնում, մանավանդ, որ այն ներկայումս նոր շերտերի տակ գտնվող պատկերների շրջանակի միայն աննշան մասն է կազմում: Հայաստանում պահպանված որմնանկարչության աննշան քանակը պարտադրում է մեծ զգուշությամբ ու ուշադրությամբ վարվել յուրաքանչյուր ֆրագմենտի հետ: Իսկ նկարագրված ֆրագմենտները ոչ մի դեպքում չեն կարող դասվել 17-րդ դարից ուշ, իսկ հնարավոր է՝ ավելի վաղ շրջանին, սկսած 12-րդ դ. (առավել ստույգ ժամանակը որոշել հնարավոր է մեծ մակերես մաքրելու դեպքում միայն), երկրորդ՝ չափսերով շատ մեծ են, 8-10 քմ. ոչ պակաս:

Քննելով այդ բացառիկ հուշարձանի պահպանության գոյություն ունեցող միանգամայն անբավարար պայմանները՝ մենք վճռականորեն առաջարկում ենք անհապաղ դրանք հանել պատերից և տեղափոխել համապատասխան վայր: Նշված աշխատանքներն ի կատար ածելու համար հրավիրել մասնագետի: Բացի այդ, մենք անհրաժեշտ ենք համարում հանելու աշխատանքների ընթացքում կատարել ներկի և գրունտի բոլոր շերտերի քիմիական անալիզ:

Ա. Մվիրին
Ղարիբջանյան
Ռ. Դրամբյան
Լ. Ղուռնովո
Ստ. Լիսիցյան
Դ. Դանիելյան

ՀԱՄ, ֆ. 1063, ց. 1, գ. 330, թ. 2

Հաջորդ՝ 1939 թվականին կոմիտեի հանձնարարությամբ այդ գործին ձեռնամուխ եղավ հնագետ Ե. Բայբությանը, իսկ Զիրիկովի մահից հետո ֆրեսկոների ուսումնասիրության գործը շարունակելու համար միաժամանակ Կիևից Երևան հրավիրվեց ռեստավրատոր Պ. Յուկինը, որոնք տվեցին իրենց եզրակացությունները հուշարձանի վերաբերյալ:

Հաշվետվություն Պողոս-Պետրոս նախկին
եկեղեցու շրջանում կատարված
պեղումների մասին (1939 թ. հունիս)

1939 թ. հունիսի վերջին պատմական հուշարձանների պահպանության կոմիտեն ինձ հանձնարարեց «Մոսկվա» կինոթատրոնի բակում՝ զոհասեղանի պտուների մոտ, անցկացնել ոչ մեծ ստուգիչ պեղումներ: Նպատակը՝ եկեղեցու սկզբնական հատակը գտնելն էր, որը համապատասխանում էր որմնանկարի ներքին շերտին և պարզել՝ չե՞ն պահ-

պանվել արդյոք որմնանկարներ պտուներին՝ հողի ժամանակակից մակերևույթից ցած:

Այդ նպատակով աջ սյան արևմտյան կողմից բացվեց 2X2 մ. չափսով հողակտոր: Սյունը 55 սմ. բացելով պարզեցինք՝ դրանից ներքև սեղանը շարված էր նույնպիսի երկշարք, տաշած քարից (վերինի հաստությունը հավասար էր 37 սմ, իսկ ներքինին՝ 30 սմ.):

Ապա պարզվեց, որ սյունը կանգնած էր զոհասեղանի բարձրության վրա, որը 12 սմ. դուրս էր ցցված 62 սմ. հաստության տաշած քարից: Ավելի ներքև զոհասեղանի պտունն իր հերթին կանգնած էր մեկքարանի հիմքի վրա, 34 սմ. հաստությամբ, որը 10 սմ. դուրս էր ցցված: Քարերի այդ շարքից ներքև գտնվում էր քարերի ևս մի շարք, 37 սմ. հաստությամբ և 7 սմ. դուրս ցցված: Այսպիսով, զոհասեղանի պտուները գտնվում էին եռաստիճան հիմքի վրա: Սյունին որմնանկարների ոչ մի հետք չհայտնաբերվեց: Հիմքը շարված էր մանր քարերից, կրե շաղախով: Տարբեր խորությունների վրա, բայց հին հատակից ներքև, գտնվեցին ջնարակած խեցեգործության (տՏսՌԶՎՈՅ՝ ՍպՐՈՎՌՍՈ) ֆրագմենտներ, որոնք հայտնի էին Դվինի և Անիի պեղումներից, այսինքն՝ մոտ 11-13-րդ դդ.:

Սյունից մեկուկես մետր դեպի արևմուտք՝ 55 սմ. խորության վրա հայտնաբերվեց գունավոր կտորտանքից, ցեմենտով ամրացված 1,5 սմ. հաստությամբ խճանկար հատակ (17-րդ դ.): Դրան ենթահիմք էր ծառայում ցեմենտով ամրացված հղկված գետաքարից 6 սմ. շերտը:

Այդ շերտն անմիջականորեն գտնվում էր ներքին (ավելի վաղ) հատակի վրա, հարթ տաշած տուֆե սալիկներից, ներկված օքրայագույն յուղաներկով: Քարերի միջև կարերը ծածկված էին օքրայի մածկանով: Տուֆե սալիկներն ունեին 10 սմ. հաստություն:

Այդ սալերին ենթահիմք է ծառայել փոքր քարերից, մոխրից, կրից, 30 սմ. հաստությամբ պնդացված շերտը: Այդ շերտից ցած հատակի ոչ մի հետք չի հայտնաբերվել:

Արդյոք այդ տուֆե հատակը 10 դ. որմնանկարի հասակակիցն էր, թե դրան համապատասխանող հատակը վերականգման ժամանակ ոչնչացվել է, այժմ պարզել հնարավոր չէ: Այս հատակին, որը բացեցին պեղումների վերջում մոտավորապես 3 քմ. մակերեսով, մեծ քանակությամբ մեղրամոմ հայտնաբերեցինք: Արդյոք դա մածկանի կամ ներկի բաղկացուցիչ մասն էր, թե դա այն մեղրամոմն է, որ թափվել է հավատացյալների մոմերից, առայժմ պարզել հնարավոր չէ:

Մեղրամոմը տարբեր գույների էր՝ կապույտ, երկնագույն և վարդագույն: Հետո պարզվեց, որ մի քանի տեղերում տուֆե սալիկների վնասվածքները նույնպես ծածկված էին վարդագույն մածկանով: Հատակին մի տեղ հայտնաբերվեց խրուկաներկի (ՍՌՎՏՉՈՐՖ) և մանիշակաթույր բիծ: Պրոֆեսոր Յուկինի կողմից ենթադրություն է արվել, թե այդ խրուկաներկը կարող էր հատակի յուղաներկ զարդանկարի մնացորդները լինել:

1.12.39 թ.

Բայրություն

Հ. Գ.

Ներկերի հետքերով քարե հատակների վրա աշխատելով՝ ընկ. Յուկինը հավաստեց (լաբորատոր եղանակով), որ հատակներն իրոք նկարազարդված են in caustica, այսինքն՝ մոմի գեղանկարչության եղանակով: Քարերից մեկին լվացումից և քիմիական

մշակումից հետո երևացին շախմատաձև դասավորված քառակուսիներ և դրանց երկայնքով գունավոր շերտ:

Բայրություն

ՀԱՄ, ֆ. 1063, ց. 1, գ. 330, թ. 36

**Հայաստանի Գեղանկարչության
հին հուշարձանը**

Երևանի Պողոս-Պետրոս (Պյոտր և Պավել) հին եկեղեցին արդեն վաղուց գրավել է Հայաստանի արվեստաբանների ու հնագետների ուշադրությունը: Դեռևս 1930 թ. Հայաստանի հուշարձանների պահպանության կոմիտեի հրավերով տաճարի գեղանկարչությունը հետազոտվեց հայտնի, այժմ հանգուցյալ նկարիչ-վերականգնող Գրիգորի Օսիպովիչ Չիրիկովի կողմից: Նրան հաջողվեց պարզել, որ 17-18-րդ դարերի ուշ շրջանի գեղանկարչության շերտերի տակ գտնվում էր զարդանախշային բնույթի ավելի վաղ գեղանկարչություն: Սակայն նրա հետազոտությունները սահմանափակվեցին միայն փորձնական, խիստ աննշան մակերեսով մաքրումով, որը հնարավորություն չէր տալիս դատել ոչ այդ նկարագրաման կատարման ժամանակի, ոչ պահպանության և գեղարվեստական արժեքի մասին: Տաճարի կառուցման ժամանակը չի պարզվել: Հայ գրականության մեջ ևս չհաջողվեց տվյալներ գտնել այդ մասին. հնագետները, ոչ անհիմն, կարծում են, որ եկեղեցին կառուցվել է մ. թ. 6-7-րդ դարերից ոչ ուշ: 1870 թ. շինությունը խիստ տուժեց երկրաշարժից: Վերականգնումից հետո այն նորից անկման հասավ և ութ տարի առաջ քանդվեց: Ներկայումս նրանից մնացել են միայն զոհասեղանի երկու սյուները կամարի սկզբնամասով՝ ծածկված 18-րդ դարի յուղաներկ գեղանկարչությամբ: Անցած ամռանը հուշարձանների պահպանության կոմիտեն որոշեց առավել մանրագնին ուսումնասիրել եկեղեցու պահպանված մասերն ու հանել վաղ գեղանկարչությունը, եթե այդպիսին պահպանվել է: Այդ նպատակով կոմիտեի հրավերով էս եկա Երևան, և շուրջ եռամսյա իմ աշխատանքը տվեց դրական և անչափ հետաքրքիր արդյունքներ:

Նախնական փորձնական մաքրումները ցույց տվեցին, որ սյուները կազմված են մեծ, իրար խնամքով ագուցված և կրով ամրացված բավականին ամուր տուֆե քարերից: Այդ սյուները սվաղված են և պատված զարդանախշերով: Հետագայում՝ 16-րդ դարում, այդ գեղանկարչությունը նորից ծածկվում է գիպսե սվաղի երկշերտով, որի վրա պատկերվում են սովորական եկեղեցական պատկերներ: 18-րդ դարում էլ այդ գեղանկարչությունը նորից յուղաներկով է արվում:

Կոմիտեն ցանկություն է հայտնել նաև պահպանել 17-րդ դարի գիպսի վրա արված գեղանկարչությունը: Այսպիսով, բավականին դժվար խնդիր է ծառանում հեռացնել գիպսե սվաղը և դրանով հանդերձ չվնասել վաղ գեղանկարչությունը: Հին կրե սվաղը հանելու աշխատանքներն ինձ համար նորություն չեն. վերջին տարիներին մեր երկրի տարբեր վայրերում էս հանել եմ մի քանի հարյուր քառակուսի մետր: Բայց գիպսը նվազ ամուր նյութ է, քան կիրը: Եվ էս ոչ առանց մտավախության ձեռնամուխ եղա գործին: Բարեբախտաբար, մինչև գիպսը արված վաղ սվաղը գրեթե կտրատված չէր և թղթով ու թանձրիֆով սոսնձելու իմ օգտագործած սովորական եղանակով ինձ հաջողվեց խնդրի ա-

ռաջին մասը իրագործել բավականին բարեհաջող, այսինքն՝ ամբողջական մասերով հանել յուղաներկ գեղանկարչության գիպսե շերտը, առանց վնասելու՝ չվնասելով անգամ հին գեղանկարչությունը:

Մաքրելն արդեն ոչ մի դժվարություն չէր ներկայացնում: Հանված մասերը դնելով մշտական փայտե արկղ-շրջանակներում և սովորական եղանակով ամրացնելով՝ ես հեռացրեցի 18-րդ դարի որոշ ֆիգուրների վրայի կրկնակի յուղաներկը: Նրանց տակ Պետրոսի և Պողոսի, Գևորգի, Սարգիսի նույն պատկերներն էին, մի ֆիգուրը՝ սրով և մեկը՝ բանալիներով:

Մի մասը 17-րդ դարի սկզբի, մյուս մասը դարավերջի գեղանկարչությունը համեմատաբար լավ էր պահպանվել: Որոշ պատկերները յուղաներկ էին, որոշը՝ ինչ-որ նոր եղանակով, որը մենք որոշեցինք համարել մեղրամոմե-մաստիկային, երկու պատկերների գույները աղոտոտ են, շատ ամուր են: Մյուս աշխատանքն արեցինք հին գեղանկարչությամբ պատված պուրակների վրա: Սվադի շերտի բարակությունը և քարերի միջև կապի թուլանալը թույլ չտվեցին սվադն ամբողջությամբ հանել: Որոշվեց քանդել պուրակները (յուրաքանչյուր պուրակ գրեթե ինը քարից էր), մաքրել գեղանկարչությունը և նոր տեղում՝ կերպարվեստի թանգարանում, նորից հավաքել <...> Այդ աշխատանքն էլ կատարվեց, բայց ամբողջությամբ հաջողվեց պահպանել միայն մեկ պուրակ, երկրորդը, պարզվեց, շատ էր վնասված: Դրանից արկղ-շրջանակներում մենք ձևավորեցինք միայն լավ պահպանված առանձին մասեր: Սյուների վրա բացված հին զարդանախշերը անչափ հետաքրքիր են, այն պահպանվել է բավարար, ոճով ու կոլորիտով ավելի շատ ադետներ ունի Էջմիածնի մ. թ. 989 թ. Ավետարանի հետ, և այն պետք է թվագրել ոչ ուշ, քան 10-րդ դարով: Չի բացառվում, սակայն, որ այն ավելի վաղ շրջանի է, հենց 6-րդ կամ 7-րդ դարի, ինչը հաստատվում է նաև տաճարի կառուցման ժամանակի մասին Հայաստանի գիտնականների կարծիքով: Որոշ զարդանախշեր ապշեցնում են իրենց գրավչությամբ: Գծի մաքրությունն ու գույների վեհությունը թույլ են տալիս մտածել, որ մենք գործ ունենք մեր երկրում Հուստինիանոսի փայլուն դարաշրջանի (483-565) միակ ու իսկական ստեղծագործության հետ: Բոլոր նախապատրաստական աշխատանքները կատարված են խնամքով, ինչը վկայում է բարձր տեխնիկան: Քարերի վրա սվադի շերտը բարակ է, հաստությունը մինչև երեք միլիմետր է, մանր-հատիկավոր, առանց ավազի, անչափ հարթ, գրեթե փայլուն: Գեղանկարչության կատարման տեխնիկան ավելի շատ հիշեցնում է որմնանկարչություն, սակայն մենք չենք համարձակվում հաստատել, որ դա հենց այն եղանակն է, որով նկարում էին մեր հին նկարիչները և վերածննդի իտալացի նկարիչները, միայն կարելի է ասել, որ կիրն այստեղ անկասկած մեծ դեր է խաղացել:

Բոլոր աշխատանքները տարվել են հուշարձանների պահպանության կոմիտեին կից Դ. Պ. Դանիելյանի նախագահությամբ ստեղծված հատուկ հանձնախմբի անմիջական հսկողության ներքո:

Թե՛ աշխատանքները, թե՛ արդյունքները տեղի նկարչական շրջանակներում մեծ հետաքրքրություն առաջացրեցին: Մոտ ապագայում կոմիտեն մտադիր է հետազոտել հանրապետության բոլոր հին հուշարձանները և այնտեղ անցկացնել գեղանկարչության փորձնական մաքրում: Փառք ու պատիվ Հայաստանին՝ անդրկովկասյան հանրապետություններից ամենափոքրին, որն առաջինն է կանգնել իր պատմական գեղարվեստական հուշարձանների պահպանության ու խոր ուսումնասիրության ուղուն: Բայց և մեզ՝ ռուսներին համար, այդ հնություններն ունեն հսկայական նշանակություն: Ե՛վ Հայաս-

տանը, և՛ Վրաստանը, և՛ Ադրբեջանը, ինչպես նաև հարևան թուրքական Անատոլիան լի են Բյուզանդիայի հուշարձաններով, որից սկիզբ է առնում մեր գեղանկարչական արվեստը:

Պ. Յուկին

11.9.1939թ.

ՀԱՄ, ֆ. 1063, ց. 1, գ. 330, թ. 85-88

Եթե աչքաթող անենք «հուշարձանների պլանավորված և խոր ուսումնասիրության» մասին Յուկինի չպատճառաբանված հիացումը, ապա ռուս մասնագետի բոլոր եզրակացություններն, անշուշտ, հավաստի են ու արժանահավատ: Ավելին, Յուկինի ուսումնասիրությունների արդյունքն իսկական հայտնագործություն էր: Այդ կապակցությամբ հայտնի արվեստաբան, նկարիչ Իգոր Գրաբարը Յուկինին հասցեագրված իր նամակում մասնավորապես գրում էր.

Մեծարգո Պավել Իվանովիչ,

Երևանից ուղարկած երկու նամակներն էլ ստացա: Շնորհակալություն: Դրանք անչափ հետաքրքիր են, և ես Ձեզ շնորհավորում եմ այդ առանձնահատուկ հաջողության համար: Ձեր հայտնագործության մասին ես կգեկուցեմ վերականգման հանձնաժողովի պլենումին, որը ես նշանակել եմ հուլիսի 25-ին: Դատելով ձեր նկարից՝ իրոք նման է 6-րդ դարին: Առ այսօր հնագույն տաճարների մասին ոչ մի նման բան չի գտնվել: Անպատճառ ջրաներկով կամ տեմպերայով արեք գունաներկումը, բնական մեծությամբ, գոնե դրվագ:

Սպասում եմ ձեր հետագա հաջողություններին:

Ողջունով՝ Ի. Գրաբար

ՀԱՄ, ֆ. 1063, ց. 1, գ. 330, թ. 67

Հայտնագործությունը՝ հայտնագործություն, բայց «նոր կյանքի» կառուցման մշակութամերժ առօրյան իրենն էր պահանջում: Որոշված էր՝ կառուցվելու է կինոթատրոնի շենքը, ու ոչ մի այլ տրամաբանություն ընդունվել չէր կարող:

Որմանակարների բեկորները, որոնք տեղավորված էին փայտե արկղերի մեջ, երկար ժամանակ անտեր գցված էին կինոթատրոնի շենքի բակում և «խանգարում էին» շինարարներին: Ահա՝ Հայկինոտրեստի ղեկավարությունը նամակ է ուղարկում ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Փիլուզյանին հետևյալ բովանդակությամբ.

**Ժողովուրդների նախագահ
ընկ. Ա. Փիլուզյանին**

«Մոսկվա» կինոթատրոնի շինարարությունն ավարտելու համար տրամադրվել է 140,0 հազ. ռուբլի:

Այս գումարի մեջ մտնում են Ալավերդյան փողոցի երկայնքով ցանկապատումն ու բակի բարեկարգումը, ասֆալտապատումը: Նախապատրաստական աշխատանքներն

արդեն սկսված են, բայց բարեհաջող ավարտին խանգարում են բախում կանգնած՝ Պոդոս-Պետրոս եկեղեցու քանդված մնացորդները, երկու տախտակապատ սյուները: Այդ սյուների երեսկողմին նկարված են որմնանկարներ, իբրև դրանք շատ հին են, բայց դրանք եկեղեցին քանդելիս բրիչով կոտրատվել են:

Այնքանով, որքանով դրանց պատմական արժեքը խիստ կասկածելի է, և դրանք թույլ չեն տալիս համապատասխանաբար ձևավորել բակը, խնդրում ենք ձեր թույլտվությունը դրանք քանդելու համար:

**Հայկինոյի կառավարիչ՝ Մարկոսյան
Ինժեներ՝ Շահնազարյան**

ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 330, թ. 51

Գեթ որմնանկարների մնացորդները փրկելու համար ստեղծվեց հանձնաժողով, որի մեջ ընդգրկվեցին Մարտիրոս Սարյանը, Գարեգին Լևոնյանը, Տարագրոսը, Լիդիա Դուրնովոն, Փանոս Թերլեմեզյանը, Ռուբեն Դրամբյանը և ուրիշներ: Արվեցին բազմաթիվ առաջարկություններ: Մարտիրոս Սարյանն ու Տարագրոսը առաջարկում էին սյուները չխախտելու համար դրանք թողնել իրենց տեղում և հատուկ տաղավար կառուցել այն պահպանելու համար: Թերլեմեզյանը և մյուսները գտնում էին, որ որմնանկարները պետք է տեղափոխվեն թանգարան, որովհետև չկա և ոչ մի երաշխիք, որ դրանք տեղում ապահով կմնան: Երկար վեճերից ու քննարկումներից հետո չարվեց ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը: Բոլորն էլ անհետևողական գտնվեցին:

Այսօր մեր պատմության պետական թանգարանում այդ որմնանկարներից լոկ մի քանի բեկորներ են պահպանվել:

Եվ այսպես՝ հիմնովին կործանվեց մի հուշարձան, որ կարող էր դառնալ յուրաքանչյուր ժողովրդի հպարտանքի առարկան, որը կրում էր իր մեջ հայոց քաղաքակրթության բազում գաղտնիքներ: Ոչնչացվեց ազգային մշակույթի մի որոշակի շերտ, մի որոշակի երանգ, իմաստ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հակոբյան Թ. Խ. Երևանի պատմությունը. 1500-1800, Ե., 1971, էջ 353:
2. Երկար տարիներ տիրապետել է այն կարծիքը, թե Պոդոս-Պետրոս եկեղեցին համեմատաբար նոր կառույց է եղել: Քանդվելուց հետո պարզ դարձավ, որ այն տարբեր ժամանակներում վերանորոգվել է: Համենայն դեպս ստույգ հայտնի է, որ 1679 թ. երկրաշարժից հետո՝ 90-ական թվականներին, եկեղեցին վերականգնվել է: Պատերի վրայի երեք խաչքարերին, որոնք վերաբերում են 1692 և 1693 թվականներին, հիշատակություններ կան այն անձանց մասին, որոնց նվիրաբերած գումարներով վերակառուցվել է եկեղեցին: Խաչքարերն իր հիշատակին քանդակել է տվել վերոհիշյալ Ջաքարը: (Տե՛ս Ղաֆադարյան Կ. Երևան, միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները: Ե., 1978, էջ 107): Այնուհետև, եկեղեցին երկու անգամ վերանորոգվել է, որի մասին վկայում են պատերի վրայի ար-

ձանագրությունները՝ մեկը՝ 1778 թ., մյուսը՝ 1811 թ.: 1778 թ. վերանորոգման մասին եկեղեցու հարավային պատին կար արձանագրություն, որ վերանորոգումը կատարվել է կաթողիկոսական միջոցներով, Սիմեոն Երևանցու անմիջական նախաձեռնությամբ ու հոկոդությամբ:

3. 1673 թ. երկրաշարժից հետո Պողոս-Պետրոս եկեղեցին վերականգնվեց: Ըստ Գաբրեղին Լևոնյանի՝ Նաղաշ Հովնաթանը Երևան էր հրավիրվել վերականգնվող եկեղեցիների՝ Պողոս-Պետրոսի, Ս. Անանիայի և Կաթողիկեի ներքին պատերը զարդարելու համար: (Գ. Լևոնյան «Հովնաթանյան Նաղաշները հայ նկարչության պատմության մեջ», «Խորհրդային Արվեստ», Երևան, 1938թ. N 2 էջ 24-29):



ՈՐՈՔԻՆԷՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ ԵՒ Ս. ՕԳՈՍՏԻՆՈՍԻ ՀԱՅ ՆԱՄԱԿԱԳԻՐԸ

Յոյժ գնահատելի երեւոյթ է այն հանգամանքը, որ ներկայումս, յանձին Թամար Տասնապետեանի, հայութեան մէջ ունենք մի տաղանդաւոր աստուածաբանուհի: Երանի թէ իր նմանները շատ լինեն մեր Եկեղեցում, որպէսզի փոխուի այն սխալ մտայնութիւնը, որի համաձայն աստուածաբանութիւնը նկատուում է լոկ տղամարդկանց մենաշնորհն ու սեփական կալուածքը:

Միւս կողմից էլ պէտք է ասել, որ Թամար Տասնապետեանի աստուածաբանական վաստակը իսկապէս հիացմունքի արժանի է: 2006 թ. Բէրլինում հրատարակուած նրա «Որոգինէս սուրբ» անունը կրող գրքի վերջաւորութեան մենք տեսնում ենք ցանկը նրա լոյս ընծայած աւելի քան 60 գրքերի, որոնք ընդհանուր առմամբ բաղկացած են աստուածաբանական մանրակրկիտ ուսումնասիրութիւններից, Յիսուսի չարչարանաց խորհրդի, Ս. Կոյս Մարիամ Աստուածածնի վերաբերեալ մեր նախնեաց գրութիւններից, հայրաբանական յօդուածներից, ինքնատիպ նամակներից ուղղուած Որոգինէս Աղեքսանդրացուն (185-253 թթ.) եւ Ս. Օգոստինոսին (354-430 թթ.) դիտուած ֆեմինիստ աստուածաբանութեան տեսանկիւնից:

Մեր տրամադրութեան տակ ունենք միայն մի քանիսը վերոյիշեալ հրատարակութիւններից, որոնք ինքնըստինքեան խօսում են Թամարի մտաւորական եւ գիտական բարձր պատրաստութեան, ինչպէս նաեւ նրա մաքրաբոյր հոգու եւ աստուածատուր շնորհների մասին:

Վերջերս նա ինձ ուղարկել էր իր մէկ կարեւոր աշխատութիւնը, որ կոչւում է «Որոգինէս սուրբ»: Դա երկարաշունչ եւ միաժամանակ աստուածաբանական հմտութեամբ ու խորքով գրուած մի նամակ է ուղղուած Որոգինէսին: Նմանատիպ մի նամակ նա հրատարակել էր 2005 թ. ուղղուած Ս. Օգոստինոսին:

Որոգինէս Աղեքսանդրացին ամենայն իրաւամբ համարւում է հիմնադիրը Սուրբ Գրոց գիտականացուած մեկնութեան: Միեւնոյն ժամանակ նա եղել է ներհուն քարոզիչ, վաստակաւոր դաստիարակ, քրիստոնէութիւնը ջատագովող փայլուն աստուածաբան: Նրա որոշ եզրայանգումները կրել են ազդեցութիւնը ստոյիկեան եւ նոր-պլատոնական մտածելակերպի: Հետագայում նա դատապարտուել է Կ. Պոլսի եկեղեցա-

կան ժողովից (553 թ.): Այդուհանդերձ նա համարում է Եկեղեցու առաջին հայրերից մեկը:

Թամարը հենց սկզբից չի վարանում Որոզինէսին որպէս սուրբ ընդունելու, դա երեսն է գալիս ուղղակի գրքի վերնագրից՝ «Որոզինէս սուրբ»:

Քանի դեռ Եկեղեցին պաշտօնապէս չի հռչակել Որոզինէսին իբրեւ սուրբ, Թամարի այդ կապակցութեամբ առած քայլը միգուցէ յանդգնութիւն համարուի, բայց, իրականում, դա վկայում է այն մասին, որ ինքը խորապէս ուսումնասիրել է լաւագոյնս ըմբռնել է մեծ աստուածաբանի անբասիր կեանքն ու վաստակը: Այս առումով կարելի է նոյնիսկ ասել, որ Թամարը կանխում է Հռոմի Պապին, որ միայն վերջերս, 2007 թ. Ապրիլի 25 ին, իր շնորհած հերթական մեկ ունկնդրութեան ընթացքում ասել է. «Խորհրդածելով եկեղեցու հնագոյն շրջանի մեծագոյն անձնատրութիւնների մասին, եկեք այսօր ճանաչենք նրանցից ամենահռչակաւորին՝ Որոզինէս Աղեքսանդրացուն»:

Որոզինէսի կեանքի եւ աստուածաբանական վաստակի մասին ամփոփ տեղեկութիւններ տալուց յետոյ Թամարը անցնում է իր բուն նպատակին, բացատրելու համար այն, որ Որոզինէսի արտայայտութիւններում նկատուում է որոշ կնատեսացութիւն կամ իգականութեան արհամարհում: Դրա հիմնական պատճառը այն հայրատիրական ոգին է, որ գերիշխող է եղել Եկեղեցու նուիրապետութեան, վարդապետութեան եւ Ս. Գրոց մեկնութեան բնագաւառներում: Այդուհանդերձ Թամարը, արդար մօտեցումով, մեջբերում է նաեւ Որոզինէսի այն խօսքերը, ուր նա հոգեւոր իմաստով չի ընդունում որեւէ խտրականութիւն այրերի եւ կանանց միջեւ, երբ գրում է. «Աստուծային Ասուրբ Գիրքը չուզեր այրերը եւ կիները իրարմէ բաժնել սեռով: Աստուծոյ առջեւ չկայ սեռի զանազանում, բայց հոգիին արժէքով է որ այր կամ կին կը սուրինք: Որքան կնոջական սեռին պատկանողներ Աստուծոյ քով կը համարուին իբրեւ զօրաւոր այրեր, որքան զօրաւոր այրեր դրուած են տկար եւ նուաղկոտ կիներուն կարգին» (Թ. Տ., էջ 45-46):

Բայց Թամարը դրանով չի գոհանում: Նա, համաձայն ֆեմինիստ աստուածաբանութեան կատարած որոնումների ձեռք բերած տուեալների, հաստատում է, թէ «Նախնական Եկեղեցիին բազմաթիւ համայնքները բաղկացած էին կիներէ եւ այրերէ, եւ կիները հոն այրերուն հետ հաւասար էին, վերցնելով առաքեալի, եպիսկոպոսի եւ համայնքի պատասխանատուի դերեր» (Թ. Տ., էջ 9):

Ճիշտ է, որ նախնական Եկեղեցու բազմաթիւ համայնքները բաղկացել են կանանցից եւ տղամարդկանցից ընկերային համահաւասար իրաւունքներով, բայց ինչ փաստ կայ, որ նրանք ստանձնում էին նաեւ միեւնոյն պաշտօնները, որ այդ համայնքներում կանայք վարում էին «առաքեալի, եպիսկոպոսի եւ համայնքի պատասխանատուի դերերը»: Մանաւանդ նկատի ունենք եպիսկոպոսի դերը: Թէ ինչպիսին է եղել այդ եպիսկոպոսի հանգամանքը, չի ասում: Արդեօք նա նկատուել է պարզապէս իբրեւ «տեսուչ եկեղեցեաց», այսինքն բողոքականների ընդունած superintendent-ի իմաստով, միայն եպիսկոպոսի վարչական հանգամանքով, թէ՞ նա ըստ առաքելական յաջորդականութեան ձեռնադրութիւն ստացած եւ հոգեւոր իշխանութեամբ օժտուած մեկն է եղել:

Ամենայն հաւանականութեամբ այդ առաքեալի եւ եպիսկոպոսի (վարչական առումով) դերը ստանձնած լինի նաեւ Թամարի յիշած Մարիամ Մագդաղենացին, որն իս-

կապելա էլ եղել է Քրիստոսի յարութեան պատգամի առաջին վկան եւ ըստ պարականոն Աւետարանների կամ գնոստիկեան վարդապետութեան՝ Տիրոջ սիրելի աշակերտուհին: Մարիամ Մագդաղենացուն վերագրուած Աւետարանում յիշուում է, թէ նա մի տեսիլքում Յիսուսից ստանում է յատուկ ուսուցումներ, որի պատճառով էլ Պետրոս առաքելաւր զարմանքով ասում է. «Վարդապետը խօսել է մի կնոջ հետ այնպիսի բաների մասին, որոնք անգիտանում ենք: Այնպէս որ հարկ է վերադառնալ ու լսել այդ կնոջը: Արդեօ՞ք Տէրը նրան մեզանից գերադասել է»:

Վերոյիշեալի առնչութեամբ Թամարը, ի շարս այլ գրութիւնների, յիշում է նաեւ Փիլիպպոսի Գործերը (IV-V-րդ դարերում գրուած), ուր «Մարիամ Քրիստոսէն կը ստանայ առաքելաւր իր առաքելութեան մէջ քաջալերելու եւ իրեն իր ճամբորդութիւններուն մէջ ընկերակցելու առաքելութիւն» (Թ. Տ., էջ 94): Այնուհետեւ հոյակապ է Թամարի եզրակացութիւնը. «Մարիամ Մագդաղենացին, որուն Յիսուս «կիւն» կ'անուանէ, կ'անձնաւորէ Փրկիչը փնտրող մարդկութիւնը: Հարսը, ան նաեւ Եւան է: Եղեմի պարտեզին մէջ առաջին կիւնը նախապէս խոյս տուած էր, Յարութեան պարտեզին մէջ, կիւնը կը ճանչնայ իր Վարդապետը եւ այսուհետեւ զայն չի լքեր: Երեկոյեան զեփիուին մէջ Աստուած կը խօսէր անոր հետ, որ պիտի հմայուէր մեղքով, Յարութեան առաւօտուն ան կու գայ չորցնել արցունքները անոր որ եօթը դէներէն արձակած էր: Եւ անկումի Եւան կը դառնայ նաեւ հաւատքի Եւան» (Թ. Տ., էջ 96):

Թամար Տասնապետեանը, Ս. Օգոստինոսին եւ Ռոքինէսին ուղղած իր նամակներով, փորձ է անում Նոր Կտակարանի երկու կնոջական կերպարներին Մարիամ Աստուածածինն եւ Մարիամ Մագդաղենացուն ազատագրել Աւետարանի հայրատիրական խմբագրումների կաշկանդումներից: Դա ինքնին ողջունելի փորձ է: Դրա հետ մեկտեղ, եթէ նկատի ունենանք Թամարի ասածի համաձայն Եկեղեցին իբրեւ «հաստատութիւն» (Թ. Տ., էջ 10), ապա անհրաժեշտ է, որ այն ձերբազատուի տղամարդկանց տիրապետութիւնից: Բայց երբ հարցը տեղափոխուում է տարբեր մակարդակների, երբ, օրինակ, ֆեմինիստական դիրքերից փորձ է արւում մեկնաբանել Ս. Երրորդութեան կամ Քրիստոսաբանութեան յատուկ հարցեր, այն ժամանակ, դժբախտաբար, կատարւում են լուրջ շեղումներ քրիստոնէական ուղղափառ դրոյթներից, ընդ որում հանդէս է գալիս բարոյագիտական մի նոր հայեցակարգ, որը բոլորովին հեռու է քրիստոնէական լինելուց:

Հարկ է շեշտել, որ Աստուծոյ մասին գոյութիւն ունեցող վարդապետական բնոյթի բացատրութիւնները հիմնուած են աստուածայայտնութեան տուեալների վրայ, այնքանով որ դրանք անհրաժեշտ են մեր փրկութեան համար: Մեղադրանքը, ըստ որի հայրատիրական մեկնաբանութիւնները զրկել են Աստծուն իր իզականութիւնից, բոլորովին անհիմն է եւ անտեղի, երբ յատկապէս առ ոչինչ է համարում Լոգոսի մարմնացումը տղամարդու կերպարանքով: Ինքնին վտանգաւոր է աստուածային խորհուրդների մասին խօսելիս ստուգութիւն ցուցաբերելը, միշտ պիտի նկատի ունենալ Հերոնիմոսի ասածը. «Այն, ինչպիսին որ Աստուած չէ, դա է որ մենք գիտենք, իսկ ինչպիսին որ նա է, մենք չգիտենք» (Hieronymus, Texte der Kirchenväter, I, München, 1963, էջ 25):

Յիսուս Քրիստոսի մարդեղության խորհուրդը ինքնաբերաբար մեզ պետք է մղի փառատրական առումով (եւ ոչ թէ կոյր հաւատքով) պաշտելու այդ խորհուրդը եւ դրա մասին խոկալու, այլապէս նոյն սխալը կը գործենք, ինչ որ արեցին 451 թ. Քաղկեդոնի ժողովի մասնակիցները, քննարկելով մարմնացած Յիսուսի աստուածային եւ մարդկային բնութիւնները եւ դրանց վերաբերեալ բանաձեւումներ որդեգրելով, որոնք պարզապէս մարդկային մտքի արգասիք են:

Իսկ թէ ինչո՞ւ Յիսուսը մարմնացաւ տղամարդու կերպարանքով, դա էլ ունի իր խորհուրդը, որն արդիւնք է աստուածային անկաշկանդ նախընտրութեան եւ կարգաւորութեան: Իսկ եթէ սիրահար ենք հարցադրումներ անելու նման գերբնական խորհուրդների մասին, այն ժամանակ, հետեւողական լինելու դէպքում, պիտի հարց տանք նաեւ, թէ Յիսուս ինչո՞ւ չծնունեց երկսեռ յատկանիշներով, քանի որ ֆեմինիստներն ասում են, թէ տղամարդու կերպարանքով մի Փրկիչ չի կարող փրկել կանանց: Ինչո՞ւ նա չծնունեց իբրեւ յոյն, հռոմէացի, սեւամորթ կամ եգիպտացի, քանի որ եգիպտացիք էլ ունէին գաղափարը մի գերագոյն աստուածութեան:

Որպէսզի ձեռքագատուենք նման անտեղի հարցեր տալուց եւ քննարկումներ անելուց, անհրաժեշտ է, որ սկզբից եւեթ գիտենանք ու համոզուենք, որ Աստուած ընտրութիւն անելիս բոլորովին անկախ եւ անկաշկանդ է գործում, նա ենթակայ չէ մեր նախասիրութիւններին: Այս է պատճառը, որ Նրա նախաձեռնած ողջ գործընթացը մարդկանց փրկելու նպատակով, կորստեան մատնուածների համար «յիմարութիւն» է (Ա Կորնթ. Ա 18): Աստուծոյ իմաստութիւնը տարբեր է մարդկային իմաստութիւնից:

Վերադառնալով մեր բուն նիւթին մենք ամենայն գնահատանքով արձանագրում ենք, թէ Թամար Տասնապետեանի «Օգոստինոս սիրելի» եւ «Որոգինէս սուրբ» գրքերում տեսանելի է մի առողջ, կշռադատուած եւ սուրբգրային տեսակէտների հետ հաշտ «ֆեմինիզմ», որն իբրեւ ուղենիշ ունի Ս. Կոյս Մարիամի տիեզերական մայրութիւնն ու Մարիամ Մագդաղենացու եկեղեցական առանձնայատուկ առաքելութիւնն իբրեւ քարոզող եւ փոխանցող Տիրոջ յարութեան փրկաբեր պատգամի:

Վերոյիշեալ երկու գրքերը մեզ առիթ են տալիս նշուած երկու սրբուհիների կերպարները աւելի մոտիկից ճանաչելու եւ վերագնահատելու նրանց տեղն ու դիրքը Եկեղեցում:

Մեզ կը մնայ ասել. Վարձքդ կատար, սիրելի՛ Թամար, դու հայ աստուածաբանուհի, որ առաքինի կենցաղովդ ու բեղուն վաստակովդ բարձրացնում ես հայուհեաց դերն ու վարկը մեր սուրբ Եկեղեցու նուիրական կեանքում:

ՅԱԿՈԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԼՆՃԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՆՎԻՐՎԱԾ ԽԱՉԱԿՐԱՅ ԴԱՐԱՇՐՋԱՆԻՆ

Isabelle Augn, Byzantins, Arméniens & Francs au temps de la croisade: Politique religieuse et reconquise en Orient sous la dynastie des Comnènes 1081-1185, Paris, 2007, p. 417.

Իզաբել Օժե, Բյուզանդացիները, հայերը և ֆրանկները խաչակրության դարաշրջանում. եկեղեցական քաղաքականությունը և Արևելքի նվաճումը Կոմենենոսների հարստության օրոք 1081-1185, Փարիզ, 2007, էջ 417.

Ֆրանսիայի Գրքի Ազգային կենտրոնի և Մոնպելիե Գ համալսարանի մրցանակով հրապարակվել է Մոնպելիե Գ - Պոլ Վալերի համալսարանի պրոֆ. Իզաբել Օժեի «Բյուզանդացիները, հայերը և խաչակիրները. Կրոնական քաղաքականությունը և Արևելքի վերանվաճումը Կոմենենոսների հարստության ներքո 1081-1185 թթ.» դիսերտացիոն-մենագրությունը: Աշխատանքի սկզբում հեղինակը շնորհակալություն է հայտնում իր ուսուցիչ, Մոնպելիե Գ համալսարանի պրոֆ. Ժ. Դեդեյանին և աշխատանքի գրմանը նպաստած մասնագետներին: Առաջաբանում (էջ 7-10) Ժ. Դեդեյանն անդրադառնում է Իզաբել Օժեի գիտական ուղուն, ներկայացնում է աշխատանքի գրման հիմնական ուղղությունները, որոնցով հեղինակը նորություն է բերում Մերձավոր Արևելքի ԺԲ դարի եկեղեցաքաղաքական իրադարձության հետազոտությանը:

Բուն աշխատանքը բաղկացած է ներածությունից (էջ 11-52), երեք գլուխներից, ընդհանուր ամփոփումից և երկու հավելվածից:

Ներածության մեջ հեղինակն անդրադառնում է Բյուզանդական կայսրության ԺԱ դ. երկրորդ կեսի արևելյան քաղաքականությանը, որն անմիջականորեն բխվում էր Սելջուկյան կայսրության և նրա նվաճումների հետ, Մանազկերտի ճակատամարտի (1071 թ.) նշանակությանը: Անդրադառնալով Ալեքս Ա Կոմենենոսի քաղաքականությանը՝ հեղինակը քննարկում է Հովհաննես և Մանուել Կոմենենոսների Արևելյան քաղաքականությունը, Իկոնիայի և Դանիշմանյան պետությունների նկատմամբ նրանց վարած քաղաքականությունը, Մակեդոնյան հարստության Արևելյան քաղաքականության արտացոլքը Բյուզանդական հարուստ մատենագրության մեջ: Հեղինակն անդրադառնում է Առաջին երեք Կոմենենոս կայսրերի դարաշրջանում Բյուզանդական Արևելքի սահմանային գոտում ազգային փոքրամասնությունների՝ հայկական և հակոբիկ-ասորական ազգաբնակչության կատարած դերին: Խոսելով հայկական ազգաբնակչության Բուն հայրենիքից արտագաղթի մասին, հեղինակն հետևելով Ժերար Դեդեյանին, մատնանշում է երեք հիմնական պատճառ. 1. «Ֆեոդալականացում», 2. թուրքական ներխուժումները և 3. Բյուզանդիայի քաղաքականությունը: Փոքր Ասիայում Բյուզանդական կայսրության նման քաղաքականության առաջին ծիծեռնակ է համարում Մելիաս գորավարին, որը

Լիկանդոս բանակաթեմում ամրապնդում էր Արևելահռոմեական կայսրության դիրքերը¹:

Ժ-ԺԱ դարերում դեպի Կապադովկիա միտված այդ արտագաղթի վերջնական բնակատեղի է դառնում Կիլիկիան, ուր ԺԲ դարի ընթացքում ստեղծվում է հայկական պետականություն: Այնուհետև հեղինակն առանձին-առանձին անդրադառնում է Բյուզանդական կայսրության Արևելքի սահմանային գոտում բնակվող փոքրամասնությունների՝ հայ և ասորի ազգաբնակչության հակաքաղկեդոնական ուղղվածությանը, որը հակադրվում էր բյուզանդական կայսրության պաշտոնական գաղափարախոսությանը սկսած Ե դարի վերջերից, նույնացնելով Քաղկեդոնի ժողովի դավանաբանությունը նեստորականության հետ: Հայ-բյուզանդական եկեղեցական հակամարտությունը դավանաբանության և ծեսի ասպարեզում արտացոլված է «Գիրք թղթոցում», ուր արտահայտված է Քաղկեդոնի նկատմամբ Հայոց Եկեղեցու անհանդուրժողականությունը, ասորաբյուզանդական եկեղեցական հակամարտությանը, որին մանրամասն անդրադառնում է ԺԲ դարի մատենագիր Միքայել Ասորին: Միջեկեղեցական այս տարաձայնությունները օգտագործվում էին տարածաշրջանի ոչ քրիստոնյա ուժերի՝ սկզբում Մասանյան Պարսկաստանի, ապա՝ Արաբական խալիֆաթի և Սելջուկյան սուլթանության կողմից², որոնք փորձում էին իրենց քաղաքական շահերի տեսանկյունից Քրիստոնյա Արևելքի եկեղեցական կազմակերպությունները հակադրել Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականությանը՝ նպաստելով նշված փոքրամասնությունների եկեղեցական նվիրապետական համակարգերի կայունացմանը: Ի տարբերություն հակաքրիստոնեական այդ ուժերի քաղաքականության, Բյուզանդական կայսրությունը հատկապես Մակեդոնական կայսրերի իշխանության դարաշրջանում (Թ-ԺԱ դդ.) փորձում էր միավորել արևելքի քրիստոնյաների ուժերը ընդդեմ Արաբական խալիֆաթի՝ փորձելով եկեղեցական բանակցությունների միջոցով մեղմել ծիսադավանական հակասությունները: Այդ քաղաքականությունը համահունչ էր Բագրատունիների ծրագրերին, որոնք փորձում էին իրենց իշխանության ներքո միավորել Կովկասի քրիստոնյա ժողովուրդներին, միասնական հակահարված տալու համար արաբական տիրապետությանը: Այդ քաղաքական կուրսի դրսևորումներից էր հայկական ռազմական ուժերի լայն մասնակցությունը Արաբական խալիֆաթի դեմ սանձազերծված պատերազմում՝ բյուզանդական դրոշի ներքո: Ի. Օմեն երկու փուլի է բաժանում այդ քաղաքականությունը. առաջին փուլում բյուզանդացիները փորձում են ներգրավել իրենց դաշնակիցներին արաբների դեմ մղվող պատերազմում, իսկ երկրորդում՝ նվաճել քրիստոնյա պետական միավորումների տարածքները: Այդ քաղաքականությունն ակնհայտ է դառնում Բարսեղ Բ Բուլղա-

¹ Այդ մասին տե՛ս G. Dndnryan, Mleh le Grand; stratŕge de Lykandos. – REArm NS 15, 1981, p. 73-102:

² Մասանյան Պարսկաստանի և Արաբական խալիֆաթի նկատմամբ Բյուզանդական կայսրության քաղաքական հակամարտության ոլորտում Հայոց և Հակոբիկ Ասորական Եկեղեցու դիրքորոշումը պարզաբանելու համար հեղինակը հիմնվում է Ն. Գարսոյանի, Ժ.-Պ. Մահեի և Ե. Հոնիգմանի աշխատություններին (N. Garsoïan, et J.-P. Mahé, Des Parthes au califat, quatre leçons sur la formation de l'identité arménienne [Travaux et mémoires du centre de recherche d'histoire et civilisation de Byzance, collège de France, monographies 10], Paris, 1997; N. Garsoïan, L'Eglise arménienne et le grande schisme d'Orient [CSCO 574, subsidia 100], Louvain, 1999; Histoire du christianisme, t. III, Les Eglise d'Orient et Occident (432-610), Paris, 1998, p. 1125-1167; t. IV, Evêques, moines et empereurs (610-1054), Paris, 1993, p. 457-647; E. Honigmann, Le couvent de Barsauma et le patriarcat jacobite d'Antioche et de Syrie, Louvain, 1997):

րասպանի իշխանության տարիներին: Հայոց Եկեղեցին և Բագրատունիների ստեղծած պետությունը սկսեցին ավելի շրջահայաց քաղաքականություն վարել, երբ հայտնի դարձավ, որ Բյուզանդական կայսրությունը նպատակ է հետապնդում նվաճել ողջ Հայաստանը: Դավանանքի դերն այդ իրադարձություններում ակնհայտ էր, քանի որ բյուզանդական կողմը շեշտը դնում էր քաղկեդոնական ազգաբնակչության բարյացկամ վերաբերմունքի վրա, որը հեշտացնում էր Կովկասի «ազատագրման» բյուզանդական ծրագիրը³:

Հեղինակն ուշադրություն է հրավիրում ողջ Քրիստոնյա Արևելքում Բյուզանդական կայսրության վարած քաղաքականության այն հանգամանքի վրա, որ հիմնվելով Արաբական խալիֆայթի տիրապետության ներքո գտնվող Մեկկիտ Եկեղեցու նվիրապետական կառույցների վրա՝ փորձում է այն դարձնել իր գործիքը տարածաշրջանում իր տիրապետությունը հաստատելու համար: Իրադրությունն ավելի է բարդանում, երբ առաջին խաչակրաց ռազմարշավից հետո արևելքում հաստատվում է նաև Կաթոլիկ Եկեղեցին, որը փորձում էր օգտագործել ընդդեմ բյուզանդական կայսրության Քրիստոնյա Արևելքի բոլոր քրիստոնեական համայնքների հակասությունները, որոնք խմորվել էին դարերի ընթացքում: Այստեղ, իհարկե, կարելի էր խուսափել Քրիստոնյա Արևելքի որոշ Եկեղեցիների տրվող «միաբնակ» տերմինից և դրա փոխարեն օգտագործել հակաքաղկեդոնական եզրը:

Ներածության երկրորդ մասում Իզաբել Օմեն անդրադառնում է թեմայի առումով իր օգտագործած սկզբնաղբյուրների արժևորմանը: Հետևելով Ֆ. Շալանդոնի, Պ. Մագդալինոյի և Կլ. Կաենի աշխատություններին՝ հեղինակը ներկայացնում է թեմային վերաբերող պատմական սկզբնաղբյուրները ըստ լեզուների՝ ներկայացնելով յուրաքանչյուր սկզբնաղբյուրը ներկայացնող պատմաաղբյուրագիտական հետազոտությունները: Բյուզանդական սկզբնաղբյուրների բաժնում ներկայացված են Աննա Կոմնենեի, Հովհաննես Կիննամոսի, Նիկետաս Խոնիատեսի պատմագրական երկերը, Ալեքս Ա Կոմնենոսի իշխանության տարիների մասին պատմող Նիկեփոր Վրիենոսի և Հովհաննես Ջոնարասի աշխատությունները, Հովհաննես Կոմնենոսի՝ արևելյան ռազմարշավների մասին պատմող, Միքայել Իտալիկոսի, Նիկեփոր Բասիլակեսի և Թեոդոր Պրոդրոմոսի չափածո ներբողյանները, Հովհաննես Ցեցեսի, Թեոֆիլակտ Ախրիդացու, Եվստաթեոս Թեսալոնիկցու, Եվթիմե Մալակեսի և Նիկոլաս Մետոնի ճառերն ու մատենագրական այլ ժանրի երկերը, Կոնստանդին Մանասեի դեսպանագնացությունը և Հովհաննես Փոկասի ուխտագնացությունը Երուսաղեմ, Թեոդոսիոս Գուդելիսի հեղինակած Ղևոնդ Երուսաղեմացու վարքը, կայսերական և պատրիարքական նոտարատներից դուրս եկած վավերագրերը, պահպանված կնիքները: Լատիներենով գրված սկզբնաղբյուրներից անդրադառնում է առաջին երեք խաչակրությունների պատմությունը տեղում ներկայացնող պատմագիրներին (Անանուն, Ռայմոնդ Ագիլեցի, Ֆուշե Շարտրացի, Տուլեբոդ, Ռաուլ Կաենցի, Ալբերտ Այքսեցի, Եվդ Դոյ, Վիլհելմ Մուրացի), շեշտը դնելով Բյուզանդական կայսրության և Մերձավոր Արևելքի քրիստոնյաների հետ լատին պետությունների փոխհարաբերու-

³ Այս դարաշրջանի Բյուզանդիայի արևելյան քաղաքականության խնդիրների արծարծման համար հեղինակը դիմում է Պ. Խարանիսի, Հր. Բարթիկյանի, Ժ. Դագրոնի և Վ. Արուստյունովա-Ֆիդանյանի աշխատություններին:

յունների վրա: Ապա անդրադառնում է Եվրոպայից դեպքերին հետևող հեղինակներին (Օդերիկ Վիտալ, Հակոբ Վիտրի, Օտտոն Ֆրենզինգցի), ուխտագնացների նկարագրություններին (Թեոդորիկ), եկեղեցական վավերագրերին ու հատկապես թղթերին, որոնք հրապարակված են Մինեյի «Patrologia Latine» շարքում և Մերձավոր Արևելքի լատին պետությունների ու կրոնական կազմակերպությունների վավերագրերը ներկայացնող հրապարակումներում:

Հայկական սկզբնաղբյուրներից Իզաբել Օմեն անդրադառնում է ԺԲ դ. հեղինակներ Մատթեոս Ուռհայեցու և Գրիգոր Երեցի Տարեգրություններին, Սամվել Անեցու Ժամանակագրությանը, ԺԳ դարի պատմագիրներ Վարդան Արևելցու և Կիրակոս Գանձակեցու երկերին, Սմբատ Սպարապետի Տարեգրությանը, Ներսես Շնորհալու և Գրիգոր Տղայի նամակագրությանն ու նրանց չափաձու երկերին, Ներսես Լամբրոնացու մատենագրական ժառանգությանը, անդրադառնում է նաև դարաշրջանի պատմությանն անդրադարձած հիշատակարաններին: Ասորական սկզբնաղբյուրների մեջ հեղինակն հատուկ անդրադառնում է Միքայել Ասորու և Բար Եբրեուսի Ժամանակագրությանը, 1234 թ. Անանունի Ժամանակագրական երկին: Արաբական սկզբնաղբյուրներից հեղինակն անդրադառնում է Իբն ալ-Քալանիսիի, Մուկդիտ Ուսամայի, Իբն ալ-Ասիրի, Աբու Շամայի, Իբն Շադադի պատմական երկերին, որոնք ներկայացնում են ԺԲ դարի պատմությունը և տարածաշրջանի աշխարհագրությունը:

Բուն հետազոտությունը բաղկացած է երեք մասից, ընդհանուր եզրակացություններից, երկու հավելվածից, օգտագործված գրականության, անձնանունների ու տեղանունների ցանկերից:

Առաջին մասն անվանված է «Հունական Եկեղեցին դժվարին կացության մեջ»: Այստեղ հեղինակը ներկայացնում է թյուրքերի, ապա լատինների մուտքը տարածաշրջան և դրանց հետևանքները Հույն Եկեղեցու վրա՝ մատնանշելով, որ մինչ այդ իրադարձությունները Մակեդոնական հարստության կայսրերի ռազմարշավների հետևանքով փոխվել էր տարածաշրջանի, հատկապես Անատոլիայի⁴ էթնոգավանական իրադրությունը, քանի որ բյուզանդացիները տարածաշրջանում էին բնակեցրել մեծ քանակությամբ հայեր և ասորիներ: Հիմնվելով Մատթեոս Ուռհայեցու և Աննա Կոմնենեի հաղորդած տեղեկությունների վրա՝ Իզաբել Օմեն ցույց է տալիս, որ թյուրք-սելջուկյան ռազմարշավներից հետո Բյուզանդական Արևելքում կատարվում են շրջադարձային փոփոխություններ, տարածաշրջանն (Սև ծովի հարավ, Կապադովկիա, Կիլիկիա, Հյուսիսային Ասորիք) իրենց ձեռքում պահելու համար կայսրերը այն բնակեցնում են հայերով և ասորիներով: Մյուս կողմից էլ Սելջուկների ճնշումների հետևանքով, ԺԱ-ԺԲ դդ. մեծ թվով քրիստոնյաներ ընդունում են մահմեդականություն (բերվում է դանիշմանյանների օրինակը): Միաժամանակ նշված տարածքներում բավական թուլանում է Բյուզանդական Եկեղեցին, նվաճված տարածքների և Փոքր Ասիայի բարձր հոգևորականությունը (շուրջ 45 մետրոպոլիտ, 10 արքեպիսկոպոս և 400 եպիսկոպոս) ավելի հաճախ սկսում է բնակություն հաստատել մայրաքաղաքում⁵, նվաճված տարածքներում կազմալուծվում են վան-

⁴ Փոքր Ասիայի փոխարեն աշխարհագրական այս տերմինն է գերադասում օգտագործել հետազոտողը:

⁵ Առաջանում է եպիսկոպոսի մի նոր կարգավիճակ, որը ԺԲ դարի բյուզանդական կանոնական գրականության մեջ ստացել է «σχολλάζων» անվանումը:

քերը: Խաչակրաց ռազմարշավների հետևանքով նվաճված տարածքներում Կաթոլիկ Եկեղեցին, բյուզանդական եկեղեցական կառույցներին զուգահեռաբար, հետզհետե սկսում է ստեղծել սեփական նվիրապետական համակարգը՝ ստիպելով հաճախ մեկլիկս բարձր հոգևորականությանը (այդ թվում Անտիոքի և Երուսաղեմի պատրիարքներին) հեռանալ իրենց թեմերից, որն էլ հաճախ ԺԲ դ. առիթ էր դառնում Բյուզանդիայի հետ ռազմական բախումների համար: Հեղինակն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ տարածաշրջանում զուգահեռաբար ընդլայնվում և ամրապնդվում էին նաև Հայոց և Ասորի (հատկապես Հակոբիկ) Եկեղեցիների նվիրապետական կառույցները, որոնք հաճախ համագործակցում էին Կաթոլիկ Եկեղեցու հետ, որը, ի հակադրություն հույների, դեռևս չէր պահանջում ծիսադավանական էական զիջումներ⁶, փորձելով այդ Եկեղեցիներին ԺԲ դարի 30-ական թթ. ներքաշել միջեկեղեցական դաշինքի մեջ ընդդեմ Բյուզանդական Եկեղեցու՝ փորձելով ապահովել Հռոմի Պապի նախաթոռության սկզբունքը (էջ 76): Խնդիրն ավելի է բարդանում, երբ նկատի ենք ունենում այն հանգամանքը, որ Ասորի և Հայոց Եկեղեցիները, որոնց հիմնական թեմերը գտնվում էին մահմեդական տիրապետության ներքո, ստիպված էին իրենց առաջնորդների հաստատումն ակնկալել նաև Մեծ սելջուկների սուլթանությունից և իրենց հպատակությունն էին հայտնում նրանց (բերվում է Բարսեղ կաթողիկոսի օրինակը, էջ 68-70): Բյուզանդական կայսրությունն ամեն գնով փորձում էր պահպանել իր կորցրած տարածքներում Բյուզանդական Եկեղեցու թեմերն ու ունեցվածքը՝ սպասելով հարմար առիթի, վերադարձնելու Անտիոքի պատրիարքին և թեմագուրկ եպիսկոպոսներին իրենց աթոռները: Այս քաղաքականությունն ակնհայտ է Կոմենենոս հարստության կայսրերի իշխանության դարաշրջանում. այդ քաղաքականության իրավական ձևակերպումը տրված է Դեաբոլի հաշտության պայմանագրում և 1107 թ. Բյուզանդական Եկեղեցու բարենորոգման հրովարտակում, 1137 թ. Անտիոքի իշխանության հետ կնքված պայմանագրում, Հովհաննես Կոմենենոսի երկու հյուսիսասորիքյան ռազմարշավների և Մանուել Կոմենենոսի Մերձավորարևելյան քաղաքականության անդրադարձած սկզբնաղբյուրներում, որոնք պատմում են Անտիոքի Աթանաս (1157-1170) և Երուսաղեմի Ղևոնդ (1176) պատրիարքների գահակալման մասին (էջ 99-115): Անդրադառնում է կաթոլիկ և բյուզանդական վանական հաստատությունների հոգևոր-մշակութային համագործակցությանը Անտիոքի իշխանության սահմաններում, հատկապես՝ Սև լեռներում և Երուսաղեմի թագավորությունում:

Հեղինակը չի շրջանցել նաև հակաքաղկեդոնական հայերի և ասորիների նկատմամբ Բյուզանդական Եկեղեցու և նրա մատենագրության բացասական անդրադարձն ու վերաբերմունքը հատկապես Ալեքս Ա-ի, Հովհաննես Կոմենենոսի իշխանության տարիներին և հատկապես վերջինիս Կիլիկյան ռազմարշավի ընթացքում, երբ հալածանքներ էին իրականացվում Հայոց Եկեղեցու սպասավորների և հավատացյալների նկատմամբ,

⁶ Հեղինակը մի շարք օրինակներ է բերում Լատին Եկեղեցու փոխհարաբերություններից Մերձավոր Արևելքի եկեղեցիների (Հայոց, Ասորի և Մարոնի) հետ, որոնց խաչակրաց պետությունների սահմաններում տրվում էր գործելու հնարավորություն և մշակութային ինքնավարություն, միաժամանակ խառնվելով նրանց ներքին գործերին, որոնց մեջ կարևոր խնդիր էր համարվում Ծոպագատիկը, դառնալով երկկողմանի բախումների պատճառ (էջ 71-76, 87-99):

վերամկրտում էին նրանց, Կիլիկյան քաղաքներում վերահաստատվում էին Բյուզանդական Եկեղեցու եպիսկոպոսական աթոռները, ավելին, տարածաշրջանում գործող բյուզանդական վանականները կասկածով էին վերաբերում նաև հայ քաղկեդոնականներին⁷ (էջ 120-126):

Հեղինակն իրավացիորեն ԺԲ դարի 60-70-ական թթ. հայ-բյուզանդական և ասորի-բյուզանդական բանակցությունները համարում է անհավասար՝ հիմնվելով Ներսես Շնորհալու վկայության վրա, ուղղված Մանուել Կոմնենոս կայսրին, բյուզանդացիներն ամեն գնով փորձում են իրենց դավանաբանությունը պարտադրել երկու Եկեղեցիներին (էջ 126-128): Արդեն իսկ 1103 թ.⁸ Ծոպատկի հայ-բյուզանդական եկեղեցական բախման ժամանակ վերջիններս իրենց կողմն են փորձում գրավել Եղեսիայում բնակվող ասորիներին, թեպետ Միքայել Ասորին չի հաստատում Մատթեոս Ուռհայեցու այդ վկայությունը:

Բյուզանդական Եկեղեցու դավանանքի ընդունումը հակաքաղկեդոնական միջավայրում բազմաթիվ օրինակներ գիտի սկսած վաղ միջնադարից: Նման մի փաստ է արձանագրում Միքայել Ասորին՝ մատնանշելով հայազգի Հուսիկին⁹ և նրա հետևորդներին, որոնք 1173-1174 թթ. լայն քարոզարշավ են սկսել Անտիոքում ու նրա շրջակայքում (էջ 129): Քաղկեդոնի նկատմամբ հակումը նկատելի է նաև հակոբիկ ասորական միջավայրում: Հակոբիկ Եկեղեցու նախկին հոգևորական, քաղկեդոնական-մելկիտներին համակրող Ռաբան Իշոյի դեմ ստիպված էր 1154 թ. հակաճառական երկ գրել Մարաշի հակոբիկ եպիսկոպոս Դիոնիսիոս Բար Սալիբին: Այդպիսի մի հայ քահանայի (Պողոսին) ուղղված նամակ ունի նաև Ներսես Շնորհալուն (էջ 131-132): Ներկայացված խնդրի արմատները հեղինակն իրավամբ տեսնում է ավելի վաղ ժամանակներում և բերում է Ալեքս Ա Կոմնենոսի իշխանության տարիներին Հայոց Եկեղեցու ներկայացուցիչների նկատմամբ կայսեր սկսած հալածանքների և կրկնամկրտության փաստերը, որոնց մասին պատմում է Մատթեոս Ուռհայեցի պատմիչը՝ լիովին հաստատելով ասորի մատենագիրների վկայությունները: Այնուամենայնիվ, Իզաբել Օժեն արդարացնում է Բյուզանդական կայսրության և Եկեղեցու նմանատիպ գործունեությունը՝ փաստարկելով, որ նման պրակտիկայի Եկեղեցին հետևում էր սկսած Գ դարից (էջ 132-134): Հեղինակը, հետևելով բյուզանդական մատենագիրներին, սակայն, մոռանում է, որ Հայոց և Ասորի Եկեղեցիները պահանջում էին միայն հարգալից վերաբերմունք սեփական Եկեղեցու նկատմամբ, քանի որ այդ ժողովուրդները նման վերաբերմունքով հավասարեցվում էին մուսուլմաններին: Այդպես էին վարվում նաև լատինները հույների նկատմամբ ԺԲ դարում (էջ 134):

Մուսուլմանների նկատմամբ ևս, թեպետ կան հազվադեպ վկայություններ, կարելի է հավաստել, որ հույները վերաբերում էին նույն ձևով, մկրտելով նրանց: Նման փաստեր կարելի է գտնել Կոմնենոս կայսրերի, հատկապես Ալեքս Ա-ի և Մանուել Ա-ի գործու-

⁷ Հատկապես հատկանշական է հույն աստվածաբան Նիկոն Սկլեոնցու վերաբերմունքը (էջ 125) :

⁸ Գրքի 130-131 էջերում հեղինակն այս Ծոպատկի թվագրում է 1107 թ.:

⁹ Կարծում եմ հեղինակն ամենայն պատասխանատվությամբ կարող էր այս Հուսիկին նույնացնել Ներսես Լամբրոնացու թղթակից «Յուսկան արգելական ճգնառորի» հետ (տե՛ս Լամբրոնացու Պատարագի մեկնության երուսաղեմյան հրատարակության հավելվածը):

նեության և ռազմարշավների մասին պատմող սկզբնաղբյուրներում, որոնցից առաջինն հաճախ անվանվում է տասներեքերորդ առաքյալ: Այս շրջանի բյուզանդական հակաճառական գրականությունը հարուստ է մուսուլմանների դեմ գրված երկերով (էջ 134-140): Գլխի ամփոփման մեջ հեղինակը կրկին շեշտը դնում է այն հանգամանքի վրա, որ ԺԱ դարի սելջուկյան ռազմարշավներից հետո Բյուզանդական Եկեղեցին իր կորցրած դիրքերը փորձեց միայն ետ բերել Դեաբոլի պայմանագրից հետո, կրկին Արևելքում վերականգնելով Բյուզանդական Եկեղեցու նվիրապետական համակարգը, որի համար մրցակից համակարգ էր ստեղծել Լատին Եկեղեցին: Հայոց և Հակոբիկ Ասորական Եկեղեցիները այդ ընթացքում փորձել էին ամրապնդվել տարածաշրջանում՝ Մեծ սելջուկյան սուլթանության կողմից ճանաչման արժանանալով, նաև բարեկամական հարաբերություններ ստեղծելով լատինների հետ, որոնք իրենց դիրքերի ամրապնդման համար համագործակցում էին նրանց հետ՝ հետզհետե միջամտելով նաև նրանց ներքին գործերին: Բյուզանդիան ողջ ԺԲ դարի ընթացքում ամեն կերպ փորձում է վերականգնել Մերձավոր արևելքում սեփական եկեղեցական կազմակերպության նվիրապետական կառույցն ու դիրքերը:

Երկրորդ մասն անվանված է «Մերձեցումը Հույն Եկեղեցու և մյուս դավանանքների քրիստոնյաների միջև»: Այստեղ հեղինակն անդրադառնում է Առաջին խաչակրության նախօրյակին Բյուզանդական կայսրության ակնկալիքների բացահայտմանը ի հակադրություն սելջուկ-թյուրքական ռազմարշավների, 1054 թ. երկու Եկեղեցիների բաժանումից հետո Միքայել Է Դուկաս (1071-1078), Ալեքս Ա (1080-1118) և Հովհաննես Բ (1118-1143) Կոմենենոս կայսրերի արևմտավրոպական քաղաքականության հիմնական դրսևորումներին՝ եկեղեցական ժողովներին, փոխանակված նամակագրությանը, կողմերին հուզող հիմնական ծիսադավանական խնդիրներին, Կլերմոնի եկեղեցական ժողովի նշանակությանը, պապական կուրիայի հետ բանակցություններին, Մերձավոր Արևելքում Խաչակիր հրամանատարների դիրքորոշման բացահայտմանը (էջ 143-160): ԺԲ դարի Բ կեսի հայ-լատինական փոխհարաբերությունների ֆոնի վրա քննարկվում են նաև խաչակրաց պետությունների և բյուզանդական կայսրության եկեղեցաքաղաքական բախումների ու մերձեցումների հիմնական փուլերը (էջ 160-165): Մերձավոր Արևելքի զանազան քրիստոնեական կրոնական ուղղությունների վերաբերմունքը համաքրիստոնեական միության նկատմամբ պարզաբանելու համար ներկայացվում են տեղական եկեղեցիների ներկայացուցիչներ՝ հակոբիկ ալ-Արֆադի, մելկիտ Պողոս Միդոնցու և Ներսես Լաբրոնացու հակադիր մոտեցումները քույր Եկեղեցիների ծիսադավանական ավանդույթներին (էջ 166-171): Մանուել Ա Կոմենենոս (1143-1180) էլ իր հերթին է ներդրել Բյուզանդական Եկեղեցու հնարավորությունները միություն հաստատելու Լատին, Հայոց և Հակոբիկ Եկեղեցիների հետ, Արևելք է ուղարկել Թեոփանոս աստվածաբանին՝ զլուխ բերելու համար Հայոց և Բյուզանդական Եկեղեցիների հետ ծրագրված ունիան (էջ 171-217):

Գրքում խոսվում է առաջին խաչակրաց ռազմարշավից մինչև երրորդի նախօրյակը տարածաշրջանի քաղաքական իրադարձություններին Մերձավոր Արևելքի քրիստոնյաների, մասնավորապես հույների և հայերի մասնակցության մասին: Խոսվում է խա-

չակրաց առաջին ռազմարշավի բանակների և Բյուզանդիայի բնակչության հանդիպման, միջնադարյան պատմագրության մեջ արտացոլված երկուստեք վերաբերմունքի մասին, ուր սկզբնաղբյուրները մեծացնում են հավատքի դերը, մեծ տեղ տալիս խաչակրաց շարժման ղեկավարների ստորակայական երդում տալու ձգտմանը Բյուզանդիայի կայսրին: Աշխատանքի երրորդ մասը նվիրված է Մերձավոր Արևելքում ԺԱ-ԺԲ դարում Բյուզանդիայի և եվրոպական խաչակիրների մղած պատերազմների կրոնական բնույթին, մուսուլմանական Արևելքի հայտարարած ջիհադին: Այս գաղափարախոսության մեջ առանձնանում է Աստվածածնի դերն իբրև Բյուզանդական կայսրության և հատկապես Կոստանդնուպոլսի հովանավորի, զինվորական սրբերի (Թեոդորոս, Գևորգ, Դեմետրիոս) նշանակությունը բյուզանդական և մերձավորարևելյան քրիստոնյա ժողովուրդների ու պետությունների հավատալիքներում, սրբապատկերների, խաչերի (իբրև հաղթանակի սիմվոլ) և Ս. նշխարների դերը հասարակական մտածողության մեջ, Ժ-ԺԲ դդ. բյուզանդական և հյուսիսաստրիքյան պատերազմների ժամանակ բանակներին ոգեպնդող և տարածաշրջանում հարգի սրբագործված առարկաների նշանակությունը: Այստեղ նա անդրադառնում է պատերազմում զոհված թե՛ մուսուլմաններին և թե՛ քրիստոնյաներին, որոնք ընդունում էին վկայի (մուսուլմանների համար՝ շահիդ) սրբապատկերնությունը քննվում է Բյուզանդական, Պապական, Հայոց Եկեղեցիների տեսանկյունից՝ անդրադառնալով Միրիոկեֆալոնի (1176 թ.) ճակատամարտի բյուզանդական կողմի համաքրիստոնեական ընկալման վրա: Մերձավոր Արևելքի ԺԲ դ. պատերազմները Իզաբել Օմեն ներկայացնում է իբրև սրբազան հոգևոր պատերազմներ, որոնք ավելի են սրվել խաչակրաց բանակների գալով (էջ 219-250): Այստեղ արժեք նաև անդրադառնալ Ս. Մարգարի պաշտամունքի նշանակությանը հայկական և ասորական հասարակություններում և նրա հետ կապված հավատալիքների կարևորությանը հայ քաղկեդոնականների և հակաքաղկեդոնականների հակադիր ավանդույթներում:

Հաջորդող շարադրանքում հեղինակն անդրադառնում է առաջին խաչակրությունից սկսած համաքրիստոնեական գրեթե բոլոր ռազմարշավներին՝ քննարկելով այդ շարժումներում քրիստոնյա արևելքի ժողովուրդների (հույներ, հայեր, ասորիներ) և նրանց տարբեր Եկեղեցիների մոտեցումները: Սկսած խաչակիրների հետ առաջին հանդիպումներից՝ Բյուզանդիայի տարածքում և հատկապես նրա արևելյան սահմանների մոտ, անդրադառնում է երկու Եկեղեցիների հակամետ մոտեցումներին և Բյուզանդիայի աշխարհաքաղաքական նկատառումներին և մասնակցությանը ռազմարշավներին: Կայսեր և խաչակրաց առաջնորդների միջև կնքված համաձայնագրերի խնդրին անդրադառնալով՝ հեղինակը խոսում է բյուզանդական տեղեկատվական օգնության, Փոքր Ասիան նվաճած թյուրք նվաճողների դեմ միասնական քրիստոնեական ճակատ կազմելու խնդիրների մասին: Հեղինակն անդրադառնում է նաև Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի հայկական բնակչության օգտագործմանը խաչակրաց առաջին ռազմարշավի բանակների կողմից, սակայն շրջանցում է մի քանի կարևոր խնդիրներ, որոնց մասին ակնարկում է ԺԲ դարի հայ տարեգիր Մատթեոս Ուռհայեցին: Նախ պատմագրության համար հետաքրքրություն է ներկայացնում տարեգրի այն տեղեկությունը, որ Եդեսիայի իշխան

Թորոսը որդեգրել է Բալդուինին Բուրգուն¹⁰: Իզաբել Օմեն չի անդրադառնում նաև այն խոր հիասթափությանը, որով ԺԲ դարի պատմիչն անդրադառնում է Բողունի գործած չարագործությունից հետո հայ ազգաբնակչության վերաբերմունքին դեպի խաչակրաց բանակները (էջ 250-260):

Առաջին խաչակրությունից հետո Մերձավոր Արևելքում տեղի ունեցած իրադարձություններից, հեղինակը կարևորում է Ինտկենտիոս Բ պապի իշխանության տարիները, 1141 թ. Երուսաղեմում հրավիրված եկեղեցական ժողովը, որին կարծես մասնակցել է Գրիգոր Գ Հայոց կաթողիկոսը, Մանուել Ա Կոմնենոս կայսեր (1143-1180) իշխանության առաջին տարիներով թվագրվող Հռոմի, Բ խաչակրաց ռազմարշավի կազմակերպիչների և Մերձավոր Արևելքի խաչակրաց պետությունների հետ Բյուզանդիայի ջերմ փոխհարաբերությունները¹¹, շեշտադրում է Բյուզանդական և Կաթոլիկ եկեղեցիների դավանաբանական հակամարտությունը, չզիտես ինչու՝ հեղինակը շեղարյան ռազմարշավ է անվանում Հովհաննես Բ Կոմնենոս կայսեր 1136-1138 թթ. կլիկյան և հյուսիսատրիքյան ռազմարշավը, որի հիմնական թիրախը դարձավ Ռուբինյան հայկական ինքնիշխանության ոչնչացումը (էջ 260-277):

Այնուհետև հեղինակն անդրադառնում է Թորոս Բ իշխանի Կիլիկիա վերադառնալուց հետո ստեղծված իրադրությանը և Մանուել Ա Կոմնենոսի միջամտությանը երկրի գործերին, Ռուբինյանների և Անտիոքի իշխանության համատեղ գործողություններին Կիպրոսում: Այս գործողություններին հաջորդած Մանուել Ա-ի ռազմարշավին (1158) դեպի Անտիոք և օրթոդոքս պատրիարքի վերահաստատմանը տարածաշրջանում, 1159 թ. Հալեպի աթաբեկության դեմ կազմակերպված ռազմարշավին Երուսաղեմի թագավոր Բալդուին Գ-ի, Թորոս Ռուբինյանի և Անտիոքի իշխան Ռընո Շատիլոնցու մասնակցությանը, որը վերածվել էր համաքրիստոնեական միության գաղափարախոսության, որի հետ մեծ հույսեր էր կապում հայ ազգաբնակչությունը: Մուսուլմանների դիրքորոշմանն անդրադառնալիս հեղինակը նկատում է, որ արդեն Հովհաննես Բ Կոմնենոսի 1138 թ. ռազմարշավից սկսած Նուր ալ-Դինի կողմից դիտվում էին իբրև հավատի համար պատերազմ՝ ջիհադ: Այդ նույն միտումը Իզաբել Օմեն նկատում է նաև ԺԲ դարի Իկոնիայի և Դանիշմանյան ամիրայության դեմ Բյուզանդական կայսրության պատերազմներում (էջ 277-287):

Այնուհետև հեղինակն անդրադառնում է ԺԲ դարի ընթացքում Խաչակրաց պետությունների և Բյուզանդական կայսրության կազմակերպած ռազմարշավներին դեպի Եգիպտոս, որոնց համար մեկնակետ էր դիտվում Երուսաղեմը: Այս շրջանակներում քննարկվում է նաև 1168/9 թ. Թորոս Բ իշխանի կողմից Երուսաղեմի թագավորություն-

¹⁰ Մատթեոս Ուռհայեցու այդ տեղեկությունը առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել Ֆրանսիացի պատմաբան Ռընե Գրուսեն: Պատմագրության համար հետաքրքիր կլինեն պարզել Ուռհայեցու հաղորդած տեղեկության հավաստիությունը, նկարագրված ծեսի աղերսները բյուզանդականի հետ՝ չբացառելով դրա մեջ առկա կովկասյան և հայկական էլեմենտները:

¹¹ Կարծում եմ կանխակալ է հեղինակի այն պնդումը, թե հայերը. «en premier lieu ; décide de poursuivre les négociations en vue l'union religieuse, espérant sans doute obtenir ; en outre, une réaction énergique de l'Occident face au péril turc représenté par Zengî» (էջ 268):

նում հայկական բնակչության վերաբնակեցման խնդիրը, Երուսաղեմում Մանուել Ա-ի միջնորդությամբ 1176 թ. պատրիարք նշանակվելու մասին (էջ 287-296): Հետաքրքրություն են ներկայացնում հեղինակի մոտեցումները Մոսուլի աթաբեկության դեմ 1110 թ. ֆրանկո-հայկական ռազմարշավին Երուսաղեմի թագավորի դրոշի ներքո, աթաբեկ Իլ Ղազիի դեմ ձեռնարկված 1119 թ. պատերազմին, Եդեսիայի 1144 թ. պաշտպանությանը Զանգի աթաբեկի հարձակումից և այդ կոմսության տարածքների հետագա ճակատագրին, Կիլիկիայի բյուզանդական դուքս Կոստանդին Կոլումանի ձեռնարկած Հալեպյան ռազմարշավներին (1163-1164), ԺԲ դարի ասսիլաժաբանական վեճերին և դրանցում Հյուսիսային Հայաստանի հոգևորականության դիրքորոշմանը, Վրաստանի արքա Դավիթ Բ Շինարարի հակասելջուկյան գործողություններին և հատկապես Դիդգորիի ճակատամարտին (1121), վրաց-բյուզանդական քաղաքական փոխհարաբերություններին: Մուսուլմանների դեմ Մերձավոր Արևելքում քրիստոնյաների ձեռնարկած ռազմարշավները Իզաբել Օմեն դասակարգում է հետևյալ չորս տիպերի. խաչակրություններ, ուր բյուզանդական կայսրերի դերը երկրորդական էր, Հովհաննես և Մանուել Կոմենենուսների ռազմարշավները դեպի Հյուսիսային Ասորիք և Եգիպտոս՝ տարածաշրջանի լատինական պետությունների մասնակցությամբ և Քրիստոնյա Արևելքի ժողովուրդների պետական միավորումների մղած առանձին պատերազմները հարևան մուսուլմանական երկրների դեմ, որոնք ունեին տեղական բնույթ: Իհարկե, թափված արյունը համագործակցության արդյունքներին, որոնց ձգտում էին կազմակերպիչները և նրանք հաճախ կնքում էին ոչ համագործակցության պայմանագրեր մուսուլմանական պետությունների հետ: Նկատվում է նաև եկեղեցական հակամարտություն տարբեր Եկեղեցական նվիրապետական աթոռների միջև: Բյուզանդական թագավորները փորձում էին միջնորդ դատավորի դեր կատարել տարածաշրջանում տարբեր Եկեղեցիների և քաղաքական միավորների միջև, ինչը նրանց հաջողվում էր ոչ միշտ: Քրիստոնյա Արևելքի ժողովուրդներն ունեին բավական խորքային հակամարտություններ, որոնք հիմք էին դառնում նույնիսկ մուսուլմանական պետությունների հետ այլ քրիստոնյաների դեմ դաշինքներ կնքելու համար (էջ 296-317):

Գրքի վերջում տրվում է հետազոտության ընդհանուր ամփոփում: Ակնհայտ է, որ առաջին երեք (Ալեքս Ա, Հովհաննես Բ, Մանուել Ա) Կոմենենոս կայսրերը, մինչև Միբուկեֆալոնի ջախջախումը (1176 թ.) բավական մեծ ճիգեր թափեցին սելջուկներին կայսրության կենտրոնական շրջաններից հեռացնելու համար: Հարևան քրիստոնյա ժողովուրդների օգտագործմամբ, խնդիր էր դրվում Բյուզանդիայի անցյալում կորցրած որոշ մերձավորարևելյան տարածքների վերանվաճումը: Այդ ռազմական գործողություններն իրականացնելու համար կայսրության կողմից կարևոր դեր էր հատկացվում կրոնական գործունին, պատմիչների մոտ հիշատակվում են ռազմարշավների ժամանակ քրիստոնյա բանակին ոգևորելու համար օգտագործված խաչեր, սրբապատկերներ և մասունքներ, որոնք ունեին հսկայական գաղափարախոսական նշանակություն: Հատուկ քաղաքական գիծ ունեն նաև Հռոմի պապության վարած եկեղեցիների միության քաղաքականությունն ու գաղափարախոսական ճնշումը Բյուզանդիայի և տարածաշրջանի մյուս քրիստոնեական Եկեղեցիների վրա: Ուշադրություն է հրավիրում բյուզանդահռոմեական եկեղեցական փոխհարաբերություններում Մերձավոր Արևելքի քրիստոնյա և մու-

սուլման ազգաբնակչության հոգևոր հաստատությունների դիրքորոշումներին, Բյուզանդական կայսրերի (հատկապես Մանուել Ա Կոմնենոսի) ձեռնարկած դավանաբանական վիճաբանություններին (էջ 318-337):

Գրքի վերջում բերված է չորս քարտեզ, որոնցից երեքը կազմել է Իզաբել Օժեն: Դրանցում տրվում են Ալեքս Ա, Հովհաննես Բ և Մանուել Ա Կոմնենոսների ռազմարշավների հետազոտություն: Գրքում Վ. Հելխտի քարտեզի հիմքի վրա տրվում է Հռոմկլայի ժողովի մասնակիցների պաշտոնական նստավայրերի տեղադրությունը: Այս քարտեզներում սխալ են համարում Հաղբատ, Սալմաստ, Աղուանք տեղանունների տառադարձությունը (Haghbat, Saghmast, Aghouanie): Կարծում են, հեղինակն աշխատանքում պիտի զգուշությամբ օգտագործեր «միաբնակ» (monophysite) տերմինը:

Գրքի վերջում բերվում են երկու հավելված-տախտակներ, որոնցից մեկը վերաբերում է Կոմնենոս կայսրերի Արևելյան ռազմարշավներին (էջ 339-344), մյուսը՝ այլ քրիստոնյա ժողովուրդների ձեռնարկած հակամուսուլմանական պատերազմներին (էջ 345-361), ուր ցույց է տրվում, թե ո՞ր ժողովուրդներն են իրենց մասնակցությունը բերել տվյալ ձեռնարկին: Բերվում են նաև օգտագործված գրականության (էջ 363-393), անունների (395-405) և տեղանունների (407-412) ցանկերը:

Հեղինակը կարողացել է հասնել իր առջև դրված խնդիրների լուսաբանմանը: Հայագետների և բյուզանդագետների դատին է հանձնված բավական խնամքով հյուսված մի նոր աշխատություն, որը կարող է խթան հանդիսանալ խաչակրաց դարաշրջանի Մերձավոր Արևելքի պատմության հետազոտության համար:

ԱԶՍՏ ԲՈԶՈՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ՄԻ ԿԱՐԵՎՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Նիկողայոս, Երկեր, հատ. Գ, Հայերենագիտական ուսումնասիրություններ: Հրատ. պատրաստեց Պ. Հ. Հովհաննիսյանը, Եր., ԵՊՀ հրատ., 2008, 682 էջ:

Եթե գիրն իր բոլոր տարատեսակներով՝ պիկտոգրաֆիկ կամ պատկերագիր, գաղափարագիր, հիերոգլիֆ, սեպագիր, կոնսոնանտ, սոնանտ և այլն, այսինքն՝ իր ծագման օրից մինչև նրա վերջնական «կերպարանք» ստանալը, որն ունենք մենք այսօր, զարգացավ հասարակության առաջընթացին զուգահեռ, ապա լիովին այլ ընթացք ունեցավ լեզուների քերականական մեկնաբանության հիմնահարցը: Փաստորեն, եթե լեզուն և գիրը հանդիսանում են հասակակիցներ, ապա նույնը չի կարելի արձանագրել լեզուների մեկնաբանության «արվեստի» կապակցությամբ, քանզի վերջինս չափազանց երիտասարդ է, և ոչ մի դեպքում չի կարող նրանց հասակակիցը լինել: Մարդկային ընդհանրություններից յուրաքանչյուրը՝ ցեղ, տոհմ, ժողովուրդ, իսկ ամենավերջում պետություն, ուներ իր սեփական և համընդհանուր լեզուն, որը նրանք հաղորդակցման ընթացքում օգտագործում էին *a priori*, սակայն իրավիճակն այլ էր լինում, եթե անհրաժեշտություն էր լինում, որպեսզի այն յուրացվեր որևէ օտարի կողմից: Վերջինիս կողմից արդեն *a priori* ըմբռնումն իրեն մեծավ մասամբ չէր արդարացնում, որտեղ էլ առաջնահերթ նշանակություն էր ստանում լեզվի քերականական բացահայտումն ու մատուցումը:

Քերականության, որպես համաշխարհային գիտության ստեղծման և ձևավորման ճանապարհին անուրանալի է հնդիկ մեծ մտածող Պանինիի դերն ու նշանակությունը (Ք.ա. V- IV դդ.), որն իրականացրեց հին Հնդկաստանում բոլոր գործող բարբառների կամ այսպես կոչված պրակրիտների միավորման գործը և ստեղծեց մի քերականություն, որն ստացավ սանսկրիտերենի քերականություն անվանումը¹: Եթե հին Հնդկաստանում բարբառների առկայությունը, որոնք, ըստ էության տարբեր լեզուներ էին, պահանջում էր «միասնական» քերականության առկայությունը, ապա օյկումենի մյուս ծայրամասերում, մինչև հելլնիզմի ծագումն ու արմատավորումը, կարելի էր «գոյակցել» նաև առանց վերջինիս՝ քերականության գոյության:

Այս ամենին պետք է հավելել, որ մինչհելլենիստական դարաշրջանում օտար լեզուների տարածումն ուներ միայն տեղային կամ, ինչպես ընդունված է անվանել, ավելի հաճախ լոկալ բնույթ: Միայն հելլենիզմով այն վերստացավ համատարած, համընդհանուր կամ էլ գլոբալ կերպարանք: Հունարենն այս դարաշրջանում տարածվեց ոչ միայն ողջ Առաջավոր Ասիայում, այլև նրա առանձին բեկորներն հայտնվեցին և նույնիսկ պարարտ հող գտան նաև հեռավոր Չինաստանում²:

¹ Այս կապակցությամբ մանրամասն տե՛ս **Г. М. Бонгард-Левин**, Индия в древности, СПб., 2001, էջ 51-52, 55, 185-194 և հաջ., **Н. А. Павленко**, История письма, Минск, 1987, էջ 96-103, И. Е. Гельб, Опыт изучения письма, М., 1982, էջ 147, 160, 182 և հաջ:

² **П. Левек**, Эллинистический мир, М., 1989, չՀ 222-226, **А. Ж. Арутюнян**, О языковой ситуации в древней

Ահա ստեղծված այս պայմաններն էլ թելադրում և պահանջում էին ստեղծել նաև հին հունարենի քերականությունը, որն էլ իրականացվեց հելլենիզմի դարաշրջանի Ալեքսանդրյան դպրոցի նշանավոր գիտնականներից մեկի՝ Դիոնիսիոս Թրակացու կամ Քերականի կողմից: Դիոնիսիոս Թրակացու երկասիրության ուսումնասիրությունը և այդ աշխատության հայ մեկնիչների կողմից կատարված մեկնություններին Ն. Ադոնցն անդրադարձել էր դեռևս 1915 թ., երբ լույս է ընծայել «Дионисий Фракийский и армянские толкователи» ուշագրավ ուսումնասիրությունը³, որը մեկ տարի անց՝ 1916 թ., Ռուսաստանի Գիտությունների կայսերական ակադեմիայում պաշտպանում է որպես դոկտորական ատենախոսություն: Գրախոսվող աշխատության՝ Թրակացուն վերաբերող հատվածը պայմանականորեն կարելի է բաժանել երեք մասերի: Հիմնական կարելի է համարել հենց վերջինիս կողմից գրված քերականությունը, որը կոչվում է «Արուեստ Դիոնիսեայ Քերականի» (Τεχνη Διονυσίου Γραμματικου)⁴: Այստեղից կարելի է միանշանակ գաղափար կազմել, թե ինչպիսին էին պատկերացումները քերականական արվեստի վերաբերյալ, երբ նա միայն նոր ծնունդ էր առնում: Ստույգ է և անվիճելի, որ Դիոնիսիոսի հայեցակարգն ունի միայն նախնական կամ լավագույն դեպքում տարրական ուղղվածություն, քանզի քերականությունն, որպես գիտություն մինչ այդ համարյա գոյություն չունեի և գտնվում էր ձևավորման միայն սաղմնային վիճակում: Այս պատճառով էլ նրա կողմից քննարկված բազմաթիվ հիմնախնդիրների մեկնաբանությունը մերօրյա բարձունքից թվում է պարզամիտ: Անտիկ գիտնական-քերականը ոչ մի տարբերություն չի տեսնում լեզվագիտության այնպիսի կարևոր բաղկացուցիչ մասերի միջև, ինչպիսիք են ձևաբանությունը, որն ամբողջովին առնչվում է խոսքի մասերին, հնչյունաբանությունը, բառագիտությունը, դարձվածաբանությունը և վերջապես շարահյուսությունը: Դիոնիսիոսի քերականագիտական պատկերացումներն ունեն հախտոն բնույթ, քանզի նա, ինչպես նշվեց վերևում, ոչ մի տարբերություն չի տեսնում լեզվագիտական բոլոր այն չափորոշիչների միջև, որոնց մասին մենք արդեն նշեցինք: Զարգացման և մեկնաբանության նույնպիսի ուղղվածություն այս դարաշրջանում ուներ ոչ միայն լեզվաբանությունը, այլև մյուս բոլոր այն գիտությունները, որոնք ծնունդ էին առնում այդ օրերին, և դրվում է նրանց ստեղծման անկյունաքարը ալեքսանդրյան գիտնականների կողմից: Խոսքն հավասարապես վերաբերում էր բուսաբանությանը, մաթեմատիկային, աշխարհագրությանը, բժշկությանը և մյուսներին, որոնք ևս հենց հելլենիզմի օրոք էր, որ ստացան իրենց սկզբնական կերպարանքը:

Քանի որ Դիոնիսիոս Թրակացու աշխատության նախնական տարբերակը մեզ չի հասել, ապա Ադոնցը հատուկ ուշադրություն է հատկացրել հաջորդ դարերից պահպանված ձեռագրերի քննությանը՝ կատարելով դրանց դասակարգումն ու կորած հատվածների վերականգնումը, միաժամանակ ենթարկելով դրանք քննական վերլուծության: Արդեն վաղ և զարգացած միջնադարում Հայաստանում հանդես եկան մի

Индии и Китае, Русский язык в Армении, Ер., 2004, N 1-2, չց 3-9.

³ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915.

⁴ Տե՛ս Ն. Ադոնց, Երկ., հ. Գ, Հայերենագիտական ուսումնասիրություններ, Եր., 2008, էջ 1-76:

շարք նշանավոր գործիչներ՝ Հովհաննես Երզնկացի, Դավիթ Քերական, Անանուն Մեկնիչ, Մովսես Քերթոզ, Ստեփանոս Սյունեցի և այլոք, որոնք դարձան հունաբան դպրոցի ոչ միայն հիմնադիրներն հայկական միջավայրում, այլև ստեղծված ավանդույթների շարունակողները⁵։ Այս ավանդույթները շարունակվեցին նաև հաջորդ դարերում, և բացթողումները մեծապես լրացվեցին այնպիսի նշանավոր մատենագիրների կողմից, ինչպիսիք էին Գրիգոր Մազիստրոսը և Համամ Արևելցին։ Վերջապես «Քերականության» վերջին հատված կարելի է համարել հեղինակի կազմած «Ցանկ անուանց ե բառից» խորագիրը կրող եզրափակիչ մասը, որը հուշում է վկայում է անտիկ հեղինակի գրական-ստեղծագործական բարձր կուլտուրայի մասին։

Մեծանուն պատմաբան, գրականագետ և լեզվաբան, աղբյուրագրագետ և բյուզանդագետ, ինչպես նաև հասարակագիտության այլ ասպարեզներում մեծ գործ կատարած Ն. Ադոնցը ամենևին էլ ոչ պատահականորեն էր դիմում հենց Դիոնիսիոսի խնդրի արծարծմանն ու մեկնաբանությանը։ Այս ուսումնասիրության ծնունդը լիովին համապատասխանում և համընկնում էր ժամանակի հրամայական պահանջներին։ Եթե հայագիտության մի շարք ասպարեզներ XIX-XX դարերի սահմանագլխին արդեն ընթանում էին զարգացման անշեղ ընթացքով, ապա լեզվաբանությունն ու քերականագիտությունը ինչ-որ տեղ հետ էին մնում այդ ընթացքից։ Անհրաժեշտ էր լրացնել այս բացը, որի համար էլ Ն. Ադոնցը դիմեց այս հիմնախնդրի ակունքների մեկնաբանությանն ու վերլուծությանը։ Ճիշտ է, արդեն հրապարակի վրա էր Ա. Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» (Վիեննա, 1866) ուսումնասիրությունը և «Հայկազյան բառարանը» (հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837), բայց բացակայում էր լեզվագիտության, որպես գիտության սկզբնավորման վերաբերող որևէ ուսումնասիրություն։ Քանի որ, ինչպես տեսանք վերոհիշյալ շարադրանքից, այս դիսցիպլինի տարանջատումն հասարակագիտության մյուս ասպարեզներից իրականացվեց հենց հելլենիզմի դարաշրջանում, ապա Հայաստանը, որպես այդ համակարգի անբաժանելի օղակ, չէր կարող լինել կամ մնալ պարզապես դիտորդի դերում։ Այս պատճառով էլ Ադոնցը իր գիտական գործունեության դեռ սկզբում անհրաժեշտ համարեց և իրականացրեց այս մենագրության հրատարակումը։ Նրա նպատակն էր գտնել այն կապերն ու առնչությունները, որոնք կարող էին լինել աշխարհի երկու նշանավոր և հնամենի ժողովուրդների՝ հույների և հայերի մշակույթների և առավել ևս լեզուների միջև։ Երիցս իրավացի է ականավոր հայագետ Նիկողայոս Մառը, որը գնահատելով Ն. Ադոնցի սույն աշխատանքը՝ եզրակացրել է. «Հայկական բանասիրության յուրաքանչյուր ուսումնասիրողի համար «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները», անկասկած, պետք է դառնա սեղանի գիրք»⁶։ Այս նկատառումով է, որ 1970 թ. Լուվենում լույս տեսավ աշխատության ֆրանսերեն թարգմանությունը, իսկ այսօր Օլգա Վարդագարյանի հիմնալի թարգմանությամբ այն արդեն դրված է

⁵ Մանրամասն տե՛ս **Ա. Մուրադյան**, Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Եր., 1971, Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, խմբ. Ս. Տ. Երեմյանի, էջ 436 և հաջ.

⁶ Տե՛ս «Христианский Восток», 1916, т. 5, вып. 1, էջ 66:

հայ ընթերցողի սեղանին: Տեղին է նաև շեշտել, որ դա հնարավոր եղավ միայն «Գալուստ Կյուպենկյան» հիմնարկության (Լիսաբոն) սիրահոծար մեկենասությամբ: Ադոնցի այս աշխատության հրապարակումը գալիս է լրացնելու նրա երկերի Ա և հատկապես Բ հատորներում արդեն տպագրված մյուս պատմա-քերականագիտական ուսումնասիրությունների շարքը (տե՛ս օրինակ հ. Բ - «Մաշտոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների», «Կորյունի մասին», «Դարձյալ Կորյունի շուրջ»...): Ասվածին պետք է միայն հավելել, որ Ն. Ադոնցի համարյա ցանկացած ուսումնասիրության բազմաթիվ տեղերում կարելի է գտնել մի շարք վերլուծություններ, որոնք ունեն պատմա-աշխարհագրա-լեզվագիտական կամ քերականական վերլուծություններ:

Գրախոսվող հատորում տեղ են գտել նաև հեղինակի մի քանի մանր ուսումնասիրությունները, որոնք ևս քերականագիտական բնույթի են և ընթերցվում են ուղղակի մեկ շնչով: Դրանցից առավել ուշագրավ են «Գրական նշմարներ. լեզվական-ուղղագրական», «Տեղեկագիր Ն. Ադոնցի «Պատմություն հայերեն լեզվի» գործին», «Վաղ շրջանի փոխառություններ հայերենում», «Հայերեն մի քանի բառերի ստուգաբանություններ» և այլն: Գրքի վերջում կան նաև ծանոթագրություններ (կազմ. Պ. Հ. Հովհաննիսյան և Օ. Վարդագարյան) և ցանկեր (կազմ. Օ. Վարդագարյան և Ք. Յախշյան), որոնք ամբողջացնում են կատարված աշխատանքը, քանզի ներկայիս հրատարակությունների մեծ մասն ինչ-ինչ պատճառներով գուրկ են դրանցից:

Այսպիսով, հայագիտության անդաստանը, շնորհիվ Պ. Հովհաննիսյանի երիտասարդական եռանդուն ջանքերի, համալրվեց Ն. Ադոնցի մեկ կարևոր ուսումնասիրությամբ ևս, որը մինչ այս մեզանից յուրաքանչյուրը երազել էր ունենալ իր գրասեղանին կամ գրապահարանում:

Հ. Ժ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՄԱՆԱՀՆԻ «ՔԷՕԹՈՒԿԻ» ՆՈՐ ԿՅԱՆՔԸ

Հայ Եկեղեցին ունի հարուստ պատմություն, և այդ պատմությունը կերտել են այն նշանավոր վանքերն ու վանական միաբանություններն ու դպրոցները, որոնք քրիստոնեական կրոնի վարդապետությունը ուսուցանելուն զուգահեռ եռանդուն ձևով մասնակցել են Հայաստանի գրական, կրթական, մշակութային, քաղաքական կյանքին՝ կատարելով նաև ազգապահպան կարևոր դեր:

Ահա այդպիսի վանական միաբանություններից մեկն է եղել Սանահինի վանքը, որի անվան հետ է կապվում «Քեթուկ» կոչված նշանավոր մատյանը, որի պարունակած նյութերն ունեն պատմական, ճանաչողական բացառիկ արժեք: Մի քանի տասնամյակ առաջ ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը առաջադրել է Սանահինի «Քեթուկի» և նմանօրինակ նյութերի հրատարակման անհրաժեշտությունը¹: Նա մեկ այլ հետազոտության մեջ փաստացի կարևորում է Սանահինի վանական համալիրի քաղաքական-պատմական նշանակությունը. «Հայ եկեղեցական կալվածատիրության համար ստեղծված համեմատաբար նպաստավոր այս պայմաններն ի նկատի ունեն հայ ավատատերերի սակավագույն ներկայացուցիչները, երբ 14-15-րդ դարերում ենթակա վանական հաստատությունների իրավասության տակ էին դնում իրենց ընտանիքին պատկանող կալվածքները՝ վանական այդ հաստատությունների գլուխ կարգելով մերձավոր ազգականներին: Եվ այսպես, կյանքի է կոչվում սոցիալական մի նոր տերմին «պարոն-տեր», որը տրվում էր բոլոր այն կալվածատեր-ավատատերերին, որոնք շարունակում էին տիրել իրենց հայրենական կալվածքների մի մասին՝ լինելով միաժամանակ և «պարոն» (այսինքն՝ աշխարհիկ իշխան), և «տեր» (այսինքն՝ հոգևոր առաջնորդ):

Պարոն-տեր էին Աղթամարի ու Գանձասարի կաթողիկոսները, Սյունյաց մետրոպոլիտները, Վայոց ձորի առաջնորդները, Հաղբատ, Սանահին, Կեչառիս և տասնյակ ու տասնյակ այլ վանքերի հայրեր ու թեմերի առաջնորդներ»²:

Պատմական այս իրողության պայմաններում առավել կարևորվում է Սանահինի «Քեթուկի» քննական բնագրի հրատարակումը, որն իրականացրել է հմուտ աղբյուրագետ, անվանի արևելագետ Պարույր Մուրադյանը՝ իր կազմած բնագրին կցելով մեծարժեք «Առաջաբան», ծանոթագրություններ, հավելվածներ, օտար և անծանոթ բառերի բառարան և գիտական հրատարակությանը պատշաճող այլ բաղադրամասեր:

Հասկանալի անհրաժեշտությամբ բացատրված է «Քեթուկ» բառի իմաստը, որը ուշմիջնադարյան փոխառություն է և բառի նոր իմաստավորմամբ նշանակում է «մայր գիրք, արմատ գիրք»³:

Աշխատասիրողը փաստում է, որ «Քեթուկ» էին կոչվել նաև այլ վանքերի պատմական փաստաթղթերի ցանկ-ժողովածու կոչվածները, ինչպես օրինակ, Ստ. Օրբելյանի

¹ Յիշատակարան Սանահնոյ Վանից (Սանահինի Քեթուկը), աշխատասիրությամբ Պարույր Մուրադյանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 7:

² Լևոն Խաչիկյան, Աշխատություններ, հ. Գ., Երևան, 2008, էջ 660:

³ Յիշատակարան Սանահնոյ վանից..., էջ 8:

«Պատմութիւն նահանգին Միսական» հնագույն ձեռագրում Տաթևի վանքապատկան կալվածքներից ստացվող եկամուտների ու գործարքների ցանկ-ժողովածուն⁴:

«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանում կարդում ենք. «XIV-XV դդ. Սանահինի վանքում նոր վերելք է ապրել գրչության արվեստը (այդտեղ գրչագրված ձեռագրերից 35-ը պահվում է Մատենադարանում): Առավել հիշարժան է Սանահինի «Քոթուկը» (ձեռ. N 3032), որը բովանդակում է վանքի ժամանակագրությունը, արժեքավոր տեղեկություններ միաբանության պատմության վերաբերյալ»⁵:

Այս արժեքավոր տեղեկությունները Պարույր Մուրադյանի ջանքերի շնորհիվ դարձել են բանասերների, պատմաբանների, Հայ Եկեղեցու անցած ուղին ուսումնասիրողների և հայ ժողովրդի մշակութային արժեքներով ապրողների սեփականությունը:

Պ. Մուրադյանը «Քեթուկի» գրիչները հաշվում է շուրջ տասը՝ ելնելով գրչության տարբերությունից: Նա ցավով նշում է, որ որոշ թերթեր պակասում են հիշատակարաններից: Այդ հիշատակարաններից պարզ է դառնում, որ վանքը հաճախ է ենթարկվել հարձակումների, և նրա արժեքները բազմիցս թալանվել են: Ահա այս օրհասական դիպվածների հետևանքով միջնադարյան ձեռագրերը պահպանվել են նաև Սանահին ու Հաղբատ վանքերի մերձակա քարայրներում՝ դառնալով արտասովոր գրադարան-գրապահոցներ:

Պ. Մուրադյանը, ելնելով գիտական անհրաժեշտությունից, փոփոխել է բնագրի նյութերի դասավորությունը՝ այն դարձնելով թեմատիկ և ժանրային:

Շատ կարևոր է, օրինակ, Հովսեփ Արղության Սանահնեցու հիշատակագրությունը, թե ինչպես է Աջառանց այրում գտել «Քեթուկ գիրքը»:

Աշխատասիրության հեղինակն իրավացիորեն նկատում է, որ Մեծ Հայքի տարբեր վայրերի վանքերի պատմության հետազոտող հայր Համազասպ Ոսկյանի «Գուգարքի վանքերը» աշխատության Սանահինին վերաբերող մասն առավել բովանդակալից կլինեի, եթե նա ձեռքի տակ ունենար Սանահինի «Քեթուկի» բնագիրը: Նա նաև նկատում է. «Խնդիրն այն է, որ վանական միաբանության կենսագործունեությունը նկատելի խտացումներով արտացոլում է հայոց միջնադարյան հասարակության հետ կապված գրեթե բոլոր վերուվարումները, անցուղարձերի անդրադարձը»⁶:

«Քեթուկի» տարբեր բաժինների նյութերում կան փաստեր, որոնք պարտադիր ձևով պետք է իմանան բոլոր այն մասնագետները, որոնք զբաղվում են հայ միջնադարյան մատենագրությամբ: «Պատմութիւնք անցից» բաժնում կան բազմաթիվ եզակի պատմական փաստեր. դրանցից մեկը պատմում է Աշոտ Բագրատունու Երկաթ մականունը հունաց կայսրից ստանալու մասին. «Այս Աշոտ, որ ըստ քաջապինտ արիության իւրոյ Երկաթ անուանեցաւ, բազում գործս արիութեանն ցուցեալ ի Կոստանդնուպօլիս եւ յաշխարհքն Յունաց, հրամանաւ Լեւոնի դառնայ յաշխարհս մեր եւ գտանէ զծառայս հաւր իւրոյ թագաւորիլ, եւ ինքն անուանեցաւ ի վերայ նոցա Շահնշահ, այսինքն՝ թագա-

⁴ Նույն տեղում, էջ 10:

⁵ Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 886: Ի դեպ, 1965-ին լույս տեսած «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի» Ա հատորում «Քյոթուկ Սանահինի վանուցը» դրված է 3031 թվի տակ (տե՛ս էջ 923):

⁶ Յիշատակաց Սանահնոյ վանքից..., էջ 44:

ւորաց թագաւոր, եւ հալածական առնէ զԻսմուայելացոց զաւրն յաշխարհէս Հայոց, որոյ ի մարտս զաւրաց ոչ պիտաւորէր, այլ անձամբ մղէր զպատերազմն»⁷: Անվանի հայագետ Մարի Ֆելիսիտե Բրոսսեն գրում է, որ 921 թվականին Աշոտ Երկրորդին Կոստանդնուպոլիս է կանչում հունաց Կոստանդին կայսրը, ուր վերջինս գնում է մի քանի նախարարների ուղեկցությամբ: Բրոսսեն պատմում է մի ավանդություն, ըստ որի Աշոտ արքան վերցրել է երկաթե ձողը և այն դարձրել կլոր՝ ցույց տալով իր երկաթե ուժը⁸: Այս և նման փաստերն առատ նյութ կարող են ծառայել հայ պատմական անցյալը գեղարվեստի ուժով պատկերող գրողներին: Ուշագրավ է նաև «Կարգ թագաւորութեանն Հայոց» բաժինը, ուր թեև կան որոշ անճշտություններ, սակայն ընդհանուր պատմական ճշմարտությունը չի խախտված: «Թագաւորք վերջինք Բագրատունիք» բաժնում թվարկված են Բագրատունի թագավորները: Նույն Աշոտ Երկրորդի և Աբաս Բագրատունու մասին գրված է. «...եւ ապա Աշոտ որդի Սմբատայ թագաւորեաց ամս Ը (8). սա անվանեցաւ Յունաց թագաւորէն Շահնշահի եւ վասն անյաղթ քաջութեանն Երկաթ անուանեցաւ: Եւ յետ տրա եղբայր իւր Աբաս ամս ԻԴ (24)»⁹:

Աշխատասիրողը հանրության ընթերցանությունը դյուրին դարձնելու նպատակով հայոց թվականները փակագծերում ներկայացնում է նաև արաբականով, այսինքն՝ այսօրվա ընկալմամբ:

«Քէօթուկի» էջերում տեսնում ենք նաև հայ միջնադարի մատենագիտության փայլուն դեմքերից մեկին՝ Հովհաննանես Մարկավագ Իմաստասերին, որը կոչված է «իմաստուն պւլտիկոսն Մարկաւագ»¹⁰:

Սանահինի վանքի պատմությունը ներկայացնող այս մատյանում հիանալի ձևով երևում է 5-րդ դարի հայ պատմագրության զորավոր ազդեցությունը հետագա դարերի գրական և պատմական քերթվածների վրա: «Պատմութիւնք անցից» բաժնում բազմիցս փառատրական խոսքեր են ասվում Արդությանների մասին, և նրանցից մեկում որոշակի է Մովսես Խորենացու «Հայկ և Բել» առասպելի ներգործուն ազդեցությունը. «Իսկ այրքն Արդութեցիք՝ քաջագանգուր եւ աղեղնաւոր, մտեալ ի մարտ պատերազմի եւ տիրեալ ի կածան ճանապարհի, փախուցեալ զգաւրքն Ղազախի...»¹¹:

Սանահինի «Քէօթուկը» բացառիկ է նաև Զաքարյանների և Սանահինի միաբանության փոխկապերը բացահայտելու առումով: Սպասալար Զաքարեն և նրա եղբայր աթաբեկ Իվանեն եղել են Սանահինի և նրա մերձակա վանքերի հովանավորներն ու նվիրատուները. այդ փաստերն արձանագրված են «Նուիրագիրք իշխանաց» բաժնում: Նվիրատվությունը ներկայացված է որպես Աստվածահաճո գործ՝ մանավանդ երբ այն բխում է հավատացյալի սրտից:

«Քէօթուկի» մեջ դարերի հոլովություն առավել շաղկապված է Հայ Եկեղեցու պատմությունը, որը ժամանակ առ ժամանակ կրկնվում է ամեն մի նոր կաթողիկոսի հետ և շարունակ հիշատակվում է, որ Սանահինի վանքը պատկանում է Սուրբ Էջմիածնին,

⁷ Նույն տեղում, էջ 51f

⁸ Ա. Դյուլիսկայան, Մարի Ֆելիսիտե Բրոսսեն հայագետ, Երևան, 2002, էջ 82:

⁹ Յիշատակըարան Սանահնոյ վանից..., էջ 58:

¹⁰ Նույն տեղում, էջ 10f

¹¹ Նույն տեղում, էջ 63f

Թաղևուս և Բարդուղիմեոս առաքյալների ու Գրիգոր Լուսավորչի հիմնած Եկեղեցուն։ Ջերմ խոսքեր կան Փիլիպոս Աղբակեցու մասին, որը եղել է Հայոց Եկեղեցու եռանդուն ու հայրենասեր կաթողիկոսներից։ Նա հակադրել է Լեհաստանի հայոց թեմակալ Նիկոլ Թորոսովիչի կաթողիկամետ քաղաքականությանը, նպաստել Հայոց Եկեղեցու միասնության ամրապնդմանը, բարեկարգել վանական կանոնները, վերանորոգել Էջմիածնի վանական կառույցները, կառուցել Մայր տաճարի զանգակատունը¹²։ Փիլիպոս կաթողիկոսին ենք պարտական Առաքել Դավրիժեցու պատմության գոյության փաստի համար. «Պատմությունը գրել նրան (իմա՝ Առաքել Դավրիժեցուն- Ա. Դ.) հանձնարարել է Փիլիպոս կաթողիկոսը 1651 թվականին»¹³։ Անգամ շատ երիտասարդ հասակում Փիլիպոսը Սյունյաց Մեծ անապատում Ներսես Մոկացուն պատվիրել է գրել նրա լավագույն քերթվածներից մեկը՝ «Ներբողեան գովեստի չորեցունց արանցն, որք եղեն սկիզբն անապատի կարգիլ յազգս մեր» ստեղծագործությունը.

Փոքրիկ Փիլիպոս դպիր՝
 Փափագող բանիս տաղական,
 Զայս խնդիր արար, թե ասա՝
 Յիշատակ, որ ողորմի տան¹⁴։

Սանահինի «Քեթօուկը» խիստ ուշագրավ է նաև հայ-վրացական եկեղեցական ու քաղաքական կապերն ուսումնասիրելու առումով։

«Քեթօուկի» լեզուն գրաբարն է, որը ենթարկվել է ժամանակի լեզվական փոփոխություններին՝ ներառելով այլալեզու բառեր ու նորաբանություններ։

«Յիշատակարան Սանահնոյ վանից...» հատորն ունի կարևոր բացատրական բառարան, որում առկա են Մայաթ-Նովայի խաղերի բազմաթիվ բառերի բացատրություններ։ Թվարկենք միայն դրանց մի մասը՝ բունիաթ, գլեխի, դաստուր, դավաթ, դիւան, դուշման, թաւադ, խան, հալալ, հեքիմ, դամ, դուլուդ, մարճան, սարդար և այլն։ Առկա են նաև բարբառային բազմաթիվ բառերի բացատրություններ։

Սանահինի «Քեթօուկի» «Յիշատակարանի» ձեռագրի տասնմեկ էջերի լուսանկարները գետեղված են Պ. Մուրադյանի պատրաստած ժողովածուի մեջ։ Առաջաբանի վերջում այս հրաշալի հատորի աշխատասիրողը՝ Պարույր Մուրադյանը, իր սրտագին շնորհակալությունն է հայտնում ժողովածուին իրենց նպաստը բերած աղբյուրագետ Գևորգ Տեր-Վարդանյանին և Եզնիկ Սրբազանին։ Չմոռանանք, որ «Հայ Եկեղեցու պատմութեան սկզբնաղբյուրներ» մատենաշարի Ա հատորը լույս աշխարհ է եկել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով։

ԱԵԼԻՏՍ ԴՈԼՈՒՄԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

¹² Ամենայն Հայոց կաթողիկոսներ, Խմբագրությամբ Պ. Հովհաննիսյանի, Երևան, 2001, էջ 208։

¹³ **Առաքել Դավրիժեցի**, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարազ Առաքելյանի, Երևան, 1988, էջ 3։

¹⁴ **Ներսես Մոկացի**, Բանաստեղծություններ, աշխատասիրությամբ Ա. Դյուլխանյանի, Երևան, 1985, էջ 36։

«ԿԱՆԳՆԵԱԼ ՀԱԻԱՏՈՎ ԶՎԱՆՔՍ ՍՈՒՐԲ ԽԱՉ, ՍՈՒՐԲ ՆՇԱՆ...»

Ղրիմ կամ Տավրիկյան թերակղզին կանխապես պատկանում էր սկյութական ցեղերին: Ավելի ուշ հույները հայտնվեցին այստեղ ու քաղաքներ հիմնեցին: Մարմատացիներից նեղվելով՝ հույները հրավիրեցին Մեծն Միհրդատին, հետո թերակղզին անցավ հռոմեացիներին, այնուհետև արշավեցին ալլանները և գոթերը: Չորրորդ դարի վերջին հոների առաջնորդ Աթիլյան քարը քարին չթողեց, հիմնավորապես ավերեց երկիրը: 501 թ. հայտնվեցին բուլգարները, որոնց իշխանությունը կարճ տևեց. 530-ին Հուստինիանոսը նվաճեց Ղրիմը: 6-րդ դարում գորացան խազարները, գրավեցին ու շենացրին երկիրը: 740 թ. խազարները ընդունեցին հրեյից կրոնը, 858-ին քրիստոնյա դարձան: 9-րդ դարում նրանք արդեն լրիվ նվաճել էին երկիրը, որը Խազարստան կոչեցին: 11-րդ դարում պեչենեգները արշավեցին, սրանց հաջորդեցին ղփչաղները: Չինգիզ խանի թոռը՝ Բաթուն, 13-րդ հարյուրամյակում արդեն տիրեց բովանդակ թերակղզուն:

Ն. Ք. 1-ին դարից հայ վաճառականները հայտնվեցին այստեղ: Սակայն հայերի զանգվածային գաղթը Ղրիմ սկսվել է 10-րդ դարից: Հայերը հաստատվել էին հիմնականում Կաֆա, Մուրխաթ, Մուդաղ, Եվպատորիա, Կերչ ծովեզրյա քաղաքներում, ավելի խորքում՝ Սիմֆերոպոլ, Բախչիսարայ, Նախճավան և այլ բնակավայրերում: Հայոց ծաղկյալ վիճակը տևեց մինչև 1475 թ., երբ Ղրիմը անցավ օսմանցիների ձեռքը և կարճ ժամանակ անց ավերակի վերածվեց...

16-րդ դարից թաթարների, օսմանցիների ու ռուսների միջև անզիջում պայքար սկսվեց: Ռուսները մտադրված էին անպատճառ նվաճել Ղրիմը: Համառ պայքարից հետո 1779-ին այն ամբողջապես միացավ Ռուսաց կայսրությանը: Հայտնի է, երբ Պոտյոմկին զորավարը պայքարում էր Տավրիկյան երկիրը նվաճելու համար, Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Երկայնաբազուկ Արդուրյանը ուղեկցում էր նրան ու հորդորում էր հայերին աջակցել ռուսական բանակին...

Հպանցիկ, բայց ամսագրային ձևաչափի համար ակնհայտորեն ընդարձակ պատմական ակնարկը նպատակ ունի մեկ անգամ ևս ընդգծել այս գողտրիկ երկրամասի՝ ի սկզբանե մշակութային ամենաբազմազան ազդեցությունների ասպարեզ և խաչմերուկ լինելը: Սակայն անգամ այս խայտաբղետ, շռայլ բազմազանության մեջ հնուց անտի, հստակ գտվել ու զանազանվել է հայի ձեռագիրը:

Հայ գաղթավայրերի պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Ղրիմը: Ի. Կրիստյանկինսը նկատել է, թե հայկական Սփյուռքը պատմության եզակի երևույթ է. «Քիչ ժողովուրդներ կան, որ իրենց ինքնության պահպանման համար վտարանդվելով, հայրենիքից հեռու կարողացել են հարմարվել նոր կյանքին, զբաղվել են տնտեսական լայն գործունեությամբ ու նոր պայմաններում զարգացրել են իրենց ինքնատիպ մշակույթը»:

Ա. Բերտյե-Դելազարտը անցյալ հարյուրամյակի սկզբներին արձանագրել է, թե Ստարի Կրիմ քաղաքի մերձակայքում շատ կան եկեղեցական շինություններ, որոնք բացառապես հայկական են: «Ավելի շատ են քան հունականները» (գրախոսվող աշխատություն)։

տությունը, էջ 10): Բնականաբար, հայ մշակույթի ուսումնասիրությունը թերի ու աղճատված կլինի, առանց գաղթօջախների պատմության բեկոր-բեկոր ամբողջացման: Ղրիմի հայկական հուշարձանները մասնակիորեն ուսումնասիրվել են 1973-80 թթ., Ուկրաինայի գիտությունների ակադեմիայի Ղրիմի մասնաճյուղի աշխատակիցների կողմից: Անցյալ դարի վերջում, պատմական նոր իրավիճակի պայմաններում նոր նախաձեռնություն էր պետք:

1992 թ. փետրվարի 25-ին Ստարի Կրիմի (Սուրխաթ) քաղաքի զործկոմի նախագահ Ե. Պանինը դիմել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Գևորգ Տիրացյանին՝ խնդրելով աջակցել Սուրբ Խաչ վանքի հնագիտական ուսումնասիրությունների հարցում և արշավախումբ ուղարկել ավագ գիտաշխատող Ֆրինա Բաբայանի ղեկավարությամբ: Հրավիրող կողմը պատրաստակամ էր աջակցելու մեր գիտնականներին: Իսկ տեղում մեր հետազոտողները վայելում էին հայրենակիցների՝ հատկապես Հայ Առաքելական Եկեղեցու Թեոդոսիայի հայոց հովիվ Տ. Երեմիա քահանա Մակյանի ջերմ աջակցությունը: Հիշեցնենք՝ նախորդ դարի վերջի՝ 90-ական դժվարին տարիներն էին...

2008 թ. հուլիսին հայոց հոգևոր և աշխարհիկ առաջնորդները այցելեցին Ղրիմ, և Սուրբ Խաչ եկեղեցու օծման հանդիսությունների ժամանակ տեղի ունեցավ գիտաժողով, որտեղ ի թիվս այլ հրատարակությունների ներկայացվեց նաև Ֆ. Բաբայանի և Է. Կորխմազյանի «Սուրբ Խաչ վանքը, որպես Ղրիմի հայկական մշակույթի կենտրոն» եռալեզու (հայերեն և անգլերեն եզրակացություններով) գիրքը: Շատ կարևոր հնագիտական ուսումնասիրությունների մի արժանի ամփոփում է այն՝ բարձր տպագրական որակով, առատ լուսանկարներով («Նահապետ» հրատարակչություն, Երևան, Սիմֆերոպոլ, 2008):

Հեղինակների դիտարկմամբ, Սուրխաթ տեղանվան հիմքում Սուրբ Խաչն է ընկած, քանզի Սուրբ բաղադրիչը երբեմն նաև Սոր կամ Սուր ձևն է ստանում: Իբրև ապացույց բերվում է Ծովքի Սուրբ Մարգիս եկեղեցին, որ Սուր է հորջորջվում: Նմանապես հիշվում են Վասպուրականում Սուրխաչ, Վանում Սորխան բնակավայրերը:

Ղրիմահայերի հոգևոր կենտրոններից համեմատաբար լավ պահպանվածներից է Սուրբ Խաչ վանական համալիրը, որը թեև կառուցվել է աստիճանաբար, սակայն կազմում է կուռ ամբողջություն ավարտուն լուծումներով: Այս անքակտելի ամբողջության մաս են կազմում եկեղեցին, գավիթը, զանգակատունը, երկու կամարակապ սրահներով սեղանատունը, բնակելի երկհարկանի շենքը, այլ կառույցներ:

Իրենց գործի նվիրյալ-ուսումնասիրողները՝ Ֆրինա Բաբայանը և Էմմա Կորխմազյանը, մանրամասն ներկայացնում են պեղման ընթացքը, բացված մշակութային շերտերը, շինությունների՝ պարբերաբար իրականացված վերանորոգման աշխատանքների բնույթը:

Հեղինակները միանգամայն իրավամբ վիճարկում են վանքի ամենավաղ կառույցի՝ Ս. Նշան տաճարի հիմնադրման ընդունված թվականը: Թմբուկը, որի վրա կա արձանագրություն, կառուցվել է սրբատաշ, մնացածը անմշակ քարերով: Սա էլ հուշել է ուսումնասիրողներին, որ ավելի ուշ շրջանի հավելում է: Ենթադրության հաստատումներից

մեկն էլ Հովհաննես կրոնավորին նվիրված ձոնն է, ուր նկարագրվում են Ս. Նշանի շինարարական, իսկ ավելի ճիշտ՝ նորոգման աշխատանքները.

Կամաւ Ս[ուր]բ Հոգւոյն ուրն գիտնական,
Յովհաննէս անուն շնորհիւ պետական.
Լեալ նա յաշխարհէն մեծ սեբաստական...
Կանգնեալ հաւատով զվանքս Ս[ուր]բ Նշան.
Ունելով ընդ իւր զփայտն փրկչական,
Եկեալ ի յաշխարհս փառօք մեծական.
Ամփոփեալ զմասն խնամօք տ[երու]նական,
Վերակառուցեալ զվանքս Ս[ուր]բ Նշան...

«Եթե 1358 թ. Ս. Նշան տաճարը վերակառուցվել է, ապա ե՞րբ է այն հիմնադրվել...», - հարցն են առաջադրում ուսումնասիրողները: Հարց, որի պատասխանն ըստ էության ուրվագծվում է մենագրության մեջ:

Ս. Խաչ համալիրի, սեղանատան, կից շինությունների ուսումնասիրությամբ բացահայտվել են «ոչ միայն Ղրիմի տարածքում հայկական շինարարական արվեստի ազգային ակունքները, այլև տեղի մշակույթի, մասնավորապես կառուցողական տարրերի փոխներթափանցման արգասիք հանդիսացող այն իրողությունները, որոնց շնորհիվ կյանքի է կոչվել ղրիմյան հայկական ճարտարապետության յուրօրինակ ոճը», - գրում են հեղինակները (69):

Գրքում դիտարկված են հայտնաբերված խաչքարերն ու տապանաքարերը, Սուրխաթի 14-րդ դարի որոշ ձեռագրերի մանրանկարներ, կիրառական արվեստի բազմաթիվ հետաքրքիր նմուշներ: Հեղինակների համոզմամբ, մանրանկարներում միաժամանակ օգտագործվել է երկու եղանակ: Պատկերային մանրանկարները կատարվել են բազմագույն գեղանկարային, իսկ օրնամենտալ հարդարանքը (խորաններ, անվանաթերթեր, լուսանցազարդեր)՝ միագույն գրաֆիկական եղանակով: Հիշատակարանների շնորհիվ մեզ են հասել ծաղկողներից մի քանիսի անունները՝ գրիչ Նատերը իր՝ Ավետիս, Ստեփաննոս, Հովհաննես որդիներով, այլ ականավոր մանրանկարիչներ՝ Առաքել, Կիրակոս:

Ղրիմ թերակղզում (և ինչո՞ւ միայն այնտեղ) սփռված են հայ մշակույթի մասունք-սրբություններ, որոնք դեռ սպասում են իրենց ուսումնասիրողին, բեկոր-բեկոր, որոնցով կամբողջանան հայ ներկայակի շոայլ գույները:

Որքա՞ն էկեղեցիներ Աստծո կամոք ու զորությամբ կանգուն են աշխարհի չորս ծագերում, որ ամրակուռ ու անառիկ մնա հայի ոգին...

ԱՆԻ ԽՈՒՂԱՎԵՐԴՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու



ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆՈՒՄ

Օգոստոսի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հրնթացս Ս. Պատարագի Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Օայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում ստացան ՀՀ Զինված ուժերի հոգևոր առաջնորդ Ս. Վրթանես վարդապետ Աբրահամյանը և Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Ս. Սահակ վարդապետ Մաշալյանը: Սրբազան արարողության ընթացքին Վեհափառ Հայրապետի ընթերականերն էին Մայր Աթոռի դիվանապետ Ս. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը և Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր տեսուչ Ս. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը: Ընծայացուների խարտավիլակն էր Մայր Աթոռի լուսարարապետ Ս. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը:

Նախորդ օրը՝ երեկոյան ժամերգությունից առաջ, Մայր Տաճարում Իջման Ս. Սեդանի առջև կատարվեց նրանց ուխտադրության կարգը, որի ընթացքում վարդապետները, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին իրենց հավատարմության ուխտը կատարելով, ստորագրեցին երդմնագրերը:

Օգոստոսի 24-ին, Հայրապետական Ս. Պատարագի ընթացքում, Ս. Ստեփաննոս Նախասարկավագի խորանի առջև կատարվեց ընծայացուների հավատքի ուղղափառության քննությունը: Ձեռնադրվելիք եպիսկոպոսների մասին Վեհափառ Հայրապետին վկայեցին Հայ Եկեղեցու նվիրապետական աստիճանների ներկայացուցիչները՝ դպիրներ, կիսասարկավագներ, սարկավագներ, քահանաներ, եպիսկոպոսներ, ինչպես նաև ժողովուրդը ներկայացնող աշխարհականներ:

Այնուհետև Ս. Պատարագը շարունակվեց Մայր Տաճարի Ավագ Խորանին: «Աստվածային և երկնային շնորհ» շարականի երգեցողության ներքո երկու վարդապետները, դառնալով դեպի հավատացյալ ժողովուրդը, վեր բարձրացրեցին իրենց ձեռքերը՝ ի նշան աշխարհից հրաժարման: Ապա Նորին Սրբությունն ընծայացուներին կոչեց եպիսկոպոսության և Սրբալույս Մյուռոնով օծեց նրանց ճակատներն ու աջ ձեռքերի բույժ մատները: Ձեռնադրության արարողության ավարտին նորած եպիսկոպոսներին հանձնվեցին նաև եպիսկոպոսական իշխանության խորհրդանիշները՝ եպիսկոպոսական գավազաններ և մատանիներ, ինչպես նաև ի նշան Աստծո խոսքի քարոզչության՝ Ս. Ավետարան:

Օծման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետն իր պատգամն ուղղեց նորած եպիսկոպոսներին: «Մենք հավատում ենք, որ պատասխանատվության բարձր գիտակցությամբ պիտի շարունակեն նրանք իրենց ծառայությունը՝ միշտ սերն ու հարգանքը վայելելով ինչպես իրենց ծառայակից եղբայրների, այնպես էլ՝ հավատավոր իրենց զավակների, որոպհետև իրենց կյանքի ողջ ընթացքին նրանք երբեք չեն եղել քանքարաթաքույց, նրանք

երբեք չեն փնտրել իրենց անձնական շահը, այլ միշտ ծառայական ոգով հետամուտ են եղել օգտակարություն բերելու հավատավոր իրենց գավակներին, պայծառացնելու և շենացնելու հայորդու հոգին, նրա հոգևոր կյանքը և Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին», - ասաց Նորին Սրբությունը: Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ այսօր նրանք մեծագույն պատասխանատվություն են կրում իրենց ուսերին, ծառայության կոչված՝ մեկն որպես տեսուչ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի, իսկ մյուսը՝ որպես հոգևոր առաջնորդ Հայոց Բանակի. նրանց խնամքին են հանձնված երիտասարդ հոգիներ, որոնց հոգևոր կյանքի ընթացքը կերտվելու է իրենց հոգաձությամբ:

Հայոց Հայրապետը նաև իր գնահատանքը հայտնեց նորած եպիսկոպոսների ծնողներին՝ Հայոց Եկեղեցուն նվիրյալ ու հավատավոր սպասավորներ պարգևելու համար, ինչպես նաև ողջունեց ներկայությունը ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի և Բարձրաստիճան զինվորականների:

Հավարտ Ս. Պատարագի Մայր Աթոռում տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Հայոց Հայրապետը նորած Սրբազան Հայրերին նվիրեց եպիսկոպոսական պանակներ:

Ձեռնադրության արարողությանը ներկա էին Հայ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը և մի շարք Բարձրաստիճան զինվորականներ, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դասախոսներ և հյուրեր: Ս. Պատարագին մասնակցում էր նաև Մայր Աթոռում պաշտոնական այցով գտնվող Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի գլխավոր քարտուղար Քոլին Վիլյամսի գլխավորած պատվիրակությունը:

*ՄԱՅԸ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



Տ. ՎՐԹԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

Ծնվել է 1962 թ. մարտի 21-ին ԼՂՀ Մարտունու շրջանի Ծովատեղ գյուղում: Ավագանի անունն է Կամո:

1969-1979 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1980 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

1981-1983 թթ. ծառայել է խորհրդային բանակում, այնուհետև ճեմարանում ուսումնառությունն ավարտելուց հետո աշխատանքի է նշանակվել Մայր Տաճարի թանգարանում:

1987 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթրույանի, ձեռնադրվել է սարկավագ:

1988 թ. մարտի 10-ին պաշտպանել է ավարտաճառ «Աղվանից Եկեղեցու համառոտ պատմություն (Դ-ԺԷ դարեր)» թեմայով և արժանացել քաջալավ գնահատականի:

1988 թ. մայիսի 22-ին՝ Հոգեգալստյան տոնին, ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթրույանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1989-1994 թթ. ծառայել է Ամարասի վանքում որպես վանահայր:

1992 թ. նոյեմբերին պաշտպանել է վարդապետական թեզ «Հովսեփ Արցախեցի՝ վահան ուղղափառության» թեմայով:

1994-1996 թթ. եղել է Արցախի թեմի առաջնորդական փոխանորդ:

1996 թ. հունիսին նշանակվել է Ս. Հռիփսիմե վանքի վանահայր:

1997-1999 թթ. ծառայել է որպես ՀՀ Պաշտպանության նախարարի հոգևոր խորհրդատու:

1999-2001 թթ. ծառայել է Ս. Հռիփսիմե վանքում որպես վանահայր:

2001 թ. օգոստոսից հոգևոր հովվության է նշանակվել Գուգարաց թեմի Տավուշի մարզում:

2006 թ. սեպտեմբերի 28-ից հոգևոր հովվության է նշանակվել Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմում:

2007 թ. հոկտեմբերի 1-ից նշանակվել է ՀՀ Զինված ուժերի հոգևոր առաջնորդ:



Տ. ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՇԱԼՅԱՆ

Ծնվել է 1962 թ. Ստամբուլում (ավագանի անունը՝ Շահան):

1983 թ. հոգևոր սպասավորության է անցել Կ. Պոլսի հայոց Պատրիարքարանում:

1983-1987 թթ. սովորել է Ստամբուլի համալսարանի փիլիսոփայության բաժնում:

1986 թ. ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ երանաշնորհ Տ. Շնորհք Պատրիարք Գալուստյանի:

1989-1994 թթ. աստվածաբանություն է ուսանել Լոնդոնի համալսարանում:

1992 թ. կուսակրոն քահանա է ձեռնադրվել՝ ձեռամբ երանաշնորհ Տ. Գարեգին Պատրիարք Գազանձյանի:

1994-1997 թթ. եղել է Երուսաղեմի հայոց պատրիարքության Թարգմանչաց վարժարանի տեսուչը և կրոնի ուսուցիչը:

1997-1999 թթ. կրթությունը շարունակել է Դուբլինի համալսարանում (Իռլանդիա):

1999-2005 թթ. եղել է Կ. Պոլսի հայոց Պատրիարքության միջեկեղեցական և միջկրոնական հարաբերությունների բաժնի վարիչը և հոգևոր հովիվ Կ. Պոլսի հայոց եկեղեցիներում:

2005 թվականից Նոր Կտակարանի ներածություն և մեկնություն է դասավանդում Գևորգյան Հոգևոր Ճեմարանում և Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2006 թ. ապրիլի 21-ին Մայր Աթոռում վարդապետական թեզ է պաշտպանել «Հավատք և հրաշք» թեմայով և հաջորդ օրը Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Գերաշնորհ Տ. Շահան արքեպս. Սվաճյանի, ստացել է մասնավոր վարդապետության չորս աստիճանները:

2007 թ. դեկտեմբերին նշանակվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ:

ԵՊԻՄԿՈՊՈՍԱԿԱՆ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Միածնաեջ Սուրբ Խորանի վրա, իր ուխտի Ս. Պատարագը մատուցեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ նորած Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը:

Սրբազան Հայրը Ս. Պատարագի ընթացքում հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով եպիսկոպոսական ձեռնադրության և օծման խորհրդին և շեշտելով առաքելական հաջորդականության կարևորությունը Քրիստոսի Եկեղեցու կյանքում: Սահակ եպիսկոպոսն իր շնորհակալությունը և որդիական երախտագիտությունը հայտնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ իրեն վստահելու և եպիսկոպոսության աստիճանին արժանացնելու համար, ինչպես նաև եկեղեցում ներկա հավատացյալներին և ուխտավոր պոլսահայերին՝ հայցելով նրանց աղոթքների զորակցությունը:

Ս. Պատարագի երգեցողությունը կատարեց «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնի առիթով Հայաստանում գտնվող Կ. Պոլսի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցու «Լուսավորիչ» երգչախումբը՝ ղեկավարությամբ Հակոբ Մամիկոնյանի:

Սրբազան արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ և պոլսահայ ուխտավորներ:

Ս. Պատարագից հետո, Վեհարանի հարկի ներքո Ամենայն Հայոց Հայրապետը ընդունեց «Լուսավորիչ» երգչախմբի անդամներին՝ ուղեկցությամբ Սահակ Սրբազանի: Նորին Սրբությունը իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց ուխտավոր պոլսահայերին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Միածնաէջ Սուրբ Խորանի վրա, իր ուխտի Ս. Պատարագը մատուցեց ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդ նորած Ս. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը:

Սրբազան արարողության ընթացքում Վրթանես Սրբազանը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ հորդորելով ներկաներին հավատարիմ լինել Հիսուս Քրիստոսի սիրո վարդապետությանը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Նօրած Սրբազան Հայրը նաև իր որդիական երախտագիտությունն ու շնորհակալությունը հայտնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ վստահության և եպիսկոպոսության պատասխանատու աստիճանին արժանացնելու համար՝ խոստանալով, որ ամեն ինչ պիտի անի Մայր Աթոռի շենացման և հայ ազգային բանակի գորացման համար՝ հայ զինվորի մեջ սերմանելով անսահման սերնատ Հայրենիքն ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

Ս. Պատարագին ներկա էին Մայր Աթոռի միաբաններ և բազմաթիվ հավատացյալներ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ԹԵՄԱՊԱՏԿԱՆ «ԾԻԾԵՌՆԱԿՆ» ԱՍՈՒՄ Է ՑՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՉ ԹԵ ԳՆԱՔ ԲԱՐՈՎ...

Արդեն յոթերորդ տարին է, որ Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մեպուհ եպիսկոպոս Չուլջանի նախաձեռնությամբ և անմիջական հսկողությամբ 5 հերթափոխով գործում է Գուգարաց թեմի «Ծիծեռնակ» ճամբարը, որի գողտրիկ գրկում ամառային արձակուրդների ընթացքում անվճար հանգստանում են թեմի տարբեր բնակավայրերի անապահով ընտանիքներից 9-14 տարեկան շուրջ 1000 երեխաներ: Սրբազան Հայրը միշտ նախանձախնդիր է եղել ճամբարականների հայեցի դաստիարակությանը և այդ նպատակով էլ ճամբարում միշտ աշխատել են գործիմաց, եկեղեցասեր մանկավարժներ:

Այս տարի ճամբարում հանգստացան Վանաձորի, Սպիտակի, Ալավերդու, Ստեփանավանի, Տաշիրի և հարակից գյուղերի, Թալինի, Հաղպատի, Օձունի, Արևաշողի համայնքների երեխաները:

Ճամբարային ծրագիրը հազեցած էր ուխտագնացություններով, արշավներով, սպորտային տարբեր միջոցատային խաղերով, վիկտորինաներով ու մրցույթներով՝ շաշկի, շախմատ, ֆուտբոլ, թենիս, լող, որի հաղթողները պարգևատրվում էին նվերներով: Ճամբարականները մասնակցեցին նաև այլ խմբակների՝ հմուտ ձեռքեր, ասեղնագործության, շյուղագործության, նկարչության, երգի, պարի և իրենց աշխատանքներով կազմակերպեցին ցուցահանդեսներ ու մրցույթներ:

Յուրաքանչյուր կիրակի Սրբոց Մանկանց մատուռում երեխաների համար մատուցվում էր Սուրբ Պատարագ և կնքված երեխաները հաղորդություն էին ընդունում: Այս տարի օգոստոսի 17-ին երեխաները մասնակից դարձան Ս. Աստվածածնի Վերափոխման տոնի Սուրբ Պատարագին և Խաղողօրհնեքի արարողությանը: Այդ օրը բոլոր Մարիամներին նվերներ բաժանվեցին: Ճամբարում նշվում և նվերներ էին տրվում այն երեխաներին, ում ծննդյան օրը զուգահեյպում էր ճամբարում հանգստանալու օրերին: Յուրաքանչյուր հերթափոխի ավարտին կազմակերպվում էր հրաժեշտի խարույկ, որը ուղեկցվում էր մեծ տոնախմբությամբ և իր համերգային ծրագրով ելույթ էր ունենում Գուգարաց թեմի «Վարդանանց հետնորդներ» փողային նվագախումբը:

Ճամբարում երեխաները հնարավորություն ունեցան դիտել ֆիլմեր և մուլտֆիլմեր: Ճամբարականները ժամանակ առ ժամանակ հյուրընկալում էին Վանաձորի տարբեր պարային խմբերի, Ֆրանսիայից ժամանած փողային նվագախմբին, սփյուռքահայ սկաուտական ջոկատներին: Հանդիպումեր ունեցան նաև թեմի հոգևորականների հետ:

Այս տարի ճամբարի հետ համագործակցեցին «Վորլդ Վիժն» կազմակերպությունը, «Լոռու դպրոց» հիմնադրամը, Ալավերդու քաղաքապետարանը: Ճամբարային առօրյային իրենց գիտելիքներով և գործնական աշխատանքներով աջակցեցին նաև Գևորգյան Հոգևոր Ճեմարանի մի խումբ ուսանողներ:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻ

ՕԾՎԵՑԻՆ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՇՐՋԱՆԻ ՓՈՔՐ ՍԱՄՍԱՐ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՄԲԵԹԻ ԽԱՉԸ ԵՎ ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Օգոստոսի 2-ին, ձեռամբ Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Ս. Բաբկեն արեղա Սալբիյանի և մասնակցությամբ Ախալքալաքի շրջանի Արակովա գյուղի Սուրբ Գևորգ եկեղեցու հոգևոր հովիվ Ս. Թադեոս քահանա Տեր-Սկրտչյանի, Սրբալույս Մյուռնոնով օծվեցին Ախալքալաքի շրջանի Փոքր Սամսար գյուղի Սուրբ Հարություն եկեղեցու գմբեթի խաչը և սրբապատկերները: Խաչը պատրաստվել է գյուղի հավատավոր հայորդիներ Արթուր և Սասուն Աբգարյանների նյութական աջակցությամբ:

Տեղի բնակիչները աղ ու հացով դիմավորեցին Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Ս. Բաբկեն արեղա Սալբիյանին, շրջանային ժողովի նախագահ Խաչիկ Այվազյանին, շրջանային վարչության նախագահ Նաիրի Իրիցյանին և այլ բարձրաստիճան պաշտոնյաների ու հյուրերի, որից հետո ձեռամբ Հոգեշնորհ Ս. Բաբկեն արեղա Սալբիյանի՝ տեղի ունեցավ խաչի և եկեղեցին զարդարող սրբապատկերների օծման ու օրհնության սրբազան արարողությունը: Խաչի օծումից հետո Սասուն Աբգարյանի կողմից այն տեղադրվեց եկեղեցու զանգակատան գմբեթին: Օրվա խորհրդով հոգենորդ Սուրբ Պատարագ մատուցեց արժանապատիվ Ս. Թադեոս քահանա Տեր-Սկրտչյանը: Հավարտ Սուրբ Պատարագի եկեղեցու բակում սկսվեց տոնական հանդիսություն, որն ուղեկցվեց ավանդական մատաղի մատուցմամբ:

Հավատավոր ժողովրդին և հյուրերին իր շնորհավորանքի խոսքն ու Վիրահայոց թեմի առաջնորդ Ս. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի օրհնությունը փոխանցեց Հոգեշնորհ Հայր Սուրբը:

*ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ
ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՍԼՈ ՂԻՎԱՆ*

ՕԾՎԵՑԻՆ ԱՌԱՆՔԱԼԱՔԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՈՒՐԲ ԽՈՐԱՆՆ ՈՒ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԲ ԱՎԱԶԱՆԸ

Օգոստոսի 3-ին, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Ս. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի և մասնակցությամբ Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Ս. Բաբկեն աբեղա Սալբիյանի ու Ախալքալաքի հոգևոր հովիվ Ս. Սամվել քահանա Թորոսյանի, օծվեցին Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցու Սուրբ Խորանն ու մկրտության Սուրբ Ավագանը:

Ախալքալաքի «Սուրբ Խաչ» եկեղեցին կառուցվել է 1853-56 թվականներին՝ 1830 թվականին նույն տեղում կառուցված համանուն եկեղեցու տեղում: Բարերարությամբ Արարատ, Մասիս և Արթուր Կուրդինյանների նորովի կառուցվեց և բարեկարգվեց եկեղեցու Սուրբ Խորանը: Կուրդինյան եղբայրները այս բարի գործը արժանավորապես նվիրեցին իրենց լուսահոգի հոր՝ անվանի մանկավարժ Ռոմիկ Կուրդինյանի հիշատակին: Իսկ մասնագիտությամբ բժիշկ Աղասի Կարաբեկյանի նյութական աջակցությամբ կառուցվեց Մկրտության Սուրբ Ավագանը:

Առավոտյան լեփ-լեցուն էր Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցու բակը և հարակից տարածքը: Հոգևոր դասին, հյուրերին և իշխանության ներկայացուցիչներին ողջունեցին Սամցխե-Ջավախքի փոխառաջնորդության և շրջանային վարչության կողմից կազմակերպված բակային ճամբարի երեխաները: Քաղաքի մշակույթի տան երգի-պարի համույթները իրենց ուրախ կատարումներով տոնական դարձրեցին Ախալքալաքի այդօրյա մթնոլորտը:

Օծման արարողությանը ներկա էին շրջանային ժողովի նախագահ Խաչիկ Այվազյանը, շրջանային վարչության նախագահ Նաիրի Իրիցյանը, ոստիկանապետ Սամվել Պետրոսյանը, Վրաստանի Խորհրդարանի պատգամավոր Հարություն Հովհաննիսյանը, Վրաստանի Կառավարության սոցիալական հարցերով վարչության պետ Համլետ Մովսիսյանը և Հայաստանի Խորհրդարանի պատգամավոր Տաճատ Վարդապետյանը: Խորհրդակատարությանը մասնակցելու համար բազմաթիվ հյուրեր էին ժամանել Հայաստանից, Ռուսաստանի Դաշնությունից և Վրաստանի հայաբնակ այլ վայրերից:

Սրբազան Արարողության ավարտին Առաջնորդ Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց, բարձր գնահատեց բարերարների աշխատանքը և նրանց հանձնեց թեմի օրհնության գրեր ու հուշանվերներ: Սրբազան Հայրը շնորհավորեց նաև հոգևոր դասին, հավատացյալ ժողովրդին և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներին:

Տոնակատարությունը ավարտվեց Սուրբ Մատաղի ավանդական օրհնությամբ և մեծաշուք հանդիսությամբ, որը հովանավորել էին Կուրդինյան եղբայրները:

*ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ
ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՍԼՈ ՂԻՎԱՆ*

ՕԾՎԵՑ ՆՈՎՈԿՈՒԶՆԵՑԿԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

2008 թվականի օգոստոսի 24-ին Նովոկուզնեցկ քաղաքի հայ համայնքում պատմական և տոնական օր էր, քանզի տեղի հայության երկար սպասված երազանքն իրականություն դարձավ. օծվեց արդեն մի քանի տարի կառուցվող և իր ավարտին հասած Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Պաշտոնական տվյալներով այդ տարածաշրջանում իրենց բնակությունն են հաստատել շուրջ տասներկու հազար հայեր, ովքեր վերջապես ունեցան իրենց աղոթքի տունը:

Պատմական այս օրը, Մոսկվայից Կեմերովոյի շրջանի Նովոկուզնեցկ քաղաք էր այցելել Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը, ով, առընթերակայությամբ Մոսկվայի, Կրասնոյարսկի և Բառնաուլի հոգևոր հովիվներ Տեր Թադեոս, Տեր Շահան և Տեր Մաշտոց քահանաների, օծեց եկեղեցու գմբեթի հինգ խաչերը: Հավարտ օծման արարողության սկսվեց Ս. Պատարագը, որի ժամանակ օծվեց ու սրբազործվեց նաև բուն տաճարը:

Սրբազան այս արարողությանը իրենց ներկայությունն էին բերել ինչպես Ռուս Ուղղափառ ու Կաթոլիկ եկեղեցիների, այնպես էլ տեղի մահմեդական համայնքի ներկայացուցիչներ: Ներկա էին նաև մարզային և քաղաքային իշխանության անդամներ, նաև հարևան Բառնաուլ, Կրասնոյարսկ քաղաքներից տեղի ծխական համայնքների առենապետերը, ուխտավորներ և բազմաթիվ հավատացյալ հայորդիք:

Հընթացս Ս. Պատարագի առաջնորդ Սրբազան Հայրն իր օրհնության խոսքն ուղղեց բոլոր ներկաներին՝ պատգամելով, որ կենդանի պահեն այս եկեղեցին իրենց՝ այնտեղ վեր բարձրացնելիք անդադար աղոթքներով և նախնյաց նվիրական հավատով անդավաճան ապրելու շնորհընկալ հոգով, որ պետք է վկայի նվիրական սերն առ Հայրենին ու հավատարմությունը առ համայն հայության Սրբություն Սրբոց Էջմիածինը: Մասնավոր գնահատանքի խոսք ուղղեց նաև եկեղեցու բարերար, Ծխական Խորհրդի առենապետ տիար Սարիկ Աբրահամյանին, ում նախաձեռնությամբ սկսվել ու այսօր իր ավարտին է հասել գեղեցիկ այս տաճարի շինարարությունը:

Ս. Էջմիածնից մի մասնիկ էլ վեր խոյացավ, Մայր հողից կտրված, բայց ազգային նվիրական սրբություններին հավատարիմ տեղի հայության կյանքում, այն վստահությամբ, որ այդ կամարներից վեր բարձրացող աղոթքները հայոց հավատքի Հայր Ս. Գրիգոր Լուսավորչի բարեխոսությամբ ընդունելի պետք է լինեն Աստուծո առաջ՝ աշխարհացրիվ մեր ժողովրդի բարօրության և Մայր եկեղեցու պայծառության համար:

*ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՍԼՈ ՂԻՎԱՆ*

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՅ

ՀՈԳԵՇԷՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱՔԱՀԱՅ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ

ՊԱՍՐԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍԵՂԱՆԻ ՕԾՈՒՄ

Առաջին քան 250 տարիներ առաջ կառուցուած, Պասրայի Ս. Աստուածածին եկեղեցին անցեալին քանիցս նորոգութեան ենթարկուած է: 1736-ին կառուցուած եկեղեցին օծուած է 1754-ին ձեռամբ Գեորգ եպս. Ջուղայեցիի: Վերանորոգուած եւ օծուած է 24 Նոյեմբեր 1907-ին ձեռամբ Սեբոբ վրդ. Սամուէլեանի: Կրկին անգամ վերանորոգուած եւ օծուած է 1 Նոյեմբեր 1931-ին ձեռամբ Ռուբէն արքեպս. Մանասեանի:

Իրաք-իրանեան պատերազմին (1980-1988) պատահած ռմբակոծումներուն հետեւանքով՝ եկեղեցին եւ յատկապէս առաստաղը վնասուած էր:

Վերջերս, առաջնորդ Սրբազան Հօր՝ Գերաշնորհ Ս. Աւագ Ասատուրեանի ջանքերով բարերար պրն Սարգիս Աղաճաւ հոգացած է նորոգութեան ծախսերը, որուն առ ի հետեւանք նորոգուեցաւ եկեղեցւոյ ներքին մասը, իսկ փայտեայ Ս. Սեղանը փոխարինուեցաւ մարմարակերտ Սեղանով պահելով հին սրբապատկերը:

Ս. Սեղանի օծումը կատարուեցաւ 2008-ի Օգոստոսի 21-ին երեկոյեան ժամը 4:30-ին ձեռամբ թեմիս բարեխնամ առաջնորդ Գերշ. Ս. Աւագ արքեպս. Ասատուրեանի: Այս հոգեպարար արարողութեան իրենց մասնակցութիւնը բերին Արժ. Ս. Նարեկ ա. քինյ Իշխանեանը եւ Արժ. Ս. Մեսրոպ քինյ Գաբրիէլեանը, ինչպէս նաեւ Բարեշնորհ սարկաւազներ Արամ Քէթնճեանը եւ Վարդան Թորգոմեանը, ներկայութեամբ քոյր եկեղեցիներու հոգեւորականներու եւ պատահաւ հաւատացեալներու:

Երկրորդ օրը տեղի ունեցաւ քահանայական ձեռնադրութիւն:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՍՐԱՅԻ ՄԷՋ

Ձեռամբ թեմիս բարեխնամ առաջնորդ Գերշ. Ս. Աւագ արքեպս. Ասատուրեանի՝ քահանայական ձեռնադրութիւն կատարուեցաւ Պասրայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Ուրբաթ օր առաւօտեան, Օգոստոսի 22-ին յընթացս Ս. Պատարագի Սրբազան Հայրը Վարդան սրկ. Թորգոմեանը քահանայ ձեռնադրեց վերանուանելով զայն Ս. Թորգոմ, խարտաւիլակութեամբ Արժ. Ս. Մեսրոպ քինյ Գաբրիէլեանի եւ կնքահայրութեամբ Պասրայի ազգայիններէն պրն Վարուժան Խաչիկեանի:

Օր մը առաջ երեկոյեան կատարուած էր քահանայական կոչման արարարողութիւն, որտեղ Վարդան սարկաւազը կղերականաց դասին եւ ներկայ հաւատացեալներուն առջեւ ուխտագիր մը ստորագրած էր հնազանդ մնալու մեր դարաւոր եկեղեցւոյ օրէնքներուն եւ իր առաջնորդներու տնօրինումներուն ու կարգադրութիւններուն:

Ս. Թորգոմ քահանան ծնած է Պասրա 1945 թուականին: Առաջին 35 տարիներ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ ծառայելէ ետք 1996-ին առաջնորդ Սրբազան Հայրը զինք շնորհած է կիսասարկաւազութեան աստիճան, իսկ 2000-ին սարկաւազ ձեռնադրած է զայն:

Պաղտատի Ս. Կարապետ վանքին մեջ առանձնացումի քառասնօրեայ շրջանը լրացնելէ ետք Տ. Թորգոմ քահանան իր անդրանիկ Պատարագը մատուցանեց առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ ուրբաթ 26 Սեպտեմբերին եւ յաջորդ օրն իսկ վերադարձաւ Պասրապասարկելու Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ որպէս հոգեւոր հովիւ Պասրապի հայոց:

ՏՅՕՔԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆԱԽԱԿԱՏԻՔԸ ԵՒ ՕԾՈՒՄԸ

Քանի մը ամիսներ առաջ ամբողջացաւ Իրաքի հիւսիսային շրջանի Shop քաղաքի եկեղեցւոյ կառուցումը, բարերարութեամբ քիւրտական շրջանի Ֆինանսական նախարար պրն Սարգիս Աղաճանի:

Եկեղեցւոյ Նաակատիքը տեղի ունեցաւ Սեպտեմբերի 4-ին հինգշաբթի երեկոյեան, որու ընթացքին երկու քահանայ հայրեր յանձինս Արժ. Տ. Արթուն քինյ Խալաթեանի եւ Արժ. Տ. Մասիս քինյ Շահինեանի գինիով, ապա ջրով լուացին մարմարակերտ սեղանը, որուն յաջորդեց սեղանի տեառանագրումը եւ օրհնութեան աղօթքի ընթերցումն, ապա տեղի ունեցաւ երեկոյեան ժամերգութեան արարողութիւն:

Ուրբաթ օր, Սեպտեմբերի 5-ին, ձեռամբ թեմիս բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Աւագ արքեպս. Ասատուրեանի ինչպէս նաեւ Եգիպտոսի Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ եպս. Մնացականեանի եւ Դամասկոսի առաջնորդ Գերշ. Տ. Արմաշ եպս. Նալպանտեանի կատարուեցաւ եկեղեցւոյ օծման ծեսը սկսելով Ս. Մեղանէն, որուն յաջորդեց 16 սիւներու օծումը:

Օծման արարողութիւնը իր աւարտին հասաւ երբ թեմիս բարեխնամ առաջնորդը նորած եկեղեցին անուանեց «Ս. Ներսէս Շնորհալի», որմէ ետք մատուցեց առաջին Սուրբ եւ Անմահ Պատարագը եւ յաւուր պատշաճի քարոզեց:

Այս հոգեպարար արարողութեանց ներկայ եղան քոյր Եկեղեցիներու հոգեւոր պետեր եւ պետական պատասխանատուներ ինչպէս նաեւ հայ հաւատացեալներու հոծ բազմութիւն:

Յիշատակութեան արժանի է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետի Օրհնութեամբ Եգիպտոսի եւ Դամասկոսի առաջնորդները, առաջնորդ Սրբազան Հօր՝ Գերշ. Տ. Աւագ արքեպս. Ասատուրեանի հրաւերով, կը գտնուէին Իրաքի հիւսիսային շրջան, մասնակցելու վերոյիշեալ եւ այլ հոգեշէն միջոցառումներու:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՁԱԽԱՉ ԿՐԵԼՈՒ ԻՐԱԽՈՒՆՔ

Ընդառաջելով թեմիս բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Աւագ արքեպս. Ասատուրեանի խնդրանքին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետական Օրհնութեան Գիրով Զախոյի հոգեւոր հովիւ Տ. Արթուն քինյ Խալաթեանին շնորհեց քահանայական լանջախաչ կրելու իրաւունք:

Լանջախաչի տուուչութիւնը կատարուեցաւ թեմիս բարեխնամ առաջնորդի ձեռամբ, Զախոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատարագի ընթացքին կիրակի Սեպտեմբեր 7-ին: Հայրապետական Օրհնութեան Գիրը ընթերցեց Գերշ. Տ. Արմաշ եպս Նալպանտեանը: Օրուայ պատարագիչն էր Գերշ. Տ. Աշոտ եպս. Մնացականեանը, որն յաւուր պատշաճի քարոզեց:

ՍԱՐԿԱԽԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԶԱՆՈՑԻ ՄԷՋ

Տնօրինութեամբ թեմիս բարեխնամ առաջնորդին եւ ձեռամբ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Ս. Աշոտ եպս. Մնացականեանի կատարուեցաւ սարկաւագական ձեռնադրութիւն:

Յընթաց Զախոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ Ս. Աշոտ եպիսկոպոսի կողմէ մատուցուած Պատարագին կատարուեցաւ ձեռնադրութեան արարողութիւնը եւ Մուսուլի եկեղեցւոյ սպասաւորներէն Ռոստոմ Սարգիսեանը արժանացաւ սարկաւագութեան աստիճանին, խարտալիակութեամբ Մուսուլի Ս. Էջմիածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Ս. Առաքել քինյ Գասպարեանին:

Ս. ՊՍՏԱՐԱԳ ԱԻԶՐՈՒԿԻ ՄԷՋ

Սեպտ. 6-ին երեք Սրբազան Հայրերը այցելեցին Աւգրուկ գուտ հայկական գիւղը: Գիւղին բնակիչները մեծ հանդիսաւորութեամբ ողջունեցին Սրբազաններուն այցը զենելով զառ մը:

Պատարագ մատուցեց Գերշ. Ս. Արմաշ եպս. Նալպանտեան եւ յաւուր պատշաճի քարոզեց: Ամբողջ գիւղը հաղորդուեցաւ: Յետ պատարագին գիւղին բնակչութիւնը ազգային պարերով իր ուրախութիւնը յայտնեց ցայտուն կերպով:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱԻՐԷԶՔ ԳԻՒԴ

Թեմիս բարեջան առաջնորդ Գերշ. Ս. Աւագ արքեպս. Ասատուրեանը եւ Իրաքի Հիւսիսային շրջանի հիւրաբար գտնուող Գերշ. Ս. Աշոտ եպս. Մնացականեանը եւ Գերշ. Ս. Արմաշ եպս. Նալպանտեանը շաբաթ օրը կէսօրէ ետք Սեպտեմբերի 6-ին այցելեցին Հաւրէզք հայաբնակ գիւղը, որը կը բաղկանայ 120 ընտանիքներէ: Տեղի ունեցաւ սիրալիր ընդունելութիւն: Գիւղի նորակառոյց սրահին մէջ փոքրիկներ քանի մը ազգային եւ սկաւտական երգերով ելոյթ ունեցան:

Ի դէպ, Հաւրէզք գիւղը հիմնուած էր 1928 թուականին, երբ գաղթական հայեր ապաստանած են այնտեղ երկիր վերադառնալու մտադրութեամբ: 1947-ի ներգաղթին ոմանք կարողացած են հայրենիք վերադառնալ: Իսկ միւսները ապրած են այնտեղ մինչեւ հիստունական թուականները:

1974-ին նախկին պետութիւնը գիւղը քանդելով տեղահան ըրաւ բնակչութիւնը: 2003 թուականի պատերազմի աւարտէն եւ նոր իշխանութեան գալէն ետք գիւղը վերակառուցուեցաւ բարերարութեամբ պրն Սարգիս Աղաճանի եւ օժտուեցաւ դպրոցով եւ սրահով:

Ըլլալով ապահով շրջան, ներկայիս գիւղին մէջ կ'ապրին նախկին հաւրէզքահայերու ընտանիքներ, Պաղտատէն եւ Մուսուլէն գաղթողներ:

Հիւրաբար թեմէս ներս գտնուող Սրբազան Հայրերը լաւագոյն տպաւորութեամբ վերադարձան իրենց թեմերը հինգշաբթի 11 Սեպտեմբեր 2008-ին:

ԱՐԱՄ ՄՐԿ. ՔԷԹԷՆՃԵԱՆ

Կալկաթայի հայ համայնքում

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 61-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Օգոստոսի 15-ը հատկանշական օր էր ինչպես Հնդկաստանի Հանրապետության, այնպես էլ Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանի սաների և աշխատակիցների համար:

Հնդկաստանի Հանրապետության՝ 1947 թ. անկախացումից հետո ինչպես ողջ Հնդկաստանում, այնպես էլ Հայոց Մարդասիրական ճեմարանում կրկին անգամ մեծ հանդիսավորությամբ նշվեց Հնդկաստանի անկախության 61-րդ տարեդարձը:

Տոնակատարության հանդիսավոր բացումը սկսվեց Տերունական աղոթքով՝ ճեմարանի կառավարիչ՝ Հոգ2. Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանի գլխավորությամբ, այնուհետև երգչախմբի կատարմամբ Հնդկաստանի Հանրապետության օրհներգի հնչյունների ներքո ճեմարանի տեսուչ պարոն Սումիթրա Մալիկը հանդիսավորապես վեր բարձրացրեց Հնդկաստանի Հանրապետության դրոշմը, որին հետևեց թմբկահարների նվագախմբի համաչափ նվագակցությունը: Ներկաներին ուղղված ճեմարանի տեսչի ոգևորիչ և օրվա խորհրդին համահունչ ելույթից հետո մասնակիցները տեղափոխվեցին հանդիսությունների սրահ՝ ունկնդրելու սաների և ուսուցիչների կողմից պատրաստված փոքրիկ ծրագիրը, որն ուղեկցվեց բանախոսությամբ և ասմունքով:

Օրը հատկանշական էր նաև ճեմարանի սաների կողմից պատրաստված պատի թերթի ներկայացմամբ, որը կատարեց Հոգ2. Հայր Սուրբը: Այնուհետև վկայագրեր շնորհվեցին նախորդ՝ երաժշտական, նկարչական, ճարտասանության և մի շարք այլ բնագավառների մրցույթներին հաղթող ճանաչված մասնակիցներին:

Հանդիսության ավարտին օրվա խորհրդին անդրադարձավ ճեմարանի կառավարիչ Հոգ2. Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը, շնորհավորելով բոլոր ներկաներին տոնի կապակցությամբ, ընդգծելով ի սկզբանե մարդուն տրված ազատության գիտակցության, անկախ պետականություն ունենալու կարևորության մասին, հատկապես հնդիկ ժողովրդի կյանքում, թե ինչպիսի դժվարությամբ են այն ձեռք բերել՝ ազատագրվելով 200-ամյա անգլիական լծից, և թե ինչպես է օրեցօր շենանում և հզորանում Հնդկաստանի նման բազմազգ և բազմակրոն երկիրը՝ առաջընթաց արձանագրելով տարբեր բնագավառներում, և այժմ ճանաչվում է որպես աշխարհի առաջադեմ երկրներից մեկը՝ իրականացնելով մեծ առաջնորդ՝ Մահաթմա Գանդիի ունեցած տեսիլքն իր ժողովրդի կյանքում:

«Անկասկած, այսօր պատմական օր է Հնդկաստանի հյուրընկալ ժողովրդի համար, քանզի ևս մեկ անգամ առիթ է ընձեռնվում ամենքիս՝ երախտագիտությամբ անդրադառնալու անկախության ձեռքբերման նվիրյալների սխրանքին, ովքեր իրենց ողջ գիտակցական կյանքը նվիրաբերեցին Հնդկաստանի անկախության, նրա զորացման և բարգավաճման համար, որոնցից շատերի անունն անգամ այսօր չենք հիշում», - իր խոսքում նշեց Հոգ2. շնորհ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը:

Հանդիսությունը ներկա էին ճեմարանի պաշտոնեությունը, ողջ աշխատակազմը, դասախոսական անձնակազմը, սաները և հյուրերը:

Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԸ ՀՆԴԿԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Օգոստոսի 17-ը՝ Ս. Աստվածածնի Վերափոխման տոնի օրը, նշանակալից էր հնդկահայ համայնքի և Մարդասիրական ճեմարանի սաների համար:

2007 թ. վերածումից հետո խաղողօրհնության տոնը հռչակվել էր որպես Մայրաքաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու ուխտի օր: Եվ այս առիթով կրկին անգամ ուխտագնացություն էր կազմակերպվել դեպի Երբեմնի հայաշատ այս վայրը, որտեղ Ջուղայեցի նշանավոր վաճառական, բարեգործ Խոջա Պետրոս Հարությունյանի անձնական միջոցներով 1758 թ. կառուցվել է մի չքնաղ եկեղեցի՝ ի հիշատակ իր ծնողների:

Նախքան պատարագի սկսվելը հավատացյալների ներկայությամբ կատարվեց պատարագչի քահանայական նոր զգեստների օրհնության կարգ, քանի որ ընդունված կարգի համաձայն, յուրաքանչյուր նոր սպասք, իր կամ զգեստ եկեղեցում գործածելուց առաջ հարկավոր է օրհնել կամ սրբազործել ըստ պատշաճի:

Օրվա պատարագիչն էր հնդկահայոց հոգևոր հովիվ և Հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլցուլյանը, ում ընկերակցում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Հարություն սրկ. Համբարձումյանը:

Հընթացս Ս. Պատարագի պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ ջերմորեն շնորհավորելով ներկաներին հիշարժան օրվա կապակցությամբ:

Պատարագի ավարտին, Հայոց Եկեղեցու ընկալյալ ավանդության համաձայն, կատարվեց խաղողի օրհնության արարողություն: Օրհնված խաղողը բաժանվեց ներկա բազմությանը:

Ս. Պատարագի վերջում տեղի ունեցավ նաև հյուրասիրություն: Արարողությանը ներկա էին կալկաթահայեր, Մարդասիրական ճեմարանի սաները, ճեմարանի ուսուցիչներ և հյուրեր:

*ԴԻՎԱՆ ԿԱԼ ԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 3-ին, կիրակի - Զ կիր. Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Դանիել վարդապետ Թումանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 14):

Օգոստոսի 10-ին, կիրակի - Է կիր. Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մովսիս վարդապետ Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 18):

Օգոստոսի 15-ին, ուրբաթ – Միաբանության ուխտի օր:

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը: «Հայր մեր»-ից առաջ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Օգոստոսի 17-ին, կիրակի – ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 16):

Օգոստոսի 18-ին, երկուշաբթի - Բ օր Վերափոխման: Մեռելոց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Առեն արքեպիսկոպոսը:

Օգոստոսի 24-ին, կիրակի - Բ կիր. զկնի Վերափոխման:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հրնթացս Ս. Պատարագի Նորին Սրբության ձեռամբ կատարվեց եպիսկոպոսական ձեռնադրություն, որից հետո Վեհափառ Հայրապետը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Օգոստոսի 31-ին, կիրակի - Գ կիր. զկնի Վերափոխման: Տօն գիւտի գօտույ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ադամ քահանա Մակարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Տեր Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**“ЭЧМИАДЗИН”
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ
ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Август 2008 г.)**

1. Заново открылся монастырь Св. Креста в Крыму (в церемонии открытия приняли участие Его Святейшество Гарегин II, Католикос всех армян и президент РА С. Саркисян), 29-30 июля 2008 г. (с. 3-7).
2. Визит генерального секретаря Конференции Европейских Церквей в Первопрестольный Святой Эчмиадзин, 23-24 августа 2008 г. (с. 8-9).
3. Частный молебен перед котлом Святого Мира, 19 августа 2008 г. (с. 10).
4. Собрание Верховного Духовного Совета в Первопрестольном Святом Эчмиадзине, 28 августа 2008 г. (с. 11-12).
5. Патриаршие награды (пожалование в течение августа 2008 г. энциклик, благословений ряду духовных лиц, оказавших большие услуги Армянской Церкви)-(с. 13).
6. Новое назначение в Первопрестольном Святом Эчмиадзине (с. 13).

ПРОПОВЕДИ

7. Проповедь архимандрита Даниела Туманяна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина, 3 августа 2008 г. (с. 14-15).
8. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Езника Петросяна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина в праздник Успения Св. Богородицы, 17 августа 2008 г. (с. 16-17).
9. Проповедь архимандрита Момика Саркисяна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина, 10 августа 2008 г. (с. 18-20).

РЕЛИГИОЗНЫЕ И ЦЕРКОВНЫЕ ИССЛЕДОВАНИЯ

10. **ДЬЯКОН ТИГРАН БАГУМЯН** – Произведение архиепископа Петроса Бердумяна “Из анализа сочинений Аристотеля” (с. 21-24).
11. **АРХИЕПИСКОП ПЕТРОС БЕРДУМЯН** - Из анализа сочинений Аристотеля, критический текст подготовил дьякон Тигран Багумян (с. 25-31).

ИСТОРИКО- ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

12. **СЕВАК ГУКАСЯН** - Запросы “Да - нет” в Евангелии от Луки на восточноармянском и древнеармянском языках (лингвистическое

исследование)-(с. 32-37).

13. **АНАИТ АБРААМЯН** – Слово “плуг” в армянской литературе и в переводах (лингвистическое исследование)-(с. 38-51).
14. **ГРАЧ БЕГЛАРЯН** – Перерабатывание винограда в средневековой Армении (историковедческое исследование)-(с. 52-67).
15. **АРПЕНИК КАЗАРОСЯН** – Основание центров письменности в Киликии. центры письменности Черной Горы (Сев Леран) и Дразарка (историковедческое исследование)-(с. 68-79).
16. **ГЕВОРК СРАПИОНОВИЧ СТЕПАНЯН** – Архиепископ Месроп Смбатянц - предводитель Шамахской армянской епархии (историковедческое исследование)-(с. 80-90).
17. **ЛОЛА ДОЛУХАНИЯН** – История разрушения одного памятника. церковь Св. Павла – Петра (исследование по архитектуре)-(с. 91-113).

РЕЦЕНЗИИ

18. **АРХИЕПИСКОП АКОП ГЛНЧЯН** – Армянин – автор письма к Оригена Александрийского и к Св. Августина (рецензия о книгах Тамары Таснапетян “Святой Ориген” и “Любимый Августин”)-(с. 114-117).
19. **АЗАТ БОЗОЯН** – Исследование посвященное эпохе крестоносцев, (Isabelle Augé, Byzantins, Arméniens & Francs au temps de la croisade: Politique religieuse et reconquête en Orient sous la dynastie des Comnènes, Paris, 2007, p. 417)-(с. 118-128).
20. **АРУТЮНЯН А. Ж.** – Важное издание (рецензия о книге “Адонц Никогайос”, подготовил к изданию П. О. Ованисян, Ереван, изд. ЕГУ, 2008, 682 с.)-(с. 129-132).
21. **АИЭЛИТА ДОЛУХАНИЯН** - Новая жизнь Санаинского Синодика “Кэотука” (рецензия, посвященная изданию критического текста Синодика “Кэотука” П. Мурадяном)-(с. 133-136).
22. **АНИ ХУДАВЕРДЯН** – “Верой построенные монастыри Св. Креста и Св. Знамени...” (рецензия о книге Ф. Бабаян и Э. Корхмазян “Монастырь Св. Креста – центр армянской культуры Крыма” (изд. “Наапет”, Ереван, Симферополь, 2008)-(с. 137-139).

В СВЯТОМ ПЕРВОПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

23. Хиротония епископов в Первопрестольном Св. Эчмиадзине, 24 августа 2008 г. (с. 140-142).
 Его Преосвященство епископ Вртанес Абраамян (биография)-(с. 142).
 Его Преосвященство епископ Саак Машалян (биография)-(с. 143).
24. Литургия епископского обета в Кафедральном соборе Первопрестольного

Святого Эчмиадзина, 25 августа 2008 г. (с. 144).

25. Литургия епископского обета в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина, 26 августа 2008 г. (с. 145).

В Гугаркской епархии

26. Принадлежащий епархии летний лагерь “Цицернак” говорит “До новых встреч...” (с. 146).

В Армянской епархии Грузии

27. Освящены крест купола и образы святых церкви Св. Воскресения села Малый Самсар Ахалкалакского района, 2 августа 2008 г. (с. 147).
28. Освящены Св. Алтарь и Св. Купель Крещения церкви Св. Креста в городе Ахалкалаки, 3 августа 2008 г. (с. 148).

В Российской и Ново-Нахичеванской епархии

29. Освящена церковь Св. Григория Просветителя в городе Новокузнецке, 24 августа 2008 г. (с. 149).

В Армянской епархии Ирака

30. Духовные мероприятия в Армянской епархии Ирака (с. 150-152).

В армянской общине Калькутты

31. 61-я годовщина Независимости Республики Индия в Армянской Филантропической Семинарии Калькутты, 15 августа 2008 г. (с. 153).
32. Праздник Успения Св. Богородицы в армянской общине Индии, 17 августа 2008 г. (с.154).
33. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Первопрестольном Святом Эчмиадзине в течение августа 2008 г. (с. 155).

**“ETCHMIADZIN”
OFFICIAL MONTHLY REVIEW OF
HOLY ETCHMIADZIN
(August 2008)**

1. Reopening of the Holy Cross Monastery of the Crimea (the ceremony was presided over by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians and Mr. Serzh Sargsyan, President of the Republic of Armenia, July 29-30, 2008, (p. 3-7).
2. Visit of Venerable Colin Williams, General Secretary of the Conference of European Churches to the Mother See of Holy Etchmiadzin, August 23-24, 2008, (p. 8-9).
3. Special prayer before the Chrismatory, August 19, 2008, (p. 10).
4. Convention of the Supreme Spiritual Council in the Mother See of Holy Etchmiadzin, August 28, 2008, (p. 11-12).
5. Pontifical Awards (Letters of Blessing granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during August 2008 to some clergymen having been of great service to the Armenian Church) (p. 13).
6. New nominations in the Mother See of Holy Etchmiadzin, (p. 13).

SERMONS

7. Sermon of Rev. Fr. Daniel Toumanian delivered in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy August 3, 2008 (p. 14-15).
8. Sermon delivered by His Eminence Archbishop Yeznik Petrossian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy on the Feast of the Assumption, August 17, 2008 (p. 16-17).
9. Sermon of Rev. Fr. Momik Sarkissian delivered in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy August 10, 2008 (p. 18-20).

RELIGIOUS AND ECCLESIOLOGICAL STUDIES

10. **DEACON TIGRAN BAGHOUMIAN** – “From the Interpretations of Aristotle’s Works” by Archbishop Petros Berdounian (research) – (p. 21-24).
11. **ARCHBISHOP PETROS BERDOUMIAN** – “From the Interpretations of Aristotle’s Works” compiled by Deacon Tigran Baghoumian (original text) – (p. 25-31).

HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

12. **SEVAK GHOUKASSIAN** – “Yes-No” questions in Luke’s Gospels translated into modern and classical Armenian languages (linguistic research) – (p. 32-37).

13. **ANAHIT ABRAHAMIAN** – The name of the tool “Plow” in the Armenian literature and translations (linguistic research) – (p. 38-51).
14. **HRACH BEGLARIAN** – Recultivation of grapes in medieval Armenia (historical research) – (p. 52-67).
15. **ARPENIK GHAZAROSSIAN** – Initiation of the literary centers in Cilicia: Literary center of Sev Ler and Derazark (historical research) – (p. 68-79).
16. **GEVORG SRAPION STEPANIAN** – Archbishop Mesrop Smbatians as Primate of the Armenian Diocese of Shamakhi (historical research) – (p. 80-90).
17. **LOLA DOLUKHANIAN** –History of destruction of a monument: Paul-Peter Church (architectural research) – (p. 91-113).

LITERARY REVIEW

18. **ARCHBISHOP HAKOB GELENJIAN** – The Armenian author of letters by Origen of Alexandria and St. Augustin (literary review dedicated to the books “St. Origen” and “Beloved Augustin” by Tamar Tasnapetian) - (p. 114-117).
19. **AZAT BOZOYAN** - Research dedicated to the era of Crusaders (Isabelle Augé, Byzantins, Arméniens & Francs au temps de la croisade: Politique religieuse et reconquête en Orient sous la dynastie des Comnènes, Paris, 2007, p. 417) - (p. 118-128).
20. **H. Zh. HAROUTIUNIAN** – An Important Publication (literary review dedicated to the newly published volume of the works by Nikoghayos Adonts. Prepared for publication by P.H. Hovhannissian, Yerevan, Publication of Yerevan State University, 2008, p. 682) - (p. 129-132).
21. **AELITA DOLUKHANIAN** - The new life of Synodicon “Keotuk” of Sanahin (literary review dedicated to the publication of the original text of Synodicon “Keotuk” by P. Mouradian) - (p. 133-136).
22. **ANI KHOUDAVERDIAN** – “Monastery of Holy Cross built in faith” (literary review dedicated to the book of “Monastery of Holy Cross as the Armenian Cultural Center of the Crimea” by F. Babayan and E. Korkhmazian; “Nahapet” publication, Yerevan, Simferopol, 2008) - (p. 137-139).

IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

23. Episcopal ordination in the Mother See of Holy Etchmiadzin, August 24, 2008 (p. 140-142).
 - His Grace Bishop Vrtanes Abrahamian (biography) - (p. 142).
 - His Grace Bishop Sahak Mashalian (biography) - (p. 143).
24. Divine Liturgy of Episcopal oath in the Mother See of Holy Etchmiadzin, August 25, 2008 (p. 144).
25. Divine Liturgy of Episcopal oath in the Mother See of Holy Etchmiadzin, August 26, 2008 (p. 145).

In the Diocese of Gougark

26. "Tsitsernak" ("Swallow") camp of the Diocese of Gougark says good-bye and not adieu... (p. 146).

In the Armenian Diocese of Georgia

27. Consecration of the dome cross and icons of St. Haroutiun Church of village Small Samsar, Akhalkalak region, August 2, 2008 (p. 147).
28. Consecration of the altar and font of Holy Cross Church of Akhalkalak, August 3, 2008 (p. 148).

In the Armenian Diocese of New Nakhijevan and Russia

29. Consecration of St. Gregory the Illuminator Church of Novokuznetsk, August 24, 2008 (p. 149).

In the Armenian Diocese of Iraq

30. Spiritual events in the Armenian Diocese of Iraq, (p. 150-152).

In the Armenian Community of India

31. Celebration of the 61st Independence Anniversary of the Republic of India in the Armenian Philanthropic Academy of Calcutta, August 15, 2008 (p. 153).
32. The Feast of Assumption in the Armenian Community of India, August 17, 2008 (p. 154).
33. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during August 2008.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վերաբացվեց Ղրիմի Ս. Խաչ վանքը	3
Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի գլխավոր քարտուղարի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	8
Մասնավոր աղոթք Սրբալույս Մյուռոնի կաթսայի առջև	10
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով	11
Հայրապետական գնահատություն	13
Նոր նշանակում Մայր Աթոռում	13

ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. Դանիել վարդապետ Թումանյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	14
Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Վերափոխման տոնին մատուցված Ս. Պատարագին	16
Տ. Մովսիս վարդապետ Սարգսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	18

ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Տիգրան սարկավազ Բաղումյան – Պետրոս արքեպիսկոպոս Բերդումյանի «Ի նկատմանէն Արիստոտելի» երկը	21
Պետրոս արքեպիսկոպոս Բերդումյան – Ի նկատմանէն Արիստոտելի (բնագիրը պատրաստեց Տիգրան սարկավազ Բաղումյանը)	25

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԵՎԱԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ - Այո-ոչ հարցումները Ղուկասի Ավետարանի գրաբար և արևելահայերեն թարգմանություններում	32
ԱՆԱՀԻՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ - «Արոթ» գործիքանիշ բառանունը հայ մատենագրության մեջ և թարգմանություններում	38
ՀՐԱԶ ԲԵԳԼԱՐՅԱՆ – Խաղողի վերամշակումը միջնադարյան Հայաստանում	52
ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ – Կիլիկիայի գրչության կենտրոնների սկզբնավորումը. Սև Լեռան և Դրազարկի գրչության կենտրոնը	68

ԳԵՎՈՐԳ ՄՐԱՊԻՈՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ – Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը Շամախու հայոց թեմի առաջնորդ	80
ԼՈՒԱ ԴՈՒՆԻՍՅԱՆՅԱՆ – Մի հուշարձանի քանդման պատմությունը. Պողոս-Պետրոս եկեղեցի	91

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՅԱԿՈԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԼՆՃԵԱՆ – Որոգինէս Աղեքսանդրացու եւ Ս. Օգոստինոսի հայ նամակագիրը	114
ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ – Ուսումնասիրություն նվիրված խաչակրաց դարաշրջանին	118
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հ. Ժ. – Մի կարևոր հրատարակություն	129
ԱԵԼԻՏԱ ԴՈՒՆԻՍՅԱՆՅԱՆ – Սանահնի «Քեթուկի» նոր կյանքը	133
ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ - «Կանգնեալ հաւատով զվանքս Սուրբ Խաչ, Սուրբ Նշան...»	137

ՄԱՅՐ ԱԹՈՂՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	140
Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյան	142
Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյան	143
Եպիսկոպոսական ուխտի Ս. Պատարագ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	144
Եպիսկոպոսական ուխտի Ս. Պատարագ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	145

Գուգարաց թեմ

Թեմապատկան «Ծիծեռնակն» ասում է ցտեսություն և ոչ թե զնաք բարով	146
--	-----

Վիրահայոց թեմ

Օծվեցին Ախալքալաքի շրջանի Փոքր Սամսար Գյուղի Սուրբ Հարություն եկեղեցու գմբեթի խաչը և սրբապատկերները	147
Օծվեցին Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցու Սուրբ Խորանն ու Մկրտության Սուրբ Ավագանը	148

Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ

Օծվեց Նովոկուզնեցկի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին	149
--	-----

Իրաքի հայոց թեմ

Հոգեշէն միջոցառումներ իրաքահայ թեմէն ներս 150

Կալկաթայի հայ համայնքում

Հնդկաստանի Հանրապետության Անկախության 61-րդ տարեդարձը

Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ճեմարանում 153

Ս. Աստվածածնի Վերափոխման տոնը հնդկահայ համայնքում 154

Եկեղեցական բեմ. լուրեր 155

“Ծչմիադզին” официальный журнал Ծչմիադզинского Католикосата..... 156

“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin 159